Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ջիրավանդարե-

ցամիթներ բուժիչ.

1932 թ.

891.99
Զ-68

ՀԱՅՀ
ՊԵՏՀՐԱՏ

891.99
Շ-64

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

-6 NOV 2011

ԿՅԱՆՔԻ ԲՈՎԻՑ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1932

15.07.2013
48277

Պատ. խմբագիր՝ Յե. Զարենց
Տեխնիկ. խմբագիր Տ. Խաչվանքյան,

ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2950
40

ԿՅԱՆՔԻ ԲՈՎԻՑ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

I

ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐԸ

Մենք վորոշել եյինք առանց վորևե տեղ հապաղելու, ուղղակի Պարիզ անցնել: Բեռլինում կանգ առանք միայն յերկու օր, այն էլ տասնօրյա արկածալի ու հոգնեցուցիչ ճամբորդությունից հետո մի քիչ հանգստանալու նպատակով: Սակայն այդ յերկու օրն էլ բավական եյին զգալու համար, թե վորքան դժվարին ու անախորժ ե մարդու կացությունը մի յերկրում, վորի լեզուն չգիտես:

Իջևանել եյինք Ֆրիդրիխշտրասի առաջնակարգ հյուրանոցներից մեկում: Անունը միտս չե: Կարելի յեր յենթադրել, թե մի այդպիսի հյուրանոցում պետք ե լինի գեթ մի հատիկ ծառայող, վորը բացի գերմաներենից գիտնա մի ուրիշ լեզու, թեկուզ ամենուրեք ընդհանրացած ֆրանսերենը՝ օտարերկրյա հյուրերին սպասարկելու համար:

Ռուսերեն լեզվի մասին խոսք չեր կարող լինել, քանի վոր նա այն ժամանակվա Ռուսիայի սահմաններից դուրս գրեթե գոյություն չուներ:

Բայց չգտնվեց բազմաթիվ ծառայողների մեջ մեկը, վորը մեր տարրական հարցերին ֆրանսերենով պատասխաներ մեզ· Թվում եր ինձ, վոր դրա պատճառը ֆրանսերեն չգիտենալը չեր, այլ այն ժամանակվա ազգամոլ գերմանացու անզուսպ ատելությունը դեպի ամեն ինչ, վոր ֆրանսիական եր: Չե՞ վոր դա Վիլհելմ յերկրորդի շովեն քաղաքականության շրջանն եր, յերբ ամենավերջին գերմանացին մի փոքրիկ Վիլհելմ եր իր մտայնությամբ և զգացումներով:

Չեմ կարող թաքցնել, վոր յես յերբեք մի առանձին հակում չեմ ունեցել դեպի գերմաներեն լեզուն և առհասարակ դեպի գերման քաղաքակրթությունը: Գուցե դրա պատճառն այն ե, վոր իմ մտայնությունը սնվել ե գլխավորապես ֆրանսիական գրականությամբ: Սակայն այդ յերկու օրը յես շատ զղջացի, վոր գոնե մի քանի տասնյակ գերմաներեն բառեր չեյի սովորել, վորպեսզի չկրեյի այն դժվարությունները, վոր կրեցի իմ աններելի

անփութության շնորհիվ: Բավական է ասել, որ հինգ հոգով մեզ զգում էինք աշխարհից կտրված մի ամայի անապատում, ուր ամեն մի դեմք, մի նորություն և ամեն մի տեսարան, մի աշխարհ էր ինձ համար: Տասնուհինգ տարի անցած յես նույն վիճակումն էի Ամերիկայում անգլերեն չգիտնալուս պատճառով: Բայց այնտեղ ինձ հետ էր աղջիկս, Մարգարիտը, որպես թարգման ու աջակից, և յես վոչ մի նեղություն չէի կրում:

Թափառեցինք Բեռլինի փողոցները, մտանք մի քանի խանութներ, մի յերկու պարտեզներ, հիացանք քաղաքի գեղեցիկ շատրվաններով, չքեղ լուսավորությամբ և զարմանալի մաքրությամբ, ճաշակեցինք Մյունխենի հռչակավոր գարեջուրը ու վիեննայան համեղ սուրճը և դրանով բավականացավ մեր հետաքրքրությունը:

Այնուհետև ամենքիս պաշարեց շուտով հեռանալու փափագը: Բայց այդտեղ էլ հանդիպեցինք դժվարության, դարձյալ լեզու չիմանալու անիծյալ պատճառով: Հարկավոր էր գիտնալ, վո՞ր գնացքն է գնում Պարիզ, վո՞ր կայարանից և ուրևս վո՞ր ժամին:

Յես վերցրի յերկու վորդիներիս, դուրս յեկա փողոց ու կանգնեցի Ֆրիդրիխշտրասսի մի անկյունում:

— Այստեղ ի՞նչ պիտի անել,—հարցրեց մեծ վորդիս, Ռուբենը:

— Պիտի սպասենք դիպվածի ոգնությանը,—պատասխանեցի յես ամենայն լրջությամբ:

Պատանին հեգնորեն ժպտաց:

— Դիպվածն, այսինքն՝ անսպասելին մինչև այդ օրը մի քանի անգամ ինձ ոգնել էր կյանքիս դժվար րոպեներին, ուստի իմ մեջ կամա—ակամա գոյացել էր մի տեսակ խուլ հավատ դեպի նրա զորությունը: Չեմ կարող ասել, որ այսօր, կյանքիս արևմուտքում այդ հավատը չքացել է կամ թուլացել, ընդհակառակն այժմ ավելի յեմ զգում նրա ուժը, թեև գիտեմ, որ շատերն իմ ընթերցողներից պիտի ծիծաղեն ինձ վրա:

Նայում էինք մտամոլոր ու աննպատակ աջ ու ձախ, դեպի վեր՝ հոյակապ տների մեր աչքերի համար անսովոր բարձրությունը, դեպի վար, աջ ու ձախ սլացող տրամվայի չքեղ կառքերին ու հատ—հատ յերևացող ավտոմոբիլներին: Ամեն ինչ իհարկե, նոր էր մեզ համար, ուստի և հետաքրքրական, բայց և ամեն ինչ օտար, անհյուրընկալ, մանավանդ մարդկանց դեմքերը. այդ մա-

քուր հագնված ու հստակ սափրված տղամարդկանց à la Վիլհելմ վեր ցցված բեղերն ու հաստամարմին կանանց լրջմիտ ու անժպիտ յերեսները, որ արտահայտում էին և՛ կշտություն, և՛ ինքնագոհություն: Յեվ ահա պատահեց այն, ինչի վրա խուլ հույս ունեի:

— Բարև ձեզ,—լսեցի մի հեռավոր ծանոթ ձայն,—այդ յե՞րբ եք յեկել, ո՞ւր եք գնում:

Դա մի հրեա կոմիսիոներ էր: Նա տարենը յերկու անգամ Գերմանիայից գալիս էր Թիֆլիս մի խոշոր մանուֆակտուրային տան կողմից տեղական վաճառականներին ապրանք առաջարկելու: Յես նրան մի քանի անգամ հանդիպել էի իմ ազգական մի վաճառականի տանը և մինչև անգամ հետն էլ պրեֆերանս էի խաղացել: Դժբախտաբար մոռացել եմ այդ մարդու անունը: Արագախոս, արագաշարժ մեկն էր. մարմնացած յեռանդ և ույժ, միշտ պատրաստ ծառայելու ուր և իցե, ում և իցե, ինչպես առհասարակ հրեաների մեծամասնությունը: Ծառայելու վոչ միշտ շահի համար, այլ հաճախ հենց այնպես, այսպես ասած, իր հոգու պահանջից դրդված: Աշխարհում յես շատ անգամ եմ տեսել հրեայի այդ սքանչելի հատկությունը, որ մակերեսորեն խորհող մարդիկ միշտ համարում են շահի ակնկալություն:

Յես պատմեցի մարդուն մեր անախորժ դրությունը: Նա բարեսրտաբար ժպտաց ու անմիջապես առաջարկեց իր ծառայությունը, հայրական սիրով շոյելով յերկրորդ վորդուս, Արմենի գանգուր մազերը:

Մի ժամվա մեջ նա ամեն ինչ կարգադրեց. վերջացրեց հաշիվը հյուրանոցի հետ, ուղեկցեց մեզ մինչև վոգզալ, հանձն առավ տոմսակ գնելու և մեր իրերը տեղավորելու ծանրությունը և ջերմորեն վողջերթ մաղթելով մեզ, հեռացավ մշտական ժպիտը յերեսին:

Յեվրոպական գնացքների արագությունն այն ժամանակ ինձ համար մի անսովոր յերևույթ էր: Սովորած լինելով Ռուսիայի գնացքների դանդաղ շարժմանը, թվում էր ինձ, որ ահա – ահա մեր գնացքը պիտի խորտակվի կամ գծից դուրս շպրտվի, մանավանդ Բելգիայի սահմաններում, ուր այն ժամանակ յերկաթուղային յերթևեկությունը, ինչպես ասում էին, ավելի արագընթաց էր. քան յեվրոպական ուրիշ վորևէ յերկրում:

Գեղեցիկ է, շատ գեղեցիկ Բելգիան իր արգավանդ դաշտերով, վոչ բարձր անտառապատ լեռներով, մեղմ կանաչազարդ

բլուրներով և բազմաթիվ գետերի հանդիստ ու անվրդով հոսանքներով։ Թվում ե, վոր անցնում ես կատարելապես մշակված պարտեզներով ու այգիներով, թվում ե, վոր այդ յերկրում չկա և չի կարող լինել վոչ մի թիզ հող անմշակ։ Թվում ե, վոր այդ խորապես արդյունաբերական յերկրի անթիվ գործարանները բնության գեղեցկությունից չեն կորզել և վոչ մի հյուլե։ Նույնիսկ այդ գալարապարդ գեղեցիկ բլուրների վրա հատ-հատ նշմարվող գործարանային դղյակները, արյունոտ դարերի այս խոժոռադեմ վկաներն անգամ, կարծես, յերկրի ժամանակակից մշակույթից հաղթահարված, ակամա ժպտում են ճամբորդին, ամաչելով իրենց անցյալից։ Յեվ յես, հետամնաց մի յերկրի ծնունդս, հիանալով քաղաքակիրթ Բելգիայի բնության մնայուն գեղեցկությամբ, կամա-ակամա մտքումս վրդովվում եմ Ջոն Ռեսկինի դեմ, վոր այնքան անարդար բողոքում եր յերկաթուղիների ու գործարանների դեմ, համարելով նրանց բնության հրաշալիքների «ապականիչներ»։ Հապա ինչո՞ւ նրանք այստեղ, արդյունաբերության այս ծաղկյալ վայրում, վոչինչ չեն ավրել կամ աղարտել և ինչո՞ւ շոգեկառքի ծուխը նույնիսկ մի տեսակ նոր գեղեցկություն ե տալիս կանաչազարդ անտառներին ու ծաղկավետ բլուրներին։ Սակայն հղփացած անգլիացի եսթեթի բողոքն արդեն նրանով իսկ ծիծաղելի յեր, վոր նա իր իրերն ուղարկում եր յերկաթուղով, իսկ ինքը ճամբորդում եր ձիով կամ կառքով։ Դա յել, յերևի, մի տեսակ բուրժուական խենթություն եր։

Բելգիայում կանգ չառանք։ Պարիզն եր ձգում մեզ, մանավանդ ինձ, այն քաղաքը, վոր պատանեկությանս ու յերիտասարդությանս յերազն եր յեղել։ Հասանք այնտեղ իրիկնադեմին։ Բայց ի՛նչ հիասթափում առաջին իսկ հայացքից։ Պարիզն իմ յերազների մեջ միշտ յեղել եր պայծառ արևի ներքո լուսավառ գույների աշխարհ, և ահա ի՛նչ դորշություն. յերբեք չեյի կարող յերևակայել։ Չնայելով ոգոստոս ամսին, յեղանակը ցուրտ եր. բարակ անձրև եր մաղում թեթև մառախուղի միջով և ցեխոտում մայթերն ու սալահատակները։

Կայարանում մեզ դիմավորեց կնոջս յեղբայրը, բժիշկ Հովհաննես Լոռիս-Մելիքյանը, վոր այն ժամանակ ղեկավարում եր դաշնակցության ծախքով հրատարակվող «Pro Armenia» թերթը, վորի մասին կխոսեմ հետո, յեթե տրամադրություն կունենամ խոսելու։

Առաջին յերեկո իջևանեցինք բժշկի բնակարանում, վոր գտնվում եր լատինական արվարձանի Սեն-Միշել բուլվարի վրա, Լյուքսեմբուրգ պարտեզի դեմ։ Դա մի շատ համեստ կացարան եր յերկու թե յերեք վոչ ընդարձակ սենյակներից բաղկացած։ Վորդիներս տեղավորվեցին մերձակա ուսանողական հյուրանոցներից մեկում։

Ճաշելուց ու մի փոքր հանգստանալուց հետո, անդիմելի ցանկություն զգացի դուրս յելնել։ Անհամբեր եյի ինչպես յերեխա։ Յերանելի՛ վայրկյաններ։

Անձրևը դադարել եր, յեղանակը փափկացել. Հետագայում նկատել եմ, վոր աշնանը յերեկոները Պարիզում առհասարակ յեղանակն ավելի մեղմ ե լինում, քան ցերեկները։ Դա յել, յերևի, այդ յերջանիկ քաղաքի բացառիկ հատկություններից մեկն ե։

Սեն-Միշելը, կամ ինչպես սովորաբար անվանում են, Բուլ-Միշը լատինական արվարձանի այն ժամանակվա ամենակենդանի բուլվարն եր և ուսանողության սիրեցյալ զբոսավայրը։ Առաջին բանը, վոր գրավեց իմ ուշադրությունը, վոչ կաֆեների պայծառ լուսավորությունն եր, վոչ աղմկալի յերաժշտությունը և վոչ յել կանանց բազմությունը, այլ բեղավոր ու մորուսավոր տղամարդկանց մի հոծ բազմություն, վոր թղթե գույնզգույն կալպակներով զարդարված, վազում եր ընդարձակ մայթով, խելագարի պես գոռալով conspuer, conspuer։ Բժիշկն ասաց, թե դրանք համալսարանի ուսանողներ են։ Պրոֆեսորներից մեկը դուր չի յեկել նրանց, ուստի բողոքում են ու պահանջում, վոր կառավարությունը, ատելի դասախոսին հեռացնի համալսարանից։ Տեսարանն իմ անսովոր աչքերի համար տարորինակ եր, յեթե չասեմ յերեխայական ու ծիծաղելի, մանավանդ այդ թղթե գույնզգույն կալպակները։ Հետագայում շատ անգամ տեսա նույնիսկ և շատ ավելի յերեխայական փողոցային բողոքներ և ընտելացա, այլես չհամարելով նրանց ծաղրելի։ Չե՞ վոր մեր միտքն ու զգացումները շատ անգամ աչքերով են ղեկավարվում և նրանք են, վոր հաշտեցնում են մեզ անսովորականի հետ։

Անցանք Սենայի աջ ափը, մտանք գլխավոր բուլվարները, վորոնց մասին այնքան լսել եյի ու կարդացել։ Առաջին հայացք այդտեղ ինձ վոչինչ չզարմացրեց, գոնե այնչափ, վորչափ սպասում եյի, վոչ բյուրավոր գազային ու ելեկտրական լապտերների կուրացուցիչ լույսը, վոչ մեկը մյուսից փարթամ մագազինների նուրբ ճաշակով զարդարված ցուցափեղկերը, վոչ անթիվ տրամ-

վայների, օմնիբուսների ու կառքերի քաոսային և խառնիճաղանճ խլացուցիչ աղմուկն ու իրարանցումը: Թվաց ինձ, որ այդ բոլորը յես տեսել եմ վաղուց և շատ անգամ, իսկ Իտալական կոչված աշխարհահռչակ բուլվարը ինձ յերևաց կետ առ կետ այնպես, ինչպես տեսել էյի նրան մի անգամ յերազումս: Յես կարծում եմ, վոր իմ տպավորությունը հազիվ թե լիներ ավելի զորեղ, յեթե բոլոր տեսածներս լինեյին բյուր անգամ ավելի հսկայական ու ավելի շքեղ: Կյանքիս մեջ միայն յերկու բան իրենց գեղեցկությամբ ու հզորությամբ չեն խաբել իմ յերևակայությունը—Նիագարայի ջրվեժը և Վեզուվի հրաբուխը: Այնտեղ իրականությունը իմ յենթադրությունից բարձր է յեղել: Ինձ ավելի ապշեցուցիչ թվաց մի այլ բան—այդ խլացուցիչ ու աղմկարար փարթամության մեջ լուռ մրմնջող սովի ու անոթության հազարավոր ձայները, մուրացկինների այդ ահագին բազմությունը, վոր ամեն քայլում կտրում է յանցորդի ճամբան, մանավանդ նորեկ և օտարական անցորդների: Հարկավ, յես այնքան պարզամիտ ու անտեղյակ չեյի, վոր կարծեյի, թե մեծ քաղաքներում բոլոր վորովայնները կուշտ են և վոչ մեկի ձեռը ամոթահար չի պարզվում մի ուրիշի առջև «հանուն աստծո», կամ «հանուն խղճի»: Գիտեյի, վոր չքավորությունը ամենուրեք մարդկության խոցն է, բայց չգիտեյի, վոր նրա պատկերներն այդչափ բազմատեսակ են, այդչափ այլանդակ և այդչափ ամոթալի:

— Մատիտներ, նոր տեսակի, ամենահարմարն ու ամենաէժանը, շտապեցեք գնել,—մրմնջում է մի թույլ ձայն:

— Ծաղկի կոճակներ, գիտության վերջին խոսքը, մի բաց թողեք առիթը օգտվելու,—լսվում է մի ուրիշ ձայն:

— Վայրկենաբար ջնջում է բոլոր տեսակի բծերը, քիմիայի վերջին հրաշագործությունը, խնամեցեք ձեր հագուստը:

— Մաքրեցեք ձեր ատամները «ադամանդ» փոշիով, և դուք յերկար ու յերկար տարիներ կապրեք:

— Պարիզը կույր է, Պարիզը խուլ է, սրբեցեք ձեր կոշիկները «Արեգակ» բաղադրությամբ, և ձեր վոտների փայլը կհիացնի կանանց:

— Յերկու սու, միայն յերկու սու, և դուք առ միշտ կազատվեք վոտների կոշտերից:

Դրանք և նման այլ տեսակի գոչյուններ չքավորության ամենամեղմ յերգերն են, և վոչ վոքի չեն զայրացնում կամ զարմաց-

նում: Բայց ահա մեկը, վորին շրջապատել է անցորդների մի հոծ բազմություն առաջնակարգ կաֆեներից մեկի առջև: Դա յե աղաղակող չքավորությունը: Հազիվ քսան տարեկան մի տղա յե առանց վորևէ մարմնավոր թերության: Ով գիտե, գուցե գործարանական մի բանվոր է, այժմ անգործության զոհ: Գունատ ու հուզված՝ նա կանգնած է ամբոխի առջև մի ձեռում մի փայտի կտոր, ծայրը լաթով փաթաթված, մյուս ձեռում նավթով լցուն մի սափոր: Նա դողդոջ ձայնով արտասանում է մի քանի բառեր, վորոնց իմաստն է, թե իսկույն կտեսնեք ամենատարօրինակն ու ամենազարհուրելին: Հետո, յերկյուղած աչքերով աջ ու ձախ նայելով, նա լաթը թաթախում է նավթի մեջ, վառում է և բոցը մտցնում բերանը մի քանի անգամ ու դուրս է բերում: Այնուհետև նա իր բերանը լցնում է նավթով ու վառում: Բերնից դուրս է ժայթքում նավթի բոցը խուլ թնդյունով, ինչպես թոնրից: Ամբոխն անտարբեր նայում է ու հեգնորեն ժպտում: Պատանին գլխարկը վերցնում է ու դիմում նայողներին իր «վարձը» մուրալու: Ամբոխը շտապում է ցրվել, խնայելով իր սուերը: Այնուամենայնիվ մի քանիսը պղնձե դրամներ են ձգում գլխարկի մեջ: Բայց ահա ճիշտ այդ պահին մոտենում է վոստիկանական աժանը և մուրացկանին, թևից բռնելով, հեռացնում է: Թող գնա և մի ուրիշ վոստիկանի ռայոնում ցույց տա իր «հրաշքները»:

Կան և սրամիտ հնարագետներ: Ահա մեկը գետնի վրա դրել է տախտակի կտորներից շինած յերկու մարդուկներ և թելի ծայրից բռնած, հրամայում է նրանց պարել, կռվել, գրկախառնվել, համբուրվել, և մարդուկները կատարում են նրա հրամանները: Ընդամենը յերկու սու արժե:

— Ի՞նչ բան է յերկու սուն, մի տուփ լուցկի:

Շատերն են գնում սրամիտ խաղալիքը, տանում են տուն, փորձում են, և բան չի դուրս գալիս: Պարզվում է, վոր մարդը իր գյուտի գաղտնիքը խոհեմաբար իր համար է պահել:

Ահա մի ուրիշը: Մի նիհար, գունատ ու կծկված ծերունի: Քաղցը և հոգեկան տառապանքներն են վաղաժամ աղավաղել նրա դեմքը: Նա թելի մի կտոր անց է կացրել լուցկիների դատարկ տուփի միջով և ինչ վոր փոշիով վողորկել: Նա թելը քաշում է այս կողմ, այն կողմ, և լսվում է նոր ձու դրած հավի կչկչոց, կատարյալ հավի կատարյալ կչկչոց:

Այդ եղ արժե յերկու սու: Փոքր վորդիս դնեց մեկը, տանը փորձեց, և դարձյալ բան դուրս չեկավ:

Ցրտի և կարիքի այդ, ըստ ամենայնի ներելի, հառաչանքները, ազդում են նորեկի վրա միայն առաջին պահ, հետո դառնում են սովորական: Բայց ահա այն, ինչ վոր սակն ու վրա յե անում մարդու հոգեկան աշխարհը, դրդելով նրա ծայրագույն նողկանքն ու զզվանքը: Խոսքս այդ հարյուրավոր ու հազարավոր գիշերային «Թիթեռների» մասին չե, վորոնք իրանց թանձր շպարած յերեսների յուղոտ ժպիտներով և արվեստականորեն խոշորացրած աչքերի հրավերով ճամբա չեն տալիս անցորդներին, առաջարկելով նրանց իրենց ըկկված ու կազմալուծված մարմինները: Բուրժուական աշխարհի հավիտենական զոհերն են, վորոնց հղփացած Պարիզը հազարներով ե շպրտել այդ պճնազարդ բուլվարների վրա, հարկավ կանխավ քամելով նրանց Թարմ հյութը, ճիշտ այնպես, ինչպես վամպիրն ե ծծում իր զոհին, յերբ արդեն կշտացել ե նրա արյունով:

Խոսքս այլ յերևույթի մասին ե:

Հազիվ թե աշխարհի յերեսին լինի մի ուրիշ մեծ քաղաք, ուր ոտարականին, մանավանդ նորեկին, այնպես շուտ ճանաչեն, ինչպես Պարիզում: Պարիզեցին արդեն նորեկի քայլվածքից ու դեմքի շփոթած արտահայտությունից գիտե, վոր ոտարական ե, տեղական վարք ու բարքերին դեռ անծանոթ, ուրեմն և ավելի դյուրին յենթակա շահագործման ու մոլորության: Ցավ ամենից շուտ ճանաչողները բուլվարների վրա նրանք են, վորոնք guide (առաջնորդ) անվան տակ կատարում են դերերից ամենազազրելին—կավատություն:

Մինչ մենք, աջ ու ձախ ամեն ինչով հետաքրքրվելով, Թափառում եյինք աննպատակ, զգացի, վոր մեկը քայլ առ քայլ հետևում ե մեզ, հատկապես ինձ: Հետևում ե, և ցածր ձայնով ինչ վոր ասում ե: Նայեցի յետ. պատկառելի տարիքով ու դեմքով մի մարդ եր մաքուր հագնված: Նա անմիջապես ծոցի գրպանից դուրս բերեց մի բուռը լուսանկարներ և, աջ ու ձախ նայելով, մոտեցրեց իմ քթին:

— Նայեցեք, դիրքերի մի ամբողջ սերիա, և բոլորը Թարմ, սկսած իննը տարեկանից,—արտասանեց նա շտապ-շտապ: Այստեղից հեռու չե, եկկիպաժի կարիք չկա: Գնանք, չեք զղջա, շատ գոհ կմնաք, յերաշխավոր եմ:

Ցես վրդովված յերեսս յետ դարձրի՝ աշխատելով, վոր վորդիներս չլսեն նրա խոսքերը: Բայց բժիշկը, վոր քառորդ դար և ծանոթ եր Պարիզի բարք ու վարքերին, գիտեր այդպիսիների գնահատականը տալ:

— Գնացեք, կորեք, լիրբ—գոռաց նա առանց տատանվելու:

Մարդը խեղճացած, կծկվեց և չքացավ ամբոխի մեջ: Թափառեցինք գլխավոր բուլվարներն ու ավենյուները և տուն վերադարձանք կես գիշերից անց:

Առաջին տպավորությունս անորոշ եր, խառնիխուռն և ավելի բացասական, քան դրական: Boulevard համարվում են այն փողոցները, վորոնք մյուսներից ավելի լայն են և ծառատունկ: Avenue կոչվում են այն նույնպես լայն ու ծառազարդ փողոցները, վորոնք սկիզբն են առնում վորևե խոշոր մոնումենտից կամ պետական հոյակապ շինությունից: Գլխավոր կոչված բուլվարները սկսվում են Մադլեն տաճարից և հետևում են իրար մինչև Սենայի ափերը:

Ընդհանուր առմամբ Պարիզը բաղկացած ե յերեք գլխավոր մասերից—կենտրոնական, աջափնյան (rive droite) և ձախափնյան (rive gauche): Կենտրոնը գլխավոր բուլվարներն են ու նրանց շրջակայքը; Այստեղ ե, Ելիզեի այլոց, և Շանզելիզեն, աշխարհի ամենալայն և ամենագեղեցիկ փողոցը և Place de la Concorde սքանչելի հրապարակը, վոր զարդարված ե Նապոլեոն մեծի Յեգիպտոսից բերած օբելիսկով և Ֆրանսիայի տասներկու գլխավոր քաղաքների խորհրդավոր արձաններով: Մեկն այդ արձաններից—Ստրասբուրգինը այն ժամանակ կրում եր սգո նշան: Այժմ, յերբ վերջին պատերազմից հետո Ալզաս-Լոռեն նահանգը նորեն անցել ե Ֆրանսիայի ձեռքը, նրա գլխավոր քաղաքը ազատվել ե սգո նշանից:

Կենտրոնումն են տեղավորված մեծ մասամբ խոշորագույն առևտրական տները, մագազինները, բորսան, բանկերը, մեծ Թատրոնները և այլն: Դա Պարիզի ամենաբուրժուական մասն ե, այսպես ասած, նրա գրպանն ու փորովայնը: Ուղեղը Սենայի ձախ ափն ե: Այստեղ են լատինական արվարձանը, համալսարանը, Կոլլեժ դը Ֆրանսը, պառլամենտը, Պանթեոնը, Սենատը, Օբսերվատորիան, խոշոր հրատարակչական ընկերությունները, սկսած Հաշետից: Այստեղ ե նաև Ֆրանսիական ռոմանտիկ վիպասանների ու բանաստեղծների այնքան անգամ նկարագրած ու յերգած Սեն-

ժերմեն արվարձանը, վոր սկսելով Բուրբոնների պալատից (այժմյան պարլամենտը), հասնում ե մինչև լատինական արվարձանը: Հին արիստոկրատիան այժմ ել մեծ մասամբ այդտեղ ե կենում, կառչելով պահպանելու իր դարավոր սովորությունները ու ավանդությունները և անպարտապես տանելով բուրժուազիային կամ, ավելի ճիշտ ասած, նախանձելով նրա հարստությանն ու զորու-թյանը . . . :

Այդ շարեշար կանգնած յերկու–յերեք–չորս հարկանի տները արտաքուստ տարբերվում են Շանզելիզեյի կամ մեծ բուլվարների հոյակապ շինություններից վոչ իրանց վոճով ու որիժինալու-թյամբ, այլ խեղճությամբ: Սակայն յուրաքանչյուրն այդ խեղ-ճերից ունի իր դարավոր պատմությունը: Մերթ ուրախ և շքեղ, մերթ մռայլ ու արյունալի:

Պարիզի յերկրորդ նշանավոր մասը Մոնմարտրն ե, արտիստա-կան արվարձանը և գիշերային զվարճությունների և հախուռն շվայտությունների միջավայրը: Այստեղ կյանքը սկսվում ե կես գիշերին, յերբ թատրոններն ու ռեվյուները վերջանում են, և շա-րունակվում ե մինչև առավոտ: Այստեղ են իրենց գիշերներն անց-կացնում ոտարականները, նրանք, վորոնց համար Պարիզը միայն և միայն շվայտության վայր ե: Այստեղ են արևմտյան հյուրերը դատարկում նրանց գրպանները և կրճատում նրանց կյանքը: Այս-տեղ բուն Պարիզը գործ չունի. նա մի անտարբեր ու հեռավոր վկա յե: Մոնմարտրը համաշխարհային և միջազգային մի զվար-ճարան ե, ուր շատ անշան տեղ ունի Ֆրանսիացին: Այդ անթիվ սրճարանները, ճաշարանները, կաբարեները, դանսինգներն և այլն, յերբեմն սրամիտ և հաճախ խեղկատակ անուններ կրող զբոսա-վայրերը 90 տոկոսով լեցուն են ոտարականներով և յերբ տասը տոկոսը հաճախորդների Ֆրանսիացիներ են, համենայն դեպս վոչ Պարիզից, այլ գավառացիներից: Ասում են, յերբ Եդիսոնը Պարիզ յեկած ժամանակ Մոնմարտրը տեսել ե, զարմացած հարցրել ե.

— Ասացեք խնդրեմ, դուք վոր գիշեր–ցերեկ զվարճանում եք, հապա յե՞րբ եք այդքան աշխատել ու ստեղծագործել:

Մի պարիզեցի պատասխանել ե.

— Այս զբոսավայրերը մեզ համար չեն, այլ անգլիացիների ու ամերիկացիների համար:

Յես կավելացնեյի. և ռուսների համար, թե՛ այն ժամանակ,

թե նամանավանդ այժմ, հետպատերազմյան եմիգրացիայի որե-րում: Բայց այս մասին հետո:

Արդարև, ապագայում, յերբ յես քիչ թե շատ ուսումնասիրե-ցի Պարիզը, տեսա, վոր Ֆրանսիացին, առանձնապես պարիզեցին, այնչափ շռայլ ու շվայտ չե, վորչափ առաջին հայացք ե թվում: Ընդհակառակը դուցե վոչ վոք չգիտե իր դրամն ու ժամանակը այնպիսի չափավորությամբ ծախսել, վորպես Ֆրանսիացին և մանավորապես պարիզեցին: Նրա առասպելական խնայողությու-նը հաճախ հանգում ե ժլատության:

Պետ. Հանրային Գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան
2950
40

II

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ: ՌՈԴԵՆԸ: ԹԱՏՐՈՆՆԵՐԸ

Մի քանի օր բնակարանի ու զավակներիս դպրոցներում տեղավորելու խնդրով զբաղվելուց հետո, յես ազատ էյի և ժամանակիս տերը: Վճռել էյի առայժմս թողնել գրական պարապմունքներս և զբաղվել ինձ համար նոր աշխարհի ուսումնասիրությամբ: Դժբախտաբար, թեթևամտություն էյի ունեցել Թիֆլիսում հրատարակվող մի հայ լրագրի (յեթե չեմ սխալվում «Արշալույս» էր նրա անունը) խոստանալ Պարիզից հաղորդելու իմ տպավորությունները: Այդ լրագրի տերն ու տնօրենը Գ. Մ. Կ.-յան անունով մի կոկված ու շպարված յերիտասարդ էր: Կյանքի մյուս ասպարեզներում անհաջողությունների հանդիպած մի փոքրիկ բուրժուա յեր, յեկել փաթաթվել էր հայ գրականության անպաշտպան պարանոցին և «հրապարակախոսության» մեջն էր ճգնում փնտրել իր բաղդը: Սահմանափակ խելքի տեր, նեղսիրտ և վերին աստիճանի նյութամոլ ու ժլատ մեկն էր, թեև համալսարանական: Բարեբախտաբար, յես շատ շուտով ճանաչեցի նրան և մի քանի շատ գրված հոդվածներից հետո, շտապեցի կտրել ամեն մի հարաբերություն այդ մարդու և նրա լրագրի հետ, անգամ հրաժարվելով ինձ հասանելիք հոնորարից:

Նյութականի կողմից այնքան էլ ապահով չէյի: Դարձյալ գրականությունն էր իմ ապրուստի քիչ թե շատ կայուն աղբյուրը: Բայց փոքրիկներիս կրթությունն ապահովված էր: Ռուբենը Ալեքսանդր Մանթաշյանի սանն էր, իսկ Արմենն Ալեքսանդր Մելիք-Ազարյանինը: Առաջինին ուղարկեցի Բելգիա Լիեժի աշխարհահռչակ Պոլիտեխնիկումը մտնելու, յերկրորդը՝ հաջողությամբ քննություն տվեց և մտավ Պարիզի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աղջիկս, Մարգարիտն տվեցի Մոնպարնասյան արվարձանի կոմյունալ ուսումնարանը, վորտեղից նա յերեք տարի հետո անցավ Ֆենելոնի անվան լիսեն: Այսպես թե այնպես, գոհ էյի կյանքից, նույնիսկ յերջանիկ էյի զգում ինձ: Յերջանիկ, վոր ընկել եմ յեվրոպական բարձր քաղաքակրթության ամենավարվոուն

միջավայրը: Ավա՜ղ, չէյի գուշակում, վոր յերեք տարի անցած, ճակատագիրն իմ բախտին տալու յե մի սոսկալի հարված, -սրտիս մեջ ձգելով մի անբուժելի վերք: Հետագայում կասեմ, թե ինչ էր այդ հարվածը…

Որը մինչև յերեկո դեգերում էյի փողոցներում: Առաջին մոնումենտը, վոր այցելեցի, Notre dame de Paris-ն էր, Պարիզի նշանավոր տաճարը: Դա մի տուրք էր գոթական հոյակապ ճարտարապետության և Վիկտոր Հյուգոյի հանճարին, վոր անմահին տվել էր կրկնակի անմահություն: Այնուհետև իմ հաճախման վայրերն յեղան թանգարանները—Լուվրը, Կառնավալեն, Լյուքսեմբուրգը, Կլյունին, հետո կենդանաբանական ու բուսաբանական այգիները, արձանազարդ պարտեզներն ու սկուարները, Բուլոնյան անտառը և այլն:

Կա մի գերմանացի մաղձոտ գրող Մաքս Նորդաու անունով, վորի «Պարիզ» վերնագրով գիրքը մի մեծ ապացույց է, թե ինչպես շովինիզմը կարող է նույնիսկ տաղանդավոր մարդկանց կուրացնել և ձգել սև նախանձի և ատելության փոսի մեջ: Այդ ճիպռոտ դիտողը, Պարիզի արտաքինը նկարագրելով, միայն մի գեղեցիկ բան է գտնում այնտեղ—Ռիվոլի փողոցը և յերեք միլիոն բնակչության մեջ միայն մի հազար մարդ է գտնում իր ուշադրության արժանի:

Պարիզը մի թանգարան է, սկսած միջնադարյան պալատներից և այլ շենքերից—մինչև նորագույն վայրերը: Չկա գրեթե մի պարտեզ կամ հրապարակ, ուր չլինեն գեղարվեստասերի ուշադրության ու հիացման արժանի գործեր: Բավական է միայն Լյուքսեմբուրգ այգին անցնել մի ծայրից մինչև մյուսը, տեսնելու համար, թե Պարիզը արձանագործության ինչ հրաշալիքներ ունի: Դա մի ամբողջ դպրոց է գեղարվեստական ճաշակի նրբացման համար: Այդտեղ են, ի միջի այլոց, Շոպենի, Գուստավ Ֆլոբերի, Ժորժ-Զանդի և ուրիշ շատ նշանավոր մարդկանց արձանները:

Պարիզի գլխավոր հատկանիշն այն է, վոր այցելուի առջև նա միանգամից չի բացում յուր շքեղությունն ու գեղեցկությունը: Նա նման է այն քմահաճ գեղեցկուհուն, վորը չի ուզում առաջին իսկ վայրկյանին ժպտալ նոր ծանոթին: Նա լավ գիտե յուր հմայքի արժեքը: Ամիսներ, նույնիսկ տարիներ պետք է ապրել Պարիզում նրան լավ ճանաչելու համար: Յես շատ ճամբորդներ եմ տեսել, վորոնք առաջին օրերը պարսավել են Պարիզը, ժխտելով նրա գեղեցկությունը, իսկ հետո հափշտակվել են և տխրությամբ հեռացել

նրանից: Այդ տեսակետից առանձին քմահաճույք եյին ցույց տալիս Ռուսիայից և Կովկասից յեկողները:

Շատ որեր խլեցին ինձնից թանգարանները, բայց միայն առաջին տարին: Ցերկրորդ տարուց այլևս չեյի այցելում, բացի Լյուքսեմբուրգ թանգարանից: Այստեղ դրեթե ամեն ամիս նոր գլուխգործոցներ են ավելանում և ով ուզում է հետևել նկարչության ու արձանագործության ընթացքին, պիտի հաճախ այցելի այդ թանգարանը: Կառավարությունը այդտեղ է ժողովում Պարիզի յերկու սալոններում և այլ ցուցահանդեսներում գնած գործերը: Իսկ գնվում են, իհարկե, միայն ընտիրները: Յուրաքանչյուր նկարչի կամ արձանագործի բարձրագույն բաղձանքն է իր գործերից գեթ մեկը տեսնել Լյուքսեմբուրգ թանգարանի մեջ: Այստեղ է տաղանդների համբավը բարձրանում: Տասը տարի արտիստի մահից հետո, նրա գործը Լյուքսեմբուրգից տեղափոխվում է Լուվր, ուր և արժանանում է անմահության կնիքին:

Ցես հետաքրքրվեցի գիտնալ, արդյոք, Լյուքսեմբուրգի մեջ վորևե հայ արտիստի գործ կա և տեսա միայն նատուրմորտիստ Զաքարյանի մի քանի վոչ մեծադիր գործերը: Ռուս նկարիչներից կամ արձանագործներից վոչ վոքի գործը չեմ տեսել այնտեղ:

Վոչ մի զբոսանք կամ աշխատանք մարդուն այնչափ չի հոգնեցնում ֆիզիքապես ու հոգեպես, վորչափ թանգարաններում դեգերելը: Մեկը պիտի լինել յերկու կամ շատ-շատ յերեք անգամից ավելի անցնել ծայրեծայր դիցուք Պարիզի Լուվրը կամ Հռոմի Վատիկանը: Մարդ հոգնում է վոչ միայն այն պատճառով, վոր ստիպված է մի քանի տասնյակ կիլոմետր ճանապարհ կտրել ուշահագրավոր սենյակների մեջ, հոգնում է դիտողությունից, ուշադրության լարումից: Աչքերի հոգնածությունը մտքի գործողության հետ ներգործում են մարմնի ամբողջության վրա, և այցելուն թանգարանից դուրս է գալիս ֆիզիքապես միանգամայն կաղմալուծված:

Աննման են, իհարկե, Ֆիդիասին ու Պրաքսիտելին, Ռաֆայելին ու Ռեմբրանտին կամ Ռուբենսին ու Տիցիանին նվիրված ժամերը. բայց յերբ չափազանցության ես հասցնում հետաքրքրությունդ, հոգիդ ու մարմինդ ճնշվում են տպավորությունների հորձանքի տակ: Միևնույն ժամանակ ուղեղիդ մեջ առաջանում է մի տեսակ քաոս, և յերկար որեր չես կարողանում տպավորություններդ բաժանել իրարուց ու դասավորել: Գուցե դրա պատճառն այն է, վոր մեր աչքերը մանկությունից չեն ընտելացել

նման տեսարանների ու մեր հոգին նման տպավորությունների, և մենք շտապելով ամեն բան միանգամից տեսնել, բռնադատում ենք մեզ մեր պատրաստությունից և ուժերից վեր լուծ վերցնել մեզ վրա:

Ցես դրեթե համոզված եմ, վոր ֆրանսիացին կամ իտալացին, մանավանդ վերջինը, այնքան չի ճնշվում թանգարանների տպավորությունների տակ, վորքան մենք: Չե՞ վոր թե՛ մեկի և թե մյուսի աչքերը մանկությունից արդեն ընտելանում են գեղեցիկին ու նրբին:

Ցերբ յես թափառում եյի Պարիզի և հետագայում Հռոմի ու Նեապոլի հրապարակներում ու պարտեզներում, նախանձում եյի մեկը մյուսից գմայլելի արձանների ու կիսարձանների տակ վազվզող մանուկներին, հիշելով մերոնց: Լյուքսեմբուրգ պարտեզը, Լատինական արվարձանի այդ գեղեցկագույն անկյունը, գլխավորապես մանուկների զբոսավայրն է: Որը մինչև յերեկո նրանք իրանց դայակների կամ մայրերի հսկողությամբ ծառերի ստվերներում խաղալով, շատ բան են տեսնում ու շատ բան սովորում: Փույթ չէ, վոր մանկան մայրը կամ դայակը վոչ միշտ ձեռնահաս է տեսածները բացատրելու, ինքը մանկան հոգին լուռ խոսում է այդ սքանչելի արձանների ու կիսարձանների հետ և անգիտակցաբար ծծում է նրանց իմաստը: Նեապոլի քաղաքային պարտեզն այնպիսի հրաշալիքներ ունի, վորոնք լավագույն թանգարանների զարդերը կարող են լինել: Նույնը և Հռոմի Վողեզը և Պարիզի Պարկ-Մոնսոն: Իսկ ի՞նչ են տեսնում մեր մանուկները Թիֆլիսի կամ Բաքվի փողոցներում: Համենայն դեպս, վոչ այն, ինչ վոր կարող է կրթել նրանց ճաշակը և նրբացնել նրանց միտքը:

Ցերբ բացվեցին Պարիզի յերկու հռչակավոր սալոնների աշնանային ցուցահանդեսները, գնացի տեսնելու: Վերնիսաժի որն եր: Ինձ ուղեկցում եր անդրիագործ Անդրեաս Տեր-Մարուքյանը, Խաչատուր Աբովյանի արձանի հեղինակը, վոր այնպես վաղաժամ մահացավ թոքախտից կամ, ճիշտն ասած, անոթությունից: Դժբա՛խտ մարդ, վորպիսի՛ տառապանքներ ու զրկանքներ կրեց նա հանուն գեղարվեստի և հանուն անհաղթելի փափագի՝ մի նեղ ուղի բանալ իր համար արվեստների մայրաքաղաքում և կյանքի քաոսում:

Ցերբ մտա Սալոններից չեմ հիշում վորի արձանների գալերեան, մի գործ առաջին իսկ հայացք շշմեցրեց ինձ. և յես մի քանի վայրկյան մնացի բևեռված իմ տեղը: Դեմ ու դեմ մեջքի

կողմով կանգնած էր մի վիթխարի մարդ առանց գլխի։ Այդուստ Ռոդենի վերջին գործն էր l' Homme qui marche (Մարդ, վոր ընթանում է, կամ Ընթացող մարդը)։ Նրա բոբիկ վոտների խոշոր ջլերը ձգվել էին յերկաթյա լարերի պես, նրա մարմնի բոլոր մասերը ֆիզիքական զորության գերմարդկային թափին էին արտահայտում։ Թվում էր, վոր մարդը կանգնած չէ, այլ իրավ ընթանում է, և այդ դեպքում գլուխն արդարև ավելորդ է։

Յես առաջ էլ տեսել էի հանճարեղ ծերունու ստեղծագործությունները։ Լյուքսեմբուրգ թանգարանում դիտել էի նրա հուշի «Համբույրը», «Վիկտոր Հյուգոն» իր հանճարեղ ու բարեհամբույր դեմքով, և Պանթեոնի կուրծքը լուսավորող հոյակապ le Penseur-ը (Մտածող, խորհող)։ Բայց այդ գործերից վոչ մեկն ինձ վրա այն զորեղ տպավորությունը չէր գործել, վորպիսին գործեց «Ընթացող մարդը»։ Իմ ազդվումն այնչափ խորն յեղավ, վոր յես մի քանի անգամ վերադարձա նորեն ու նորեն դիտելու ու սքանչանալու։ Հետագայում, յերբ մի քանի անգամ այցելեցի մեծ վարպետի արհեստանոցները, տեսա նրա վոչ պակաս ընտիր գործերը, դարձյալ այդ գործն էր, վոր մնաց գերազանց իմ հիշողության մեջ։

— Գիտեք, — դարձավ ինձ Տեր-Մարուքյանը, տեսնելով իմ մանկական հիացումը, — Ռոդենն անպայման մեր ժամանակի ամենահանճարեղ արտիստն է, բայց հազիվ թե նա ունենա հետևողներ։

— Ի՞նչու։

— Վորովհետև դժվար է նրան աշակերտելը։ Այն, ինչ ներվում է նրան, մի ուրիշին չի ներվիլ։ Դուք գիտեք, վոր ժյուրին չընդունեց նրա «Բալզակը», բայց այդ ժյուրիի մեջ կար վոչ պակաս տաղանդավոր Ֆալգիերը, վորին աշակերտելու բաղդն յես էլ եմ ունեցել։

— Սակայն չէ՞ վոր նույն Ֆալգիերը, ապագայում զղջալով, կամեցավ իր սխալն ուղղել և չինեց Ռոդենի արձանը։

— Դա զղջում չէր, այլ ֆրանսիական galenterie. Ռոդենն էլ իր կողմից չինեց Ֆալգիերի արձանը։ Ամենքը նախանձում են Ռոդենի համբավին, բայց վոչ վոք չի հետևում նրան, բացի սկըսնակ յերիտասարդներից։

— Այդ շատ բնական է և ով գիտե, այժմ քանի-քանի ապագա Ռոդեններ կան նրա արհեստանոցներում։

Հայ արձանագործը արձակեց մի խոր և յերկարատև հառաչանք և ասաց։

— Այո, դուք իրավացի յեք, ֆրանսիական ազգը մեծ ազգ է, իսկ մենք...։

Նա չավարտեց իր խոսքն և, ձեռը ոդի մեջ թոթափելով, առաջ գնաց։ Իմ հիշողության մեջ այսօր էլ կենդանի յե նրա գյուղացու գծագրություն ունեցող հողագույն դեմքը, վոր ծանր մտահոգության և հարատև կարիքի վոգին էր արտացոլում։ Կովկասի այն ժամանակվա խուլ անկյունից, Յերևանից գալով, նա աշխարհի ամենաթանձր քաոսի մեջ բաղդ էր փնտռում, և մահ գտավ։ Յեվ ահա այսօր Աբովյանի արձանը միակ գործն է, վոր պետք է մոռացումից փրկե նրա անունը։

Ռոդենի մեծագույն արժանիքն այն էր, վոր արձանի կամ մոնումենտի վրա ժխտում էր աքսեսուարի անհրաժեշտությունը, նա պնդում էր և ապացուցեց, թե մարդու կամ առարկայի ներքինը պիտի դրսևորել առանց արտաքին ատրիբուտների։ Ահա ինչու նրա le Penseur-ը առողջ, մերկամարմին, հաղթանդամ մի մարդ է, վոր մակերեսորեն դիտող մեկը կարող է կարծել, թե ըմբիշ է կամ բոքսյոր։ Նրա վիթխարի մարմինը մեջքից թեքվել է մտքի ծանր գործողության ներքո։ Ֆիզիքականը հաղթահարվել, ընկճվել է մտավորի զորությամբ։ Շատ հավանական է, վոր մի թեկուզ վոչ պակաս տաղանդավոր, բայց շաբլոնային արտիստ, penseur-ին կներկայացներ վտիտ մարմնով, հյուծված կերպարանքով մեկը, կամ այրում մեկուսացած մի ճգնավոր, գուցե և նրա առջևը կդներ ահագին ֆոլիանտներ կամ ձեռը կտար մի գրիչ։ Բայց Ռոդենն այդպես չի յերևակայել մտածողին։ Նա չի ուզեցել և չէր կարող իր նախորդների ու ժամանակակիցների հարթած ուղիով գնալ։ Նա իր համար նոր ուղի յեր գտել։ Նույնն է արել նաև Բալզակի արձանի վերաբերմամբ, ներկայացնելով մեծ գրողին առանց վորևե աքսեսուարի, գրեթե մերկ։

Ռոդենը խորը հոգեբան է, և վորպես այդպիսին, նա չի կարող ռեալիստ չլինել և զուր չեն ականավոր քննադատները և ակադեմիկոսները նրա անունը խոշորագույն ռեալիստների ցանկի մեջ մացըրել․ վերջապես նա ինքը հպարտությամբ և պարծանքով ընդունեց այդ կոչումը...

Բայց ինչ վոր էլ ասեն քննադատներն ու բծախնդիր դիտողները, Ռոդենը տասնուիններորդ դարի վերջին քառորդի և քսաներորդ դարի առաջին քառորդի խոշորագույն ստեղծագործողներից մեկն է, յեթե վոչ ամենախոշորը արվեստների ասպարեզում։ Նա

նույնն է արձանագործության մեջ, ինչ որ են վիպասանության մեջ Բալզակը, Ստենդալը, Դոստոյեվսկին, Տոլստոյը:

Չեմ հիշում, նույն աշնանն էր թե հաջորդ տարին, յերբ առաջին անգամ այցելեցի «Անկախ արտիստների» մի ցուցահանդես: Այդ ընկերությունը մեծ սալոնների հետ կապ չունի և նույնիսկ նրանց հակառակ ուղղությամբ է կազմված: Այդ ընկերության մեջ կարող են անխտիր մասնակցել ամենքը, այսինքն և՛ պրոֆեսիոնալ արտիստները, և՛ ամատորները: Նրա ցուցահանդեսների դռները բաց են ամենքի համար: Այդտեղ է, որ այցելուն հանդիպում է արտառոց յերևույթների: Պատմեմ նրանցից մեկը, որի մասին յես ժամանակին գրեցի մի հայ լրագրում:

Բավական անվանի մի նկարիչ, կամենալով ծաղրի յենթարկել ցուցահանդեսը և լրագրական քննադատությունը, կանչում է իր արհեստանոցը իր բարեկամներից մի քանիսին, իմիջի այլոց և մի նոտարի: Նա բերում է մի էշ, կապում է նրա պոչին մի վրձին: Նա սկսում է իշի սանձը քաշել աջ ու ձախ, յետ ու առաջ, էշը շարժվում է, նրա պոչը խաղալով, կտավը ներկում է վրձինով: Նկարը պատրաստ է, մնում է խորագիրը, հնարագետ նկարիչը նրա տակ գրում է «Արեգակի մուտքը (թե յելքը—չեմ հիշում) Ադրիատիկյան ծովի վրա»: Նոտարը արձանագրություն է կազմում, ներկա յեղողները ստորագրում են:

— Դուք կտեսնեք,— ասում է նկարիչը,— իմ իշի ստեղծագործությունը ոչ միայն կցուցադրվի, այլև կգովվի լրագրներում:

Այդպես էլ լինում է: Լրագրների մի մասը գովում է իշի նկարը, այցելուների մի խոշոր մասը հիանում է նրանով: Գուցե գտնվեր և մեկը, որ գներ իշի ստեղծագործությունը, յեթե կատակասեր նկարչի բարեկամները չշտապեյին հայտնել նրա կատակը: Այդտեղից է առաջացել «իշի պոչով» ծաղրական խոսքը, որ այժմ էլ գործ է ածվում մամուլի մեջ, յերբ պետք է լինում ծաղրել այս կամ այն նկարը:

Այդ նույն ցուցահանդեսում տեսա, իմիջի այլոց, մի շատ խայտառակ նկար. Վիլհելմ յերկրորդը մերկ և Նիկոլայոս յերկրորդը նրա առջև կանգնած...ուռած փորով...Շուտով վոստիկանությունը գրավեց այդ նկարը...

Ֆրանսիացին հաճախ ցինիկ է, բայց յերբեք նրա ցինիկությունը զուրկ չէ իմաստից, նաև սրամտությունից: Վոչ վոք չգիտե այնպես ծաղրել, վորպես ֆրանսիացին. Նրա հատու-լեզուն վոչինչ չի խնայում, նույնիսկ ինքն իրան: Լատինական արվարձանի Noctembule կաբարեյում ամեն գիշեր դուք կլսեք ֆրանսիական հյումորի կծու և հատու նմուշները: Այստեղ ծաղրակծվում է հասարակական բարք ու վարքից սկսած մինչև ընտանեկան ու անհատականը, պարլամենտի անդամներից, մինիստրներից ու հանրապետության նախագահից սկսած մինչև վերջին քաղաքացին, հարկավ, յեթե նրա դեմքն ունի հասարակական վորևե արժեք: Միևնույն ժամանակ ֆրանսիացին գիտե յերևույթների իմաստն անմիջապես գունավորել յերկու-յերեք, յերբեմն մի բառով և տալ նրանց ճշգրիտ ու սրամիտ անուն ու տարածել ամենուրեք: Միայն մի դեպքում նա նեղվեց և չկարողացավ բնորոշել: Դա Լև Տոլստոյի ընտանիքից փախչելն էր մահվան նախորյակին: Այդ ժամանակ յես Պարիզումն էի: Հիշում եմ ինչպես մեծ գրողի անվանը ծանոթ ֆրանսիացիները իրարու հարցնում էին:

— Այդ ի՞նչ է նշանակում:

Վերջապես մի ֆելետոնիստ գրեց.

— Այդ նշանակում է ռուսական «ничего»:

Թանգարաններից ու ցուցահանդեսներից ժամանակավորապես կշտացած, սկսեցի այցելել թատրոնները: Մի բան, որ շռայլություն էր իմ նիհար գրպանի համար: Յես սովորված յեղա ախորժակս մի փոքր սանձահարել և թատրոն գնալ շաբաթը մի կամ յերկու անգամ: Այդ դեպքում յես ինքս ինձ մխիթարում էի այն իրողությամբ, որ պարիզցիները շատ չեն հաճախում թատրոնները և սեզոնի ընթացքում մի տասն անգամ թատրոն գնալն արդեն համարվում է բուրժուական շռայլություն: Յես կարող էի, վորպես թատերագիր, յեթե վոչ ամենուրեք, գոնե «ազգային» կոչված յերկու թատրոններում ունենալ ձրի աթոռ: Բայց դրա համար անհրաժեշտ էր մի քանի տեղեր դիմել, բացատրել, խնդրել. մի բան, որ հակառակ էր իմ բնավորությանը, ուստի և ատելի: Տեղն է ասել, որ այն ժամանակ հայ թատրոնի ճակատագիրը գտնվում էր Բաքվի մի խումբ բուրժուաների ձեռքում: Այդ խումբը խնդրել էր ինձ, որ հետևեմ Պարիզի ռեպերտուարին և յեթե մեր բեմին համար պիես տեսնեմ, թարգմանեմ կամ ուղարկեմ թարգմանելու: Յես իմ մի նամակում ակնարկեցի, թե դրա համար դրամ է պետք: Պատասխանս յեղավ լռություն: Բայց և այնպես, յերկու սեզոն յես հետևեցի ֆրանսիական ռեպերտուարին, տեսա տասնյակ պիեսներ, կարդացի հարյուրներ, և թարգմանության արժանի յերկ չգտա: Այդ տարիներն առհասարակ ֆրանսիական գրականությունը ճգնաժամի մեջ էր, մանավանդ թատերա-

կանք: Ասպարեզի տերերն եյին Էդմոն Ռոստանը իր մինչև կոկորդ ձանձրացրած «Սիրանո դը Բերժերակ»-ով, սանտիմենտալ «Արծ-վիկ»-ով, իսկ հետո իր ռեկլամներով ուռեցված «Chantecler»-ով, Բատայլն իր հղկված բուրժուական ընտանեկան կյանքի ին-տրիգները վորձող կոմեդիաներով, Բեռնշտայնը իր ներվեր փրփրող մելոդրամներով և մի խումբ յերիտասարդ թատերագիր-ներ, վորոնց անունները այսօր չեմ հիշում, վասն զի մի օր փայ-լում եյին, մյուս օրը չքանում:

Մնում եր կլասիկ ռեպերտուարը, Եսքիլեսը, Կոռնեյլը, Ռասի-նը, Մոլիերը, Comédie Française-ի հավիտենական տերերը: Մու-նե Սյուլլին դեռ կենդանի յեր, Կոկլենները նույնպես: Առաջինին յես տեսել եյի դեռ յոթ տարի առաջ, 1899 թվին Ոդեսայում, ուր յես աքսորված եյի ցարական հրամանով: Միջահասակ, նիհար ու գունատ ծերունի յեր ալեխառը մորուքով: Տեսել եյի «Եդիպ Թա-գավորի», «Համլետի» և «Օթելլոյի» դերերում: Նա այն չեր Եսքիլեսի և Շեքսպիրի յերկերում, ինչ վոր տեսա ֆրանսիական կլասիկների գործերում: Այստեղ գեղեցիկ դեկլամատոր եր հար-կավոր, և Մունե Սյուլլին Ռասինի ու Կոռնեյլի բանաստեղծու-թյունները արտասանում եր ինչպես միայն և միայն ֆրանսիական հանճարը կարող եր արտասանել—զմայլելի:

Մունե Սյուլլին իր հայրենիքի ամենամեծ դերասանն եր: Յերկ-րորդ սյունը բեմական արվեստի՝ Կոկլեն—անդրանիկն եր: Յեր-կուսի տարբերությունը ամպլուաների մեջ եր: Մունե Սյուլլին յերգելով եր խոսում: Այդպես եր հին դպրոցը և ֆրանսիական կլասիկ ռեպերտուարը: Կոկլեն—անդրանիկի արտասանությունը պարզ եր ու բնական, նույնպես և ռեպերտուարի պահանջմամբ: Նա ռեալիստ եր բառիս լավագույն իմաստով: Առհասարակ սխալ է ասել, թե ամբողջ ֆրանսիական դերասանությունը խոսում է յեր-գելով և խաղում է կեղծ պաթոսով: Comédie Française-ում ժամանակակից պիեսները խաղացվում ու արտասանվում են վոչ պակաս ռեալ տոնով, քան դիցուք Մոսկվայի առաջնակարգ թատ-րոններում: Չպիտի մոռանալ, վոր հենց ինքը ռեալիզմը արվեստ-ների, ինչպես և գրականության մեջ, ծնունդ է առել Ֆրանսիա-յում և այնտեղից է տարածվել:

Ինչ տարբերություն կար Մունե Սյուլլիի և Կոկլեն—անդրանիկի մեջ, նույնն եր և Սառա Բեռնարի ու Ռեժանի մեջ, թե՛ խաղի և թե ռեպերտուարի վերաբերմամբ: Սառա Բեռնարը դրամատիկ դե-րասանուհի յեր, Ռեժանը՝ կոմիկ: Յերկուսն ել ունեյին սեպհական

թատրոն, յերկուսն ել ապրում եյին ծերության տարիները, ճգնե-լով դանդաղեցնել իրանց աստղերի թեքումը: Յեվ մասամբ այդ հաջողվում եր նրանց: Տեսնելով Սառա Բեռնարին Դյումայի «Կա-մելիազարդ տիկնոջ» դերում և Ռեժանին Սարդուի «Մադամ Սանժենի» դերում, ո՞վ կարող եր ասել, վոր թե՛ մեկի և թե մյուսի տարիքը 30-ից ավելի յեն, մինչդեռ յերկուսն ել արդեն վաղուց եյին թևակոխել կես դարը: Մանավանդ զարմանալի յեր Սառա Բեռնարի ախորժալուր, արծաթահնչյուն ձայնը: Մի ձայն, վոր տասնուհինգ տարուց հետո լսելիս եյի ինձ հիացրեց իր յերիտա-սարդական թարմությամբ:

Թատրոններից ու դրամայից հետո իմ հետաքրքրությունն անցավ յերաժշտության, բայց վոչ հավասար չափով ու վոգևորու-թյամբ: «Grand Opéra» և «Opéra Comique» գնում եյի շատ քիչ անգամ: Այդտեղ իմ ժամանակ լավ յերգիչներ ու յերգչուհիներ չկային, բացի տենոր Ալվարեսից: Լավագույն յերա-ժշտությունը լսում եյի Կոլոնի և Լամուրեի կոնցերտներում, նաև այս կամ այն բացառիկ յերեկույթներում, յերբ մասնակցում եյին խոշորական հայտնի յերաժիշտներ կամ յերգիչ-յերգչուհիներ: Իսկ գալիս եյին նրանք շատ հաճախ: Հարկավ, յես վոչ այնքան մի-ջոցներ ունեյի և վոչ ել ժամանակ ամենքին լսելու և տեսնելու: Պարիզն այնքան հարուստ է գեղարվեստական հաճույքներով, վոր չկա մարդկային հնարավորություն ամեն տեղ գնալու ու ամեն բան տեսնելու: Պարիզը մարդկության ներվերի կծիկն է, այնտեղ մարդ շուտ է հոգնում: Զուր է այն կարծիքը, թե ֆրանսիացին, ինքն իր վրա սիրահարված լինելով, կույր ու խուլ է ոտարազգի տաղանդների ու հանճարների վերաբերմամբ: Ճշմարիտ է, ֆրան-սիացին իր արվեստները, իր գրականությունը և առհասարակ իր քաղաքակրթությունն է համարում ամենից բարձրը, և շատ բանե-րում ունի իրավունք, բայց նա գիտե յուրաքանչյուրի գնահատա-կանը տալ բավական անկողմնապահ և ճիշտ: Հազարավոր փաստեր կարելի յե բերել ասածս ապացուցանելու համար, բայց բավական է և մեկը: Ով յեղել է գեթ մի անգամ Պարիզում և առիթ է ունե-ցել ֆրանսիացիների հետ խոսելու, գիտե, թե ինչ հափշտակու-թյամբ են խոսում նրանք ռուս գրականության (Դոստոյեվսկու, Տոլստոյի և նույնիսկ յերկրորդականների), մանավանդ ռուս յե-րաժշտության (Մուսորգսկու, Բորոդինի, Գլինկայի, Դորգո-միժսկու և Ռիմսկիյ-Կորսակովի) մասին: Հիշում եմ այն օրերը, յերբ Պարիզը ծայրե ի ծայր լցնում եր ռուս ոպերաները ռուս

յերգիչների բերնից լսելու և ռուս բալետները՝ ռուս արտիստների պարով տեսնելու: Հիշում եմ մամուլի առատորեն շռայլված գովասանքները առանձնապես ռուս բալետին: Միակ առավելությունը, վոր այդ դեպքում ֆրանսիացին պահում էր իր համար, այն էր, թե ինքն է առաջին անգամ բալետը Ռուսիա տարել Եկատերինայի օրերում:

Նախ քան իմ հիշողությունների ներկա գլուխը փակելը, մի փաստ, թե ինչպես ճամբորդները շտապում են հապճեպ արտահայտվել ֆրանսիացու մասին: Սորբոնի պրոֆեսորներից մեկի դասախոսության առարկան էր մի սեզոն «Օտարների տպավորությունները Ֆրանսիայից»: Հիշում եմ նրա բերած օրինակներից, ի միջի այլոց, հետևյալը: Վոմն ռուս ճամբորդ հրապարակախոս պարիզյան թղթակցության մեջ գրում է. «Պարիզում բոլոր բժիշկները շառլատաններ են փոքրիկներից սկսած մինչև հռչակավոր Պաստերը»:

— Այդ թղթակցությունը,—ասաց պրոֆեսորը, հեգնորեն ժպտալով,—գրված է նույն տարին և նույն ամսին, յերբ Պաստերը իր նորագյուտ շիճուկը սրսկելով Կալուգայի նահանգում կատաղած գայլից խածնված և Պարիզ յեկած տասնույոթ ռուսների, փրկել էր նրանց կատաղությունից և մահից:

III

ՊԱՐԻԶԸ ԳԻՇԵՐԸ

Գիշերվա տասնումեկուկես ժամն է: Թատրոնները դատարկվում են, կաֆեները լցվում են: Գեղարվեստական վայրերից հետո մարդիկ զգում են մի բան ուտելու կամ մի բաժակ սուրճ խմելու պահանջ:

Յուրաքանչյուր պարիզարնակ իր սիրացյալ կաֆեն ունի, վորին յերբեք չի դավաճանում, որը յերկու անգամ այցելելով սովորական «ապերիտիվն» ընդունելու համար: Բայց թատրոնից դուրս գալիս նա հապճեպ մտնում է առաջին պատահած կաֆեն: Նա շտապում է. ժամանակ չունի խտրություն դնելու. ուղիղ տասներկուսուկես ժամին «մետրոն» (ստորերկրյա յերկաթուղի), դիլիժանսները (այժմ բացառապես ավտոբուսներ) և տրամվայները դադարում են գործել: Շատերը կենում են մեծ թատրոններից հեռու, իսկ մասնավոր «տաքսի» (ինքնաշարժ) շատ քչերն են վերցնում: Պարիզեցին առհասարակ ժուժկալ է և խնայող, հաճախ ժլատության չափ: Յեվ ունի իրավունք այդպես լինելու. նրա յեկամտի յուրաքանչյուր սանտիմը չափի տակ է: Նա չի կարող այդ սանտիմը դեն շպրտել:

Մոտ յերկու ժամին սկսում են փակվել և կաֆեները: Ջե՞ վոր «գարսոն»-ներն էլ (տղա, սպասավոր) հանգստի պահանջ ունեն: Յեվ ահա նրանք արտակարգ աղմուկով և իրարանցումով աճապարում են տերրասների վրայից վերցնել ու ներս տանել նստարաններն ու աթոռները, «մետրդոթելի» դիրեկտորային հսկողության ներքո:

Նրանք հոգնած են անսահման: Շատերը հազիվ կարողանում են քայլել, շշուկներով անիծելով իրանց ճակատագիրը: Նրանք ծառայության յեկել են առավոտյան ութ ժամին և աշխատել են գիշերվա մինչև յերկու ժամը, տասն և ութ ժամ: Յեվ ինչպե՜ս են աշխատել—մի՛շտ վոտքի վրա: Նրանք ծառայության ժամանակ չունեին իրավունք նստելու, բացի այն կես կամ մի ժամից, վոր տրվում է նրանց նախաճաշի կամ ճաշի համար: Յեվ ի՞նչ են ստա-

նում նրանք իրանց տերոջից: Վոչինչ: Շատ կաֆեներում սպասավորներն իրենք են վճարում կաֆեյի տերոջը, որական 2—3—5 ֆրանկ «ջարդի», այսինքն՝ ափսե կամ բաժակ կոտրելու համար: Վճարում են, միևնույն է, կոտրել են թե՞ չէ: Բացի դրանից, կաֆեներում այցելուների գործածած թուղթը, ծրարն ու գրիչն էլ նրանց հաշվին է: Միակ նրանց վարձը «պուրբուարն» է, այն տասը տոկոսը, վոր այցելուն շպրտում է նրանց, շատ անգամ մտքում տրտնջալով: Ծառայության ժամանակ նստելը նրանց արգելված է ընդունված սովորությամբ: Չպետք է, վոր այցելուները ու անցորդները սպասավորներին տեսնեն նստած: Հակառակ դեպքում կաֆեյի վարկը կարող է նսեմանալ. «սպասավորը նստած է, ուրեմն գործերն անաջող են», այսպես կը մտածե տեսնողը:

Յերկու ժամն է: Այլևս ամայի յեն մեծ ու փոքր բուլվարներն ու պողոտաները: Այս ու այնտեղ հազիվ յերևում են հատ-հատ ուշացած անցորդներ, այս ու այն քառուղիի վրա, գազային լապտերի ստվերում նշմարվում է կարճ թիկնոցի մեջ ցրտից կծկված վոստիկանի դորշագույն կերպարանքը: Մերթ ընդ մերթ ասֆալտյա սալահատակով սրընթաց սլանում են գիշերային պահակները վելոսիպեդներով, յերկուսը, յերեքը, յերբեմն չորսը միասին: Մթության մեջ նրանք վիթխարի չղջիկների տպավորություն են գործում իրանց լռությամբ և սառն ոդի մեջ ծածանվող ռունգներով: Կարծես յերկրի վրա չեն, այլ ոդի մեջ:

Այն տարին այդ գիշերային վելոսիպեդավոր պահակները Պարիզի համար նորություն էյին: Դա պրեֆեկտ Լեպինի, այդ փոքրահասակ, աղվեսանման և իր արտաքին վոչնչության տակ ծայր աստիճան դաժան վոստիկանապետի վերջին հնարագիտությունն եր: Բանն այն է, վոր «ապաշ» կոչված գողերը, սրիկաները ու մարդասպանները շատ եյին «լրբացել»: Գիշեր չեր անցնում, վոր նրանք մի քանի մարդ չկողոպտեյին կամ չսպանեյին, նույնիսկ կենտրոնական բուլվարների ու փողոցների վրա: Պարիզը դարձել եր ծայր աստիճան վտանգավոր գիշերային մենավոր անցորդների համար: Մամուլը աղմկում եր, վոճիրները տասնապատիկ խոշորացնելով և ամենամռայլ գույներով նկարագրելով: Այդ կողմից առանձին յեռանդ ու խանդ եյին գործադրում բուրժուական թերթերը: Բայց ինչ ոգուտ: Հնարագետ Լեպինը, վոր մեծ վարպետ եր բանվորական խաղաղ ցույցերը կամ հակապետական ժողովները հետապնդելու և իր բյուրավոր աժանների կրունկների տակ ճզմելու արվեստի մեջ, այս անգամ չկարողացավ իր գլխի տեր

բուրժուազիայի հանգստությունն ապահովել: Ապաշները կային, մնացին և այժմ մանավանդ կան ու «գործում» են:

Ովքե՞ր են նրանք: Այս մասին մի քանի խոսք:

Ապաշները Պարիզի քաղաքային կյանքի գունազեղ ծնունդն են, նրա արգանդից յելած, նրա արյունից ու վոսկորից բաղկացած, նրա ճարպակալած մարմնի խոցը:

Ապաշը խուլիգանի ամենահանդուգն ու ամենավտանգավոր տեսակն է: Նրա միակ արհեստն է կողոպուտն ու սպանությունը հանուն կողոպուտի: Նրա գոյության գործիքն է աջ ձեռով վարտիքի գրպանում բռնած դանակը և շատ քիչ դեպքերում ռեվոլվերը, վորովհետև այս վերջինը թանգ է նրա համար:

Ապաշը ծայր աստիճան խուժադուժ է, բայց վոչ քաջ: Նա մենավոր անցորդի վրա մեծ մասամբ կռնակից է հարձակվում ու, նախքան կողոպտելը, յերկաթե գավազանով կամ ստիլետով հարվածում է նրա գլխին ու ուշաթափեցնում: Պատահում է, վոր դեմ ու դեմ էլ է հարձակվում: Այս դեպքում նա, մենավորին հանդիպելով, հեռվից արդեն իրան հարբած է ձևացնում, մոտենում է յերերվելով և հանկարծ գլխով զարնում է իր զոհի փորովայնին: Նա գիտե վոր կողմին հարվածել: Զոհն ուշաթափվում է, և ապաշը դատարկում է նրա գրպանները: Վա՜յ յեթե զոհը արթնանա և ընդդիմադրի, կայծակի արագությամբ դանակը կխրվի նրա սրտի մեջ:

Յուրաքանչյուր ապաշ ունի հարճ, վորին նա կոչում է amie, յերբեմն մի քանիսը: Նա ամենքի հովանավորն է, կատաղի պաշտպանը և ամենքին շահագործում է յուրաքանչյուրի ձիրքի և ընդունակության համաձայն: Գլխավորապես նա amie-ների միջոցով է զոհերին իր ուռկանը վորսում: Մի կին, վոր մի անգամ ընկել է ապաշի ձեռքը, չունի այլևս վոչ մի հնար նրա ճիրաններից ազատվելու, իսկ յեթե փորձե ազատվել, անմիջապես կարժանանա նրա դանակի հարվածին, վոր մեծ մասամբ մահացու յե: Ապաշը վերին աստիճանի խանդոտ է, և վայ այն կնոջը, վոր կդավաճանի նրան: Յեվ այս ռոմանտիկ հողի վրա որ չի պատահում, վոր Պարիզում տեղի չունենա վորևե դրամա, մեծ մասամբ սպանություն:

Ապաշներն ունեն իրենց յերգերը, իրենց յերաժշտությունը, իրենց գրականությունն անգամ: Դա մի առանձնակի և ինքնահատուկ մշակույթ է: Կան յերաժիշտներ ու բանաստեղծներ, վոր հատկապես նրանց համար են հորինում կամ նրանց կյանքն և վարքն ու բարքերն են յերգում ու գովերգում: Շատերն այդ յերգերից ու

ռամաններից անցնում են բուրժուական սալոնները: Ճաշարաններ ու սրճարաններ կան, վորոնց հաճախորդները գրեթե բացառապես ապաշներ են: Շատ վտանգավոր է կողմնակի անձանց համար այդ վայրերում յերևալը: Մի քանի անգամ յես առիթ եմ ունեցել գնալու, բայց միշտ մի խումբ ընկերներով: Դժվար է անտարբեր նայել հմուտ ապաշի աչքերի բիբերին, այո, բիբերին, վասն զի նրանց մեջ դուք տեսնում վոճիրի դրոշմը ու սերը, այնտեղ եք կարդում մարդու հոգին, յեթե միայն մնացել է վորևե հոգի այդ ալքոհոլից թունավորված և շվայտությունից վաղաժամ հյուծված ու կազմալուծված մարմնի մեջ: Շատ կարճ է տեվում ապաշի գործունեյությունը և նույնիսկ կյանքը: Մինչև 28–30 տարեկան հասակը նա կամ գլխատված է կամ աքսորված:

Կան ապաշներ, վորոնք իրանց արտաքինով վոչնչով չեն տարբերվում սովորական քաղաքացիներից: Հագնվում են այնպես, ինչպես առորյա բուրժուաները,—հարուստ, մաքուր և միշտ ճաշակով: Ավելի վտանգավորները դրանք են: Նրանց գործողության վայրերը փողոցները չեն. այլ թատրոնները, վարիետեները, մանավանդ թանգագին խանութները, բանկերը, կամ բորսան: Դրանք ավելի խոշոր վոճրագործներ են, ավելի նրբացած և ավելի սոսկալի: Նրանց հոգու ղեկավարը միայն շողշողուն վոսկու հմայքը չէ, այլ և անառողջական տարփանքը դիվային վավաշոտության:

Պատմեմ մի ցցուն դեպք վերջին տեսակի վոճրագործների կյանքից: Վորքան հիշում եմ, Սոլեյան եր նրա անունը: Քսան և ութքերեսուն տարեկան յերիտասարդ եր, արդեն ամուսնացած և այժմ այրի: Նա ծանոթանում է իր հարևան այրի կնոջ հետ: Այրին ունի 8—9 տարեկան մի սիրուն ու խարտյաշ աղջիկ, միակ զավակը: Իր համեստությամբ, իր արտաքին հեզիկ ձևերով, իր նվերներով ու գուրգուրանքով Սոլեյանը գրավում է այրի կնոջ համակրանքն ու հավատը: Մի որ նա խնդրում է այրիին՝ թույլ տալ իր փոքրիկին նրա հետ արվարձանի թատրոնը գնալու: Այրին թույլ է տալիս ուրախությամբ: Թող փոքրիկը առաջին անգամ թատրոն տեսնի և զվարճանա: Աղջիկը գնում է: Մայրը նրան սպասում է ամբողջ յերեկո, ամբողջ գիշեր: Լուսաբաց է, իսկ աղջիկը չկա: Մայրը վազում է Սոլեյանի մոտ:

—Ո՞ւր է իմ յերեխան:

— Ա՜հ, տիկին, յես հուսահատության մեջ եմ: Թատրոնից դուրս գալու ժամանակ փոքրիկը հանկարծ բաց թողեց իմ ձեռը և մնաց ամբոխի մեջ: Փնտրեցի յերկար ժամանակ, չգտա, վազեցի ամբողջ գիշեր դես ու դեն, չկա ու չկա: Այժմ հոգնած եմ սաստիկ և ուժասպառ,—ավարտում է իր խոսքը Սոլեյանը և դռները փակում է հուսահատ մոր առջև:

Այրին վազում է վոստիկանատուն, պատմում է յեղելությունը:

Հիշում եմ այն որերը, յերբ կորած աղջկանը փնտրում եյին: Ամբողջ վոստիկանությունը վոտքի յեր կանգնել: Պրեֆեկտ Լեպինը հայտարարեց, թե 10,000 ֆրանկ կստանա նա, ով կգտնե աղջկան: Ռեկլամամոլ «Matin»-ը նույնպես իր կողմից հայտարարեց 10,000 ֆրանկ: Հասարակությունը հուզվել եր, մամուլը անասելի աղմուկ եր բարձրացրել: Յես ինքս ամեն առավոտ զարթնելուպես շտապում եյի առավոտյան լրագրները գնելու: Չեմ հիշում չորս թե հինգ որ տեվեցին վորոնումները: Վերջապես, մի որ հարևաններից մեկը հայտնեց վոստիկանությանը, թե նա յերեք որ առաջ Սոլեյանի սենյակի լուսամուտներից մեկի մեջ նկատել է մի դեռահասակ աղջիկ, վոր տխուր դեմքով նայում եր դեպի տան դավիթը: Յեվ վոստիկանությունը վճռեց անել այն, ինչով պիտի սկսեր—խուզարկել Սոլեյանի բնակարանը: Խուզարկեց և այնտեղ գտավ վառարանի մեջ աղջկա մի ազդրը կիսով չափ այրված, իսկ մարմնի մյուս մասերը կտրտած և այս ու այնտեղ թաղցրած:

Բժշկական քննությունը հաստատեց, վոր Սոլեյանը նախ քան սպանելը, աղջկան բռնաբարել եր: Վոճրագործը ձերբակալվեց: Դատարանը նրան դատապարտեց գլխատման: Հանրապետության նախագահն այն ժամանակ Ֆալլիերն եր, գիլյոտինի սկզբունքային հակառակորդը: Նա դատավճիռը վերածեց տաժանակիր աքսորի: Բուրժուազիան բողոքեց, առանձնապես կանայք, վորոնք մի բողոքագիր ներկայացրին նախագահին:

Լեպինն առանց վարանման ասաց լրագրերին.

— Թող գիլյոտինը թողնե մի քանի գլուխներ, Սոլեյանները կը չքանան:

Պառլամենտում խնդիր հարուցվեց, արդյոք ինքը նախագահը ամեն անգամ վոճիր չի գործում, մահավճիռներ փոխելով: Սոցիալիստները հեղնորեն ժպտացին: Հիշում եմ Ժան Ժորեսի զայրացկոտ ճառը պառլամենտում: Մահվան դատավճի՞ռը: Դա ֆիկցիա յե: Գիլյոտի՞նը: Նա վորպես պալիատիվ, անզոր է վոճիրների դեմ: Հասարակական խրավակարգերը պիտի արմատապես փոխել: Կրթության սիստեմն է հոռի, պետք է նրան դնել ուրիշ

հոմի մեջ: Միայն սոցիալիզմը կարող է մարդկային գազրելի բնազդները սանձահարել:

— Գլխատե՛լ, գլխատե՛լ,—չէր դադարում աղաղակել սոցիալիզմի կատաղի թշնամի Լեպինը բուրժուազիայի ձայնակցությամբ:

Ցեվ Ֆալյերին ստիպեցին Սոլեյանի հաջորդներին գլխատել: Մի քանի տարի հետո վիճակագրությունը ապացուցեց, վոր Սոլեյանների թիվը վոչ թե պակասում է, այլ ընդհակառակը աճում է:

Վորքան ապաշն զգաստ ու յերկչոտ է մենավոր անցորդներին կողոպտելու կամ սպանելու ժամանակ, նույնքան անվեհեր է բանտի, աքսորի, այո, նույնիսկ գիլյոտինի վերաբերմամբ: Յեղել են 20–22 տարեկան պատանիներ, վոր կառափնարան են բարձրացել անտարբեր, ամուր քայլերով, յերբեմն նույնիսկ ժպտալով ու օրախոսելով, վորպես որվա նախանձելի հերոսներ: Յեղել են և այնպիսիները, վոր հրաժարվել են բանտային քահանայի առաջարկած հաղորդությունից:

Ինչո՞վ բացատրել առեղծվածը: Ո՞վ գիտե, գուցե նրանով, վոր յուրաքանչյուր ապաշ պատանեկությունից արդեն մտքով ընտելանում է բանտի, աքսորի ու գլխատման գաղափարին: Արդարև, ի՞նչ է բանտը նրա համար: Նա արդեն տասն անգամ յեղել է այնտեղ և բարեկամացել է հռչակավոր վոճրագործների հետ: Ի՞նչ է աքսորը: Զբոսանք դեպի Ալժիրիա կամ Մարոկկո: Ի՞նչ է գիլյոտինը, յեթե վոչ ապաշի հերոսային վախճանը, նրա պերճանքը: Չե վոր յերեկ գլխատեցին Ժակ—Ծիծաղկոտին, իսկ անցյալ տարի Ետիեն—կաղին: Վաղ թե ուշ ամեն մարդ մեռնելու յե. հիմարությո՛ւն: Քանի,՛ քանի՛ անգամ «քաջարի ու բարի Դեբլերը», վոր դահիճի արհեստն իր հորից ու պապերից է ժառանգել, լրագիրների թղթակիցներին ասել է. «Բոլոր մահերից ամենամարդասերը գիլյոտինն է, կացինս չաչեց բարձրից, ընկավ և քըրթ կտրեց դատապարտյալի գլուխը, ու մի վայրկյանում ամեն ինչ վերջացավ առանց յերկար տանջանքների»:

Վո՞րտեղ է ծնվում և ո՞ւր է դաստիարակվում ապաշը: Հարցրեք յուրաքանչյուրին, և հազիվ թե շատերը կարողանան պատասխանել, թե ովքեր են յեղել իրանց ծնողները: Իհարկե, անվիճելի յե, վոր շատ յերևույթների հետ ապաշն ել տիրապետող դասակարգերի ծնունդ է: Մի որինակ միայն և միայն մեկը շատերից:

Պարիզում կա «Assistance Publique» (հասարակական ոգնություն) անունով մի հաստատություն: Նրա նպատակներից մեկն է, իմիջի այլոց, անտեր ու անտիրական մանուկներին ու աղջիկներին խնամելը: Վոստիկանությունն այդ հաստատության շենքն է ուղարկում փողոցներում գտնված անտեր յերեխաներին, նրա դռների առջև են ձգում մայրերը ապորինի նորածիններին, յերբ վճռում են ազատվել նրանց կերակրելու հոգսից կամ իրանց ամոթը թագցնել: Այնտեղ դռները բաց են «բոլոր թշվառների համար», այսպես է ասում բուրժուական մամուլը:

Այնտեղ բերված կամ ձգված յերեխաներին լվանում են, մաքրում, հագցնում, ապա սկսում են սնուցանել ու «կրթել» մինչև տասնուհինգ տարեկան հասակը: Տարրական գրագիտության հետ խնամյալներին սովորեցնում են և վորևէ արհեստ—կար ու ձև, հյուսնություն, արկղաշինություն, էլ չգիտեմ ինչ, բայց բոլորը մակերեսորեն, ավելի ձևի և ռեկլամի համար, քան թշվառների ապագան ապահովելու նպատակով:

Տասնուհինգ տարին լրացած, հաստատության դռները բացվում են և «խնամվածը» շպրտվում է փողոց: Թող գնա և ինքը հոգա իր ճակատագրի մասին, պետք է տեղ բանալ նորեկների համար: Ահա կյանքի այդ խորթ զավակների շրջանից են զգալի քանակությամբ դուրս գալիս ապաշները: Այդ շրջանն է մասամբ նյութ մատակարարում զանազան անունների ու վարագույրների տակ պարուրված անառականոցներին: Ասում եմ մասամբ, վորովհետև պոռնկության պահանջը չափազանց մեծ է Պարիզում, վորպեսզի մի վորևէ միջավայր կամ դասակարգ կարողանար նրան լիովին բավարարել: Զարիքի գլխավոր ծննդանոցը կարիքն ու չքավորությունն են, ուր ես կան նրանք:

Բայց դառնանք Պարիզի գիշերին:

— Գնանք Մոնմարտրը,—ասաց ինձ կովկասցի մի ծանոթ, յերբ ճաշից հետո Բուլմիշի կաֆեներից մեկում սուրճ եյինք խմում:

— Գնանք,—համաձայնվեցի յես:

Առաջին որը չէր, յեղել եյի մի քանի անգամ և արդեն բավական ծանոթացել Մոնմարտրի կյանքին: Ծանոթս հայ եր. Թիֆլիսեցի: Կլորիկ մարմնով աշխույժ, տակավին բավական յերիտասարդ մեկն եր, թեև վաղուց ամուսնացած և արդեն մի չափահաս աղջկա հայր: Հարուստ եր, ուներ Թիֆլիսում մի քանի տներ հորից ժառանգած: Զվարճասեր, ուտող խմող և վերին աստիճանի վավաշոտ մեկն եր, ինչպես առհասարակ մեծամասնությու-

նը իմ հայրենակիցների: Առաջին անգամն էր Պարիզ գալը, ուստի նորելուկի փութկոտությամբ աճապարում էր որքան շուտ, այնքան էլ շատ վայելել նրա «հաճույքները», որոնց մասին լսել էր շատ առասպելներ:

Նա ասում էր.

— Ինչո՞ւ Մանթաշովը կյանքը կվայելե, յես չեմ վայելի, յեթե նա միլիոնատեր ե, յես էլ ունեմ իմ չափը:

Մանթաշովը նրա իդեալն էր:

Մոնմարտրում կյանքը դեռ չէր սկսվել, բայց ծանոթս շտապում էր: Նա ուզում էր ամբողջ յերեկոն ու գիշերը, առանց ժամավաճառ լինելու, նվիրել զբոսանքների:

— Ֆոլի Բերժեր,—ասացի յես կառապանին, յերբ Պարիզի աշնանային սովորական մառախուղի մեջ տեղավորվեցինք միաձի փակ կառքում:

— Լսեցի,—ասաց գերամարմին ու զվարթադեմ կոշեն, յերկայն մտրակը շաչեցնելով ձիու գլխի վրա:

Այն ժամանակ Պարիզում ոթոմոբիլներ շատ քիչ կային, փողոցներում յերթևեկն այնքան խճողված չէր, որքան այժմ, յերբ, ինչպես Ամերիկայի, նույնպես և Յեվրոպայի քաղաքներում ոթոմոբիլը վերջնականապես դուրս ե մղել ձիակառքերը:

Ֆոլի Բերժերը ընթացիկ ամսվա ամենաշատ ռեկլամված զբոսավայրն էր: Յեկել էյին անգլիացի դեռահաս աղջիկների մի խումբ պարուհիներ: Այս առիթով շատ էր խոսվում Ֆոլի Բերժերի մասին: Իբր թե պարուհիների խումբը բաղկացած էր բացառապես Լոնդոնի հայտնի ընտանիքների աղջիկներից, իբր թե նա յեկել ե ոչ դրամի, այլ իր արվեստը ցուցադրելու համար: Իբր թե խումբը գտնվում էր դայակների հոգածության տակ, որոնք պաշտպանում են նրա անմեղությունն ու անմատչելիությունը: Մեկը անպատկառ ռեկլամներից, որոնք միայն ոտարներին են կարողանում խաբել և որոնց վրա պարիզեցին հեգնորեն ժպտում ե:

— Ասում են, այդ աղջիկները լորդի կոկոններ են,—կրկնում էր հայրենակիցս, անդադար պտույտվելով կառքի մեջ, ինչպես լարված խաղալիք:

Ինձ համար հետաքրքրականը «կոկոնները» չէյին և ոչ «Ֆոլի Բերժերը», այլ ինքը, ծանոթս: Նա ժամանակակից բուրժուայի կատարելատիպերից մեկն էր: Շատ էլ տգետ մարդ չէր: Գիմնազիոնը ավարտած էր, քիչ թե շատ կարդացած, բավական ճամբոր-

դած և բավական շփված ինտելիգենտ մարդկանց հետ: Նա Թիֆլիսի քաղաքային ինքնավարության անդամ էր, մասնակցում էր զանազան խորհրդակցություններում, ուր քննվում էյին քաղաքի տնտեսական, կրթական նաև բարոյական կացության խնդիրները: Վերջապես շատ էր սիրում պտտել մտավորականների շրջանում, որպեսզի ինքն էլ մտավորական համարվե:

Չգիտեմ ինչու, նա ինձ խնդրում էր, որ յես իրան Սոմիկո անվանեմ և հետը յեզակի դեմքով խոսեմ:

Առաջին բանը, որ անմիջապես գրավեց Սոմիկոյի ուշադրությունը, յերբ մտանք «Ֆոլի Բերժերի» պրոմենուարը (զբոսավայր), դռներից ոչ հեռու կանգնած ծաղկավաճառ աղջիկն էր, ոչ այնքան գեղեցիկ, որքան նուրբ ու բարեձև, ինչպես միջին պարիզուհին: Սոմիկոն իսկույն մոտեցավ նրան և, մի փունջ ծաղիկներ վերցնելով, սկսեց հոտոտել, վավաշոտ պավիանի պես իր փոքրիկ աչքերը ճպճպելով ու աղջկան ժպտալով:

— Դու գնա քո բանին, յես հետո կը գամ,—ասաց խորհրդավոր յեղանակով, այնպես որ, կարծես, մի շատ կարևոր գործով պիտի զբաղվեր:

Նա մի քիչ գիտեր ֆրանսերեն, կարող էր նեղություն չզգալ: Պարիզում առհասարակ շատ դյուրին են հասկանում անլեզու ոտարականի միտքը և մեծ ճարպիկություն էլ հարկավոր չե նրա գրպանը դատարկելու համար: Այդ տեսակետից առաջին դափնին պատկանում ե հանրային կանանց: Մի քիչ դժվար ե հասկանալ ոտարականի գրպանի զորությունը և մանավանդ նրա առատաձեռնության չափը, բայց այդ էլ շուտով պարզվում ե, յեթե ոտարականն առաջին անգամն ե Պարիզ յեկել: Փորձված և աչալուրջ ոտարականներն աշխատում են այս կամ այն կերպ թաքցնել իրանց հարստությունը, դիմացինի ախորժակը չգրգռելու համար: Սոմիկոն այդպիսիներից չէր: Նա իր ձախ ձեռի մատներից մեկի վրա կրում էր մի խոշոր ադամանդ շողշողուն փայլով: Նա ամեն անգամ ծխելիս ծխախոտի ոսկե տուփը, որ զարդարված էր տասնյակ գոհարներով, դիտմամբ թողնում էր սեղանի վրա, որպեսզի կանայք տեսնեն:

Սոմիկոն յերկու-յերեք վարդերի համար սեղանի վրա ձգեց մի ոսկի: Աղջկա դեմքը շառագունեց ուրախությունից: Նայեց Սոմիկոյի յերեսին ու սև մազերին և մտքում որոշեց, թե դա կամ յեգիպտական փաշա յե կամ հնդկական ռաջա, իսկ յես նրա քարտուղարն եմ:

Ես մտա խուռը բազմության մեջ, սպասելով ներկայացման սկսվելուն: Ինձ ևս հետաքրքրում էին դեռահաս անգլուհիների ռեկլամված պարերը: Վորովհետև առաջին անգամն չէր, վոր գտնվում էի այդպիսի մի զբոսավայրում, ուստի գիտեյի յուրաքանչյուր ինձ մերձեցող ու թևս մտերմաբար բռնող աղջկանից մի քիչ թե շատ սրամիտ կամ հաջող խոսքով ինձ ազատել: Բայց աղջիկներն այնքան բազմաթիվ են, այնքան սիրալիր ու այնքան համառ իրանց հետապնդման մեջ, վոր այցելուն շատ շուտ է հոգնում:

Ես քաշվեցի մի անկյուն և այնտեղից դիտում էի ամեն յերկրի, ամեն ցեղի, ամեն գույնի ու հասակի կանանց այդ խառնիճաղանճ և յերանգավոր բազմությունը, վորին անշուշտ անոթությունն է բերել թափել այդ թեթևակի վարագուրված պոռնկատունը: Միջավայրը վոչ այնքան յեղկելի յե, վորքան կարեկցելի: Ոդը տոգորված է եժանագին անուշահոտ յուղերի բուրմունքով, ծխախոտի թանձր ծխով, կիսամերկ մարմինների շոգիով ու հոտով: Մերթ ընդ մերթ ընդհանուր ծիծաղի ու քրքիջների միջից ուշադիր լսելիքը վորսում եր խուլ հառաչանքներ, յերբեմն նույնիսկ հեծկլտանք: Ով գիտե դա վո՞ր «սիրականից» խաբված կամ կողոպտված եյակի հոգու խռովահույզ ճիչն է...

Ինձ մոտենում է մի շատ բարձրահասակ և շատ գեղեցիկ կին պղնձագույն մորթով և թանձր ու սև մազերով. կատարյալ մի Կլեոպատրա: Անշուշտ արևելցի յե: Նա ինձնից ծխախոտ է խնդրում: Տալիս եմ, ասում է «մերսի» և չի հեռանում: Նա իր փարթամ ու հոտավետ ստինքը ցցել է ուղիղ դեմքիս ու ժպտում է: Ես չեմ ժպտում, նա բարձրաձայն ծիծաղում է: Ե՜վ ինչ ծիծաղ, ի՜նչ ձայնով, ուղղակի ջարդված զանգ, սուր ու գրգռիչ: Անշուշտ նա գիտեր, վոր իր գլխավոր հմայքը այդ չէ, և վոչ էլ գեղեցկությունը, այլ մարմնի պղնձյա գույնը, վասն զի նա դրանով է տարբերվում հազարավորներից:

Վո՞րտեղից է նա յեկել կամ բերվել: Գուցե Մարոկկոյից կամ Ալժիրիայից, համենայն դեպս նա յեվրոպուհի չէ: Տասնուհինգ տարի անցած յես այդ տեսակ գեղեցկուհիներ միայն Յեգիպտոսում տեսա...

Տարօրինա՛կ բան, այդ աղջիկը ինձ փոխանակ համակրանքի կամ կարեկցության, յերկյուղ է ներշնչում: Թվում է ինձ, վոր այդ զարմանալի կանոնավոր կառուցված մարմնի մեջ բուն է դրել արևելյան նենգությունը: Թվում է ինձ, վոր սովերի մեջ

կանգնած է նրա դաժան հովանավորը, մի ապաշ կամ «սուտընեոր», դանակը սրած: Ընդունիր նրա առաջարկած հյուրընկալությունը՝ գնալ նրա սենյակը, «մի գավաթ սուրճ խմելու», և դու արդեն կորած ես: Այնտեղ դու կը մորթվես կողոպտվելու համար: Չե՞ վոր լրագիրները որ չի անցնում, վոր չհաղորդեն նման դեպքեր:

Ես շտապում եմ հեռանալ գեղեցկուհուց առանց մի բառ արտասանելու: Ինձ ուղեկցում է նրա սևաթույր աչքերի կայծակը ու կատաղի հայացքը. կարծես յես նրան կողոպտեցի:

Ներկայացումը սկսվել եր. բազմությունը ճեղքելով, մոտենում եմ Սոմլիկոյին: Բարեկամս արդեն յերջանկության գագաթումն է: Նա սեղանի վրա ձգել է տասնյակ վոսկիներ, վերցրել է անթիվ ծաղիկներ և մեկիկ-մեկիկ ձգում է անցնող աղջիկների վրա: Նա հմայված է, վոր հետաքրքրություն է շարժել, վոր նրան ամեն կողմից շրջապատել են և բարձրաձայն ծիծաղում ու քրքջում են: Վոմանք փաթաթվում են նրա պարանոցին և համբուրում են: Իսկ ծաղկավաճառը, վոսկիները գրպանը ձգելով, հրճվում է: Վաղը նա այդ բոլորը կպատմե իր ընկերուհիներին, և ամենքը կքրքջան և ոտարականի մասին կասեն «Ահա մի իսկական տխմար»:

Ես թողեցի Սիմլիկոյին իր դրախտային վայելքի մեջ, մտա սրահ ու նստեցի մեր ոթյակում: Շատ չանցած նա յեկավ յերկու մաշված ու տաշված գեղեցկուհիների ուղեկցությամբ, յերկուսի հետ ել թևանցուկ:

— Մեկը քեզ, մյուսն ինձ,—ասաց նա հաղթական յեղանակով:

— Շնորհակալ եմ, յերկուսն էլ քեզ:

Նա վշտացավ: Ես հետաքրքրվեցի գիտնալ, ինչպես բաժանվեց ծաղկավաճառից:

— Այցետոմսս տվեցի, վաղը կգա ինձ մոտ:

Վերջապես, մի շարք յելույթներից հետո, բեմ դուրս յեկան «կոկոնները»:

Սոմլիկոն իր դամերին մոռացավ և, կռնակը նրանց դարձնելով սկսեց ուշադիր դիտել պարուհիներին, այնպես, ինչպես ձիասերն է դիտում արշավի յելած անծանոթ նժույգներին: Անգլուհիները, իհարկե, կոկոններ չեյին, բայց պարում եյին հիանալի, հակառակ այն ընդհանրացած կարծիքին, թե անգլոսաքսոնյան ցեղի կանայք առհասարակ համրաշարժ են և չունեն ֆրանսուհու կամ իտալուհու թեթևությունն ու ճկունությունը:

Սակայն Սմիկոն չհավանեց պարուհիներին։

— Բանի պետք չեն,—ասաց նա, յերեսը դարձնելով իր դամերին,—վոտները խիստ յերկար են, կուրծք ու...ել չունեն։

Վերջին մի բառի ֆրանսերենը չգիտեր, ուստի յերկու ձեռները դրեց թե մեկ և թե մյուս դամայի վորոշ տեղերի վրա։ Այդ անսքող ժեստը մեծ հույս ներշնչեց դուրգուրանքի կարոտ եյակներին, բայց յես վճռել եյի բարեկամիս ազատել նրանց թախծյաճանկերից։ Ավաղ, այդ այնքան էլ դյուրին չեր։ Թշվառներն անոթի եյին և միանգամայն համոզված, վոր մեզ հետ պիտի ընթրեն։ Սմիկոն հակառակ չեր դրան։ Յես տվեցի յերկուսին կես-կես լուիդոր, ասելով «կառքի համար», և նրանք գոհ մնացին։ Այնուամենայնիվ, Սմիկոն չվարանեց տալ նրանց իր այցետոմսը և վաղվա համար ժամադրություն նշանակել, մոռանալով ծաղկավաճառին։ Առհասարակ նա յուրաքանչյուր պատահողին, կին թե տղամարդ, տալիս եր իր այցետոմսը։ Յերևի վճռել եր Պարիզի քաղաքում լայն ժողովրդականություն վաստակել։

Մոնմարտրում, խմիչքի այլոց, կան իրարուց վոչ հեռու յերեք կաբարեներ՝ «Նեյան» (չիք կամ չքություն), «Անֆեր» (դժոխք) և «Սիել» (յերկինք)։

Դրանք, թեև արտաքուստ բավական որիժինալ, ըստ եյության չնչին բաներ են, բայց վոչ մի յեկվոր առանց այդ կաբարեները տեսնելու չի հեռանում Պարիզից։

Սմիկոն լսել եր նրանց մասին, ուստի ինձ խնդրեց առաջնորդել իրան այնտեղ։

Գնացինք առաջինը «Չքության»։ Նա գտնվում է մի մեծ տան ներքին հարկում։ Նրա մուտքը փողոցի կողմից քողարկված է սև ու թանձր վարագույրով ճիշտ այնպես, ինչպես վարագուրվում են կաթոլիկ ննջեցյալի տան դռներն ու յեկեղեցու մուտքը, յերբ այնտեղ դիակ կա։

Մեզ դիմավորեց դռների մոտ կանգնած մեկը, վոր հագած եր դիակառք ուղեկցողի համազգեստ, մոտավորապես հետևյալ խոսքերով.

— Ահա յեկան չքության դատապարտված նոր թշվառներ։ Յեկեք, յեկեք, բարի գալուստ։ Հավիտենականության դռները պատրաստ են ձեզ գրկաբաց ընդունելու։

Խոնավ ու մութ սենյակ է կամարաձև առաստաղով։ Պատերի վրա կախած են մարդկային գանգեր և դանազան վոսկորներ։ Առաստաղից ձգված է, վորպես լապտեր, մի կմախք, մեջը մի վառ

մոմ։ Սեղանների փոխարեն դրված են դագաղներ, վորոնց վրա տնկած յեկեղեցական մոմերը հազիվ հազ փարատում են խավարը։ Մեզ առաջարկում են նստել մի դագաղի քով։

— Արդյոք, ինչո՞վ եք փափագում սառչել, չան կաթո՞վ, թե՞ կատվի մեզով։

— Յերկու գավաթ գարեջուր,—պատվիրում եմ յես։

Սովորական սրճարաններում այն ժամանակ գարեջրի բաժակն արժեր 40–50 սանտիմ, իսկ այստեղ 2 ֆրանկ։ Յեվ ի՛նչ գարեջուր—կատարյալ լվացքի հեղուկ։ Յես գիտեմ ինչ է—չեմ խմում։ Սմիկոն փորձում է և իսկույն դեմքը թթվեցնելով, գավաթը հեռացնում է իրանից, հայերեն մի պատկերավոր հիշոց ուղղելով մատակարարի յերեսին։

Բացի մեզնից կան և ուրիշ այցելուներ։ Հինգ ամերիկացիներ, դագաղի քով նստած դիք-դիք, անշարժ, կարծես, գերեզմանատան ցցուն քարեր են։ Պատերից մեկի վրա կախված է մի մեծ նկար։ Մի ինչ վոր յերջանիկ և առողջադեմ բուրժուա իր բարեկամների հետ զվարճանում է։ Մեր ուշադրությունը դարձնում են այդ նկարի վրա։ Հանկարծ բուժուան կապտում է, դունատվում։ Նրա մարմինը սկսում է աստիճանաբար փթել, թափվել։ Մնում է չոր կմախքը։

— Այս է կյանքը,—լսվում է մի մռայլ ձայն։

Սմիկոն սկսում է ներվայնանալ և ինչ վոր մրմնջալ։ Մեզ վրա ձգում են մանիշակագույն լուսո ճաճանչներ—վո՞րտեղից է, չեմ տեսնում։ Մեկը տալիս է մեզ մի հայելի, ասելով.

— Հիացեք ձեզնով։

Նայում եմ. դեմքս կատարյալ դիակի գույն ունի։ Սմիկոն սարսափած, հայելին շպրտում է գետին ու փշրում։ Նայում է արձանացած ամերիկացիներին, վոտքի յե յելնում, գոռալով։

— Գնանք, գնանք, յես ել չեմ կարող այստեղ մնալ...

Յես աշխատում եմ նրան հանգստացնել, ասելով, թե այդ բոլորը ուրիշ վոչինչ է, յեթե վոչ ելեքտրական գունավոր լույսերի խաղ։ Նա մի քիչ հանգստանում է, հետո ամաչելով իր ահաբեկությունից, ասում է.

— Յես չվախեցա, հանաք եյի անում։

Բայց կեղծում է։ Նա վախեցավ և շատ սաստիկ։ Այդ յերևում եր նրա դեմքի գունատությունից, ձայնի հուզումից ու ձեռների դողոցից։

Մի քանի նման շաղպատանություններից հետո, մեզ քարե սա—

մուկ կամարների տակով տանում են կաբարեյի խորքը: Այնտեղ, սեմի մթության մեջ մեզ դիմավորում է մի ծերունի շատ բարձրահասակ, շատ նիհար, այնպես նիհար, վոր կարծես, կաշի յել չի մնացել նրա վրա: Նրա ճաղատ ու լերկ գլուխը կատարյալ գանգ է, խորն ընկած քունքերով ու այտերով: Վորտե՞ղ են գտել այդ կենդանի կմախքը: Ակամա մտածում եմ, վոր մարդուն արվեստական միջոցներով են այդ դրությանը հասցրել, անոթությամբ կամ դեղերով: Մարդը մեզ վողջունում է անդրգերեզմանային ձայնով, իր գոս ձեռներից մեկը մեզ պարզելով, մյուսով նվագելով կրծքին սեղմած գարմոնիկի պես մի գործիք..

Մենք նրան տալիս ենք մի քանի սու և անցնում վերջին կամարի տակ. դարձյալ կմախքներ ու վոսկորներ: Բայց այստեղ բեմ էլ կա: Դուրս են գալիս գիշերային հագուստով մի յերիտասարդ և մի սիրուն կին: Սկսում են սիրաբանել անխոս, միայն շարժումներով: Բայց հենց վոր սիրաբանությունը հանգում է վերջաբանին, և գործող անձերը սկսում են մերկանալ, հանկարծ չքանում են:

Սոմիկոն հիասթափված գոչում է.

— Վայ, ափսո՜ս...

Դուրս գալու ժամանակ նրանից պահանջում են կոտրած յերկու ֆրանկանոց հայելու համար քսան ֆրանկ: Նա տալիս է անտրտունջ: Առհասարակ նա դրամ չի խնայում, ծախսում է առատորեն, ինքն իրան արդարացնելով:

— Ֆրանկ է, ռուբլի չէ...

կամ.

— Պարիզ յեկողը փող չպիտի խնայի...

Գնացինք «Դժոխք»:—Այստեղ կենդանի մարդուն ձգում են խարույկի մեջ, այրվում է, մոխիր է դառնում, հետո նորեն կենդանանում է: Բայց Սոմիկոյի համար ամենահետաքրքրականը, իհարկե, «Յերկինքն» է: Այդտեղ «յերջանկություն» է տիրում: Բեմի վրա պարում ու յերգում եյին շատ թեթև զգեստավորված, գրեթե մերկանդամ աղջիկներ, խելական աղջիկներ և վոչ լույսերի խաղ:

— Ել այստեղից վոչ մի տեղ չգնանք,—ասաց Սոմիկոն զվարթացած:

Բայց քիչ անցած ավելացրեց.

— Քաղցած եմ, մի բան ուտենք:

Յես էլ քաղցած եյի: «Յերկնքում» ճաշարան չկար: Մենք դուրս յեկանք և գնացինք մերձակա ռեստորաններից մեկը— Rat Mort...

Այն տարին Rat Mort (սատկած առնետ) Պարիզի մոդային ու թանգ ռեստորաններից մեկն եր: Իմ գրպանի՛ թեթևությունը կամ ավելի ճիշտն ասած, թեթևամտությունը, իհարկե, թույլ չեր տալիս ինձ հաճախ այցելելու այդ տեսակ ճաշարաններ, բայց անհրաժեշտ եյի համարում գոնե մի քանի անգամ թույլ տալ ինձ այդ շքեղությունը բարքերի ուսումնասիրության տեսակետից: Տեղն է ասել, վոր յես միշտ այն կարծիքի յեմ յեղել, թե ռեալիստ գրողը մեծ գեղարվեստական սխալ է գործում, յերբ հանձն է առնում նկարագրել անձամբ չուսումնասիրած, մանավանդ չտեսած բաները: Յեթե գրողը ուզում է հավատ ներշնչել ընթերցողին, այսինքն նրա վրա ճշմարտության տպավորություն գործել, հապա նա յերբեք չի հասնիլ իր նպատակին, յեթե սոսկ իր յերևակայությամբ է ղեկավարվել: Ուզում եմ ասել, իրականությունը չէ, վոր պիտի ընթանա յերևակայության հետևից, այլ ընդհակառակը՝ յերևակայությունը պիտի ղեկավարվի իրերի ճշգրիտ ուսումնասիրությամբ: Յես ամաչելու չափ վատ եմ զգում, յերբ մի շարքային պարզ ընթերցող իմ այս կամ այն յերկի մեջ ցույց է տալիս ինձ իմ սխալը իրականության դեմ, թեկուզ այդ սխալը վերաբերվի մի վորևէ տեսարանի նկարագրությանը: Այդ տեսակ սխալ յես հեղինակի համար համարում եմ նույնքան աններելի, վորքան դրվածքի հոգեբանական սխալը:

«Սատկած առնետի» ծաղրելի պատմությունը բավական բնորոշ է պարիզյան բարքերի համար: Առաջ նա յեղել է փոքրիկ գիշերանոց: Մի ինչ վոր ոտարական մի անգամ այնտեղ գիշերելիս իր անկողնի մեջ գտնում է մի սատկած մուկ: Նա կանչում է հյուրանոցի տիրոջը, և մուկը ցույց տալով, ասում է.

— Պարոն, յես քո հյուրանոցի անունը փոխեցի. այսուհետև յես նրան անվանելու յեմ սատկած մուկ ու այդպես էլ գրելու յեմ լրագրում: Յես թղթակից եմ:

Ֆրանսիացին չի շփոթվում: Նրա գլխում մի նոր միտք է հղանում: Նա ասում է.

— Շատ գեղեցիկ, յես համաձայն եմ, թող այդպես լինի, միայն խնդրում եմ չգրել Souris mort (սատկած մուկ), այլ Rat mort (սատկած առնետ), այդ ավելի քաղցրահնչյուն է:

Այդ անվան տակ հնարագետ ֆրանսիացին հյուրանոցին ավե-

լացնում է մի սրճարան վարի հարկում և մի գիշերային ռեստորան վերի հարկում: Ձեռնարկը հաջողվում է, ռեստորանը համբավ է վաստակում իր տարորինակ անվան շնորհիվ:

Այդ տեսակ ճարպիկ աֆերիստները առհասարակ մեծ քաղաքներում հազարավոր միջոցներ ունեն հարստանալու կամ անուն հանելու համար: Այս տեսակետից Պարիզն առաջին տեղն է բռնում: Վոչ մի մեծ քաղաք չունի ամենուրեք կողոպտման դատապարտված ճամբորդների այնպիսի հոծ բազմություն, վորպիսին ունե բուրժուական «ազատության, յեղբայրության, հավասարության» սքանչելի մայրաքաղաքը: Պարիզը մի լիճ է, վոր սնվում է մի կողմից ներս հոսող, մյուս կողմից դուրս հոսող լայնատարած մի գետով: Այնտեղ մշտապես կա միլիոնի չափ ժամանակավոր այցելուների մի բազմություն, վոր յերբեք չի պակասում, այլ ընդհակառակը:

Ինչ համբավ և ինչ հրապույր էլ ունենա Պարիզը, նրա գլխավոր զենքը ռեկլամն է, ավելի ճիշտն ասած, ռեկլամի ձևը, վորն զի Ֆրանսիացին այդտեղ էլ լավագույն վարպետն է: Նրա ռեկլամը ձեզ չի խլացնում միլիարդների կոպիտ, աններդաշնակ թմբկահարությամբ, ինչպես այդ անում է ամերիկյան ռեկլամը: Նա յերգում է մեղմիկ, քաղցրահնչյուն: Ամերիկացու ռեկլամն ապուշ է. իր միլիարդների մուրճով մի հարվածով շշմեցնում է իր զոհին և այնպես կողոպտում: Ֆրանսիացու ռեկլամը անուշ ժպտալով, շոյելով, փաղաքշելով, մանավանդ սրախոսելով է մտնում գրպանդ ու դատարկում: Բացի այդ, նա այնքան ագահ ու անկուշտ չէ, վորքան ամերիկյանը: Շատ անգամ նա սանտիմներով է բավականանում:

Իմ բարեկամ Սոմիկոն յերևելի գաստրոնոմ եր և շատակեր. իսկ խմելու մեջ շատ քիչ մրցակիցներ ուներ իր հայրենիքում: Քանի քանի անգամ տեսել եյի նրան տնային խնճույքներում իր արծաթապատ «հազար փեշա»-ն դատարկելիս:

Յերբ մենք մտանք «Սատկած սոնետ»-ի սեղանատունը, յերբ Սոմիկոն տեսավ թարմ ծաղիկներով պճնված և պես-պես ըմպելիքներով ծանրաբեռնված ձյունափայլ սեղանները, նրա կլորիկ, տանձաձև դեմքը պսպղաց հղկված պղնձի պես, իսկ փոքրիկ կիսանիրհ աչքերը արտացոլեցին ներքին հուրը, վորպես չիկացած ածուխի փշրվածք:

— Նստենք, նստենք շուտ,— ասաց նա և վազեց առաջ:

Բայց նստելու տեղ չկար. բոլոր սեղանները բռնված եյին:

Կանայք բացառապես դեկոլտե եյին, իսկ տղամարդկանց միայն մի մասը ֆրակավոր, իսկ մյուսը մասը մեզ նման պարզ հագնված, թեև, իհարկե, սև գույնով: Կային և՛ այնպիսիները, վոր ճամբի մոխրագույն հագուստներով եյին: Անշուշտ դրանք այն անգլիացիներից եյին, վորոնք ամեն շաբաթ որ գալիս են յերկու գիշերով Պարիզի գրոսանքները վայելելու: Նրանք ժամանակ չեն ունեցել իրանց հագուստը փոխելու և յեկել են այստեղ ուղղակի յերկաթուղու կայարանից: Վաղը կիրակի յե, ամբողջ որը և ամբողջ գիշեր կզվարճանան, այն ժամանակ, յերբ նրանց հայրենակիցները պարտավորված են նստել իրանց տներում, աղոթել, ավետարան կամ աստվածաշունչ կարդալ:

Ռեստորանի առաստաղը բարձր չեր: Ոդը տոգորված եր ուտեստների և ըմպելիքների հոտով ու շոգեով և գլանակների թանձր մառախուղով: Սեղանների նեղ միջանցքներում զարմանալի ճարպիկությամբ թռչկոտում եր մի պարուհի չորս հոգուց բաղկացած որկեստրի նվագածությամբ: Չնայելով ֆրանսիացու բնական թեթևսոլությանն ու վարպետությանը, սպասավորները հազիվ կարողանում եյին իրանց համար ճարմա գտնել դրեթե իրարու սեղմված սեղանների միջև: Սոմիկոն ընդհարվեց նրանցից մեկի հետ, բայց ճարպիկ սպասավորը հաջողեց զարմանալի մի շարժումով փրկել անկումից անթիվ բաժակներով ու շիշերով լեցուն մատուցարանը: Հետո բարեկամս դիպավ մի իր պես կլորիկ մարմնի, վոր խոպանացու յեր նման, և յերկուսն էլ միաժամանակ ասացին pardon ու ժպտացին իրարու: Ա՜, ի՞նչ նման են նրանք իրարու:

Վերջապես, ժերանը մի անկյունում դնել տվեց մի նոր սեղան, և ինքը ցցվեց մեր առջև անձեռոցիկը թևի տակ բռնած:

Սոմիկոն պատվիրեց մի քանի տեսակի կերակուրներ, և, իհարկե, շամպայն: Յես բավականացա խոզի ապխտով և մի քանի բաժակ կոնյակով: Յես շամպայն չեյի սիրում և այժմ էլ չեմ սիրում:

Դատարկելով առաջին շիշը, նա պահանջեց յերկրորդը, իսկ յերրորդն ուղարկեց յերաժիշտներին: Ուտում եր նա գայլի ախորժակով, հեվալով և փսփսալով, ինչպես դարբնի հնամաշ փուքս: Կերակուրը նրա թանձր ու վար պառկած բեղերից թափվում եր կրծքի վրա, փրփրակեզ շամպայնը դուրս եր հոսում բերանի անկյուններից, ինչպես հորդառատ աղբյուրից:

Որկեստրը նվագեց սեզոնի կաֆեշանտանային նորագույն պարերգը matchich: Մի քանի անգլիացիներ սկսեցին սուլել իբրև թե ներդաշնակությամբ և դանակ-պատառաքաղներով թմբկել շամ-

պայնի գավաթների վրա։ Մեկը նրանցից նույնիսկ փորձեց յերգել այն անճոռնի յեղանակով և այլանդակ ձայնով, վոր միայն անգլիացուն ե հատուկ։ Յես զարմանում եմ, վոր այդ մարդիկ չեն զգում, վոր յերգ ասված բանը բրիտանացու համար չի հորինված։

«Մաչիչը» շատ դյուր յեկավ Սոմիկոյին։ Նա ժերանի ձեռքով մի Լուդոր ուղարկեց դիրիժորին և պատվիրեց կրկնել։ Պարուհին վոսկու փայլը տեսնելով, ընդոստելով մոտեցավ և նրա առջև պարեց նույն յեղանակը, առաջ մենակ, հետո մի շատ նիհար ու շատ յերկայն ամերիկացու հետ։ Սոմիկոն նրան ել պարգևեց մի վոսկի, կանխապես վոտքի յելնելով և սալոնային կավալերի ժեստով համբուրելով պարուհու ձեռքը։ Մի բան, վոր յերբեք ընդունված չեր, և արժանացավ ընդհանուր ծիծաղի։ Բայց Սոմիկոն չշփոթվեց։ Նա ուրախ եր, վոր ուշադրություն եր գրավել և վորպեսզի ավելի մեծ սենսացիոն առաջացնի, ինքն ել կամեցավ պարել։ Պարուհուն դրկելով, նա մի անաջող շրջան արավ և դարձյալ մի վոսկի դրեց նրա քրտնած ձեռի մեջ։

Պարող ամերիկացին մոտեցավ մեզ և ուղիղ Սոմիկոյի քթի առաջ բռնեց իր ձմերուկի չափ կռուփը։ Յես կարծեցի, վոր ուզում ե սկանդալ անել։ Բայց չեղավ. Նա բռունցքը բաց արավ, և սեղանի վրա թափվեցին մի բուռը վոսկիներ։ Նա հրամայեց սպասավորներին վոսկիները ժողովել և իրանց դրպանը դնել։ Սոմիկոն, վոր գոսնատվել եր ամերիկացու բռունցքից, ուշքի յեկավ, դրկեց նրան և կամեցավ հետը համբուրվել, բայց ամերիկացին հրաժարվեց, ցույց տալով նրա թաց բեղերը։

Յես աշխատում եյի Սոմիկոյին համոզել, վոր մի փոքր զսպե իրեն և շատ ել չշռայլե իր սիրո զեղումները, մանավանդ դրամը։ Բայց նա համառ եր և կրկնում եր.

Թող աշխարհը տեսնի, վոր հայ ազգն ել ապրել գիտե։

Սոմիկոն «ազգասեր» եր։ Ինձ միայն հաջողվեց նրան համոզել, թե կան ավելի զվարճալի վայրեր, թե պայմանավորվել ենք այս գիշեր այդ տեղերն ել այցելել։ Նա պահանջեց կերած-խմածի հաշիվը և սպասավորին ընդունված տասը տոկոսի փոխարեն տվեց քսան տոկոս։ Նա կամեցավ ժերանին ել փող բաշխել և տվեց մի վոսկի, կանխապես աջ ու ձախ նայելով համոզվելու համար, վոր իր առատաձեռնությունը տեսնողներ կան։ Ավա՜ղ, վոչ վոք նրա շռայլությունը ուշադրության չարժանացրեց, բացի սպասավորներից, պարուհուց ու յերաժիշտներից։ Մնացյալների համար բարեկամիս անսահման հուզումն եր հետաքրքրական ու ծիծաղելի…

Յերբ յես իմ կերած խմածի համար վճարեցի իմ գրպանից, Սոմիկոն շատ վիրավորվեց։

— Այդ լավ չե, դու ինձ խայտառակում ես ոտարների մոտ, — ասաց նա հանդիմանաբար։

Թե ինչու եյի խայտառակում — չգիտեյի, բայց զգում եյի, վոր հոգու խորքում նա շատ գոհ ե, վոր յես չեմ ծանրանում նրա քսակի վրա։

Յես հոգեպես հոգնել եյի։ Առհասարակ Պարիզի գիշերային ռեստորաններում յես մի առանձին հաճույք չեյի զգում, նույնիսկ ձանձրանում եյի, ինձ ղեկավարողը միայն ծանոթանալու և գիտելու անհագ սովորությունն եր։

XI

ԲՈՐՈՏՆԵՐԸ : ՊԱՐԻԶԻ ՎՈՐՈՎԱՅՆԸ

Երբ մենք դուրս յեկանք «Սատկած առնետ»-ից, Մոնմարտրը դեռ յեռ ու զեռի մեջ եր: Կառքերն ու ավտոմոբիլները շարան-շարան կանգնած եյին բյուրավոր դույնզդույն լապտերներով ու վենետիկյան ճրագներով լուսավորված կաբարեների, ռեստորանների, դանսինգների այլ բազմատեսակ զվարճարանների առջև: Ցիլինդրավոր կոշեները և «կեպի» դրած ու մորթե վերարկու հագած շոֆերներն իրենց ցրտահար ձեռները տաքացնում եյին այս ու այնտեղ վառվող խարույկների կամ շագանակ բովողների մոտ, վոտները թաց գետնին զարկելով և աջ ու ձախ յերերվելով: Կրակի արյունագույն ճաճանչները փայլեցնում եյին նրանց կարմրակապույտ յերեսները, վորոնք իրենց արտաքին նախանձելի յերևույթի տակ ով գիտե ինչ հիվանդություններ եյին թագցնում: Շատերը մտել եյին «Բիստրո»-ները (փոքրիկ կաֆե) և այնտեղ եյին ջերմանում եժանագին աբսենտի, ամերպիկոնի, վիսկիի, Դյուբոնեյի և այլ ըմպելիքների ակոհոլով: Վոմանց գլուխն արդեն տաքացել եր: Նրանք մտերմաբար կատակաբանում եյին հարյուրավոր գիշերային թռչնիկների հետ միայն իրանց հասկանալի ժարգոնով: Վոչ վոքի այնչափ հայտնի չեր այդ լքված և արհամարհված եակների կյանքի վողբերգական պատմությունը, վորքան նրանց: Յուրաքանչյուրը նրանցից կարող եր հետաքրքրվողին պատմել մանրամասնորեն թե այս կամ այն թշվառը ինչ պատճառներով և ինչպես ե ընկել այդ դրության մեջ: Կա՞ր արդյոք նրանց հոգու մեջ վորևե կարեկցություն դեպի այդ թշվառները: Ըստ յերևույթին—այո, վորովհետև նրանց արտաքին կոպտության ներքո դիտող աչքը նշմարում եր մարդկային հոգուն հատուկ ներողամտությունը:

Այ՛հ, այդ հարյուրավոր ու հազարավորները: Նրանք են Պարիզի ամենից անհանգիստ, ամենից ժիր ու հուզումնալի տարրը: Միևնույն ժամանակ, նրանք են ամենից հնարագետը և ամեն բանից եժանը: Մոնմարտրում նրանց տեղը Բիստրոներն են ու փողոցները: Թանկագին կաբարեների և ֆեշենեբել ռեստորանների դռները փակ են նրանց առջև և յեթե փորձեն մտնել այնտեղ առանց տղամարդու ուղեկցության, դռնապանը թույլ չի տալ, վորովհետև պճրանքով չեն հագնված: Նրանք դեկոլըտե չեն, թատրոնից կամ օպերայից չեն գալիս, նրանք հայտնի չեն ռեստորանի ամենավերջին սպասավորին և պատրոնը թույլ չի տալ, վոր իր հոչակավոր «հաստատության» վարկը նսեմանա: Նրանք իրենց ընթացիկ գիշերվա «յերջանկությունը» կարող են վորսալ կաբարեների և այդ ռեստորանների առջև: Աշխարհից լքված և մարդկանցից արհամարհված մուրացիկներ են: Նրանք պետք ե կերակրվեն շռայլության և զեխության աստվածուհու ճոխ սեղանի փշրանքներով: Մի տեսակ խոցավորներ են կյանքից վռնդված, ինչպես բոբոտները Պարսկաստանի մեծ ճանապարհների յեզրերում: Բուրժուազիայի առօրյա ապականության, կեղտերի ու վոճիրների զոհերն են, նույն բուրժուազիայից հալածված: Սակայն այդ փողոցային թշվառները շատ լավ են ճանաչում այնտեղ, բարձրում, այդ լուսավառ ու ծաղկազարդ դահլիճների տաքության մեջ զվարճացողներին: Գիտեն, վոր այդ ցիլինդրավոր ու ֆռակավոր գործարանատերերի, վաճառականների, բանկային դիրեկտորների, բորսային գիշատիչների կամ նապաստակների, rastaguouère-ների*) ու հազար ու մի անուն կրող վոճրագործների մեջ կան և այնպիսիները, վորոնք իրենց հարստության վերջին լուիդորներն են շռայլում: Գիտեն, վոր այդ բարոյապես վաղուց, շատ վաղուց, իսկ նյութապես յերեկ կամ այսոր սնանկացած պարոնները շուտով պիտի փողոց դուրս գան և այնտեղ փնտռեն իրանց գիշերվա եպիլոգը: Նրանք գիտեն նաև, վոր կան և այնպիսիները, վորոնց բուրժուական կամ արիստոկրատիկ ճաշակը վաղուց ե կշտացել թանգարժեք պարուհիների, յերգչուհիների, գրիզետկաների անուշահոտ մարմիններից և այժմ հոտոտում ե արտասովորը, թեկուզ այդ արտասովորը լինի փողոցային կեղտի մեջ… Նույնիսկ կոյանոցում… Քանի քանիներին են նրանք վարակել իրանց մարմնավոր ախտերով ու կործանել խղճի առանց վորևե խայթի և հաճախ գիտակցաբար կամ գիտակցելով, վոր մարդկությանը վերադարձնում են այն, ինչ վոր ստացել են նրանից:

Մենք հրեցինք մի քանի տասնյակ թշվառներ և, շուտով դուրս

*) Rastaguouère կոչվում ե այն մարդը, վոր շռայլ կյանք ե վարում և հայտնի չե ինչ աղբյուրից ե դրամ ստանում:

դալով լույսերի ավաղանից, ընկանք Պարիզի մի չարք նեղ, դարիվեր և կիսախավար փողոցները: Մենք յերկյուղ չունեյինք քայլելու, գիտեյինք, վոր ապաշները շատ քիչ դեպքերում են հարձակվում վոչ-մենավոր անցորդների վրա:

Ցես վճռել եյի մի անգամ ես տեսնել կենտրոնական շուկան les Halles ,«Պարիզի փորովայնը», վոր այնպես մանրամասնորեն ու վարպետորեն նկարագրել է հանճարեղ Եմիլ Զոլան:*)

«Պարիզի փորովայնը գետեղված է ճիշտ նրա փորովայնում, այսինքն՝ կենտրոնում: Նա բռնում է մի չարք նեղ և մշտապես խոնավ փողոցներ, կազմելով մի տեսակ աստղաձև հրապարակ:

Գիշերվա կեսից սկսած, յերբ մի քանի ժամով նիրհում է փողոցային թոհուբոհը, յերբ մանավանդ դադարում է տրամվայների և ավտոմոբիլների յերթևեկը, քաղաքի բոլոր շրջակայքերից սկսվում է բեռնակիր սայլերի անընդհատ թափորը: Կատարյալ թափոր-հանդիսավոր, տարտամ, լուռ վորպես գիշերային ուրվականների մի յերթ մթության մեջ: Ժամանակներ են գլորվել, սերունդներ են փոխանակվել, բայց այդ հնադարյան, կոպտաշեն միաձի սայլերի միապաղաղ ընթացքը չի փոխվել: Նա մնացել է նույնը, ինչ վոր յեղել է Նապոլեոնների և Բուրբոնների օրերում: Նույնիսկ նորամույծ ինքնաշարժների, այդ ահռելի հրեշների աղմկալի և միշտ սպառնալի արագությունը մազաչափ չի ազդել նրանց դանդաղության վրա: Ցեվ քնահարբ սայլապանները, ձիերի սանձը թուլացրած, անշարժ ու անդորր նիրհում են գետնախնձորի ցորենի ու դարու տոպրակների, կաղամբի, բողկի, ճակնդեղի, պրասի, կոտեմի և այլ ու այլ բանջարեղենի ճերմակ, կարմիր ու կանաչ խուրձերի մեջ, այնպես վոր շատ անգամ նրանց չես տեսնում և կարծում ես, վոր ձիերն ընթանում են ինքնաբերաբար, ըստ ավանդական սովորության, ինչպես առմիշտ մարզված և մի անգամ լարված մանեկեններ:

*) Արտասահմանում գտնվելով, յես առիթ չեմ ունեցել կարդալու, բայց լսել եմ, վոր մեր համակրելի գրող Ստեփան Զորյանը չգիտեմ վոր լրագրում թե ամսագրում, խոսելով Զոլայի մասին, ի միջի այլոց ասել է, թե յես շատ եմ ազդվել նրանից: Ի հարկե, պատիվ է համարվել մեծ վիպասանի աշակերտ, բայց դա մի թյուրիմացություն է, վոր ցանկալի յե ինձնից հեռացնել: Ճշմարիտ է, յես Զոլայի յերկերը կարդացել եմ խորին հետաքրքրությամբ, բայց յերբեք չեմ հափշտակվել նրա ուղղությամբ: Զոլան Բալզակ չե, կամ Ֆլոբեր և վոչ մանավանդ Դոստոյեվսկի: Նա նատուրալիստ է, իսկ նատուրալիզմի և ռեալիզմի մեջ կա ահագին տարբերություն, վոր հուսով եմ, հայտնի յե ընկ. Զորյանին:

Ով գեթ մի անգամ ամառը կամ աշնան ուշ գիշերին զբոսնել է Սեն-Միշել բուլվարում, անկարելի յե, վոր ճաշակած չլինի ծայրե ի ծայր տարածված մի անուշ բույր: Դա թարմ մրգեղենի ու ծաղիկների հոտն է, գյուղերից ու ագարակներից բերվող: Այնտեղ գիշերվա մի ժամից հետո տրամվայները իրանց յերկաթյա գծերը հանձնում են յերկաթուղային գնացքներին: Այդ բուլվարով մթերքները քաղաք են բերվում վագոններով, վորոնցից շատերը բացօթյա յեն, և դրանց վրա յեն բարձվում վարդերի ու շուշանների, հասմիկների, մեխակների ու մանուշակների, հիացինտների ու խրիզանտեմների խայտաբղետ դեզերը: Կարծես այնտեղ, հեռվում տեղի ունի ինչ վոր փառահեղ խրախճանք, և ծաղիկները շտապում են հանդեսը պճնավորելու:

Շուկա հասնելով, ձիերը ինքնաբերաբար, առանց սանձահարման, կանգ են առնում մեքենաբար, վորպես գլխավորներ: Սայլապանները դանդաղորեն իջնում են պատվանդաններից և, իրանց մարմինների թմրությունը թոթափելով, սկսում են բեռները վար իջեցնել և դասավորել: Յուրաքանչյուրը նրանցից ունի իր գնորդը, իր տեղը, կանխավ վորոշված, և վոչ մեկը մյուսին չի խանգարում իր գոռում գոչյուններով, հայհոյանքներով, մտրակի սպառնալիքով, ինչպես այդ կարող եր լինել Թիֆլիսի կամ Յերևանի շուկայում, յեթե նա լիներ տասն անգամ պակաս բազմամարդ, վորքան «Պարիզի փորովայնը»: Շատ-շատ լսվում են ֆրանսիացու կատակները, բարձրաձայն ծիծաղն ու քրքիջները: Լսվում են և հայհոյանքներ, իհարկե, բայց վո՛րքան մեծ տարբերություն կա ֆրանսիացու և հայ ու առհասարակ արևելցու հայհոյանքների մեջ: Ֆրանսիացին հայհոյելիս յերբեք չի հիշում իր հակառակորդի ծնողներին ու պապերին, կամ կնոջը, քրոջը, զավակներին և «յոթը պորտը»: Նա անարգում է միայն հակառակորդի անձնավորությունը: Նրա սովորական հայհոյանքներն են. տխմար, կոպիտ, անկիրթ ,կամ ուղտ և ամենազորեղը salaud (կեղտոտ կամ անքաղաքավարի):

Եմիլ Զոլան իր նկարագրության մեջ ֆրանսիական ճաշակի նրբությունը պատկերացրել է նույնիսկ այդտեղ, բազմատեսակ մթերքների դասավորման, այդ առօրյա պրոզայի մեջ: Այստեղ մթերքների յուրաքանչյուր դասավորում ունի իր գեղեցկությունը, յուրաքանչյուր շարժում իր ռիթմը:

Վաճառքը շուկայում սկսվում է առավոտյան ճիշտ չորս ժամին, բայց մի ժամ առաջ արդեն Պարիզի բոլոր կողմերից յեկել

է մրգավաճառների, ծաղկավաճառների, մսավաճառների, մեծ ու փոքր հյուրանոցատերերի, ճաշարանների և սանտիմներ խնայող մասնավորների գնող բազմությունը: Վոմանք յեկել են բեռնակիր ինքնաշարժներով,—դրանք խոշոր գնողներն են: Մեծամասնությունը յեկել է ձիաշարժ սայլերով, մարդաշարժ յերկանիվներով կամ մի-մի տոպրակ ձեռներում:

Գերակշռում են խոհարարուհիները, այդ ամենից աղմկարար և ամենից կռվասեր տարրն ամբողջ աշխարհում:

Մթերքները դասավորվում են յերկաթե վիթխարի բարակների տակ, ահագին դարակների կամ ուղղակի մերկ գետնի վրա: Բանվորները հարյուր կիլոգրամանոց տոպրակներն այս ու այն կողմ են նետում այնպիսի արագությամբ, վոր կարծես խաղի գնդակներ են: Այդտեղ նրանց աշխատանքը ներկայացնում է մի սքանչելի վոլիմպիադա, ուր մասնակիցների միակ մրցանակը միջին բանվորի սովորական որավարձն է՝ 4—5 ֆրանկ (այն ժամանակ 1 ռուբլի 50 կ.—1 ռ. 80 կոպ.): Մի որավարձ, վոր հազիվ-հազ փրկում է նրանց սովամահ լինելուց: Դեռ լավ է, վոր նրանց թույլ է տրվում աշխատանքից հետո ժողովել դարակներից դեն չպրտած մսի անպետք կտորները կամ ձկների հոտած գլուխներն ու պոչերը:

Իսկ տերե՞րը: Ահա նրանք: Կանգնած են դարակների հետևում իրանց իրավունքների գիտակցությամբ գոռոզ: Նրանք արգոսի աչքերով հսկում են, վոր վոչ մի կտոր մթերք չփչացվի, կաղամբի ու սոխի վոչ մի գլուխ չկորչի: Նրանք իրանց սովորական հագուստի վրա կրում են յերկայն կտավյա շապիկներ:

Առանձին տպավորություն են գործում մսավաճառները: Գրեթե ամենքն ունեն միևնույն կերպարանքը—հաստափոր, հաստապարանոց, կարմրերես: Նրանք իրանց յերկայն ու լայնասայր դանակներով և արյունաներկ շապիկներով նմանվում են պարսկական ֆառռաշների: Նրանք դանակի մի հարվածով կիսում են կովերի ու վոչխարների առաստաղից կախված դիակները: Զարմանալի վարպետներ են իրանց գործում: Մի գործ, վոր համարվում է շատ շահավետ, նույնիսկ նախանձելի: Ճիշտ է թե վոչ, չգիտեմ, բայց պատմում են, վոր այդ մսավաճառներից վոմանք մեծահարուստ տնատերներ կամ բանկիրներ են: Մի ժամ հետո նրանք պիտի դեն ձգեն իրանց արյունաշաղախ շապիկները և գնան նստեն իրանց անկիզելի սնդուկների առջև և այնտեղ հաշվեն իրանց առավոտյան վաստակը:

Անցանք շուկայի բոլոր բաժինները յերկայնությամբ ու լայնությամբ, այսինքն՝ մի շարք խաչաձև փողոցներ: Ամենուրեք գետինը ծածկված է կաղամբի տերևներով, փտած գետնախնձորով, վոչխարի ու տավարի անպետք փորոտիքներով: Յեվ այդ կեղտի ու ապականության մեջ են փորփրում իրանց որվա պարենը մուրացկաններից շատերը անտեր շների ու կատուների և առնետների ընկերակցությամբ: Բայց վո՛րքան ծաղիկներ: Վոչ մի բան այնքան շատ չէ, վորքան նրանք: Ամբողջ դեզեր ու բլուրներ են, դասավորված ուղղակի գետնի վրա: Նրանք են, վոր յերանգավորում են շուկան, տալով նրան տոնական տեսք: Միևնույն ժամանակ, նրանք են, վոր բողոքում են շրջապատող ապականության դեմ: Բայց շատ չի անցնիլ, ընդամենը մի կամ շատ-շատ յերկու ժամ և բոլորը, բոլորը կտեղափոխվեն մեծ քաղաքի հարյուրավոր ու հազարավոր ծաղկավաճառանոցները: Այնտեղ նրանք յերիտասարդ աղջիկների ճկուն մատներով կմաքրվեն, կդասավորվեն և կբռնեն իրանց արժանավոր տեղը: Հետո՞: Հետո կցրվեն թատրոնները և սալոնները...

Անշուշտ Պարիզն աշխարհի ամենածաղկառատ և ամենածաղկասեր քաղաքն է: Գոնե յես վոչ մի տեղ չեմ տեսել ծաղիկների այդպիսի առատություն, վոչ նույնիսկ ծաղիկների վոստան Նիցցայում:

— Ա՛յ մարդ,—խոսեց հանկարծ Սոմիկոն, վոր լուռ և հորանջելով հետևում եր ինձ,—լսել եմ, վոր այստեղ, գետնի տակ ճաշարաններ կան:

— Այո՛, կան:

— Ասում են այնտեղ խաշ էլ են պատրաստում, ճի՞շտ է:

— Միանգամայն:

— Դե ի՞նչ ենք գուր տեղը թրև գալիս, գնանք մի-մի բաժին ուտենք:

— Հեր որհնած, նոր ընթրեցինք, ե՞լի յես ուզում ուտել:

— Չե, լուսաբացին խաշը լավ բան է: Գնա՛նք:

— Լա՛վ, գնա՛նք,—համաձայնվեցի յես բարեկամիս սիրտը չկոտրելու համար:

Յես Սոմիկոյին առաջնորդեցի շուկայի ներքնահարկերից մեկը, վոր ինձ ծանոթ եր: Այդ ստորերկրյա ճաշարանները համաշխարհային համբավ ունեն: Յուրաքանչյուր ոտարական հետաքրքրվում է գեթ մի անգամ տեսնել: Ֆրանսիացիներն ասում են, թե Ռոմանով մեծ իշխաններն են տվել նրանց այդ համբավը և առաջին ան-

դամ կյանքից հղփացած Վլադիմիրն է մտել այնտեղ:

— Բայց գիտես,— ասացի յես մի քիչ Սոմիկոյին չփոթեցնելու նպատակով,— ասում են այդ ճաշարանները շատ էլ անվտանգ չեն այցելուի համար:

— Յես գրպանումս ռեվոլվեր ունեմ, ահա,— պարծեցավ նա, ցույց տալով իր նագանը:

— Այդ վոչինչ, ավելի լավ է մատանուդ ադամանդը շուռ տաս դեպի ներս, իսկ ծխախոտի վոսկե տուփը գրպանից դուրս չբերես:

— Ինչ է, ապաշնե՞ր կան:

— Ավելի վատ, քան ապաշները— ընդհատակյա կավատներ, ապաշներին իսկ շահագործողներ... Բայց մի վախենար, լույսը բացվելու վրա յե, ամենաքաջ յեղեռնագործն անգամ սարսափում է լույսից:

Մենք քարե սանդուխտով իջանք վար և մտանք մռայլ լուսավորված մի նկուղ շատ ցածր առաստաղով, հողե հատակով և ծխից ու մուխից սևացած պատերով: Ճաշարան անունը կրող այդ նկուղը մեկն էր այն վորջանոցներից, վորոնց մասին ոտար այցելուներին զգուշացնում են Պարիզի ուղեցույցները:

Մեզ դիմավորեց միջին տարիքի մի վհուկ, վոչ նիհար, վոչ կրոտ, ալեխառն մազերը գզգզված, ինչպես սովորաբար մեր յերևակայությունը պատկերացնում է վհուկին, այլ հաղթանդամ, գեր, ինչպես լավ սնդված շվեյցերական մի կով և կարմիր, ինչպես ճակնդեղ: Նա առաջարկեց մեզ փայտե սեղանի քով յերկու տաբուրետ և ինքը, ձեռները դնելով փարթամ կողերին, սպասեց պատվերի:

— Deux trêipes,— ասացի յես և մի հայացք ձգեցի իմ շուրջը: Սխալված չեյի: «Ճաշարանում» գրեթե վոչ վոք չկար, բացի մի խումբ մթերաբեր սայլապաններից, վորոնք յեկել էն այդտեղ իրենց մարմինները տաքացնելու մի մեծ յերկաթե վառարանի քով և մի տաք բան ուտելու, անխուսափելի աբսենտից հետո:

Հաղթանդամ վհուկը, մեր առջև դրեց յերկու փոքրիկ յերկաթյա կրակարաններ (մանղալ) վառ ածուխով լեցուն, նրանց վրա տեղավորեց մի-մի մեծ ափսե մատնաչափ հաստությամբ և խոկույն լցրեց տավարի թե վոչխարի փորոտիքներից պատրաստած հեղուկը: Դա իսկապես մեր ավանդական խաշը չե, բայց բավական հիշեցնում է նրան, մանավանդ յերբ սխտորով է ուտվում:

Յես չկարողացա ուտել, կուշտ եյի, իսկ Սոմիկոն մի բոպեյում խորթալով, դատարկեց իր ափսեն և ասաց.

— Դա պահրումար է, խաշ չե...

— Ինչո՞ւ ուշ յեկաք,— հարցրեց կին համարվածը, աշխատելով, թեպ թե աննկատելի, ցույց տալ իր հոյակապ ծծերի ձյունային ճերմակությունը: Այս գիշերն առանձնապես զվարճալի անցավ: Շատերն եյին յեկել, ամերիկացիներ, անգլիացիներ, յերկու ռուս իշխաններ: Դուք, յերևի, թուրքեր եք կամ յեգիպտացիներ: Անցյալները Մարոկկոյի իշխանն էր յեկել: Անճաշակ մեկն է, առաջնակարգ գեղեցկուհիներ առաջարկեցի, մերժեց: Ափսոս մի քիչ ուշացել եք: Բայց յեթե կամենաք, ելի կգտնվեն: Ազնիվ հյուրերի համար միշտ կարելի յե գտնել, միայն պետք է կրկնակի վճարել, մի քիչ ուշ է, ցրված են, ոթոմոբիլ պիտի ուղարկել:

Սոմիկոն ընդհատեց նրա յերկարաբանությունը, դառնալով ինձ.

— Հետաքրքրական է, թող բերի տեսնենք...

— Դո՛ւ գիտես, բայց յես կգնամ,— ասացի յես դիմամբ և վոտքի յելա:

— Յես լսել եմ, վոր...— փորձեց հակաճառել բարեկամս:

— Դու շատ բաներ ես լսել,— ընդհատեցի յես,— բայց վոչ այն, ինչ վոր կա իրապես: Այդ քաֆթառի առաջարկած յերջանկությունը վորոգայթ է, իսկ նրա գեղեցկուհիները ահա նրանք են, վորոնց տեսար փողոցներում: Չեմ թողնիլ, վոր մնաս այստեղ. ռեվոլվերդ քեզ չի օգնիլ: Խելք է հարկավոր, զգաստություն: Կարդա ամեն օր առավոտյան լրագիրները և կտեսնես: Գնա՛նք:

Ասացի և դուրս յեկա:

Սոմիկոն հետևեց ինձ:

Յերբ մենք դուրս յեկանք նկուղից, մեծ շուկան դատարկվել էր, բայց վոչ ամայացել: Արդեն նա հարյուրավոր ու հազարավոր փողոցներով տարածել էր քաղաքի բոլոր արվարձաններն ամեն ինչ, վոր ստացել էր գյուղերից ու ագարակներից, ինչպես սիրտն է տարածում արյունը դեպի բոլոր մասերը մարմնի: Մակընթացության ու տեղատվության գործողությունը սկսվել ու վերջացել էր ընդամենը 3—4 ժամում: Այժմ շուկան հանգստանում էր վաղվա համար:

Այս ու այնտեղ յերևում եյին հատ-հատ ուշացած գնողներ: Նրանք տակավին հույս ունեյին ձեռնունայն չվերադառնալ տուն:

Ցերեկում եյին նաև կեր վորոնող թշվառները, բայց նրանք էլ շուտով կգնան կամ, ճիշտն ասած, կցրվեն փողոց մաքրողների յերկաթյա ավելներով: Այս է նրանց վիճակը դարերից ի վեր և մարդկային աչքն այնքան ընտելացել է նրանց, վոր այլևս վոչ վոքի կարեկցությունը չեն շարժում և վոչ իսկ արժանանում են ուշադրության:

V

ՊԱՐԻԶՆ ԱՌԱՎՈՏՅԱՆ

Աշնանային անձրևը տեղում եր փոշու պես մանր, դանդաղ, գրեթե աննշմարելի: Կարծես յերկնքի մաղը շուռ տվող ձեռը թուլացել եր և չեր ուզում գործել: Բայց մոխրագույն նոսր մառախուղը տակավին չեր փարատվել:

Վորքան գմայլելի յե Պարիզն արևգակի առավոտյան նորածին և յերեկոյան մահամերձ ճառագայթների տակ, վորքան ծիծաղկոտ է, յերբ լողում է լույսերի ավազանում, նույնքան անբարեհամբույր, տխուր ու մռայլ է անձրևների տակ, մշուշի մեջ: Քաղաքներ կան, ուր ամենաթանձր մառախուղն իսկ այնպես չի տխրեցնում, այնպես չի ներվայնացնում մարդուն, վորպես Պարիզը մշուշի նոսր շղարշի մեջ: Այդպես են Նյու-Յորքը, Լենինգրադը, այդպես է մանավանդ մառախուղների աշխարհ Լոնդոնը, վոր յես չեմ տեսել, ճիշտ այն պատճառով, վոր սարսափել եմ այդ մառախուղներից:

Պարիզն այն բացառիկ գեղեցկուհիներից է, վորոնց պայծառ ու ժպտուն յերեսին չի սազում գորշագույն շղարշը, վորքան և սա նոսր լինի: Գոնե ինձ այդպես եր թվում, գոնե յես միշտ գրգռվում ու թթվում եյի անարդար պատժված մանկան պես, յերբ Պարիզն անձրևում եր: Իսկ անձրևում եր նա շատ հաճախ, յերբեմն օրվա ընթացքում հինգ-վեց անգամ: Կարծես, բնությունը նախանձում եր նրան և խանդոտ սիրականի պես չեր ուզում, վոր իր գեղեցկությամբ շատ հպարտանա:

Վաղ առավոտ եր. Մոնմարտրը դեռ շարունակում եր պարել ու յերգել, շնանալ ու պոռնկանալ, բայց բուն Պարիզն արդեն զարթնել եր: Վոչ հղկված, շպարված, վոչ արյուն ծծող, վոչ բոտ արհեստի վոճրագործ, ըստ եյության լկտի ու անպատկառ Պարիզը—բուրժուազիան, այլ աշխատավոր Պարիզը—պրոլետարիատը: Այն, վոր արևգակի ծագումից սկսած մինչև նրա մուտքը և ել ավելի տքնում է աշխատանքի յերկաթյա լծի տակ: Այն, վոր շինում է և

չի չահվում, ստեղծագործում է և չի փայլում, այն, վոր տալիս է վոսկու բեռներ և ստանում է պղնձյա գրոշներ:

Աճա նա, այդ գորշ բազմությունը: Մտեք «Պարիզի գոտի» կոչված յերկաթուղու առաջին հանդիպած կայանը և դուք կտեսնեք նրան, այդ հազարավոր և տասնյակ հազարավոր բանվորներին, վորոնց մի մասը դրսից քաղաք է գալիս, մյուս մասը քաղաքից շրջակայքն է շտապում, ամենքը դեպի գործարաններ: Վոմանք, նախ քան գործի գնալը, մտնում են եժանագին ու կեղտոտ «Բիստրո»-ները մի-մի բաժակ խմելու այն պղտոր հեղուկից, վոր, կարծես, ծաղրի համար կոչվում է café au lait (կաթով սուրճ): Փույթ չէ, նրանք գոհ են և այդքանով, վասն զի հաճախ այդ էլ չեն ունենում: Յեվ ծխում են, քրքջում, իրարու բարեկամաբար բոթում ու սրախոսում, ինչպես դպրոցականներ: Բայց մի խաբվեք արտաքինից, նրանք թեթևամիտ պատանիներ չեն: Յուրաքանչյուրը նրանցից իր ուղեղի մեջ ունի մի միտք, իր սրտի մեջ մի հավատ, թե այդ այդպես չպիտի շարունակվի, թե մարդկությունը չի կարող յերկար ժամանակ մնալ այդ փխրուն ու փթած կամրջի վրա, թե նա պետք է անցնի և շուտով կանգնի դեպի լավագույն ապագան: Թե վորն է այդ լավագույնը, նրա համար դեռ տակավին այնքան էլ պարզ չէ, բայց զգում է, վոր նրա ստեղծագործողն ու հաստատողն ինքը պետք է լինի իր կոշտացած ձեռներով.::

Փողոցները մաքրվում ու լվացվում էյին: Վիթխարի ինքնաշարժերին կպած յերկաթյա գլանաձև ավելները ցեխն ու աղբը սալահատակներից քշում տանում էյին մայթերի կողմ: Դռնապանները բաց էյին անում ջրմուղի ծորակները, և ջուրը, վանդակը խորտակած վագրի պես, դուրս ցատկելով, ամեն ինչ մղում ու տանում էր վար, Պարիզի հոչակավոր կոյանոցը, իսկ տներից դուրս բերված աղբերի արկղները դրվում էյին դռների առջև: Շուտով կգան սանիտարային սայլերը նրանց դատարկելու և աղբը տանելու քաղաքից դուրս այրելու համար: Առայժմ նրանք chiffonnier-ների (լաթեր վորոնող) տրամադրության տակ են: Աճա նրանք, նստած կամ պառկած են թաց նստարանների վրա և համբերությամբ սպասում են իրանց բաղդին: Դա յել մի առանձին դասակարգ է: Դա յել մարդկային թշվառության մի պատկերն է, միայն մեծ քաղաքներին հատուկ:

Յուրաքանչյուր շիֆֆոնիե իր հատուկ փողոցն ունի ու նստարանը: Վոչ մեկը չպիտի գրավե իր արհեստակցի տեղը, յեթե չի ուզում ծեծվել կամ ծեծել: Պատահել են դեպքեր, յերբ ընդհա-

րումը վերջացել է արյունհեղությամբ, վորովհետև այդ է պահանջել մարդկային եյության ամենապահանջկոտ մասը—ստամոքսը:

Յես ցանկացա խոսել այդ խեղճերից մեկի հետ: Դա մի փոքրահասակ մարդ էր, արդեն ճերմակած մազերով: Ըստ յերևույթին վորոշ ճաշակի տեր մեկն էր, վասն զի նրա հնամաշ պիջակն ու պանթալոնը լավ էյին կարկատված. ոճիքն էլ կեղտոտ չէր, դեմքն էլ մաքուր էր:

— Շա՞տ բան եք գտնում,—հարցրի յես, մի ծխախոտ առաջարկելով:

— Կախված է բաղդից,—պատասխանեց նա, հաճույքով ընդունելով ծխախոտը և, իհարկե, չմոռանալով ասել me c :

— Ի՞նչ եք անում գտնված լաթերը:

— Վաճառում ենք:

— Ո՞ւմ:

— Գործարաններին, վոր թուղթ են պատրաստում: Մի՞թե չգիտեք, վոր ամենաընտիր թուղթը լաթերից է պատրաստվում:

— Պատահո՞ւմ է, վոր նոր, չպատառոտված կտորներ գտնեք:

—Ի՛նչու չէ:

— Ի՞նչ, որինակ:

— Ո՞վ գիտե, ինչ կամենաք, անձեռոցիկ, սփռոց, խոհանոցի իրեր:

— Ի՞նչ եք անում:

— Ոհո՛, ի՛նչ ենք անում,—հեգնեց մարդը ֆրանսիացուն հատուկ հեգնանքով,—լվանում ենք, չորացնում, արդուկում և վաճառում կամ ինքներս ենք գործածում մեր տանը: Մի անգամ,—ավելացրեց ծերունին ծիծաղելով,—յես մի կանացի մետաքսյա կոմբինեզոն գտա:

— Ի՞նչ արիք:

— Հե՛, ի՛նչ արի: Կնոջս տվեցի: Այժմ էլ վրեն է: Ե՛հ, չէ վոր լաթավաճառի կինն էլ մի անգամ պիտի մետաքսյա շապիկ ու վարտիկ հագնե... Ի՞նչ կասեք, հե՛, պարոն:

— Ավելի թանգարժեք բաներ է՞լ եք գտնում: Որինակ, վոսկյա կամ արծաթյա իրեր:

— Այդ էլ է պատահում, բայց շատ քիչ անգամ: Անցյալ ամիս գտա մի արծաթե դգալ, իսկ մի տարի առաջ մի վոսկյա մատանի; առանց գոհարի: Այդ կողմից յես շատ էլ բաղդավոր չեմ: Իմ շրջանը հարուստ չէ: Այստեղ չկան մոռացկոտ կամ անուշադիր սպասավորներ ու խոհարարներ: Գլխավոր բանը նրանցից է կախված: Մեր

գործը սովորաբար ավելի հաջողվում է այն առավոտները, յերբ նախընթաց գիշերն այս կամ այն հարուստ տանը յեղել է բազմամարդ ընթրիք կամ այդպիսի մի հանդես: Բայց այն էլ պետք է ասել, վոր առհասարակ հարուստ մարդիկ կորցնելու մեջ ժլատ են,—ավելացրեց ծերունին փիլիսոփայաբար:

— Դուք ամբողջ որը լաթեր փնտրելո՞վ եք զբաղված:

— Վոչ, ինչպե՞ս կարելի յե ամբողջ որը: Միայն գիշերվա կեսից մինչև առավոտ:

— Իսկ հետո՞:

— Հետո, ծխախոտի մնացորդներ եմ հավաքում:

— Վո՞րտեղ:

— Իհարկե, կաֆեների առջև, դուրսը, տեռրասների վրա: Ներս չեն թողնում մտնել:

— Քանի՞ տարի յե, վոր այդ գործերով եք զբաղված:

— Շատ չե, տասներեք տարի:

— Իսկ առա՞ջ:

— Ավա՛ղ, առաջ յերիտասարդ եյի,—հառաչեց ծերունին,—ույժ ունեյի, կարողանում եյի մաքուր գործով զբաղվել:

— Ի՞նչ գործով:

— Կաֆեյի գարսոն եյի, մեծ բուլվարների վրա:

— Ինչո՞ւ թողեցիք այդ գործը:

— Ինքս չթողեցի, հանգամանքները ստիպեցին թողնել:

— Ի՞նչ հանգամանքներ:

— Վոտներիս թուլությունը, մեջքիս ցավերը: Յես վոսկրացավ ունեմ:

— Յերևի խոնավ կացարաններում եք ապրել:

— Հապա ուրիշ վո՞րտեղ, Ռոտշիլդի պալատո՞ւմ, հե՛, հե՛, հե՛,—քրքջաց ծերունին զարմանալի անհոգությամբ և զվարթությամբ: Բայց, ներեցեք,—փոխեց նա հանկարծ իր տոնը,—սայլերը շուտով կգան, իսկ յես դեռ չեմ վերջացրել իմ գործը: Բարի յեղեք, մի հատ ել ծխախոտ տվեք:

Յես ծերունու ձեռի մեջ մի բուռը ծխախոտի հետ սեղմեցի և մի հինգ ֆրանկանոց: Այդ նրա համար անսպասելի յեր:

— Մերսի, մերսի պարոն, դուք շատ բարի յեք,—գոչեց նա և թույլ քայլերով մոտեցավ աղբարկղին...

Յես արթնացրի Սոմիկոյին, վոր ամբողջ ժամանակ նիրհել եր նստարանի վրա: Նա բարկացած եր:

— Չեմ հասկանում, դուք ինչ տեսակ մարդ եք,—ասաց նա խորին կշտամբանքով,—ամեն մի դատարկ բանով հետաքրքրվում եք, ամեն մի անպետք մարդու հետ խոսում եք ու ժամանակ կորցնում: Բազարումն էլ մուրացկանների հետ եյիք զրույց անում: Դրա համա՞ր եք Պարիզ յեկել: Մեզ մոտ մուրացկաններ քի՞չ կային: Հիմա յել բռնել եք այդ կեղտոտ աղբավաճառի օձիքը: Յես այստեղ ցրտից դասաբխանի շան պես դողում եմ, իսկ դուք այնտեղ... Գնանք, ի սեր աստծո, յես սառել եմ: Գնանք մի տեղ, մի բան լակենք, տաքանանք...

Առհասարակ բարեկամս յերբեմն սիրում եր ինձ խրատել: Նա կրկնում եր, թե Պարիզն ինձ նման մարդկանց տեղը չե, թե Պարիզը շինված ե միայն և միմիայն լավ ապրելու և լավ քեֆ անելու համար: Զուր չեն այդքան կանայք հավաքվել այդտեղ և այլն, և այլն...

Մենք հասել եյինք բուլվարներին: Նրանք գրեթե ամայի եյին տակավին: Նոր-նոր բացվում եյին միայն լրագրավաճառ քիոսկները, այն էլ առավոտյան լրագրերն ընդունելու համար, վոր բերվում եյին սայլերով կամ ինքնաշարժներով: Մտանք այնտեղ, պահանջեցինք մի-մի գավաթ տաք սուրճ ու բիսկվիտ...

Կաֆեն լեցուն եր հաճախորդներով: Նրանց մի մասը նստած եր մարմարյա կլորիկ սեղանների քով, մյուսը վոտքի վրա յեր, բուֆետի առջև: Դրանք բանվորներ չեյին, վոչ մեկի դեմքի կամ ձեռների վրա չեր յերևում աշխատանքի դրոշը: Ամենքը հագնված եյին մաքուր, բոլորն էլ վերջին մոդայով: Մի քանիսի վերարկուի օձիքը թանգարժեք մաշկերից եր, գրեթե յուրաքանչյուրի ժիլետի վրա փայլում եր ժամացույցի վոսկե շղթան: Մի յերկու-յերեքի ձախ ձեռքի ցուցամատը կրում եր ադամանդազարդ մատանի:

Սոմիկոն, այդ տեսնելով, շտապեց մի ծխախոտ վառել և վոսկյա տուփը դնել սեղանի վրա: Միևնույն ժամանակ, նա շուռ տվեց դեպի դուրս իր մատանու ադամանդը և ինքնագոհ դեմքով նայեց իր շուրջը...

Գրեթե առանց բացառության, բոլոր հաճախորդները գոհատ եյին և արտահայտում եյին անքնություն ու հոգնածություն: Բայց հուզված եյին, խոսում եյին արագ-արագ, բառերը արձակելով գնդացիրի նման: Խոսում եյին ֆրանսերեն, բայց տարբեր արտասանությամբ: Մի բառ կրկնվում եր հաճախ rafale*):

---

*) rafale—իր իսկական իմաստով կնշանակե քամու հարված, փոթորիկ:

Նրանք դատարկում եյին սուրճի գավաթները չտալով և խաղուցն դուրս եյին վազում, հայհոյելով վոստիկանությանը, մինիստրներին, նույնիսկ հանրապետության նախագահին: Հեռացողներին փոխարինում եյին նորերը, ավելի գրգռված ու բորբոքված: Յես նկատեցի, վոր մեծամասնությունը գալիս է դեմ ու դեմի յերեքհարկանի մի տնից: Թե խոսակցություններից և թե մանավանդ rafale բառից հասկացա, վոր տունը ուրիշ վոչինչ է, յեթե վոչ դաղտնի թղթախաղի «կլուբ»:

Այն ժամանակ այդ «կլուբ»-ները մերթընդմերթ յենթարկվում եյին վոստիկանության հանկարծակի արշավին և կողոպտվում, իսկ խաղացողները ձերբակալվում եյին առ յերես և շուտով արձակվում: Վոստիկանության տեսակետից կարևորը նրանք չեյին, այլ գրավված դրամը, վոր անցնում եր պետական գանձարանը:

Այդպես եր իմպերիալիստական մեծ պատերազմից առաջ: Այլ և այժմ, յերբ շատ բաներ են փոխվել Ֆրանսիայի տնտեսական կյանքում: Այժմ կառավարությունն ինքն է խրախուսում ազարտ-խաղերը: Մի ժամանակվա առերես վոճիր համարվածն այժմ պետական գանձարանի յեկամտային աղբյուրներից մեկն է: Յեվ վոչ պակաս արդյունաբեր աղբյուր, քան վորևե մի ուրիշը: Այդպես, որինակ, նշանավոր խաղատներից «Haussmann» կոչված կլուբն իր յեկամուտներից պետությանը տալիս է վորպես հարկ որական վոչ պակաս քան կես միլլիոն ֆրանկ: Հարկի չափերը կախված են կլուբի շրջանառությունից— 40-ից սկսած մինչև 80 տոկոս: «Haussmann»-ն մեկն է այն բախտավորներից, վորոնց ամենօրյա շրջանառությունը, այսինքն խաղացողների տանել տվածն ու տարածը հասնում է տասնյակ միլլիոնների: Այնտեղ խաղում են վոչ միայն պրոֆեսիոնալ բաղդախնդիրները, անգործ ու անարվեստ յերիտասարդները, կյանքից խաբված ծերունիները, անցյալ և ներկա կավատները, ապաշները, գողության համար պաշտոնից զրկվածները, գրպանահատները, սրիկաները, այլ և շատ գրողներ, բանաստեղծներ, հայտնի և անհայտ նկարիչներ, դերասաններ, յերգիչներ, յերաժիշտներ, արձանագործներ, նույնիսկ պատկառելի գիտնականներ ու պրոֆեսորներ: Այնքան գայթակղեցուցիչ է մի գիշերվա մեջ հարյուր հազարներ շահելու անպատկառ հույսը: Խաղում են նաև նրանք, վորոնց անկշտելի սնդուկներն առանց այդ էլ ճարճատվում են վոսկու ծանրությունից—ամերիկյան միլլիարդերները: Ինչո՞ւ: Այն պարզ հոգեբանական պատճառով, վոր ազարտ-խաղը նրանց տալիս է հոգեկան խորին բավարարություն, վոր

նրանց համար յերջանկության չափ հաճելի յե տասնյակ հիմարներին և ապուշներին կողոպտել և փողոց նետել*):

Խաղամոլները ցրվեցին, կաֆեն դատարկվեց: Սոմիկոն վոսկյա տուփը գրպանը դրեց, դուրս յեկանք:

Մանր անձրևը շարունակվում եր գրգռեցուցիչ համառությամբ, վորպես կամակոր ու յերես առած մանկան անախորժ լացը: Քաղաքային բանվորները յերկայն ձողերով հանգցնում եյին գազային լապտերների լույսը: Բուլվարները հետզհետե կենդանանում եյին 4–5 ժամվա նիրհից հետո: «Մետրոն» արդեն բաց եր արել իր մթին բերանը, և կլանում եր հազարավոր ուղևորներին, ինչպես մի անհագ հրեշ:

Յերևացին դիլիժանսները, նորամուծ հատ-հատ ոթոբուսները ու տրամվայների առաջին վագոնները: Թաց մթնոլորտը լցվեց զանգերի ու փողերի խառնաշփոթ հնչյուններով: Առայժմ նրանք գրավված եյին բանվորներով և մանր ծառայողներով: Հետո կգա մանր բուրժուազիան: Գերակշռող տարրը խոհարարուհիներն են: Նրանք իրենց լիք զամբյուղներով տեղավորվել են դիլիժանսների «իմպերիալ»-ում, այսինքն վերին հարկում: Անձրևը նրանց չի վրդովում, սովոր են վաղուց: Նստած են հպարտ, ինքնագոհ, վորպես արևելյան իշխանուհիներ պատգարակների վրա: Փորձեցեք նրանց հետ զրույց անել, և դուք կտեսնեք, թե վորքան հպարտ են իրանց վիճակով: Շատ-շատերը նրանցից գիտեն վարպետորեն չահագործել իրանց պաշտոնը, գնած պարենի արժեքի մի մասը սեփականացնելով: Կան այնպիսիները, վոր, այդ ուղղությամբ գործելով, հազարներ են շահել:

Յերկու վոստիկան մի աղքատ հագնված յերիտասարդի ոձիքից բռնած, քաշքշեցին տարան վոստիկանատուն, վզակոթին տալով: Դատարկ բան է. մի սովորական գրպանահատ է, ձեռը խո-

*) Վերջին անգամ Պարիզ յեղածս ժամանակ ինձ հավատացրին, թե Ռոման խաղատանը Բաղվից փախած մի կարճահասակ ծերունի դաշնակցական տանել է տվել 300 հազար ֆրանկի չափ մի գումար: Այդ դրամը նրան տված է յեղել դաշնակցական կառավարությունը՝ Ռումինիայում նավթ գնելու և Հայաստան ուղարկելու համար: Դաշնակցության կառավարության Պարիզի պատգամավորությունը՝ վատնիչին դատի յենթարկելու փոխարեն, խայտառակությունը քողել է ծերունուց վերցրած մի պարտատոմսով....«պարտական եմ, կվճարեմ»: Ն.

թել է մի խոհարարուհու գրպանը և չի կարողացել ժամանակին դուրս բերել փողամանը:

— Գիլյոտին, գիլյոտին պիտի ուղարկել այդպիսիներին, ուրիշ պատիժ չկա նրանց համար,— գոռում է կինը, չնայելով, վոր գրպանը փրկվել է:

Կա՞ արդյոք, մի ուրիշ ժողովուրդ, վորի հոգում սեփականության զգացումն այնքան խորն արմատացած ու այնքան սրբագործված լինի, վորքան Ֆրանսիացու մեջ վերից ի վար:

Յես գնեցի որվա Matin ը ու Journal -ը, յերկու առավոտյան լրագրներ, յերկուսն ել բուրժուազիայի բերան, յերկուսն ել վաճառքի ելած պոռնիկներ և միակ անկաշառ թերթը՝ Ժան Ժոռեսի l' Humanité »-ն: Ինչպես միշտ, առաջին հերթին կարդացի վոստիկանական քրոնիկոնը: Վոչինչ անսպասելի բան. գիշերվա ընթացքում պատահել են ընդամենը յերեք արկած—մի ինքնասպանություն անոթության պատճառով, յերկու սպանություն, մեկը սիրային հողի վրա, մյուսը՝ կողոպուտի համար: Կան նաև մի շարք ավելի հուզումնալի արկածներ, բայց յես, վոր արդեն ծանոթ եմ Պարիզյան մամուլի բարքերին, գիտեմ՝ նրանց արժեքն այն է, վոր այդ սենսացիոն քրեական վոճիրները բուլվարային ռեպորտյորների յերևակայության ծնունդն են, վոր վաղը պիտի հերքվեն նույն լրագրներում:

— Այ մարդ, դուք իմ հոգին բերանս բերեցիք վոտքով քայլեցնելով,— բողոքեց նորեն Սոմիկոն, կանգ առնելով մեծ բուլվարներից մեկի վրա:

— Ի՞նչ եք ուզում:

— Կառք վերցնենք, հոգնել եմ...

— Վոչ, վոտքով ավելի հետաքրքրական է,— հակառակեցի յես, հիշեցնելով մեծագույն վիպասան Ջառլզ Դիկկենսին, վոր այնքան սիրում եր անձրևների տակ վոտքով շրջել Լոնդոնի փողոցներում:

Յեվ իրավ, հաճելի յեր ինձ համար: Հարկավ, յես ամեն որ չեյի կարող կատարել այդպիսի զբոսանքներ, վորքան ել Պարիզը լիներ հետաքրքրական իր գիշերային և վաղ առավոտյան կյանքով, բայց քանի վոր դրականապես վորոշել եյի մի անգամ ել յենթարկվել կնոջս հանդիմանությանը, թող գոնե վարձս մի քիչ արժանանար սպասվելի նախատինքին:

Սակայն Սոմիկոյի դժկամության հիմնական պատճառը վոտքով քայլելը չեր, այլ ուրիշ բան: Այն, վոր յես ավրել եյի նրա

գիշերվա եպիզոդը այդքան դրամ ծախսելուց հետո, զգալով մի տեսակ պատասխանատվություն հայրենակցիս կյանքի և առողջության վերաբերմամբ: Յեթե յես նրան թողած լինեյի իր կամքին, սատանան գիտե այժմ վորտեղ կլիներ և լավագույն դեպքում ինչ պարգևով կվերադառնար իր կացարանը: Թող հետո անե, ինչ վոր ուզում է, միայն թե վոչ իմ ներկայությամբ:

Անցանք գլխավոր բուլվարները, հասանք Սենայի ափերին: Ֆրանսիայի փոթորկալի պատմության հավիտենական ականատեսը իր մշտապես պղտոր ջրերը մղում եր խուլ մրմնջալով, վորպես ծանր ու միատեսակ աշխատանքից հոգնած բեռնակիր: Թվում եր, վոր նա բողոքում է իր ճակատագրի դեմ: Եյֆելյան աշտարակի գագաթը մշուշի մեջ եր: Պարիզը վաղուց եր դադարել հետաքրքրվել նրանով: Այլևս նրա 300 մետր բարձրությունը վոչ վոքի չեր հիացնում, վոչ մանավանդ «Մեծ Անիվը», վոր իր 40 վագոններով 1600 մարդ եր պտտեցնում իր շուրջը մինչև 100 մետր բարձրություն, վոչ նաև «Մեքենաների պալատը», ինժեներային արվեստի վերջին պարծանքը, վոր արժանացավ 1889 թվականի համաշխարհային ցուցահանդեսի առաջին մրցանակին: Յերեքն ել նույն ցուցահանդեսի ռեկորներն եյին, վորոնցից յերկուսը շուտով քանդվեցին վորպես ավելորդ բաներ: Մնաց «Գրան Պալեյի» և Տրոկադերոյի հետ Եյֆելյան աշտարակը, Պարիզի դրոշակը, վոր ամենից առաջ է վողջունում հեռավոր ճամբորդներին: Յեվ Գյուստավ Եյֆելը, ծերունի մետեորոլոգը շարունակեց պաշտպանել իր ստեղծագործությունը, ամեն որ նրա բարձունքից անեծք թափելով Անատոլ Ֆրանսի գլխին, վոր չեր դադարում աղաղակել.

—Հեռացրեք աչքիցս այդ յերկաթե խրտվիլակը, նա վիրավորում է իմ ճաշակը, վասն զի այլանդակում է իմ պաշտելի Պարիզի գեղեցկությունը:

Բայց ավա՜ղ, ծերունի եստետի ձայնը չլսվեց, և «խրտվիլակը» այսոր ել կանգուն է և ծառայում է համայն աշխարհին, վորպես կենտրոնական ռադիոկայան: Նրա ամենորյա հաղորդագրությամբ է այժմ կանոնավորվում բոլոր յերկրների ժամացույցների ընթացքը: Դա ժամանակակից տեխնիկայի նշանավոր հաղթանակներից մեկն է զառամյալ եստետիզմի դեմ:

Սոմիկոն անտարբեր եր դեպի ամեն ինչ և քայլում եր ինձ հետ լուռ: Պարզ եր, վոր նրա միտքը զբաղված եր ուրիշ բանով:

Միայն մի անգամ նա արթնացավ—Ալեքսանդր յերկրորդ Ռոմանովի անվամբ շինված կամուրջը տեսնելով:

— Վա՛յ, վա՛յ,—գոչեց նա հիացած,—վոսկեզոծ ձիեր, ով գիտե քանի միլիոն ե ծախսված այդ կամրջի վրա:

— Սոֆիկո, նայիր հետ, դա Համաձայնության պատմական հրապարակն ե, ուր 1793 թվականի հունվարի 21-ին գլխատեցին Լուդովիկոս XVI-ին: Տես, վորքան գեղեցիկ ե նա իր արձաններով և յեգիպտական օբելիսկով: Սոֆիկո, նայիր դեմ ու դեմ, դա Բուրբոնների պալատն ե, այժմյան պարլամենտը: Այս օրերս քեզ հետ պիտի մի անգամ գնամ այնտեղ լսելու Ֆրանսիայի նշանավոր հռետորներին: Հետաքրքրական ե չե՞: Սոֆիկո, նայիր դեպի ձախ, դա Տյուլըրին ե իր սքանչելի պարտեզով և անցյալի զորավորների յեղեռնալի գործերով, նայիր Լուվրին, տես ինչ գեղեցիկ ե նրա շինվածքը, դա միջին դարերի ֆրանսիական ճարտարապետության հրաշալիքն ե... Իսկ ներսը, դու դե՞ռ չես յեղել այնտեղ. այդ ներելի չե...մի օր քեզ պիտի տանեմ արվեստների այդ մեծագույն տաճարը... Նայիր ավելի հեռու...

— Համբերի՛ր, համբերի՛ր,—գոչեց Սոֆիկոն իմ վոգևորության դեմ,— թույլ տվեք ինձ մի բան ասել. այդ բոլորը, ինչ վոր ձեզ հիացնում ե, իմ կարծիքով այս բոպեյին չարժե մի սիրուն կնոջ տաք անկողնին... յես գնացի...

Յեվ նա, վազելով, նստեց առաջին պատահած ֆիակրը և անհայտացավ...

Սենան շարունակում եր իր տրտունջները: Վորքան վար, այնքան ավելի ու ավելի եյին պղտորվում նրա ջրերը: Ափերի մոտ իրարու սեղմված նավերը թեթևակի յերերվում եյին, և դեղնագույն ջուրը զուր եր աշխատում լվանալ նրանց քարածխի փոշիով սևացած կողերը: Նավային աշխատավորները զարթնել եյին և տախտակամածների տակից դուրս եյին սողում, ինչպես մողեսներն իրանց ստորերկրյա բներից: Կային կանայք և յերեխաներ, բոլորը քարածխի մրից սևացած:

Ափերի վրա նստած եյին մի խումբ պատանիներ և մի քանի ծերունիներ: Ձկնորսներ եյին, վոր կարթը ջրի մեջ ձգած, անհամբեր կամ դժոխային համբերությամբ սպասում եյին բախտի ժպիտին—որվա պարենին: Նրանք ել ունեյին իրանց վորոշ տեղերը վորսի համար և մեկը չունե իրավունք մյուսի տեղը բռնելու: Լուռ ու անշարժ նրանք գամվել են հողին կոճղերի պես և թվում ե, վոր պիտի մնան այնտեղ հավիտենապես: Մերթ ընդ մերթ մեկը

կամ մյուսը բարձրացնում ե կարթը և ձկնիկը պոկելով նրա ծայրից փիլիսոփայական սառնությամբ, ձգում ե քովը դրած զամբյուղի մեջ:

Մի հնաշեն քարե կամրջի տակից դուրս յեկան մի խումբ մարդիկ կանանց ու յերեխաների հետ: Գործազուրկ բանվորներ եյին իրենց օթևանի տեղերից դուրս վռնդված, վորպես անճշտապահ կենողներ...

Յես հոգնած եյին մինչև անզորություն...

VI

ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Պարիզ յեկող հայը, յեթե ուզում է իր հայրենակիցներին հանդիպել, ստիպված է կիրակի օրը յեկեղեցի գնալ: Այդպես է աշխարհի բոլոր կողմերում, ուր կան գեթ մի բուռը հայեր (իսկ ո՞ւր չկան, մանավանդ այժմ):

Հայ յեկեղեցիները գաղութներում կատարում են կլուբների դեր: Այնտեղ են գալիս գաղթականները իրարու հանդիպելու համար, այնտեղ են լուրեր առնում իրանց հայրենիքից ու ազգականներից: Այնտեղ են վաճառվում լրագիրներ, գրքեր, յերբեմն նույնիսկ հայրենիքի նպարներ, պանիր, խավյար և նման բաներ:

Առհասարակ հայ յեկեղեցին վաղուց է կորցրել իր արժեքը, վորպես աղոթավայր, վորպես հավատի սիմբոլ, վորպես պաշտամունքի տաճար, վորպես իմացական սրբություն: Թիֆլիսի քսան ու չորս յեկեղեցիները տարենը տասներկու ամիս դատարկ են, և զանգերի կիրակնօրյա ղողանջներն այլես այնպես չեն գրավում հավատացյալներին, վորպես մեր հայրերի ու նախահայրերի օրերին: Առյերես կրոնամոլությունը, այսինքն՝ ձեռնիքը, փարիսեցիությունը փայլում են միայն Քրիստոսի ծննդյան, մկրտության, խաչելության և հարության օրերը: Այնուհետև ամբողջ տարին նրանք մնում են խորանների մեջ և հոգևորական սքեմի տակ:

Այդպես և գաղութներում, այն տարբերությամբ, վոր հայը յերկուսի փոխարեն հիսուն ու յերկու անգամ է յեկեղեցի (այսինքն կլուբ) գնում, հիսուն ու յերկու կիրակի: Նաև այն տարբերությամբ, վոր այդտեղ, գաղութներում փարիսեցիությունը մի աստիճան թույլ է, չատ ել բարձրաձայն չի աղաղակում: Մարդիկ գալիս են և մեծ մասամբ յեկեղեցի չեն մտնում, մնում են նրա գավթում կամ փողոցում: Սխալ է կարծել, թե բոլորն ել աղոթելու յեն յեկել: Բարձրաձայն խոսակցություն, ուրախ կամ տխուր զրույցներ, սրախոսություններ, գրախոսություններ, ցինիկ անեկդոտներ, ծիծաղ, ճըճիչ, իրարու հրել ու արմունգել, իրարու

ծաղրել կամ բոթել, հաճախ Թյուրքիայի կամ Կովկասի փողոցներից բերած հայհոյանքներ, կուսակցական կռիվներ բռունցքներով, սպառնալիքներ ատրճանակով, այո, յերբեմն նույնիսկ սպանություն: Այս բոլորը կատարվում է պատարագիչ քահանայի «խաղաղություն ամենեցուն»-ի, չարականի յերգեցողության, կընդրուկի հեղձուցիչ բուրմունքի, «հոգու փրկության համար» տընկված մոմերի դժգույն լույսերի, ծխի ու մխի ներդաշնակությամբ:

Այո, կրկնում եմ և պնդում, հայ յեկեղեցին վաղուց է կորցրել իր հմայքը և վաղուց է զրկվել ժողովրդի յերկյուղածությունից ու ակնկալությունից, ահա ինչու այսոր ինձ բնավ չի զարմացնում նոր սերնդի ըմբոստությունը դեպի նա, ահա ինչու յես ընդունում եմ այն միտքը, թե հայ յեկեղեցին ապրում է իր դարավոր գոյության վերջին փուլը: Ինչ փույթ, վոր նա դեռ շնչում է, դա նրա վերջալույսի մահաբեր ցնցումներն են: Դերասան եր և, դա նրա հայ յեկեղեցին, դարեր կատարեց իր դերերը մերթ վողբերգական, մերթ կոմիքական, և այժմ նա պառավել է, այժմ նրա ատամները փթել են, նրա խռպոտ ու քայքայված ձայնն այլես չի հասնում ժողովրդի լսելիքին և չի շարժում նրա սրտի և հոգու վոչ մի թելը, վոնե այնպես, ինչպես գուցե յերևակայում է ինքը: Նա պիտի հեռանա հայ կյանքի բեմից և արդեն հեռանում է, իհարկե, վոչ ինքնահոժար, այլ պատմության անողոք մտրակով, ժամանակի խըստաշունչ փոթորիկով... Այդպես է բնության դաժան օրենքը, ապարդյուն է նրան գլխատելը:

Պարիզի հայ յեկեղեցին գտնվում է Շանզելիզյան չրջանի գեղեցիկ փողոցների մեկի վրա, վոր կրում է 16-րդ դարի նշանավոր արձանագործ-ճարտարապետ Ժան Գուժոնի անունը: Փոքրիկ է այդ փողոցը, բայց հայտնի յե իր մերձավոր անցյալի մի վողբերգությամբ: Անցյալ դարի վերջին քառորդի չգիտեմ վո՞ր թվականին, այդ փողոցի վրա բացվում է բարեգործական նպատակով մի ցուցահանդես, կամ ինչպես ասում են, բազար: Չգիտեմ ինչից, հրդեհ է ծագում, բազարն այրվում է ամբողջովին, այրվում են և մոտ 150 հոգի, մեծ մասամբ արիստոկրատ և բուրժուա ընտանիքներից: Ահա այդ հրդեհի տեղումն է շինված հայ յեկեղեցին, մի կաթոլիկ յեկեղեցու հարևանությամբ:

Յես գնացի յեկեղեցի մի քանի պարիզաբնակ հայ մտավորականների հանդիպելու համար, և հանդիպեցի մի խումբ ռուսահայ բուրժուաների: Ցարական կառավարության ձեռնարկած և դաշ-

նակցականներից ու մուսավաթիստներից հրահրված հայ թրքական
յեղեռնը սոխալել եր նրանց իրենց կաշվի փրկությունն ապահովել
Յեվրոպայում: Մանավանդ Պարիզում:

Պետք ե ասեմ, վոր յես անձնական ծանոթություններ ունե-
ցել եմ Թիֆլիսի և Բաքվի բուրժուազիայից միայն մի քանիսի հետ:
Բայց ճանաչել եմ ամենքին իրենց անցյալով ու ներկայով, և այ-
սօր ել յուրաքանչյուրի պատկերը վառ կենդանի յե իմ հիշողու-
թյան մեջ իր գեղարվեստական ամբողջությամբ: Իհարկե, նրանք
ել ինձ են ճանաչել... և ատել են, ատել են ավելի, քան յես նրանց:
Ատել են այն սուր ատելությամբ, վորով կարող եր ատել Միդաս
թագավորը իր սափրիչին, յեթե սա հանդգներ ճշմարտությունը
փոսի մեջ թաղելու փոխարեն, ասեր նրա յերեսին՝ «տեր, ներիր,
քո ականջները իշի ականջներ են»: Յես չեյի վախենում հայ բուր-
ժուազիային ականջներից բռնելով, հրապարակ քաշել և ապադա-
սերունդների անարգանքին մատնել, այն ինչ նա չեր համարձակ-
վում յերեսիս արտահայտել իր ցասումը, վոխակալ ուղտի պես
վոխը պահելով իր հոգու խորքում, մինչև վոր կգար վրիժառու-
թյան համար ժամը:

Յես բարևեցի նրանցից միայն մի քանիսին, վորոնց դեմքը
շատ ել մուրատ չեր, մյուսներից յերես դարձրի այն խստությամբ,
վորը հատուկ ե ինձ և վորի համար իմ բարեկամներն ու մերձա-
վորները միշտ կշտամբել են ինձ, ասելով.

— Դու չես կարողանում քո արհամարհանքն ու ատելությու-
նը քողարկել:

Սխալ ե ասել, թե չեյի կարողանում: Չեյի ուզում, գիտենա-
լով հանդերձ, վոր դա գործնական կյանքում չափազանց վտան-
գավոր մի հատկություն ե մարդու համար: Ի՛նչ արած, անկա-
րող եյի բժշկվել իմ հայրական ժառանգությունից:

Հեռվից լսելի մի ծանոթ, շատ ծանոթ ձայն: Նշանավոր յերգչու-
հի Նադեժդա Պապայանն եր, ռուս ոպերային թատրոնների առա-
ջին աստղերից մեկը, յեթե վոչ ամենաառաջինը: Չնայելով իմ ա-
տելությանը դեպի նրան շրջապատող բուրժուաները, մոտեցա և
բարևեցի: Տասնուհինգ տարվա ծանոթներ եյինք, և յես մեկն եյի
նրա այն յերկրպագուներից, վորոնք ամենից առաջ գնահատեցին
նրա տաղանդը դեռ 1891 թվականին, յերբ նա առաջին անգամ
Թիֆլիս յեկավ դեբյուտ տալու: Դա հաշտարխանցի մի համեստ
հայուհի յեր, վոչ այնքան գեղեցիկ, վորքան հրապուրիչ:

— Յերկա՞ր ժամանակով եք յեկել Պարիզ, — հարցրի յես, խըմ-
բից մի կողմ հրավիրելով նրան:

— Վոչ, մի քանի որից հետո պետք ե գնամ:

— Ո՞ւր:

— Մոսկվա:

Մի անբացատրելի նախազգացում ինձ թելադրեց ասելու.

— Մի՛ գնաք, օրիորդ, մի՛ գնաք, մնացեք առայժմ այստեղ:

— Ինչո՞ւ:

— Ինձ թվում ե, վոր ձեր կյանքը վտանգի յեք յենթարկում, —
չթացրի յես իմ չար նախազգացումը:

— Յեթե ձեր ակնարկը վերաբերվում ե Ռուսաստանում տեղի
ունեցող հեղափոխությանը, — ասաց նա, ծիծաղելով իր արծաթա-
հնչյուն ձայնով, — արտիստի կյանքն ապահով ե եքցեսներից:
Ժողովրդի աչքում նա անձեռնմխելի յե:

— Ժողովրդի և վոչ խուլիգանների աչքում: Մի մոռանաք, վոր
հեղափոխությունը դժբախտաբար ճնշվել ե, և այժմ ռեակցիայի
տերը: Այսպես, թե այնպես, իմ բա-
խուլիգաններն են ասպարեզի
րեկամական խորհուրդն ե չգնալ:

— Բայց յես արդեն պայմանավորվել եմ Մոսկվայի ոպերայի
հետ և հեռագրել եմ ուղևորությանս որը. պարտավոր եմ գնալ:

Յես լռեցի և հրաժեշտ տվեցի:

Նա գնաց և կործանվեց...

Պատմեմ ինչպես: — Մոսկվայում մի օր օրիորդ Պապայանն իր
բնտանիքից հեռագիր ե ստանում, թե հայրը մահամերձ հիվանդ
ե և փափագում ե աղջկան տեսնել: Պապայանը, արհամարհելով
ճանապարհի վտանգները, շտապում ե իր ծննդավայրը — Հաշտար-
ձմեռային սառնամանիքը,
խան: Հիվանդը չի մեռնում, առողջանում ե: Քաղաքում արդեն
լուր ե տարածվել, թե Պապայանն իր հետ մեծ քանակությամբ
թանգարժեք ադամանդներ ե բերել: Յերկու-յերեք սրիկաներ —
մեկը հայ, յերկուսը թուրք, հարձակվում են Պապայանների տան
վրա, պահանջում են ադամանդները: Օրիորդի հայրը դիմադրում
ե, տեղն ու տեղը սպանվում: Օրիորդը մեջ ե ընկնում հորն օգնե-
լու և ստանում ե դաշույնի մահաբեր վերքեր ու մի քանի օրից
հետո վախճանվում ե: Հետագայում լսեցի, վոր զմայլելի յերգչու-
հին իր մահվան օրը յերգել ե իր արիան «Տրավիատա» ոպերայից:
Ով գիտե, գուցե ճիշտ ե, վոր ասում են, թե սոխակն յերգելով
ե մահանում:

Կործանվեց յերիտասարդ հասակում մի աննման յերգչուհի,

վորի հավասարը մինչև այսոր էլ չի ծնել հայ ժողովուրդը և չգիտեմ, յերբ պիտի ծնե:

Պապայանն այսոր էլ այն միակ հայուհին է, վոր ճեղքեց միջակության պղպատյա պատնեշը և անցավ բարձրագույն ընտրյալների տաճարը գեղարվեստների աշխարհում: Տասն ու հինգ տարի այդ հեզիկ աղջիկն իր անզուգական ձայնի հմայքի տակ պահեց Լենինգրադի (այն ժամանակ Պետերբուրգի) ու Մոսկվայի, Բաքվի ու Թիֆլիսի ամենայերաժշտագետ բազմությունը: Յեվ յերբ նրա վողբերգական մահվան լուրն ստացվեց, ամենուրեք և բոլոր լեզուններով լսվեց՝ «կորավ Վերդիի և Չայկովսկու սոխակը»:

Սակայն նա իր կյանքում բախտավոր չեր: Բեմի վրայից ուրիչներին հուզող ու արտասվեցնողը, բեմի յետևում ինքն եր լալիս: Այնտեղ նա դժբախտ եր և տառապում եր: Քանի՛-քանի՛ անգամ տեսել եմ նրա դառն արցունքները և լսել եմ նրա սիրտ մորմոքող հառաչանքներն իր փառքի առաջին տարիները: Հիշում եմ նրա մի հուսահատական որը, յերբ նա վճռել եր ինքնասպանություն գործել: Ժամեր գործադրեցի նրան համոզելու համար, վոր չկա ավելի մեծ հիմարություն, քան ինքնասպանությունը.—Կրեցեք ձեր վիշտը ձեր տաղանդին արժանի քաջությամբ և ապագայում ինքներդ կծիծաղեք ձեր այսորվա տրամադրության վրա:

Արդարև, ապագայում նա ինքը մի քանի անգամ ծիծաղելով հիշեց իր անցյալի հուսահատությունը և բարեկամաբար սեղմեց իմ ձեռը:

Նա թուլություն եր ունեցել հափշտակվել Բ... Ա...-թյան անունով մեկով, վորի միակ արժանավորությունն եր իր իշխանական ծագումը և հարստությունը: Մի մարդ, վոր իր արտաքին սեթևեթ ձևերի, իր չինծու բարեսրտության, իր կեղծ պարզության, իր փքուն ֆրազների տակ պահում եր ծայրահեղ յեսամոլի ու անամոթ ճղճիմ հոգին: Նա խոստացավ և հետո մերժեց ամուսնանալ մի համեստ, վոչ հարուստ, բայց ազնիվ ընտանիքի աղջկա հետ, վոր արժանի յեր լավագույն ճակատագրի, առարկելով թե իր կամերգեր հայրը (Նիկոլայ յերկրորդի փոքրագույն սպասավորներից մեկը) հակառակ է այդ տեսակ «մեզալյանս»-ին: Իհարկե, ինչպես կարող եր նա իր յերկնագույն արյունը խառնել քաղքենական արյան հետ:

Պապայանն անբաղդացավ, և այնուհետև նա մերժեց շատ շատերի առաջարկը, հրաժարվելով ամուսնական կյանքից առմիշտ:

Բայց հոգեկան տառապանքները չազդեցին նրա տաղանդի վրա, և նա մինչև մահ մնաց մուսաների փայփայվածը:

Մինչ յես աջ ու ձախ փնտրում եյի իմ ցանկացած մարդկանց, ինձ մոտեցավ մի պարզ հագնված փոքրահասակ մարդ, չիկավուն մազերով, կարճ ցանցառ միրուքով, սրածայր և քիչ արծվային քթով: Նա մի թևի տակ բռնած ուներ մի քանի գրքեր, իսկ վերարկուի յերկու գրպաններումն էլ լրագրներ: Կարելի յեր կարծել, թե դա մի չրջիկ գրավաճառ է: Բայց դա հայտնի բանաստեղծ, գրական քննադատ, պատմագետ, իմաստասեր, հրապարակախոս, անխոնջ հասարակական գործիչ, մի խոսքով Արշակ Չոպանյանն եր:

— Բարի գալուստ, վաղուց կփափագեյի տեսնել,—ասաց նա այն արագ տոնով ու առողջ ու հնչյուն ձայնով, վոր միշտ արթուն ու ժիր մարդկանց հատկանիշներն են:

Մենք, իհարկե, հեռվեն ծանոթ եյինք իրարու և կարծեմ նամակներ էլ փոխանակել եյինք, ուստի շատ քիչ խոսքեր եյին պետք, վորպեսզի անմիջապես բարեկամանայինք: Բայց, ըստ յերևույթին, Չոպանյանը ինձի պես սիրում եր ամեն մի բարեկամություն սկսել ուտել-խմելով: Յես հաճույքով ընդունեցի նրա հրավերը՝ միասին նախաճաշելու:

Յերկու ժամվա մեր խոսակցության նյութն յեղան գլխավորապես հայ-թրքական ընդհարումները: Յես պատմեցի, ինչ վոր գիտեյի:

— Յեղբայր, յեղբայր,—գոչեց Չոպանյանը, ձեռք զարկելով սեղանին,—այդ ի՞նչ աղետ է, բավական չե՞ր թրքահայերինը, այժմ էլ ռուսահայերինը: Ի՞նչ պիտի ըլլա այս թշվառ ազգին վիճակը, ի՞նչ պիտի ըլլա:

— Ի՞նչով եք զբաղված այժմ,—հարցրի յես տխուր խոսակցությանը վերջ տալու համար:

— Ա՜հ, ինչով ըսեք, զբաղված եմ,—պատասխանեց նա, հեգնորեն ժպտալով,—Չոպանյան հաս, Չոպանյան հոն, տեսակ մը Ֆիգարո դարձեր եմ: Մենակ եմ, հոգնել եմ, ջղերս ալ ավրվել են: Մտադրություն ունեմ Կովկաս յերթալու, Եջմիածին այցելելու: Հոն գրադարանը խիստ կզբաղեցնե միտքս, քանի մը ձեռագրներ նայելու պետք կզգամ աշխատության մը համար:

— Յե՞րբ եք մտադիր գնալու:

— Տակավին վորոշած չեմ, թերևս գարնան սկիզբին կամ ամառը, յեթե ջղերս ներեն: Առայժմ ժամանակս սուղ է, կջա-

նամ չուսուլ լույս ընծայել քանի մը դրական գործեր: «Անահիտ» ալ չեմ կրնար մեկղի դնել:

— Ի՞նչպես է «Անահիտի» նյութական վիճակը:

Զորանյանը փոթկաց, հազիվ կարողանալով գինու բաժակը բերնից անվտանգ հեռացնել:

— Ըսելու բան չէ,—ասաց նա, բերանը սրբելով,—«Անահիտ» հարյուր ֆրանկ ամսականի կարժե: Սակայն հոգ չէ, կերթա, դուք ալ գործ մը պիտի տաք, կաղաչեմ...

— Ուրախությամբ,—խոստացա ես ամենայն անկեղծությամբ:—Ասացեք, Զորանյան, ի՞նչ վիճակումն է հայկական դատը Ֆրանսիայում:

Զորանյանի դեմքը մռայլվեց, աչքերը սքողվեցին տրտմության շղարշով, ճակատը կնճռոտվեց: Պարզ էր, որ ես դիպա մարդու սրտի ամենազգայուն լարին:

— Ե՜հ, բարեկամս,—գոչեց նա, մի ծանր հառաչանք արձակելով կրծքի խորքից,—գեշ է, շատ գեշ մեր դատին վիճակը: Ֆրանսիան զբաղված է իրմով, իրավունք ալ ունի, հազար ու մի տեսակի ներքին ու արտաքին կնճռոտ խնդիրներ: Մեզի համակրող դեպյուտեներ կըսեն. «Այս խնդիրը լուծենք, այն լուծենք, հետո զբաղվենք հայկական դատով»: Մինչև հիմա սեպարատոնի խընդիրն էր, ան ալ վերջացավ, այժմ տեսնենք ինչ պիտի ըսեն: Կլեմանսոն ամեն անգամ բուտադ մը կը թողնե բերնեն: Այս օրերս ֆրանսիացի բարեկամներես մեկուն ըսեր է. «Ա՜հ, ալ ինձ արյունոտեց հայկական արյունոտ խնդիրը»:

— Եվ դարձյալ շարունակում եք դիմել այդ մարդկանց օգնությանը,—գոչեցի ես վրդովված:

— Ի՞նչ ընենք, բարեկամս, ի՞նչ ընենք, բացի դիպլոմասիից, ուրիշ ճամբա չունենք: Ան դաշնակցականներն միայն տղայաբար կկարծեն, թե կրնան Թյուրքիան տապալել: Ե՜հ, ձգենք, աս մասին շատ խոսելիք ունիմ: Կը հուսամ, որ երկար ժամանակով եք Պարիզ ժամանել:

— Այո, պիտի մնամ, մինչև որ որդիներս ավարտեն իրանց ուսումը:

— Ա՜հ, շատ ուրախ եմ, կը փափաքեմ հաճախ հանդիպել ու ձեզի հետ գործել: Գաղութին մեջ գործ շատ կա ընելու, գործողներ չունինք: Հոգներ եմ, ջղերս ալ ուժ չունին:

Մենք բաժանվեցինք: Ավելի քան հինգ տարի մենք տեսնվում էինք առնվազը շաբաթը մի անգամ: Նա միշտ զբաղված էր վոչ

այնքան էր, վորքան ուրիշների գործերով. այս ինչ ուսանողի համար պիտի թոշակ գտնել, այն ինչ արվեստագետին պիտի օգնել: Բավական է, վոր կարիք ունեցողը հայ է, և Զորանյանը միշտ պատրաստ էր ձեռքից յեկածն անելու, յերբեմն լավ չտեղեկանալով, դիմողն արժանի յե՞ օգնության, թե վոչ: Նրա ձեռներեցությամբ և ջանքերով կազմվել էր մի նպաստամատույց ընկերություն, վորի նպատակն էր օգնել արվեստագետներին և ուսանողներին: Նրա վարչության մեջ յես էլ կայի, փոխ-նախագահի կոչումով: Ամենից շատ ու ամենից արդյունավետ գործողը դարձյալ մեր քարտուղարն էր—Արշակ Զորանյանը: Նա յեր, վոր ի միջի այլոց, մեր ընկերության նյութական աջակցությամբ, կազմակերպեց Կոմիտասի առաջին համերգը Պարիզում: Նա յեր, վոր Վաշինգտոն հոյակապ դահլիճը լեցրեց բազմությամբ և բերեց մի շարք հայտնի ֆրանսիացի յերաժշտագետներ: Մի բան, վոր միայն նրա համառ տոկունությունը կարող էր անել:

Քսան տարի անցած, յերբ յես Ամերիկայից վերադառնալով, աչքերիս հիվանդության պատճառով, ստիպված եյի Պարիզում մնալ նորեն յերկար ժամանակով, Արշակ Զորանյանին, այդ մարդ-անդիկին, տեսա գրեթե անփոփոխ: Նա նույն ենտուզիաստն էր, նույն մաքրարյուն ռոմանտիկը և, միևնույն ժամանակ, նույն աննկուն աշխատավորը հասարակական կյանքի ասպարեզում: Չեր պակսել և նրա բեղմնավոր գրչի թափը: Չնայելով իր աջ ձեռի վնասմանը, նա շարունակ գրում էր, գիշեր ցերեկ: Նա նոր էր լույս ընծայել Roseraie d'Arménie-ի (հին հայ բանաստեղծությունների ժողովածու) յերկու ստվար և շքեղազարդ հատորները: Ճշմարիտ է, ծերությունը բավականաչափ ազդել էր նրա ֆիզիքական կարողության վրա, և նա այժմ ավելի հաճախ էր կրկնում «Ջղերս, ջղերս», բայց, տրտնջալով հանդերձ, չէր հրաժարվում վոչ մի հասարակական գործից ու իրան դիմող արվեստագետներին և ուսանողներին բարոյական օգնություն մատուցանելուց:

Մի որ յերեկոյան գնացի Մինաս Չերազին տեսնելու Closerie de Lilas կոչված սրճարանում, վոր գտնվում է Սեն-Միշել և Մոնպարնաս բուլվարների անկյունում: Փոքրիկ է այդ սրճարանը, բայց մեկն է լատինական արվարձանի արտիստիկ կաֆեներից: Նրա հաճախորդները մեծ մասամբ բանաստեղծներ են, յերաժիշտներ, նկարիչներ: Ճանապարհիս վրա լինելով, յես ամեն անգամ անցնում եյի նրա մոտով և ամեն անգամ կանգ եյի առնում

Նրա աչքն հիանալու Ֆրանսուա Ռյուդի նշանավոր գործերից մեկով—մարաջախտ Նեյի արձանով: Այստեղ ե գնդակահարվել Նապոլեոն առաջինի այն ժեներալը, վոր կրում եր Մոսկովի իշխան մականունը: Այդ արձանը Պարիզի հրաշալիքներից մեկն ե և բոլոր արվեստագետների նախանձի առարկան: Հազիվ թե պատերազմի արյունռուշտ վոգին յերբեք ավելի գեղարվեստորեն, ավելի խտացյալ արտահայտված լինի, քան այդ մեն մի փիգուրայի մեջ:

Մինաս Չերազը նստած եր կաֆեյում, առջևը մի գավաթ թեյով: Յես նրա հետ ծանոթացել եյի տասն ու վեց տարի առաջ, յերբ նա ճամփորդում եր Կովկասում: Այն ժամանակ այդ բավական բարձրահասակ, նիհար մարդը տակավին յերիտասարդ եր: Չնայելով, վոր Խրիմյանի պատգամավորությունը Բեռլինում ձախողել եր, Մինաս Չերազը լիահույս եր, վոր Ռուսթրքական դաշնագրության չարաբաստ 61-րդ հոդվածը պիտի իրագործվի: Չնայելով նույնիսկ Խրիմյանի սրամիտ ծաղրին:

— Մեզ ուղարկեցին Բեռլին թանեսպաս ուտելու, չկրցանք. հոն ամենքը յերկաթե գդալներ ունեյին, իսկ մենք թղթե կտոր մը:

Այժմ Մինաս Չերազի վազնաշարը ծալվել եր, նա ընկճվել եր, ու գրեթե խեղճացել: Մարդը Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածը դարձրել եր վոչ միայն ազգի, այլ և սեփական կյանքի հանգրվանը և հանկարծ տեսնում եր, վոր այդ ժանգոտված ու բթացած զենքն էլ խլում են նրանից: Կարելի՞ բան ե, վոր մարդկությունը այդ չափ անարդար ու քարասիրտ լինի: Պետք ե շարունակ խնդրել, աղերսել. և Մինաս Չերազն աղերսում եր: Ով կարդացել ե նրա l'Arménie թերթը, չի կարող չհիշել, թե վորքան միապաղաղ, միահնչյուն և ձանձրալի յեր մուրացկանի աղերսը՝ «վողորմեցեք»: Ինքը Մինաս Չերազը շատ լավ զգում եր, վոր իր թույլ ձայնը չի հասնում և անզոր ե հասնելու Յեվրոպայի խուլ ականջներին: Յեվ ահա մի օր, վերջապես, վճռեց լռել, և լռեց: Ամենախելոք գործն այդ եր, վոր նա արավ:

Այս անգամ նա ինձ վրա թողեց ցավալի տպավորություն: Հիսուն ու հինգ տարեկան մարդու համար հիասթափումը կես մահ ե: Նախկին Չերազից մնացել եր միայն կես—բնածին հումորը, իրերի և մարդկանց ծաղրելի կողմերը ցուցադրելու ձիրքը: Հիշում եմ նրա չհրապարակված, օրիժինալ անեկդոտները, նրա ծայր աստիճան հետաքրքրական պատմվածքները սուլթանների և փաշաների կյանքից ու բարք ու վարքերից: Տխուրը նա պատմում

եր եվրոպական հանդարտությամբ, կարծես նրա բերանով խոսում եր մի ճգնավոր: Ծաղրելին պատմելիս, նա ինքը յերբեք չեր ծիծաղում, pince sans rire եր Պետրոս Ադամյանի պես: Յեվ նրա դեմքի արտահայտությունն ու աչքերի հեգնանքը համապատասխանում եյին նրա պատմվածքներին:

Զարմանալի յերևույթ. կյանքումս տեսել եմ մեկից ավելի մարդիկ, վորոնք գիտեն բերանացի սքանչելի պատմել, բայց հենց վոր գրիչ են վերցնում, ձիրքը չքանում ե: Այդպիսի տպավորություն թողեց ինձ վրա Մինաս Չերազի ֆրանսերեն պատմվածքների մի ժողովածու:

Թյուրքիայի 1908 թվականի հեղափոխությունը մի փոքր թևավորեց Մինաս Չերազին: Սահմանադրությունը հրատարակվելուց անմիջապես հետո, նա շտապեց գնալ Պոլիս, նորից այնտեղ հաստատվելու համար: Բայց մի քանի ամիս անցած վերադարձավ ավելի հուսալքված: Յերիտասարդ Թյուրքիայի կառավարությունը նրան հավատ չեր ներշնչել: Կարծես նախազգում եր, թե իր հայրենակիցներին սպասում եր մի նոր կատակլիզմ, վոչ պակաս սոսկալի, քան սուլթան Համիդի գերիշխանության օրերին: Նորեն հոգեկան թմրությունը պաշարեց նրան և նորեն վերսկսեց իր միալար յերգը. «Հուսանք, վոր օր մը Յեվրոպա կը ճանչնա իր մարդկային պարտականությունը»... Խե՜ղճ մարդ. նա խաբում եր ինքն իրեն, հոգու խորքում զգալով, վոր իր յերազներն անիրագործելի յեն:

Տասներկու տարի հետո, յերբ յես նորեն Պարիզ յեկա, Մինաս Չերազին չտեսա: Այս անգամ նա, իր տկարության պատճառով, հաստատվել եր Մարսելիայում: Այնտեղ, կարծեմ, 1926 թվականին տոնվեց նրա մանկավարժական-գրական և հասարակական գործունեության վաթսունամյակը: Հայաստանի խորհրդայնացումից հետո, յերբ Պարիզի հայ ինտելիգենցիայի լավագույն մասը հրապարակորեն արտահայտեց իր համակրանքը դեպի Խորհրդային Հայաստանը, Մինաս Չերազը Մարսելիայից հեռագրեց, թե ինքն ել միանում ե համակրողներին: Բացի դրանից, նա իր հոբելյանից գոյացած համեստ գումարը նվիրեց Խորհրդային Հայաստանում մի ուսումնարան բանալու նպատակին:

Մահվան անկողնում նրա վերջին խոսքերից մեկն ե յեղել.

— Ուրախ եմ, վոր հոն կա փոքրիկ և ազատ Հայաստան մը:

Նա դաշնակցության անհաշտ թշնամին էր... Նա կրկնում էր.

— «Մեր մեծագույն աղետն այդ կուսակցությունն՝ յեղավ»:

Ինչ ասել կուզե, որ դաշնակցականներն էլ իրանց կողմից չէյին սիրում նրան և հեղնանքով էյին գրում ու խոսում նրա գործունեյության մասին: Այդպես են մարդիկ. սեփական թերություններն ուրիշների մեջ են փնտրում և այնպես հարվածում իրանք իրանց:

VII

ԴԱՐՁՅԱԼ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ: ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ: ՍԻԱՄԱՆԹՈՆ:

Առաջին թափառումներից հետո, յերբ բավական կշտացել էյի Պարիզի ժխորից, ինձ պաշարեց մի ծանր թախիծ, որի հավասարը կյանքիս ամենադառը ժամերին էյի միայն ունեցել: Անգործությունն էր դրա պատճառը թե՛ հայրենիքի կարոտը, այդ մասին չէյի հարցնում ինքս ինձ: Սիրտս հեծեծում էր կապարյա ծանրությունից: Համաշխարհային կյանքի բովում յես ինձ զգում էյի մի տեսակ սառցարանում, նույնիսկ ընտանեկան շրջանում: Մի՞թե այդ էյի սպասում Պարիզից: Չե՞ որ իմ յերևակայության մեջ նա յեղել էր լավատեսության որրան:

Գլուխս չէր դադարում գործել, բայց գործում էր միայն մի ուղղությամբ—ի՞նչ է սպասում հայ ժողովրդին, ի՞նչ նոր աղետներ: Թյուրքիայից ամեն օր գալիս էյին մեկը մյուսից ավելի հուսահատիչ լուրեր: Կովկասում հայ-թրքական ընդհարումները սպառնում էյին՝ մի նոր ձև ու թափ ստանալ: Ամեն անգամ Թիֆլիսի լրագրները բանալիս սիրտս տրոփում էր, թե ահա-ահա պիտի կարդամ նոր յեղեռնների մասին: Այդ այն ժամանակն էր, յերբ Վորոնցով-Դաշկով փոխարքայի նախագահությամբ տեղի ունեցող «միջազգային» ժողովները ստով ու կեղծիքով մոլորեցնում էյին թե՛ հայ և թե թուրք ազգաբնակությանը: Հիշում եմ այդ ստերից մեկը: Նրա անամոթությունն ավելի, քան որևէ մեկը, յես գիտեյի: Ժողովներից մեկում թուրք հրապարակախոս Ահմեդ-բեգ Աղայեվը դաշնակցականներին հարցնում է.

— Ինչո՞ւ միջոցներ չձեռնարկեցիք մեր յեղբայրասպան ընդհարումների առաջն առնելու, յերբ Շիրվանզադեն Բաքվի կոտորածներից յերկու ամիս առաջ ձեզ նախազգուշացրեց այդ մասին:

— Մենք միջոցների դիմեցինք, բայց վոստիկանությունը մեզնից զորավոր յեղավ, ի՞նչ կարող էյինք անել,—պատասխանեց ժողովականներից մեկը:

Եթե այդպես ասեր մի ուրիշը դաշնակցականներից, պատկերն այնքան այլանդակ, այնքան անամոթ չէր լինի: Բայց խոսողը Կոնստանդին Խատիսյանն էր: Այն մարդը, որ իմ Նախազգուշացմանը պատասխանել էր մի տարի առաջ:

— Մենք Թուրքերից յերկյուղ չունենք. Նրանք իմ կոշիկների տակին չարժեն:*)

Մի պահ յես կամեցա հեռագրով հերքել այդ անպատկառ սուտը և հրապարակորեն մերկացնել Խատիսյան «գործիչի» դեմքը, բայց մտածեցի, ի՞նչ օգուտ բացի վնասից, քանի որ դրանով կարող էի մի աստիճան հրահրել փոխադարձ յերկպառակությունները յերկու ազգությունների մեջ, որ հավաքվել էյին իրար թե յեղբայրական դաշինք կապելու: Բավական էր, որ առանց այդ էլ տառապում էր իմ հոգին:

Հաճախ ինքս ինձ կշտամբում ու անբաստանում էյի, որ հեռացել եմ այն յերկրից, որի կյանքումն էյի սնվել ու ապրել, որի հետ կապված էյի իմ հոգու բոլոր թելերով: Ես ինձ համարում էյի մի տեսակ դասալիք և ոչ ընտանիքիս ֆիզիքական փրկությունը, ոչ զավակներիս կրթության ապահովությունը չէյին արդարացնում իմ աչքում իմ վարմունքը: Չկա մարդու համար ավելի դաժան բարոյական տանջանք, քան այն, յերբ նա ինքն է իր յեղունգներով բզկտում իր հոգին: Բայց չկա և ինքնամեղադրանք, որից ազատվելու համար մարդ չգտնե միջոց, թեկուզ սոփեստությամբ: Ես ինձ աշխատում էյի մխիթարել այն մտքով, թե ինձ նման մի խաղաղասեր հոգի չունի ոչ մի դեր այնտեղ, ուր սրերն են խաչաձևվում:

Դաշնակցությունն ուղարկել էր յերկուսին իր ղեկավարներից՝ Կարո Բաստրմաճյանին ու Հովհաննես Քաջազնունուն, Պարիզում ապաստանված ռուսահայ հարուստներից դրամ պահանջելու:

— Ինչո՞ւ համար է այդ հանդամանակությունը,—հարցրի յես Կարո Բաստրմաճյանին:

*) 1911 թվականին, յերբ Կոնստանտին Խատիսյանը մեռավ, նրա դագաղի վրա արծաթե պսակ դրեց Հաջի Զեյնալ Աբդին Թաղիյեվը: Ի՞նչ էր նշանակում «վշտակցության» այդ արտահայտությունը: Համերաշխության սիմբո՞լ: Բայց յե՞րբ: Այն ժամանակ, յերբ տասնյակ հազարավոր անմեղների արյուն էր թափվել և դեռ շարունակվում էր հոսել: Ն.

— Զենքի համար:

— Ո՞ւմ դեմ պիտի գործածեք զենքը:

— Կովկասյան Թուրքերի դեմ:

— Ուրեմն պիտի շարունակե՞ք կռիվը:

— Պիտի շարունակենք:

— Մինչև յե՞րբ:

— Մինչև կատարյալ հաղթություն:

— Ասացեք, մինչև կատարյալ պարտություն, այդ ավելի ճիշտ կլինի:

— Յերկուսից մեկը, կամ մենք պիտի ապրենք, կամ Թուրքերը:

— Հաշտության ոչ մի միջոց չե՞ք գտնում:

— Չենք գտնում:

— Յեվ չեք էլ աշխատում գտնելու, ի հարկե:

— Այո: Հայ և Թուրք հակառակ բևեռներ են, որ յերբեք չեն միանալ...

Յեվ այդ լեզվով խոսում էր այն մարդը, որ դաշնակցության շեֆերի մեջ ամենամեղմն ու ամենաբարին էր համարվում: Ճիշտ նույն լեզվով էյին խոսում Կարաբեկովներն ու Սուլթանովները:

Ինքը Դաշնակցությունն էր կանխավ վորոշել, թե որ հարուստը որքան պիտի տա: Պահանջը միլիոնների յեր հասնում: Հիշում եմ միայն Ալեքսանդր Մանթաշյանի վրա դրված տուրքը— 400 հազար ռուբլի: Յեվ սկսվեց մի ինքնատեսակ սակարկություն հայ բուրժուազիայի ու Դաշնակցության մեջ: Յեվ այլանդակ ու ամոթալի վաճառքին յենթարկվեց յերկու դարավոր հարևան ժողովուրդների անմեղ արյունը:

Չեմ հիշում, սակարկությունն ինչ գումարի հանգեց, բայց լավ հիշում եմ, որ Դաշնակցության պատգամավորները Պարիզից հեռացան գոհ սրտով...

Օրն յերկու անգամ այցելում էյի լատինական արվարձանի ամենահին սրճարանը՝ Cafe Souff et: Այդ կաֆեն պատմական էր ռուս էմիգրանտների համար: Հերցենի և Լավրովի օրերից սկսած նա յեր յեղել նրանց ժամադրավայրը Պարիզում:

Այժմ այցելում էյին 1905 թվականի հեղափոխության ղեկավարները և Շլիսելբուրգի ու Պետրոպավլովսկու ազատագրյալները: Այնտեղ էր մերթ ընդ մերթ յերևում և Լենինը: Նայելով այդ հեգնական աչքերով, համեստ դեմքով մարդուն, ո՞վ կարող էր

ասել, թե մի տասը տարուց հետո նա յե լինելու աշխարհի մի վեցերորդական մասի հիմնիվեր հեղաշրջողը և համայն մարդկության ապագա ճակատագրի կերտողը, և մանավանդ վո՞ր հայր կարող եր գուշակել, թե այդ մարդու կամքն ու գաղափարն են լինելու Կովկասի աշխատավոր ժողովուրդների փրկության և ազատագրման խարիսխը:

Մարդիկ գալիս եյին, նստում միշտ միևնույն փոքրիկ տեղում, պահանջում եյին մի-մի բաժակ կաթով սուրճ կամ մի գավաթ գարեջուր և ժամերով վիճաբանում: Նրանք միշտ հուզված եյին, միշտ ներվային, բայց վոչ վոք դեմքի վրա չեր յերևում պարտվածի հուսահատությունը: Ի՞նչ եյին խոսում—չգիտեյի, և, իհարկե, չեյի կարող գիտենալ. բայց պարզ եր, թե ինչն ե նրանց մտքերի կենտրոնական առանցքը... Պարզ եր նաև յուրաքանչյուրի նյութական կարիքը: Յեվ ամենքն իրենց նեղ որերը կրում եյին ռուս հեղափոխականին հատուկ պարզությամբ և հումորով: Ապշեցուցիչ եր այդ մարդկանց կամքի զորությունը:

Մեծամասնությունը ռուս ուսանողներ եյին: Նրանք կենում եյին Mouffetar անունով մի աննշան փողոցում: Ծայրեիծայր ռուս լեզուն եր տիրում այդ փողոցի վրա, և ամեն անգամ այնտեղից անցնելիս, ինձ թվում եր, թե Ռուսիայի մի վորևե քաղաքումն եմ գտնվում...

Մի պահ նրանք հրավառվեցին սովորականից ավելի: Ի՞նչ եր պատահել, ի՞նչ նոր ալեկոծում: Վոչինչ. դատարկ բան: Ցարական կառավարությունը մի միլիարդ ֆրանկի փոխառություն եր խնդրել Ֆրանսիայից: Չգիտեմ թվով դա քանիերորդ դեպքն եր, բայց վաղուց արդեն դարձել եր սովորական: Յեվ Ֆրանսիական բուրժուազիան միշտ հաճույքով եր պարպել իր քսակը: Ինչո՞ւ չե: Չե՞ վոր նրա շայլոկյան պայմանները միշտ ընդունվում եյին առանց սակարկության: Այս անգամ փոխառությունը Նիկոլայ յերկրորդին հարկավոր եր գլխավորապես հեղափոխական շարժումները մի անգամ առ միշտ Ռուսիայում խեղդելու համար: Այսպես եյին կարծում հեղափոխականները և այս եր, վոր ալեկոծել եր նրանց: Մաքսիմ Գորկին իր խիզախ վոճով գրեց մի ցասկոտ հոդված: Այնտեղ նրա խորապես վշտացած գրչից չեշտակի սլրդել եր մի կծու դարձվածք՝ «Թքում եմ գեղեցիկ Ֆրանսիայի յերեսին»: Ամենքը գիտեյին, վոր թուքը ուղղված ե բուրժուազիայի և միմիայն բուրժուազիայի յերեսին, բայց չեյին ու-

զում խոստովանել: Այս եր պատճառը, վոր ռեպտիլ մամուլը կատաղել եր համբավավոր բելլետրիստի դեմ:

«Մուֆլե» սրճարանը գալիս եյին և վոչ-հեղափոխականներ. թե՛ ռուս և թե հայ ու վրացի: Հիշում եմ հայտնի գիտնական Մաքսիմ Կովալևսկուն, գրող Ամֆիտեատրովին, պրոֆեսոր Յուրիկ Ղամբարյանին և Թիֆլիսի առևտրական բանկի վարիչ Միքայել Թամամշյանին: Չգիտեմ ինչպես, այժմ այդ մարդն ել պրոֆեսորի կոչում եր կրում:

Այդ չորսն ել զարմանալի գեր մարդիկ եյին, մանավանդ Միքայել Թամամշյանը: Նա հարյուր ու հիսուն կիլոգրամ կշիռ ուներ: Հիշում եմ այն որը, յերբ նրանք թանձր մուշտակների մեջ պարուրված կաֆե մտան, ներկա յեղողները միաբերան բացականչեցին.

—O, la-la, o, la-la...

Իսկ մի ֆրանսիացի սրախոսեց.

— Այժմ ինձ հասկանալի յե, թե ինչու Ռուսաստանն այդքան լայնածավալ ե:

Չորս պրոֆեսորները դասախոսում եյին ռուս եմիգրանտների համալսարանում, կարծեմ, ձրիաբար: Այդ ժամանակ նրանց և ուսանողների մեջ խռովություններ եյին ծագել: Ինձ ասացին, թե Մաքսիմ Կովալևսկին իր բերնից թռցրել ե մի անզգույշ խոսք— «Յես Ֆրանսիայում հանրապետական եմ, իսկ Ռուսիայում միապետական»: Ուսանողները կատաղել եյին և Կովալևսկուն բոյկոտի եյին յենթարկել: Նրանք աղաղակում եյին.

— Անկցի Պետական խորհրդի անդամը, մենք չենք ուզում նրա դասերը:

Թամամշյանն իր պաշտոնակցին պաշտպանում եր կովկասյան տաքարյունության ամբողջ թափով ու զորությամբ: Մի բանակցության ժամանակ նա թանաքաման եր արձակել ուսանողների վրա, ինչպես Մարտին Լյուտերը Բեհեղեբուղի վրա:

Դժգոհություններ կային և՛ Ամֆիտեատրովի դեմ: Հիշում եմ այն հրապարակական բազմամարդ ժողովը, յերբ ռուս գրողը ճգնում եր իրան արդարացնել ուսանողների առջև: Խեղճ մարդն այնքան հուզված եր, վոր խոսքերը խեղդվում եյին կոկորդում: Ինձ թվում եր, թե ահա-ահա այդ զարմանալի բարձրահասակ, զարմանալի գեր և կարճապարանոց մարդը կաթվածահար պիտի լինի: Վերջը նա արտասվեց, և նրա կինը, թևից բռնելով, քաշեց տարավ դուրս, ինչպես կրկեսում վիրավորված մի ցուլի: Յեր-

բեմն Կավալեվսկուն և Ղամբարյանին հանդիպում էյի բժիշկ Լոռիս Մելիքյանի մոտ: Ցերկուսն էլ կատարյալ յեվրոպացիներ էյին արդի բուրժուական մտայնությամբ: Կավալեվսկին դարձել էր կես պարիզաբնակ: Սեն-Միշել բուլվարի վրա, Լյուքսեմբուրգ պարտիզի դեմ ու դեմ նա ուներ մի կոկլիկ մշտական բնակարան:

Մի անգամ իմ ներկայությամբ մի ծերունի ֆրանսիացի բժիշկ նրան հարցրեց.

— Ասացեք, պարոն պրոֆեսոր, ռուս ժողովրդի ամենաբնորոշ հատկությունն ի՞նչ է.

Կավալեվսկին առանց տատանվելու պատասխանեց.

— Դիմացկունությունը, տոկունությունը:

Նա այն համոզմունքի յեր, վոր ռուս մարդը կարող է դիմանալ ամեն բանի, ուստի չեր հավատում, թե յերբ և է ռուս գյուղացին կըմբոստանա ցարիզմի դեմ:

Այդ օրերը Պարիզի փողոցներում ու կաֆեներում հաճախ հանդիպում էյի դաշնակցականների: Նրանք էլ յերբեմն գալիս էյին «Սուֆլե» սրճարանը: Հիշում եմ մեկին—Վարդ Պատրիկյան անունով: Այդ մարդը Բուլղարիայում յերկար տարիներ հրատարակել էր մի դաշնակցական թերթ, յեթե չեմ սխալվում, «Ռազմիկ» անունով: Այժմ նա գժտվել էր իր կուսակցության հետ և հուր ու կայծակ էր թափում նրա գլխին, մեղադրելով իր յերեկվա գաղափարակիցներին ու ընկերներին յոթ անգամ յոթ մեղքերի մեջ: Վորովհետև յես վաղուց էյի դադարել հետաքրքրվել դաշնակցության գործերով, ուստի գրեթե միշտ անուշադիր էյի լսում նրան և այսօր էլ չգիտեմ ի՞նչ էր իսկապես նրա դժկամակության պատճառը: Գիտեմ միայն, վոր շատ ժամանակ չանցած՝ դաշնակցությունն այդ հեղ վարժապետին մահվան դատապարտեց և Բուլղարիայում սպանեց: Ինդիրը վերջ ի վերջո վերաբերվում էր 20,000 ֆրանկ մի գումարի, վոր իբր թե վատնել էր «Ռազմիկ»-ի խմբագիրը:

Բժիշկ Հովհաննես Լոռիս Մելիքյանը, դաշնակցության գլխավոր հիմնադիրներից մեկը, նույնպես հեռացել էր կուսակցությունից, հանձնելով Պիեր Քիյարին թե՛ «Pro Armenia» թերթի խմբագրությունը և թե՛ իր մոտ գտնված կուսակցական դրամը մինչև վերջին սանտիմ: Նա պնդում էր, թե Ավետիք Ահարոնյան, Ակնունի, Միքայել Հովհաննիսյան, մանավանդ այս վերջինը և չը գիտեմ էլ ովքեր, իր դեմ վորոգայթներ էյին լարել և վոչ մի միջոց չեն խնայում իրան տապալելու ու վարկաբեկելու համար: Ցես լավ էյի ճանաչում բժշկի բնավորությունը. Նա մի քիչ կասկածամիտ մարդ էր, բայց ներկա դեպքում նրա կասկածն իրավացի յեր, ինչպես և այդ ապացուցվեց ապագայում: Մի անգամ նա ինձ ցույց տվեց Սիմեոն Զավարյանի մի ընդարձակ նամակը Կ. Պոլսից գրած և խնդրեց թարգմանել: Այսօր յես բառ առ բառ չեմ կարող մտաբերել այդ նամակը, բայց լավ հիշում եմ, վոր նրա բովանդակությունը բավական անմխիթար էր այն հայտնի դաշնակցականների վարք ու բարքերի համար, վորոնց մասին գրում էր Զավարյանը:

Ինքը Լոռիս Մելիքյանն ավելի արհամարհանքով էր խոսում իր նախկին գաղափարակիցների մասին, քան ատելությամբ: Դաշնակցությունից հեռանալով, նա չեր դադարել զբաղվել այսպես կոչված «Հայկական խնդրով» և զբաղվում էր միևնույն ուղղությամբ, այսինքն պարլամենտի բարեկամ ու ծանոթ անդամների բերնով հասարակական կարծիքը և մամուլը հետաքրքրում էր կարմիր սուլթանի գազանություններով: Միջոցը միևնույնն էր. հրավիրում էյին մի քանի «հայասեր» հռետորներ—Ժորես, Պրեսանսե, Պելլյատան, Սեմբա, Պիեր Քիյար, Société Savante-ի անշուք դահլիճը լցվում էր խուռը բազմությամբ (իհարկե, մեծ մասամբ հայերով): Հռետորները մեկը մյուսի հետևից պերճախոս նկարագրում էյին վերջին massacre (կոտորած), ունկնդիրներին հուզում էյին ու ցրվում: Մյուս օրը մեկ կամ յերկու լրագիր տալիս էյին մանր տառերով յերեկույթի նկարագիրը մի քանի տողերով, և դրանով վերջանում էր ամեն ինչ, մինչև մի նոր մասսակր: Հաճախ հռետորներից կարևորները չեյին գալիս միտինգներին, յերևի, ձանձրացած միևնույն անսամբլով կատարվող միևնույն կոմեդիայով: Իսկ չը գալու համար միշտ կար արդարացուցիչ խոսք—«հիվանդ եմ»: Ամենից շատ «հիվանդանում» էր Ժան Ժորեսը:

Այս էր վոչ միայն դաշնակցության, այլ և ամբողջ յեվրոպաբնակ հայ մտավորականության «ազգային գործունեության» ալֆան և օմեգան, պլյուս այս ու այն մինիստրի կամ դեպուտատի դռներ ծեծելը: Հետաքրքրականն այն է, վոր վոչ մեկը գոհ չեր մյուսի արածով, վոչ մեկը մյուսի աչքում «խոհեմ ու խելոք» չեր:

Թող թույլ տրվի ինձ այս առիթով պատմել յերկու զուտ կոմիքական, բայց շատ բնորոշ դեպքեր:

Յերբ Անատոլ Ֆրանսը Յեգիպտոսումն եր, Ալեքսանդրիայում թե Գահիրեյում, գալիս են նրա մոտ յերեք «ազգային ներկայացուցիչներ» շնորհակալություն հայտնելու, վոր մեծ գրողը բարեհաճում ե հետաքրքրվել «Թյուրքահայերի վիճակով»: Հազիվ մի քանի խոսքեր են ասում՝ յերեք պատգամավորների մեջ սկսվում ե վիճաբանություն և մեկը հերքում ե մյուսի ասածը: Վերադառնալով Պարիզ, Անատոլ Ֆրանսը դեպքը պատմում ե մի ծանոթ հայի ու ավելացնում ե:

— Զարմանալի կռվասեր մարդիկ եք դուք հայերդ:

Յերկրորդ դեպքը պատահում ե Լոնդոնում պարսկական Մուզաֆֆար Եդդին շահի այնտեղ յեղած ժամանակ: Տեղական հայ գաղութն ընտրում ե յերեք պատգամավոր և հանձնարարում ե նրանց գնալ շահի մոտ և յերախտագիտություն հայտնել, վոր նա թույլ չի տալիս, վոր պարսիկները կոտորեն իր հպատակ հայերին: Պատգամավորների մեջ ե լինում և' Մինաս Չերազը, բայց խոսելու իրավունքը տրվում ե պարսկահպատակ Ներսես խան Ներսիսյան ակնավաճառին:

— Ջանըմ,—պատմում եր ինձ այդ խանը,—ընդունարան մտնելուն պես Մինաս Չերազ ընդառաջ յեկավ ու ֆրանսերեն լեզվով ըսավ. «Ձերդ մեծություն, շնորհակալության ճառ յես պիտի ըսեյի, բայց վորովհետև ընկերս Ներսես խան Ներսիսյան ձեր հպատակներից ե ու ֆարսերեն խոսել գիտե, պատիվս անոր զիջեցի»: Ջանըմ, աղ վոր լսեցի, լեզուս պապանձվեց, եվ չը կրցա խոսել ու ամոթահար դուրս յելանք:

Ամենից շատ դուներ մաշողները դաշնակցականներն եյին, վորովհետև թե' թվով և թե ժամանակի ազատությամբ նրանք ամենից հարուստ եյին: Նրանք ունեյին պրոֆեսիոնալ «գործիչների» մի ամբողջ բանակ, վոր ցիր ու ցան թափառում եր Յեվրոպայի բոլոր քաղաքները, ամենուրեք կատարելով իր «միսիան»: Կային նրանց մեջ մարդիկ, վոր յերկնային սրտագամներով եյին բարբառում: Անհնարին եր նրանց հետ վիճաբանել, վոչ մի քննադատություն չեյին ընդունում և նկատողություն անողին բռունցքով եյին սպառնում: Բայց կային և' մարդիկ, վորոնք կարծես, հոգնել եյին դաշնակցության միալար յերգը յերգելուց և յերբեմն չեյին վարանում կողմնակի անձանց մոտ գանգատվել իրանց կուսակցության դեմ ու պարսավել նրանց քաղաքական գործելակերպը: Այդ-

տիպերից եր, ի միջի այլոց, բանաստեղծ Սիամանթոն, վորի հոգին թևակոխել եր պայմանականը: Մարդը յերբեմն տառապում եր արտասվելու չափ, յերբ խնդիրը գալիս եր յեվրոպական տերությունների վերաբերմունքին: Նա ասում եր.

— Ամեն ինչ կորցրինք, խնայենք գոնե մեր ազգային պատվասիրությունը ու թքենք այդ պառլամենտներում ու մինիստրներում վրա:

Յես Սիամանթոյին պատահում եյի Լատինական արվարձանի սրճարաններում: Բավական բարձրահասակ, մի փոքր կորամեջք յերիտասարդ եր, գեղեցիկ աչքերով և ժպտուն դեմքով: Սովորություն ե դարձել բանաստեղծների գլուխը վորակել «առյուծային» ածականով: Նույնը չեմ կարող ասել Սիամանթոյի մասին. Նրա գլուխը տձև եր և ջարդված սեխի յեր նմանվում, յերբ բաց եր: Նա միանգամայն այլափոխվում եր, յերբ գդակը դնում եր գլխին: Հմայիչ եր նրա բարիտոնական ձայնը, մանավանդ խոշոր աչքերի պսպղուն արտացոլումը: Հաճախ յես նրան տեսնում եյի Մինասյան ազգանունով մի շատ համեստ ու հեզահամբույր յերիտասարդի հետ: Յերկուսի յել ընկերակցությունը վայելում եյի հաճույքով: Վոչ մեկն յերկուսից չուներ այն ոխմար ինքնահավանությունը, այն զզվելի անբարոյականությունը, վոր շատ դաշնակցականների հատկանիշն եր և վորի պատճառով յես խուսափում եյի նրանց ընկերակցությունից:

Մի անգամ Սիամանթոն և Մինասյանն անհայտացան: Մոտ յերկու շաբաթ յես նրանց չեյի տեսնում վոչ մի տեղ: Կարծում եյի, վոր Պարիզից հեռացել են: Վերջապես, մի որ հանդիպեցի նրանց Սեն-Միշելի վրա: Զարմանալի փոխվել եյին արտաքուստ: Նիհարել եյին և դժգունացել, ինչպես հիվանդանոցից նոր յելածներ:

— Ժընև՞վ եյիք գնացել,—հարցրի յես, ի նկատի ունենալով, վոր նրանք հաճախ «գործով» այնտեղ եյին գնում:

— Այո,—պատասխանեց Սիամանթոն, և, նայելով ընկերոջը, ժպտաց այն մանկական ժպիտով, վոր հատուկ ե սուտ ասելուն անսովոր մարդուն:

Յես զսպեցի իմ հետաքրքրությունը:

Մի քանի որ հետո Սիամանթոն ասաց.

— Գիտեք, յես այն որը ստեցի, ասելով, թե Ժնև եյինք գնացել: Մենք վոչ մի տեղ չեյինք գնացել:

— Հապա ինչո՞ւ չեյիք յերևում:

— Վորովհետև դրամ չունեյինք սրճարան մտնելու համար և Սեն-Միշելից ել խուսափում եյինք:

Յես նրան բարեկամաբար կշտամբեցի: Մի՞թե չեր կարող ինձ ասել: Յեթե յես չունենայի յել, կարող եյի վորևե մեկից փոխ վերցնել և տալ նրանց:

— Իսկ ա՞յժմ,—հարցրի յես:

— Այժմ մի յերկու շաբթով ապահով ենք: Մինասյանը ժընեվից ստացավ իր ամսականը: Գիտեք, մի որ մեր հուսահատությունն այն աստիճան եր, վոր հիմարաբար մտածում եյինք նետվել Սենայի մեջ և վերջ տալ մեր այս հիմար կյանքին: Միայն Մինասյանի մի բառը փրկեց մեզ: «Իսկ մա՞յրդ»—ասաց,—և իսկույն մորս վողբը հնչեց ականջիս: Մինասյանն ինձմե խոհեմ ե...

Սիամանթոն միշտ նյութական կարիքի մեջ եր, միևնույն ժամանակ ինչ վոր ձեռքն եր ընկնում, անմիջապես ծախսում եր, առանց վաղվա մասին մտածելու: Բանաստեղծ եր վոչ միայն իր տաղանդով, այլ և սրտով: Թող իմ այս դարձվածը տարորինակ չհամարվի: Տաղանդավոր ստեղծագործողներ եմ տեսել, վորոնք կարող եյին մրցել անմահ Հարպագոնի հետ: Այլ ե ստեղծագործությունը, այլ ե կյանքը: Մեծագույն բանաստեղծությունն արհամարհանքն ե դեպի սեփականությունը: Ով մամոնային պաշտում ե, նա Ապոլլոնին անարգում ե... Ժլատությունն ախտավոր հոգու նշան ե...

Թուրքական հեղափոխությունից հետո Սիամանթոն ուղևորվեց Ամերիկա: Այնտեղ նա դաշնակցական լրագրերում գրեց մի շարք վոտանավորներ, վորոնցով նա գաղթականներին կոչ եր անում հայրենիք վերադառնալու: Այսպես եր պատվիրել նրան դաշնակցությունը: Յես նրանից ստացա մի քանի նամակներ բավական զվարթ բովանդակությամբ: Բանաստեղծը հավատում եր Թյուրքահայ ժողովրդի ազատագրմանը: Սահմանադրական Թյուրքիայի գազանությունների ժամանակ յես նրան չհանդիպեցի: Միայն 1913 թվականին տեսա նրան Թիֆլիսում, յերբ Պոլսից ուղեկցել եր Սիմեոն Զավարյանի դիակին: Նա նորեն մռայլվել եր և ավելի հուսալքված եր, քան Պարիզում: Բայց Կովկասը նրան գրավել եր:

— Յեթե հնար ունենայի,—ասաց նա մի որ ինձ,—ուրախությամբ հոս կը կենայի:

Հոգեպես նա դաշնակցությունից վաղուց եր անջատվել: Այդ նա չեր թաքցնում ինձնից: Այժմ փափագում եր ամեն մի կապ խզել

այդ կուսակցության հետ, վոր այնքան չահագործել եր նրա բոցավառ տաղանդը: Այժմ նա յերազում եր նվիրվել ազատ ստեղծագործության:

Այդ որերին յես վորոշել եյի ժամանակավորապես տեղափոխվել Մոսկվա: Մտադիր եյի այնտեղ կազմակերպել մի մեծածավալ զուտ գրական ամսագրի հրատարակություն, բոլոր անվանի հայ գրիչների և մի քանի ռուս հայտնի գրողների աշխատակցությամբ: Այս առթիվ յես ունեյի արդեն վոմանց հոժարությունը: Ամսագրի նյութականը խոստացել եյին ապահովել մի քանի բաքվեցի բարեկամներ, գլխավորապես իմ բարեկամ Արսեն Բուդաղյանն ու իր հայրը: 1914 թվականի հունվարին յես ուղևորվեցի Մոսկվա մտադրությունս իրագործելու համար: Սիամանթոյին խոստացա շուտով հրավիրել այնտեղ: Յես վճռել եյի ամսագրի հրատարակությունն ապահովելուց հետո, խմբագրությունը հանձնել Սիամանթոյին և Վահան Տերյանին: Ընտանեկան պայմաններս ինձ թույլ չեյին տալիս Մոսկվայում հաստատվելու, իսկ Թիֆլիսի մթնոլորտը յես համարում եյի աննպաստ մի լուրջ գրական հանդեսի աջող գոյության համար: Ասում եմ գրական, վորովհետև բոլորովին չունեյի ձգտում մի նոր Ստեփաննոս Նազարյան դառնալու:

Պատահեց, վոր մի յերկու ամիս ստիպված յեղա զբաղվել ընտանեկան գործերով, մանավանդ հիվանդ վորդուս ճակատագրով: Իսկ յերբ ազատվեցի այդ գործերից, բարեկամներս խորհուրդ տվեցին ամսագրի հրատարակությունը սկսել սեպտեմբերին: Յես ստիպված եյի վերադառնալ Կովկաս: Հուլիս ամսին հայտարարվեց պատերազմը, և ամեն ինչ հեղաշրջվեց:

Մինչև իմ Կովկաս վերադառնալը, Սիամանթոն ուղևորվել եր արտասահման: Այլևս նրան չտեսա:

Հինգ տարի անցած, յերբ յես Պոլիս յեկա, այնտեղ միայն լսեցի նրա յեղեռնալի վախճանի մասին: Դաշնակցության «մտերիմ» բարեկամ Թալաաթ-բեյը բելլետրիստ Գրիգոր Զոհրաբի, բանաստեղծ Վարուժանի, Զարդարյանի, Ակնունու, Խաժակի և մի քանի ուրիշ մտավորականների հետ Սիամանթոյին ել աքսորել եր Այաշ, վորպեսզի այնտեղ նրանց կոտորեն:

Ինձ մնում եր միայն դժվարագույնը՝ գնալ բանաստեղծի մորը տեսնելու և իմ վշտակցությունը նրան արտահայտելու...

VIII

ԱՅՍ ՈՒ ԱՅՆՏԵՂ

Սեն-Միշել բուլվարի վրա կար մի փոքրիկ կաֆե, որ գիշերը մինչև լույս բաց էր: Նրա տերը մի պառավ բրետանուհի յեր, իր մի շատ սիրուն աղջկա հետ:

Գիշերվա յերկու ժամին, յերբ սովորական սրճարանները փակվում եյին, այդ կաֆեն լցվում էր գիշերասեր այցելուներով:

Յերբեմն յես էլ եյի գնում այնտեղ: Գրեթե միշտ պրոֆեսոր Միքայել Թամամշյանի հետ: Այդ մարդն անքնությունից տառապում էր և չարունակ թախանձում էր սրան ու նրան իրան մենակ չթողնել:

— Յես սարսափում եմ իմ ննջարանից, այնտեղ յես տանջվում եմ, անկողնիս մեջ տրորվելով,—ասում էր խեղճ մարդը:

Յես ինքս, գիշերասեր լինելով, հաճախ լուսաբացին եյի տուն վերադառնում, բայց դժբախտաբար այդ մարդու տառապելական գիրությունն ինձ էլ յերբեմն անախորժ դրության մեջ էր դնում: Յես աշխատում եյի հնարավորության չափ խույս տալ նրա ընկերությունից: Սակայն այդ այնքան էլ դյուրին չէր այն պարզ պատճառով, որ մարդը մենության մեջ տառապում էր բառիս կատարյալ իմաստով: Ցավալի յեր տեսնել այդ ծայր աստիճան ընկերասեր, կենսախինդ, սրամիտ և գրական-գիտական ահագին պաշար ունեցող մարդուն այն րոպեներին, յերբ կաֆեյի սպասավորները սկսում եյին սեղաններն ու աթոռներն իրարու վրա ժողովել, մանավանդ յերբ մենք յերկու ժամից թեկուզ մի կես ժամ առաջ եյինք գնում: Նրա աղերսալի հայացքը ուղեկցում էր մեզ մինչև դռները: Մարդու հոգին տառապում էր մարմնի ծանրությունից. դա նրա համար կատարելապես մի դրամա յեր, որից ազատվելու ոչ մի հնար չը կար:

Մի անգամ յերբ միասին տուն եյինք վերադառնում (մեր բնակարանները շատ մոտիկ եյին իրարու), յեղանակն անձրևային էր, կառքերը փակ: Թամամշյանը մի ոտը բարձրացրեց ու դրեց կառքի մեջ, ավա՛ղ, յերկրորդ ոտը մնաց գետնի վրա և ոչ մի

կերպ չկամեցավ բարձրանալ վեր: Պետք է այն էլ ասել, որ այդ կամակոր ոտը յերկու անգամ ավելի հաստ էր, քան մյուսը— չգիտեմ դա ինչ հիվանդություն էր: Իհարկե, յես օգնում եյի կեսը ներս և կեսը դուրս մնացած վիթխարիին, բայց ապարդյուն: Կառապանն ապշած նայում էր վարից վեր: Յես դիմեցի նրա օգնությանը: Բարի մարդը վար իջավ, օգնեց, և մենք վերջապես կարողացանք հարյուր հիսուն կիլոն խոթել կառքի մեջ, կաֆեյի առջև խմբված սպասավորների քրքիջների ուղեկցությամբ:

Չնայելով այս և նման դեպքերի անախորժությանը, Թամամշյանը յերբեք չէր շփոթվում կամ վշտանում: Զարմանալի զվարճախոս էր և միշտ կրկնում էր.

— Խեղճ իմ բարեկամներ, որ դիակս պիտի ձեր ուսերի վրա դուրս բերեք տնից: Անշուշտ դուք պիտի անիծեք ինձ:

Յերբ նա անցնում էր փողոցով, ամենքը կանգնում եյին և զարմացած նայում: Մի անգամ յերբ յես նրա հետ անցնում եյի փողոցով, ամենայն սառնասրտությամբ իր գլխարկը վերցրեց և աջ ու ձախ նայելով, ասաց.

— Տիկիններ և պարոններ, ինձ տեսնելն արժե յերկու սու:

Նա գիտեր, որ հումորը Ֆրանսիացու ամենասիրելի անուշեղենն է: Ամենքը բարեսրտաբար ծիծաղեցին և ամենից ավելի ինքը: Հոգեբան էր. գիտեր, որ ուրիշների ծաղրի դեմ պաշտպանվելու ամենալավ միջոցը ինքն իրան ծաղրելն է: Աշխատիր ամենից առաջ ինքդ ծիծաղել քեզ վրա և ուրիշներին զինաթափ կանես:

Չնայելով իր ծանրությանը, այդ մարդը չէր ծուլանում ժամերով շրջել Սենայի ափերում, կանգ առնելով յուրաքանչյուր բուկինիստի առջև: Նա մի բացառիկ բիբլիոման էր: Նա իր յեկամուտի մեծ մասը ծախսում էր գրքերի վրա: Թիֆլիսում նա ուներ մի հարուստ գրադարան, որի հավասարը հազիվ թե ունենար մի ուրիշն ամբողջ Կովկասում:

Այս անգամ գիշերային փոքրիկ կաֆեյում մենք հանդիպեցինք մի խումբ ռուս արվեստագետների: Այսօր նրանցից հիշում եմ միայն համբավավոր արձանագործ Սուդբինինին, որ հաջողել էր Փարիզի մեջ ևս անուն վաստակել: Թամամշյանն ինձ ծանոթացրեց նրանց հետ: Փոքր անցած, ներս մտավ մի զույգ, թև թևի տված: Կինը սևագեղ, շատ նիհար և շատ գունատ էր: Յերկայն սև մազերով մի էակ էր, ոչ բարձրահասակ և, կարծես, թափանցիկ որպես ստվեր: Տղամարդը շիկահեր էր, մինչև թիկունք

յերկայն մազերով, գզգզված ցանցառ միրուքով, հիվանդոտ աչքերով, անճաշակ հագնված և վատ սանրված կամ բոլորովին չսանրված: Ցերեկուսն էլ հարբած եյին. հայտնի չէր, թե վորն է վորին պահում անկումից, ողամարդը կնոջը, թե հակառակը:

— Բո՛, Բա՛լմոնտ, Բա՛լմոնտ—գոչեցին միաբերան իմ նոր ծանոթները: Համեցե՛ք, համեցե՛ք...

Ցես տակավին ծանոթ չեյի այդ բանաստեղծի յերկերին, բայց անունը լսել ու կարդացել եյի: Ինչ ուզում եք ասեք, մարդու արտաքինը ազդում է դիտողի վրա: Իմ առջև կանգնած եր վոչ ախորժալի դեմքով ու կեցվածքով մի մարդ, վոր հրջիկ լաթավաճառի յեր նման: Նա վոչ միայն չընդունեց իր հայրենակիցների սիրալիր հրավերը, այլև բարևի անգամ չարժանացրեց նրանց, քաշվելով նույնիսկ կանանց ներկայությունից: Նա մոտեցավ բուֆետին և, ձեռը սեղանին զարկելով, պահանջեց յերկու բաժակ չգիտեմ ինչ ալքոհոլ, ապա, գլուխը կռվասեր աքաղաղի պես բարձրացնելով, արտասանեց.

— А кто посмеет сказать что не Бальмонт король всех современных поэтов —ո՞վ կհամարձակվի ասել, թե Բա՛լմոնտը չէ ժամանակակից բանաստեղծների թագավորը:

Իհարկե, վոչ վոք չհամարձակվեց այդ ասել: Իսկ մի ներվային պառավ աղջիկ, վոր կարծեմ նկարչուհի յեր, գոչեց.

—О, великий поэт, мы все гордимся вами! Օ՛, մեծ բանաստեղծ, մենք ամենքս պարծենում ենք ձեզմով:

Ասում են այն, ինչ վոր մարդու հոգու մեջ է արթուն ժամանակը, շրթունքների վրա յե հարբած ժամանակը:

Տարիներ անցած յես այդ բանաստեղծին մի անգամ ևս տեսա՝ դարձյալ Պարիզում: Սորբոնի ամֆիտեատրներից մեկում մի խումբ հայ մտավորականներ ուսանողների հետ միասին Հովհաննես Թումանյանի մահվան առթիվ սգահանդես եյին կազմել: Բա՛լմոնտն էլ հրավիրվել եր իր խոսքն ասելու հայ բանաստեղծի մասին: Ցես, վորպես յերեկույթի նախագահ, վախենալով մի գուցե այլ կերպ վիրավորեմ նորին թագավորական գոռոզությանը, առաջին խոսքը նրան տվեցի:

Ինքնագոհության վոգուց շատ քչերն են ապահովված, այս ճիշտ է, բայց կա մի բան, վոր ամենուրեք և կյանքի բոլոր խավերում ատելի յե: Դա ինքնապաշտման ցուցադրումն է: Ամենա-

գեղեցիկ կինն անգամ հակակրելի յե, յերբ նրա յերեսի վրա կարդում ես. «տեսեք, վորքան գեղեցիկ եմ յես»:

Անշուշտ ֆրանսիացին էլ զերծ չէ ինքնահավանության ախտից և գուցե ավելի յե վարակված նրանով, քան մի ուրիշը, բայց գոնե արտաքուստ համեստ է: Նա իր ճակատի վրա աֆիշ չի կրում: Պարիզի կաֆեներում դուք ամեն որ կհանդիպեք շատ համբավավոր բանաստեղծների, նկարիչների, արձանագործների և այլն, բայց յերբեք չեք կարող նրանց արտաքինից ու կեցվածքից գիտնալ մարդն ինչ է, վաճառական, թե՞ արվեստագետ, թե գիտնական: Ֆրանսիացին վորքան համբավավոր է, նույնքան անսեթևեթ է ու համեստ. գոնե արտաքուստ:

Կաֆե «Սուֆլե» հաճախ ճաշից հետո գալիս եր մի հեզահամբույր ծերունի, նստում եր մի անկյունում, խոսում եր բարեկամաբար իրան սպասարկող գարսոնի հետ, կարդում եր յերեկոյան լրագրերը, խմում եր իր մի բաժակ սուրճը կամ գարեջուրը և տասը ժամին գնում եր:

Մի անգամ նա չեկավ, և մի քանի որ յես նրան չտեսա:

— Պիեր,—հարցրի յես ծերունուն սպասարկողին,—ո՞ւր է ձեր բարեկամ ծերունին, վոր այլևս չի գալիս:

— Վախճանվեց, միթե՞ չգիտեք:

— Ինչպե՞ս կարող եյի գիտնալ:

— Ահ,—զարմացավ սպասավորը,—հը գիտնալ թե ով եր նա, վորին այնպիսի շքով թաղեցին անցյալ որը:

Պարզվեց, վոր ծերունին հռչակավոր քիմիկոս, ակադեմիկոս Բերթըլոն եր, վորի թաղմանը յես էլ ներկա եյի յեղել Արշակ Չոպանյանի և բժիշկ Ավետիք Բաբայանի հետ, վորպես պատգամավոր Պարիզի հայ գաղութի կողմից*):

---

*) Մարսըլեն Բերթըլոն իր մինիստրության, ապա սենատորության ժամանակ շատ եր աշխատել Թյուրքահայ դատի համար: Նա թաղվեց Պանթեոնում իր կնոջ հետ, վոր վախճանվել եր միևնույն որը, գրեթե միևնույն ժամին: Հետաքրքրական է համբավավոր գիտնականի մահը: Կինը վախճանվելու յերեկոն ութսունամյա ծերունին լինում է Ակադեմիայում: Ցերբ նրան հաղորդում են տխուր լուրը, վերադառնում է տուն, համբուրում է կնոջ դիակը, անցնում է իր առանձնասենյակը և այնտեղ վախճանվում: Պարլամենտը, հարգելով գիտնականի վորդիներանց խնդիրը, վորոշեց չանջատել ամուսիններին, վոր հիսուն տարի կենակցել եյին հաշտությամբ և սիրով, և տիկին Բերթըլոն յեղավ առաջին կինը, վոր արժանացավ Վոլտերի, Վիկտոր Հյուգոյի, Ժոռեսի և Եմիլ Զոլայի հարևանությանը: Տ.

Անատոլ Ֆրանսը չտատանվեց կարդալ և իր հեղինակավոր հառաջաբանով շուկա բանալ Արմեն Օհանյանի la danseuse de Chemakha շնորհալի գրքի համար: Իսկ ո՞վ էր Արմեն Օհանյանը նրա համար.—Կովկասի խուլ անկյունից, Շամախուց յեկած մի պարուհի.

Այո, ֆրանսիացի գիտնականը, գրողը, արվեստագետը համեստ է, թող այդ համեստությունը լինի արտաքին, բայց դա կուլտուրա յէ, ուստի և համակրելի հատկություն: Բա՛լմոնտների մեծությունն իրանց մեծամտության մեջ է:

Միայն մի դեպքում իմ միտքը մի փոքր շփոթվեց ֆրանսիացու համեստության մասին: Հայտնի բանաստեղծ Ժան Մորեասը ամեն անգամ «Կլոզըրի դե Լիլա» էր մտնում արքայական քայլվածքով, գլուխը բարձր պահած, հազիվ հազ պատասխանելով իր բարեկամների բարևներին: Կարծես, ուզում էր ասել, թե յեկողն ինքն Ապոլլոնն է: Յեվ, նստելով սեղանի գլուխը, ձեռը բարձրացնում ու արտասանում էր իր ոտանավորներից որևէ մեկն, ապա ինքնագոհ դեմքով հարցնում էր.

— Սքանչելի յէ, այնպես չէ՞:

Նա մեռավ. կարդացի կենսագրությունը, և այն ժամանակ գիտցա, որ Ժան Մորեասը ֆրանսիացի չէ, այլ հույն, իսկական անունը—խնդրեմ արտասանեք, յեթե կարող եք—Պապադիամանտոպուլոս:

Քանի որ խոսքս մեծամտության մասին է, թող թույլատրվի ինձ առաջ բերել մի փոքրիկ դիպված, որ բավական բնորոշ է:

Պարիզի շքեղ սրահներից մեկում մի մեծ բարեգործական յերեկույթ էր: Գեղարվեստական բաժնին մասնակցելու համար հրավիրված եյին «Կոմեդի Ֆրանսեզ»-ի և «Օդեոն»-ի առաջնակարգ արտիստները, նաև մի խումբ անվանի յերգիչներ և յերաժիշտներ: Չը գիտեմ ով, իր կողմից հրավիրել էր Օդեսայից յեկած մի անհայտ ջութակահարուհի: Մինչ բեմի հետևում ֆրանսիացի արտիստները համբերությամբ սպասում եյին իրանց հերթին, հանկարծ ներս վազեց Օդեսայի աստղը մի ճիպռոտ պառավի հետ:

— Ովքե՞ր են այս յերեկույթի կարգադրիչները,—գոռաց նա վրդովված:

Ի՞նչ կը հրամայեք,—հարցրի յես որպես մեկը յերեկույթի կարգադրիչներից:

— Այդ ի՞նչ անկարգություն է, ինչո՞ւ ոչ ոք ինձ չդիմավորեց դռների մոտ:

— Ներողությո՛ւն, տիկի՛ն, դուք արդեն ուշացել եք ձեր հերթին, չը գիտեյինք յերբ եք բարեհաճելու շնորհ բերել: Բացի դրանից, մենք ոչ ոքի դռների առջև չենք դիմավորել, ահա, տեսնում եք, այդ ականավոր արտիստներից ոչ մեկին:

— Այդ ինձի չի վերաբերվում, իմ պահանջն իմ մասին է:

— Ներեցե՛ք, չեյինք նախատեսել, ասացեք, ինչպե՞ս ուղղենք մեր սխալը:

— Նախ և առաջ ուղեկցեցեք մորս սրահը և առաջին կարգում տեղ տվեք նրան:

— Պատրաստ եմ ծառայելու,—ասացի յես, ճիպռոտ պառավի թևն առնելով: Ուրի՞շ:

— Վերցրե՛ք ջութակս և պահեցեք մինչև պահանջելս:

— Խնդրե՛մ:

— Մի մոռանաք, որ դա հասարակ գործիքներից չէ, և արժե յերեսուն հազար ռուբլի:

— Այո՜,—արտասանեցի յես հեգնական զարմացումով,—յերևի Ստրադիվարիուսի գործերից է:

Յեվ շտապեցի ճիպռոտ պառավին քաշ տալ սրահ:

Առաջին տարին Պարիզում իմ կյանքը շատ անկանոն էր, ուզում եմ ասել, որ չունեյի ոչ մի ծրագիր իմ օրերի և ժամերի օգտագործման վերաբերմամբ: Փոփոխական տրամադրությանս ստրուկն եյի, անում եյի այն, ինչ որ րոպեն էր թելադրում: Ավա՜ղ, այժմ էլ յես նույնն եմ:

Չեյի գրում և գրելու ցանկությունն էլ չեյի զգում, իսկ լրագրական թղթակցությունն ինձ վաղուց էր զզվեցրել. անօգուտ և տխմար աշխատանք էր, որից բարեբաղդաբար շատ շուտ հրաժարվեցի:

Բայց կարդում եյի և շատ եյի կարդում. օրական 3–4 լրագիր և գրեթե բոլոր գրական ամսագրերն և կիսամսագրերը, չհաշվելով, իհարկե, առանձին լույս տեսած հետաքրքրական գրքերը: Կարդում եյի ոչ այնքան տանը, որքան սրճարաններում:

Չգիտեմ ինչո՞ւ, մեզ մոտ Պարիզի սրճարանների մասին կազմվել է մի վատ գաղափար: Կարծվում է, թե նրանք ուրիշ ոչինչ են, յեթե ոչ չվայելչության ու անառակության վայրեր: Այդպես

չե: Կաֆեն ֆրանսիացու յերկրորդ ընտանեկան հարկն է և առաջին ժամադրավայրը: Այնտեղ են գլխավորապես իրարու հանդիպում բարեկամները, գործի մարդիկ և անգործ ռանտիեները, արվեստագետները, գիտնականները, պարլամենտի անդամները: Նույնիսկ ընտանիքների փոխադարձ ընդունելությունները հաճախ այնտեղ են լինում:

Շատ բանաստեղծներ ու գրողներ կաֆեներումն են հորինում իրանց յերկերը յերաժշտության, կանանց ղըքիջների, սիրային շշուկների և սպասավորների աղմկալի իրարանցման ներդաշնակությամբ: Այնտեղ միշտ կա տաք անկյուն, հարմար բազմոց, դրիչ, թուղթ և մի բաժակ ըմպելիք, վորը սիրում ես:

Ցես սիրում եյի աբսենտը, յերկչոտների ահն ու սարսափը, Նիցշեյի անուրջը, Վեռլենի տեսիլքը: Խմում եյի սովորաբար իրիկնադեմին ճաշից առաջ, յերբեմն էլ միջօրեյին, յերբ տանը չեյի նախաճաշում: Խմում եյի հաճախ յերկու բաժին, և տրամադրությունս բարձրանում եր, բարձրանում մինչև Եյֆելյան աշտարակի գագաթը: Մեր լիրիկոսները կարող են ասել. «Այդ շատ էլ մեծ բարձրություն չե»: Բայց, ինչ արած, աստղերը շատ են հեռու ինձնից, և յես դժբախտաբար, չգիտեմ, արդյոք կա այնտեղ մարդկություն ու մարդկային թշվառություններ և ուրախություններ: Գաղտնիքը պարզելու հոգսը թողնում եմ մեր լիրիկոսներին:

Այո, յես պնդում եմ, աբսենտը ըմպելիքների աստվածուհին է: Թող նա լինի վնասակար մարմնի համար, բայց հոգու փրկությունն է կյանքի առօրյա հոգսերից ու տվայտանքներից: Ահա ինչու յես անկեղծորեն վշտացա, յերբ վերջին այցելությամբս իմացա, վոր այդ սքանչելի հեղուկի գործածությունն արգելված է ֆրանսիական պարլամենտի վորոշմամբ: Բուրժուական կառավարության կեղծիքի և փարիսեցության մի ապացույց ես աբսենտն արգելելով, թույլատրել է մի նոր «թույն» anis de losc, վոր պակաս զորավոր չե, քան առաջինը... Վոչինչ, յես դրանով էլ գոհ եյի:

Իմ անմոռանալի թափառումների ամենասիրելի վայրերը Պարիզի շրջակայքն եյին: Բելվյու, Մեդոն, Սեվր, Սյուրեն, Սեն-Ժերմեն, Սեն-Կլու մի մի զմայլելի անկյուններ են մեծ քաղաքի փոթորկալի աղմուկից հոգնած ներվերի հանգստության համար:

Ցես գերադասում եյի Սեն-Կլուն: Գնում եյի այնտեղ շաբաթը յերկու-յերեք անգամ և մեծ մասամբ մենակ: Գնում եյի շոգենա-

վով և շատ քիչ դեպքերում տրամվայով կամ յերկաթուղով: Ինքն ըստ ինքյան Սեն-Կլուն հետաքրքրական չե, գավառական քաղաքի պես մի բան է 15.000 բնակչությամբ, վոչ այնքան մաքուր և վոչ այնքան գեղեցիկ: Բայց նա ունի մի պարկ, վորի հավասարը գեղեցկության տեսակետից հազիվ թե ունենա մի ուրիշ յերկիր: Նա թեք տարածվում է մի լայնատարած սարալանջի վրա: Այդտեղից տեսնում ես Պարիզի ամբողջ պանորաման իր հոյակապ կոթողներով, անթիվ պարտեզներով և Բուա-դը-Բուլոնի միշտ կանաչազարդ անտառներով: Մարմարյա սքանչելի արձաններով զարդարված քարե ընդարձակ սանդուղներով բարձրանում ես վեր և մտնում ես դարավոր վիթխարի ծառերի աշխարհը: Այդտեղ անմիջապես քեզ գրավում են բազմաթիվ թռչունների յերգեհոնը և ծաղկանոցների բուրմունքը: Ավելի ու ավելի վեր բարձրանալով, հասնում ես մի դալարազարդ քառուղի, ուսկից աստղաձև տարածվում են մի շարք ծառուղիներ հեռու ու հեռու, մինչև անհայտություն, մինչև մթություն:

Նստելով մի քարե նստարանի վրա, դիտում եյի զմայլելի պանորաման և տխրում եյի, միշտ տխրում: Թե ինչու — չգիտեյի և չեյի կարողանում բացատրել, միևնույն ժամանակ, չունեյի ույժ բաժանվելու այդ տարօրինակ, այդ անհասկանալի, այդ դաժան տխրությունից: Զգում եյի միայն, վոր յես ունենալու յեմ մի ծանր վիշտ, մի մեծ դժբաղդություն: Ապագայում, յերբ այդ դժբաղդությունը վրա հասավ, այն ժամանակ հասկացա, թե ինչ նախազգուշացման հետևանք եր իմ թախիծը... Ցերբեմն Սեն-Կլույից վերադառնում եյի վոտքով, անտառների և դալարազարդ մարգագետինների մաքուր օդը ծծելով: Ճամբին մեկ-մեկ մտնում եյի Սեվրի նշանավոր պետական գործարանը, վոր հռչակված է իր ֆարֆորյա անոթներով: Դիտում եյի նրբաճաշակ բրուտների վարպետությունը: Նրանց ճարպիկ մատների տակ մի կտոր կավը մի րոպեյում դառնում եր սքանչելի վազա կամ սափոր: Ա՛հ, հրաշալի վարպետներ, դուք ձեր հայրենիքի պարծանքներից մեկն եք և ամենայն իրավամբ:

Քաղաքի մեջ հաճախում եյի գրական ու գիտական կոնֆերանսները, քաղաքական միտինգները: Ժան Ժոռեսի վոչ մի յելույթը բաց չեյի թողնում: Սոցիալիզմի մեծ քարոզիչը, բուրժուազիայի սարսափն, իր փառքի գագաթնակետումն եր այդ ժամանակները: Ցեթե Կլեմանսոն վագր եր, Ժոռեսը առյուծ եր և նրա ամեհի ախոյանը: Բրիանին նա չեր արժանացնում իր արհա-

վարհանքի բարձրությունը: Պառլամենտը սարսափում եր նրա վորոտալի ձայնից, յերբ դղրդում եր նրա հանցանքը կամ սխալը: Յերբ նա բարձրանում եր իր տեղից, ամենքն անխտիր, թե աջակողմյան, թե ձախակողմյան կուսակցություններն ու կենտրոնը, լարում եյին իրանց ուշադրությունը, արդյոք ժամանակի Ցիցերոնն ինչ նոր փոթորիկ ե պատրաստել տիրող հասարակարգերի փթող ու քայքայվող հիմքերի դեմ:

Ժոռեսը միջահասակ եր, թիկնեղ, ամրակազմ, նա նման եր ավելի կալիֆորնյան յերկրագործի կամ ռուս մուժիկի, քան պրոֆեսորի, քան գիտնականի, վորի պատմական երուդիցիան ապշեցնում եր ունկնդիրներին: Բայց վորքա՜ն մեծ ու բարեհամբույր եր այդ արտաքուստ անտաշ մարդու դեմքի արտահայտությունը, վորքա՜ն գրավիչ եր նրա պայծառ աչքերի փայլը, վոր մարդու բյուրեղյա հոգին եր արտացոլում: Յեվ վոչ մի կոպիտ դարձված, անձնավորությունների ուղղված վոչ մի վիրավորական խոսք չեր թռչում նրա բերանից նույնիսկ կատաղության րոպեներին: Նրա կռիվը միշտ գաղափարական եր, միշտ տիրող օրենքների անարդարության ու ապականության դեմ: Այդ տեսակետից նա իր գաղափարակից Լաֆարգի հակապատկերն եր: Այդ եր պատճառը, վոր ամենակատաղի հակառակորդներն անգամ պատկառանքով ու հարգանքով եյին վերաբերվում դեպի նա: Նրա յուրաքանչյուր ճառը փիլիսոփայական մտածողության և անհաղթելի տրամաբանության արդյունք եր: Նրա սքանչելի ելոքանսը միշտ հիմնված եր անողոք փաստերի վրա, և նրա ամեհի ձայնի յուրաքանչյուր շեշտը ուղղված եր վորոշ նշանի դեմ և յերբեք չեր վրիպում նպատակից, ինչպես Դիանայի նետը: Յերբ նա զգացմունքի թափից բորբոքվում եր, խոսքերը ժայթքում եյին Վեզուվի լավայի պես: Նրա մռնչող ձայնի դիապազոնին հետևում եյին ձեռների այնպիսի ուժգին շարժումներ, վոր յերբեմն շապկի թևերն օդն եյին ցնդում, բայց յերբեք չեր ընկնում ինքնամոռացության մեջ, ինչպես այդ պատահում ե շատ հափշտակվող հռետորների հետ:

Մի անգամ սոցիալիստների մի ճաշկերույթում, ուր յես և ներկա եյի իմ բարեկամ Վասիլի Դավիդովիչ Ղորղանյանի հետ, Ժոռեսը բարձրացավ խոսելու: Նրա մոտ նստած եր Ժյուլ Գեդը: Նա դարձյալ վոգևորվեց, դարձյալ նրա հուժկու բազուկները սկսեցին ճոճալ օդի մեջ, դարձյալ շապկի թևերը օդը ցնդեցին, բայց այս անգամ արկածով—նրա ձեռը դիպավ Գեդի գլխին: Խեղճ գիտնականը ցավ զգաց և յետ նայելով, ժպտաց բուն փի-

լիսոփայի մեղմիկ ժպտով, վոր բարձր մտքի արտացոլումն ե: Ժպտաց և' Ժոռեսը, և արկածը փարատվեց ֆրանսիացու հոմերական քրքիջով:

Տասն ու հինգ տարի անցած, յերբ յես յերկրորդ անգամ դարձյալ յերկար ժամանակով Պարիզ եյի յեկել, Ժոռեսի սպանող արկյան ազատ շրջում եր փողոցներում խայտառակության դրոշմը ճակատին: Յեվ ֆրանսիական բուրժուազիան անտարակուսորեն արդարացնում եր վոճրագործին: Սակայն հիշում եմ նրա ահն ու սարսափն այն պատմական օրը, յերբ հանճարեղ սոցիալիստի աճյունը Մոնմարտրի գերեզմանոցից տեղափոխում եյին Պանթեոն: Դա մի չտեսնված թափոր եր, վոչ պակաս փառահեղ քան Գամբետտայի, քան Վիկտոր Հյուգոյի թաղման հանդեսը: Քառասուն բանվորներ հսկայական կատաֆալկը պարլամենտի շինությունից դուրս բերելով, Սեն-Ժերմեն բուլվարի ամբողջ յերկարությամբ տանում եյին իրանց ուսերի վրա: Դիակին հետևում եյին տասնյակ հազարավոր կարմիր դրոշակներ: Թե վորքան մեծ եր թափորին մասնակցողների թիվը—դժվարանում եմ ասել, բավական ե նկատել, վոր յերբ դիակն արդեն հասել եր Պանթեոն և թաղման արարողությունը վերջանալու վրա յեր, ամբոխի վերջին ծայրը դեռ պարլամենտի մոտ եր, այսինքն՝ առնվազը 3 կիլոմետր հեռավորության վրա:

Այդ օրը բուրժուազիան փախել եր քաղաքից, ինչպես այդ լինում ե ամեն անգամ, յերբ նա սարսափում ե ամբոխի յելույթից: Սեն-Ժերմեն արիստոկրատիկ բուլվարի բոլոր բնակարանների լուսամուտները փակ եյին: Ամբողջ վոստիկանությունը հեծելազորքի հետ վոտքի վրա յեր: Իմ աչքերի առջև մի քանի բուրժուական բնակարաններ քարկոծվեցին մի խումբ վոստիկանների հետ: Մի քանի հարյուր բանվորներ ձերբակալվեցին:

Մյուս օրը բուրժուական լրագրները հեգնանքով գրեցին, թե թափորը բաղկացած եր 20—25 հազար մասնակցողներից, մինչդեռ առնվազը քսան անգամ ավելի յեր:

IX

ՍՈՄԻԿՈՆ

Ֆրանսիացիներն ունեն յերկու ավանդական տոներ, վորոնք վայելում են վոչ պակաս ժողովրդականություն, քան Հուլիսի 14-ը, մեծ հեղափոխության տոնը:

Մեկն այդ տոներից կոչվում է Mardi gras, վոր բարեկենդանյան կառնավալի վերջին օրն է, այն է՝ մեծ պասի առաջին յերեքշաբթին, մյուսը կոչվում է Mi-carème և տոնվում է նույն պասի յերրորդ շաբաթվա հինգշաբթի օրը:

Այդ օրերը Պարիզի ազգաբնակությունը վաղ առավոտից սկսած մինչև յերեկո զվարճանում է փողոցներում: Բարձր բուրժուազիան չի մասնակցում: Շատերը նույնիսկ հեռանում են քաղաքից, ինչպես և հուլիսի 14-ի օրը: Առհասարակ բուրժուազիան ժողովրդական ցույցերից վախենում է այն պարզ պատճառով, վոր նա բնազդաբար զգում է, թե ինքը խորապես ատված է ժողովրդից: Յերբ մի վորևէ հաստափոր և հաստապարանոց պարոն ասում է՝ «Յես արհամարհում եմ ամբոխը», անտարակույս ստում է: Նա քաջություն չունի ասելու «վախենում եմ»: Յեթե նա հավատացած լինի, վոր ամբոխին յերևալով—կարժանանա նրա համակրանքին, ուրախությամբ կընդունե նրա ծափերը ու կպարծենա անգամ նրանցով: Բայց նա շատ լավ գիտե, թե քանի քանի կռուփներ պիտի սպառնան իրեն և քանի-քանի անոթի բերաններ պիտի անիծեն, յեթե համարձակվի ցույց տալ ժողովրդի արյուն-քրտինքով հղփացած իր կերպարանքը:

Mi-caréme-ի օրը Սոմիկոն առավոտյան յեկավ ինձ մոտ և խնդրեց, վոր այդ օրը միասին անցկացնենք: Յես բավական ժամանակ եր նրան չեյի հանդիպել մեր այցելած սրճարաններում, կարծում եյի, Պարիզից հեռացել է:

— Վորտե՞ղ եյիք,—հետաքրքրվեցի յես:

— Գործ ունեյի, հետո կպատմեմ,—պատասխանեց նա մի տեսակ խորհրդավորությամբ, վոր ցույց եր տալիս, թե արտաքո կարգի մի բան է պատահել:

— Կառնավալին այստե՞ղ եյիք:

— Այո:

— Տեսա՞ք:

— Տեսա:

— Վո՞նց եր:

— Չհավանեցի, դատարկ բան է: Քո ֆրանսիացիները տուտուց են: Մի մեծ յեզ հաղացրել են, դրել են ծաղիկներով զարդարված սայլի վրա ու փողոցներում պտտեցնում են խաչ ու խաչվառի պես: Մի քանի ուրիշ սայլեր էլ մասխարաներով լիք հետևից գնում են հարայ-հրոցներով, թե տեսեք-տեսեք, քեֆ ենք անում: Ափսոս չեր մեր Թիֆլիսի դեյնօքաճ, վոր այդ չուն չան վորդի Գայֆիյինը արգելեց:

— Սոմիկո, այսօրվա տոնն էլ համարյա թե միևնույնն է, չարժե տեսնել:

— Վոնց թե նույնն է,—բարկացավ Սոմիկոն,—հապա աղջիկնե՞րը:

— Ի՞նչ աղջիկներ:

— Ուրեմն դու չգիտե՞ս: Ասում են, այսօրվա համար քաղաքի այն մեծ բազարը, վոր տեսանք, մի շատ սիրուն աղջիկ պիտի ցույց տա: Ասում են այդ աղջիկը Պարիզի առաջին գեղեցկուհին է և պիտի թագուհու պատիվների արժանանա:

— Գիտեմ, Սոմիկո, գիտեմ, կարդացել եմ լրագրներում: Թագուհու հետ միասին ընտրված են և մի խումբ շատ սիրուն աղջիկներ, վոր պիտի ուղեկցեն նրան: Թագուհին իր շքախմբով և մեծ թափորով պիտի գնա հանրապետության նախագահի մոտ, արժանանա նրա համբույրին, պիտի նվեր ստանա և հետո շրջի քաղաքի գլխավոր բուլվարներում:

— Դե վոր գիտեք, էլ ինչո՞ւ յեք տանը նստել:

— Բայց ի՞նչն է ձեզ հետաքրքրում: Թափո՞րը:

— Տո, քո թափոր-մափոր հնարողի հերն եմ անիծել, ինչիս է պետք: Ինձ հետաքրքրողն այդ թագուհին է և նրա ընկեր աղջիկները: Մի տեսնենք, ինչ արմաղան բաներ են, վոր այդքան գովում են:

Յես սիրում եյի Սոմիկոյի ընկերությունը: Իհարկե, վոչ միշտ, այլ այն ժամանակ, յերբ զգում եյի գլուխս չհոգնեցնող թեթև ընկերության պահանջը: Այդպիսի մեկն եր Սոմիկոն: Հաճելի յեր ինձ համար նրա խառնվածքի անմիջականությունը: Մարդն իր խելքով կյանքի բոլոր խնդիրները մի անգամ ընդմիշտ

լուծել էր և այլևս իր գլուխը չէր հոգնեցնում և, վոր ամենա-
գլխավորն է, վոչ վոքի յել չէր ձանձրացնում իր մտքի գործո-
ղությամբ: Յերբեք նա ինձ չէր հոգնեցնում իր հարցերով և վոչ
էլ հետաքրքրվում էր իմ կարծիքով այս կամ այն բանի մասին:
Նա ուներ իր սեփական բարոյական ու մտավոր չափանիշը, վորի
արդարության և ճշգրտության վերաբերմամբ վոչ մի կասկած
չուներ: Յերբ խոսում էր, կարծես, ամենևին չէր հոգում, ար-
դյոք լսողը ուշադիր է թե վոչ դեպի իր ասածները, և յես նրա
ընկերության մեջ զգում եյի ինձ միանգամայն ազատ: Կարող եյի
մնալ ամփոփված իմ մտքերի մեջ, առանց նեղվելու նրա ներկա-
յությունից: Յերբեմն նույնիսկ չեյի զգում նրա ներկայությունը:
Յես մտածում եյի, թե յեթե մի մարդ իր գոյությամբ չի ձան-
ձրացնում մյուսներին, ինքնըստինքյան չի կարող վատ համար-
վել: Մեզնից յուրաքանչյուրն ունե կյանքի վերաբերմամբ իր աշ-
խարհայացքը, իր պահանջները, իր ճաշակը, ապրում է իր ստեղ-
ծած կամ հորինած հոգեկան աշխարհում և յեթե մենք մեկմեկու
չխանգարենք մեր անկոչ միջամտությամբ, դրանով արդեն մա-
սամբ կատարած կլինենք մեր մարդկային տարրական պարտակա-
նությունը:

Իհարկե, Սոմիկոն այնքան հիմար կամ թեթևամիտ չէր, վոր
չհետաքրքրվեր իր տեսածներով: Բայց նրա մտածողության ալ-
ֆան և օմեգան կինն էր կամ, ավելի ճիշտն ասած, կնոջ մար-
մինը: Նրա փիլիսոփայությամբ՝ կյանքի մեջ չկար ավելի բարձր
հաճույք, քան կնոջ մարմնին տիրանալը: Այո, միայն և միմիայն
մարմնին: Նա չէր հավատում, թե վորևէ այր մարդ, յեթե նա
կատարյալ ապուշ չէ, կարող է բավարարվել կնոջ պլատոնական
սիրով կամ անմարմին բարեկամությամբ:

— Ինչի՞ս է պետք,—ասում էր նա,—կնոջ հոգին կամ սիր-
տը, նրա խելքը կամ բարոյականությունը, յեթե նրա մար-
մինն իմը չէ:

Մինչև Պարիզ գալը Սոմիկոն ճամփորդել էր Իտալիայում:
Նրա հիշողության մեջ ամենից խորը տպավորվել էր Պոմպեյն իր
բաղնիքների երոտիկ ֆրեսկներով ու պատերի նկարներով: Այդ
մասին նա խոսում էր առանձին վոգևորությամբ և հեղինակավոր
գնահատողի լրջությամբ:

— Անցյալի մարդիկ ավելի լավ են վայելել կյանքի քաղցրու-
թյունը, քան մենք,—ասում էր նա փիլիսոփայական յեղանակով,
—հասկացել են, վոր ամեն ինչ, գիտություն, փիլիսոփայու-

թյուն, օրենքներ և արվեստներ, էլ չգիտեմ ինչ, չարժեն մի գե-
ղեցիկ կնոջ համբույրին:

Յես, իհարկե, չեյի հակաճառում նրան այդ մասին և յեթե
հակաճառեյի յել, վոչ մի կերպ չեյի կարող դուրս բերել նրա
գլխի մեջ ցցված բևեռը: Առհասարակ Սոմիկոն անուղղելի մեկն
էր: Հայ բուրժուական միջին հավաքական տիպարն էր և միայն
այդ տեսակետից հետաքրքրական և ուսանելի: Նա իր անհող-
դողդ համոզմունքով գտել էր կյանքի կվինտ—եսսենցիան և վա-
յելում էր:

Յերբ մենք փողոց յելանք, որվա տոնական յերթն արդեն
սկսվել էր: Գլխավոր բուլվարները, վորոնցով պիտի «Թագու-
հին» անցներ, լցված եյին բազմությամբ: Անցուդարձը դըժ-
վարացել էր, մենք հազիվ կարողանում եյինք առաջ շարժվել:
Մայթերն ու սալահատակներն արդեն ծածկվել եյին գույնզգույն
կոնֆետտիների թանձր շերտերով: Սոմիկոն շտապեց իր կոնֆետ-
տիների առաջին տոպրակը դատարկել մի հաստամարմին կնոջ
փարթամ կրծքի վրա: Դժբախտաբար, կինը տրամադիր չէր ծնո-
վորական խաղը սիրալիր ընդունելու: Նա բարկացավ և հայհո-
յեց բարեկամիս, գոռալով «խոզ, ուղտ»: Անշուշտ պարկեշտ
չէր: Սոմիկոն, չվիրավորվեց և, նոր տոպրակներ գնելով, սկսեց
կոնֆետտին սփռել աջ ու ձախ, իհարկե, բացառապես կանանց
վրա: Նա շատ ուրախացավ, յերբ տեսավ, վոր այդ անհայտ ու
անծանոթ աղջիկները վոչ միայն չեն բողոքում, այլև հաճույքով
են ընդունում նրա կատակը: Ընդհանուր ծիծաղներին ու քրքիջ-
ներին նա պատասխանում էր ոդային համբույրներով և յերինջի
պես հրճվում էր, յերբ կանայք իր սիրային ցույցերն ընդունում
եյին անուշ ժպիտներով կամ փոխադարձ ոդային համբույրնե-
րով: Յես հավատացած եյի, վոր այդ պահին նա իրան զգում էր
աշխարհի ամենայերջանիկ մարդը: Նա ուրախությունից բարձ-
րաձայն քրքջում էր, ինչպես նժույգը մատակների մեջ:

Շուտով նա իր վրա դարձրեց ամբոխի ուշադրությունն իր
արտասովոր զվարթությամբ: Նրա յերջանկությունը հասավ իր
գագաթնակետին, յերբ մի խումբ աղջիկներ, շրջապատելով նրան,
խնդրեցին իրանց համար կոնֆետտիներ գնել: Նա միանգամից
գնեց մի տասնյակ տոպրակներ և բաժանեց: Անմիջապես աղջիկ-
ները հարձակվեցին նրա վրա ճանճերի պես, և նա մի րոպեյում
չքացավ իմ աչքից գույնզգույն թղթիկների հեղեղի մեջ: Նրա
ցիլինդրը գլխից ընկել էր և պիտի տրորվեր վոտների տակ, յեթե

յես ժամանակին չկարողանայի նրան վերցնել։ Վերջապես, իմ օգնությամբ նա մի կերպ ազատվեց չարաճճիների ձեռքից, վորոնք նրան բաց թողնելով, փախան և խառնվեցին ամբոխին։

— Վա՛հ, քիչ մնաց, վոր խեղդեյին ինձ, տո,—ասաց նա հևալով,—բայց մի յերկուսին լավ պաչեցի։

Նա ձեռը տարավ ծոցի դրպանը, վոր թաշկինակը դուրս բերի յերեսի քրտինքը սրբելու համար և հանկարծ գոչեց.

— Վա՛, ի՞նչ յեղավ, տո։

— Ի՞նչ պատահեց։։

— Պորտմանս։

— Գողացա՞ն։

— Չկա, տո, թռցրին,—պատասխանեց նա, բոլոր դրպանները տնտղելուց հետո։

Նրա տրամադրությունն ավրվեց։

— Շուն, շան աղջիկներ,—արտասանեց նա, մի քանի ավելի գունավոր հիշոցներ ևս ավելացնելով։

Շուտով նա սկսեց ինքն իրան մխիթարել։ Պորտմանի մեջ մեծ գումար չի յեղել, ընդամենը 150 Ֆրանկ։

— Լավ է, վոր յերեկ բանկից չվերցրի պերեվոդս,—ասաց նա ժպտալով,—վոչինչ, մոտս էլի մի քանի վոսկի կա, մինչև եգուց հերիք է։

— Իսկ ծխախոտի տո՞ւփդ,—հարցրի յես, զարմանալով, վոր այդ մասին չմտածեց։

Նա մի փոքր շփոթվեց և կմկմալով պատասխանեց։

— Տո՞ւփս, հա, տուփս հյուրանոցումն եմ թողել... Վոչինչ, վոչինչ։ Այդ ո՞ւր մնացին քո գեղեցկուհիները, տո,—շտապեց ավելացնել նա, կարծես խուսափելով իմ հարցին պատասխանելուց։

Յես զգացի, վոր նա ստում է։

Հեռվում յերևաց Թագուհու ամբիոնը։ Օրվա հերոսուհին իր բարձրությունից աջ ու ձախ ծաղիկներ եր սփռում ամբոխի վրա, հաղթական ժպիտն յերեսին, վորպես յերջանկագույնը բոլոր կանանցից։ Չնայելով յեղանակի բավական զգալի ցրտությանը, նա բարվոք եր համարել մրսել, քան քաղաքի կողմից ստացած իր մետաքսյա բաց-վարդագույն նորաձև զգեստը թագցնել վերարկուի տակ։ Հազարավորների միջից ընտրվածը տասնութ տարեկան մի աղջիկ եր բանվոր դասակարգից։ Միջին Ֆրանսուհու կատարելատիպն եր իր կազմվածքի նրբությամբ և դիմագծերի գեղեցկու-

թյամբ։ Թեթև մետաքսյա թասակի տակից նրա բաց շագանակագույն գանգուր մազերը, սփռվելով շուշանի նման ճերմակ ուսերի վրա, հազիվ հազ սքողում էին նրա բաց կուրծքը։ Հոգեկան հաճույքից նրա այտերը կարմրել էյին, և յերկնագույն աչքերը պսպղում էյին ադամանդների պես։ Պակաս գեղեցկուհիներ չէյին նրա ընկերուհիները։ Նրանք թվով վեց էյին և նույնպես ծաղիկներ էյին ձգում ամբոխի վրա, փոխարենն աջից ու ձախից նետվող փնջիկները վորսալով։

Ամբոխը ծափահարում եր «Թագուհուն» առանց ջերմ վոգևորության, կարծես, քաղաքավարության մի պարտք կատարելու համար։ Յերիտասարդները տալիս էյին իրանց գնահատականը յերբեմն սրամիտ, հաճախ բանալ համեմատություններով։ Վոմանք պարսավում էյին ժյուրիի ճաշակը, մյուսները ընդհակառակը գովաբանում էյին։ Ծերունիները, մանավանդ պառավ կանայք, դժգոհ էյին և պնդում էյին, թե պարիզուհին կորցրել է իր առաջվա գեղեցկությունն ու նրբությունը և հիացմամբ էյին հիշում անցյալի «Թագուհիներին»։ Նրանց ասելով, նույնիսկ ամբողջ տոնակատարությունը չունի իր վաղեմի շուքն ու հանդիսավորությունը։

— Այդպե՞ս եր մինչև կայսրության ժամանակը,—ասում եր քովս կանգնած ութսուն տարեկան մի ծերունի,—վոչ, տիկիններ և պարոններ, մի վիճեք, հանրապետությունն ամեն ինչ աղավաղեց ու փչացրեց։ Ֆրանսիան կործանվում է։

Սոմիկոն մի քանի վայրկյան հեղինակավոր հայացքով դիտեց գեղեցկուհիներին և, հառաչելով, ասաց.

— Ե՛հ, ինչ ասեմ, յերանի այն տղամարդկանց, վոր պիտի վայելեն այդ աղջիկներին։ Թող մենք էլ գոնե ծաղիկներով զովացնենք մեր այրող սրտերը։

Ասաց, և անմիջապես գնելով մի խուրձ ծաղիկներ, վազեց դեպի թափորը։ Չնայելով վոստիկանների արգելքին, նա կարողացավ մոտենալ «Թագուհու» ամբիոնին և, ցիլինդրը վերցնելով, ծաղիկները ձեռքից ձեռք տվեց «Թագուհուն»։

— Լսեցի՞ր,— ասաց նա անսահման ինքնագոհությամբ, «մերսի», ասաց, «մերսի»։ Հիմա կարող եմ ասել, վոր Պարիզում էլ բան չմնաց, վոր չտեսնեյի։

Շուտով ամբոխը մեզ հոգնեցրեց։ Սնոթի էյինք։ Մտանք Դյուվալի ճաշարանը։

— Դե՜հ,—դարձա յես Սոմիկոյին,—հիմա պատմեցեք, թե վորտեղ եյիք կորել, վոր յերկու շաբաթ չեյիք յերևում։

— Եհ, յեղբայր, մի հարցնեք, գլուխս փորձանքի մեջ եմ գցել։

— Ի՞նչ է պատահել։

— Սիրահարվել եմ,—պատասխանեց Սոմիկոն անսովոր լըրջությամբ։

— Դո՞ւք,—գոչեցի յես, ծիծաղելով։

— Այո՛, յես ինքս, ինչո՞ւ յեք ծիծաղում, յես մա՞րդ չեմ։

— Բայց չէ՞ վոր դուք սեր ասված բանը չեք ընդունում և ծաղրում եք այդ մասին խոսողներին։

— Հենց ցավն էլ այդ է, վոր առաջ ծաղրում եյի, իսկ հիմա չեմ կարող ծաղրել։

— Պատմեցեք, տեսնենք։

— Պատմելու բան չկա։ Պատահել եմ մի խելոք, կրթված, ինտելիգենտ կնոջ, ծանոթացել եմ ու խելքս կորցրել, պրծավ գնաց։

— Վո՞րտեղ եք պատահել։

— Café de la Paix սրճարանում։

— Ֆրանսո՞ւհի յե այդ կինը։

— Դեն կորցրեք ձեր ֆրանսուհիներին, աստված սիրեք, յես նրանցից կշտացա։

— Հապա ո՞վ է, ինչ ազգից է։

— Լեհուհի յե։ Միլլիոնատերի աղջիկ է։ Հայրը Վարշավայում մանուֆակտուրայի մեծ ֆաբրիկա ունի։

—Որբո՞րդ է։

— Վոչ։

— Ամուսի՞նը։

— Գվարդեյսկի օֆիցեր է։

— Այստե՞ղ է։

— Վոչ, դեռ չի յեկել, շուտով գալու յե։

— Լավ, դուք ամուսնացած, նա ամուսնացած, այդ վո՞նց կլինի։

— Յես գիտե՞մ, վոր ասեմ։

— Թե դուք սիրահարվել եք, այդ յերևում է, բայց նա՞ յել սիրում է ձեզ։

— Տո, ի՞նչ եք ասում, յես տուտո՞ւց եմ, վոր ինքս սիրեմ առանց սիրվելու։

— Հիմա այդ կինը վո՞րտեղ է։

— Գնացել է Նիցցա։ Յե՛ս տարա նրան։ Ինքը խնդրեց ուղեկցել, յես էլ գնացի հետը։

— Հապա դուք ինչո՞ւ վերադարձել եք, իսկ նա մնացել է այնտեղ։

— Վորովհետև այդպես վճռեցինք անել, յերկու շաբաթ միասին մնալուց հետո։ Մարդուց հեռագիր ստացավ, վոր արդեն ճանապարհ է ընկել Պետերբուրգից, անհարմար եր, վոր յես մնայի Նիցցայում։

— Ձեր ծախքո՞վ տարաք նրան Նիցցա։

— Այո՛։ Ինքը չեր ուզում, վոր փող ծախսեմ, յես խնդրեցի, աղաչեցի, մի կերպ համաձայնվեց։

— Սոմիկո, Ճշմարիտն ասեք, այդ կինը ձեզնից փող վերցրե՞լ է, ձեռապարտ։

— Տո, ի՞նչ եք ասում, ի՛նչ ձեռապարտ, ասում եմ քեզ միլիոնատերի աղջիկ է, Վարշավայում յերկու մեծ տներ ունի, վոր իբրև օժիտ հորից է ստացել։ Միայն ամուսնու ուշանալու պատճառով, փողը մի քիչ պակասել եր։ Յես ինքս համոզեցի, վոր գոնե մի հինգ հարյուր ֆրանկ վերցնի ինչպես պարտք։

— Յեվ վերցրե՞ց։

— Վո՛չ։ Բարկացավ, վիրավորվեց։ Բայց յես թաղուն դրեցի նրա բարձի տակ և դուրս յեկա։ Հիմա խիղճս ինձ տանջում է, վոր մի հազարանոց չդրեցի։ Բայց վաղն ելի մի հինգ հարյուր կամ հազար ֆրանկ պիտի փոխադրեմ հեռագրով։

— Սոմիկո, մի՛ փոխադրեք, բավական է վորքան տվել եք։

— Ինչո՞ւ։

— Հենց այնպես, ով գիտի ինչ է, ով է այդ կինը։

— Տո, ինչ թերահավատ մարդ եք,—բարկացավ Սոմիկոն, —ահա թե ով է, ինչ է…

Այս ասելով, նա ծոցի գրպանից դուրս բերեց մի չքեղ այցետոմս վոսկեզօծ կողերով և տվեց ինձ։

«Բարոնեսսա Իրինա Սիգիզմունդովնա Ռեբլենս, ծնյալ Սենչուկովսկայա»,—կարդացի յես և այցետոմսը վերադարձրի Սոմիկոյին։

— Հիմա հասկացաք ո՞վ է Բարոնեսսա,—ասաց նա հպարտությամբ։—Յես մի չտես մարդ չեմ, վոր հափշտակվեմ առաջին պատահած կնոջով… Բա-րո-նես-սա, հանաք բան չի, հա, հասկացեք… Բարոնեսսա…

— Քանի՞ տարեկան է այդ Բարոնեսսան․

— Քսանութ։

— Գեղեցի՞կ է։

— Անտիկա յե։

— Լուսանկարն ունե՞ք։

— Դեռ վոչ։ Խոստացել է հատկապես ինձ համար նկարվել և փոստով ուղարկել ծխախոտի տուփի հետ միասին։

— Վո՞նց թե ծխախոտի տուփից հետ,—զարմացա յես,—չե՞ վոր դուք ասացիք, թե տուփը հյուրանոցումն եք թողել։

— Հա, դե խոսք եր, ասացի ելի․․․ բայց թողել եմ բարոնեսսայի մոտ։

— Ինչո՞ւ։

— Ինքը խնդրեց։ Ուզում է իր անունը բրիլյանտով մակագրել նրա վրեն, ինչպես հիշատակ, ելի։ Հը, ինչո՞ւ յեք ծիծաղում․․․

— Վոչինչ, Սոմիկո, վոչինչ, ծիծաղս ձեզ չի վերաբերվում,—պատասխանեցի յես, չկամենալով իմ կասկածները շատ ել պարզել։—Թույլ տվեք խմել ձեր սիրահարության կենացը։

Սոմիկոն վոչ այնքան պարզամիտ եր, վորքան դյուրահավատ, չնայելով իր քառասուն ու հինգ տարեկան հասակին։ Զարմանալի յեր, վոր նրա վաճառական հայրը, թողնելով նրա համար բավական խոշոր հարստություն, մոռացել եր ավանդել նրան գեթ մի մասը իր գլխավոր հատկություններից—խորամանկությունից և ժլատությունից։ Յեվ, շնորհիվ այդ թերության, նրա վորդին սպառնում եր կարճ ժամանակում վատնել քառասուն տարվա խաբեբայությամբ և խեղճերի ու ապիկարների արյուն-քրտինքով վաստակած հայրական ժառանգությունը։ Այսպես եր հայ բուրժուազիայի նոր սերունդը։

Մի քանի օրից հետո Սոմիկոն նորեն անհետացավ։ Յես յերկար ժամանակ չեյի հանդիպում և արդեն գրեթե մոռացել եյի նրան, յերբ մի գարնանային առավոտ տեսա Բուա դը Բուլոն ավենյույում։ Նա հեռվից գալիս եր դեմ ու դեմ գլուխը կրծքին թեքած և, կարծես, անուշադիր դեպի շուրջը։ Յերբ գլուխը բարձրացնելով, ինձ նկատեց, թվաց ինձ, վոր մի տեսակ շփոթվեց։ Նա փորձեց մի կերպ խուսափել հանդիպումից և շեղվեց իր ճանապարհից։ Բայց յես մոտեցա նրան առանց նեղվելու։ Նա իմ բարեն ընդունեց վոչ այնքան սառնությամբ վորքան այլայլվելով։

Մի քանի րոպե մենք ընթանում եյինք քովե-քով լուռ։ Վորքան յես հետաքրքրված լինեյի գիտնալու, թե վորտեղ է յեղել և ինչ է արել իր մի ամսվա բացակայության ընթացքում, չկամեցա այդ մասին խոսք բանալ, լավ գիտնալով, վոր վերջիվերջո նա ինքն է խոսելու։ Այդպես ել յեղավ։

— Բիարրիցումն եյի,—ասաց նա քթի տակ։

— Ինչո՞ւ եյիք գնացել։

— Հենց այնպես, քեֆս տվեց, գնացի,—պատասխանեց նա մի յեղանակով, վոր թույլ չեր տալիս խոսակցությունը շարունակելու։

Վերջապես, նա ինքը ձանձրացավ լռությունից և ամեն ինչ պատմեց իր բնավորությանը հատուկ պարզությամբ։ Հայտնվեց, վոր բարոնեսսա կոչվածն ուրիշ վոչ վոք է յեղել, յեթե վոչ մեկն այն կոսմոպոլիտ ավանտյուրիստներից, վորոնք տարենը տասն կոսմոպոլիտ ավանտյուրիստներից, վորոնք տարենը տասներկու ամիս թափառում են Յեվրոպայում, անցնելով յերկրից յերկիր, քաղաքից քաղաք, ամեն տեղ յերևալով մի նոր անունով և նոր տիտղոսով։ Նրանք գիտեն բոլոր յեվրոպական լեզուները, լավ թե վատ խոսում են ազատ և վոչ վոք չգիտե, թե իրոք ինչ ազգից և վոր յերկրի ծնունդ են։ Այդպիսի մեկն եր բարոնեսսան, լսելով Սոմիկոյի պատմածները, բայց ինքը Սոմիկոն համառում եր մնալ իր նախկին համոզման մեջ, այն է, թե բարոնեսսան իրապես բարոնեսսա յե ու մեծահարուստ ֆաբրիկանտի դուստր։

— Իսկ փողե՞րը,—հարցրի յես,—յետ ստացա՞ք։

— Վո՛չ։

— Ծխախոտի տո՞ւփը։

— Մի՛ հարցնեք։

— Այնուամենայնիվ։

— Հաղար ֆրանկը փոխադրելուց մի քանի օր հետո, սիրտս կարոտեց, վճռեցի գնալ Նիցցա։ Մտածեցի, նրա մարդու հերն եմ անիծել, թող այնտեղ լինի, չեմ վախենում, պիտի անպատճառ տեսնեմ իմ սիրածին։ Այո, այո, իմ սիրածին, զուր եք ծիծաղում։ Գնացի և տեսա։ Յերբ նա ինձ ընդունեց հյուրանոցի սալոնում, մոտը նստած եր լպստած յերեսով մի մարդ։ Կարծեցի ամուսինն է։ Նա ներկայացրեց ինձ այդ մարդուն, ասելով թե իր յեղբայրն է։ Նա ասաց, թե ամուսինը Փարիզումն է մնացել մի շաբթով, և թե շուտով գալու յե։ Հետո յեղբայրը դուրս գնաց,

և նա ինձնից ներողություն խնդրեց, վոր իր պարտքն ուշացնում է:

— Դուք, իհարկե, ասացիք «վոչինչ» և նորից փող տվեցիք:

— Իսկ դուք վո՞րտեղից գիտեք այդ:

— Յենթադրում եմ: Ինչքա՞ն տվեցիք:

— Մոտս յերեք հազար ֆրանկ կար, կեսը տվեցի նրան:

— Կեցցե՛ք,—ասացի յես, ծիծաղելով:—Հե՞տո:

— Հետո ներողություն խնդրեց, վոր յեղբոր գալու պատճառով այն որը չի կարող ինձ հետ ազատ ժամանակ անցկացնել և խնդրեց, վոր մյուս որը միասին նախաճաշենք և ամբողջ որը զբոսնենք:

— Մյուս որը, իհարկե,, չնացիք:

— Յերանի վոտս կոտրվեր, չգնայի—բարկացավ Սոմիկոն, պատառաքաղն ուժգին զարկելով ափսեյին:

— Չկար, հե՞:

— Չկար, տո, կորել էր:

— Վո՞րտեղ:

— Սատանան էլ չգիտեր վորտեղ:

— Հասցեն չե՞ր թողել հյուրանոցում:

— Չեր թողել: Հյուրանոցի վարիչին ու դռնապանին հարց ու փորձ արի, վոչինչ չգիտեյին, միայն յենթադրեցին, վոր գնացել է Բիարրից, վորովհետև բազաժը յերկու որ առաջ այնտեղ եր ուղարկել: Յես առանց յերկար մտածելու անմիջապես գնացի Բիարրից:

— Հետո՞:

— Հինգ-վեց որ պտտեցի բոլոր հյուրանոցները, բոլոր պանսիոնները, վոչ բարոնեսսա կար և վոչ նրա յեղբայրը:

— Այսինքն սիրականը և իր ավանտյուրայի ընկերը:

— Թող ձեր ասածը լինի, չեմ վիճում:

— Բայց դուք եկի չասացիք, ի՞նչ յեղավ վոսկե տուփը իր թանգագին ադամանդներով:

— Մորս նվերն իմ պսակադրության որը,—արտասանեց Սոմիկոն, կրծքի խորքից արձակելով մի խորը հառաչանք:

— Տարա՞վ:

— Տարավ անիրավը, տարավ և լավ տարավ: Տալուս որն աստված խելքս իլել եր ինձնից ու հիմարացրել:

— Միայն ա՞յդ որը, Սոմիկո, միայն ա՞յդ որը,—ասացի յես վոչ առանց կծու հեգնանքի:

— Այդ բոլորը վոչինչ, փողերս էլ, տուփս էլ, խելքս էլ, ինձ միայն մի բան է կատաղեցնում:

— Ի՞նչը:

— Այն, վոր մինչև այդ բարոնեսսային հանդիպելս կին ասած բանը ինձ համար ուրիշ վոչինչ եր, յեթե վոչ փողով գնելու մի ապրանք, այսոր լավը, վաղը վատը: Յեվ հանկարծ մի որ խելքիս փչեց բացի մարմնից կնոջ մեջ փնտրել սիրտ, հոգի, խելք: Թյո՛ւ քո ողամարդության, Սոմիկո, թյո՛ւ...

— Բայց վոչինչ,—հարեց նա մի քանի վայրկյան անցած,— թող դա լինի իմ առաջին և վերջին դասը, այսուհետև ինքը Յեհովան էլ չի կարող ինձ խաբել:

Մենք բաժանվեցինք իրարուց: Հետևյալն որն իսկ նրան տեսա բոլորովին մոռացած իր բարոնեսսային և առաջվա պես ուրախ ու կենսախինդ: Միայն ասաց, թե կարոտել է իր ընտանիքին և վափագում է Կովկաս գնալ:

— Կգնամ, յերկու ամսով, կարոտս կառնեմ, աշնանն եկի կգամ,—ավելացրեց նա:

Նա չէր գուշակում, վոր Պարիզը նրա համար պահած ունե մի նոր արկած: Մեկն այն ինքնըստինքյան աննշան փորձանքներից, վորոնք սակայն Սոմիկոյի տիպի մարդկանց կյանքում վորոշ դաբագլուխ են կազմում:

Վաղ առավոտ էր, յերբ մի որ նրանից ստացա մի ողային նամակ: Նա գրում եր, թե, տկար լինելով, ինքը չի կարող ինձ համար գալ և խնդրում եր այցելել իրան մի «կարևոր գործի» համար: Յես շտապեցի գնալ: Նա պառկած եր անկողնում ճակատը թաշկինակով կապած և յերեսը նկատվելու չափ ուռած ու տեղ-տեղ կապտած:

— Նստեցեք, յեղբայր, նստեցեք ու լսեցեք: Բարեկամս եք, միայն ձեզ կարող եմ գլխիս յեկած փորձանքը պատմել:

— Փորձա՞նք,—կրկնեցի յես զարմացած:

— Փորձանք, բա ինչ, չե՞ք տեսնում սիփաթս...

Յեվ նա պատմեց: Նախընթաց որը նա մեծ բուլվարներից մեկի վրա, մի փոքրիկ սրճարանում տեսնում է մի շատ «համեստ ու համակրելի դեմքով» կին և խոկույն ծանոթանում է հետը, հրավիրում է ճաշի: Կինն ընդունում է նրա հրավերը մի քիչ դըժհրավիրում է ճաշի: Կինն ընդունում է նրա հրավերը մի քիչ դըժվարությամբ, ասելով, թե ամուսին ունի և չի կարող իրան շատ էլ ազատ պահել: Ճաշից հետո Սոմիկոն նրան տանում է ցիրկ և

կես գիշերին հրավիրում է իր նոմերը: Կինը չի համաձայնվում գնալ, յերդվելով, թե իր կյանքում հյուրանոցի յերես չի տեսել, թե ինքը բնակարան ունի, յեթե պարոնը շատ է փափագում գիշերը նրա հետ անցկացնել, կարող են այնտեղ գնալ:

— Իսկ ամուսի՞նդ, հարցնում եմ յես,—շարունակեց Սմիկոն:—«Ամուսինս, ասում է, հինգ որով գործով գնացել է Դիժոն»: Յես, իհարկե, ուրախությամբ ընդունում եմ նրա հրավերը: Գնում ենք: Իսկ վոր յերեք սենյակից բաղկացած մի որինավոր բնակարան բավական ճաշակով կահավորված, մինչև անգամ պիանինոյի պես մի բան էլ մի անկյունում: Քեֆս բացվում է, սկսում եմ սիրաբանել, գրկել, համբուրել վոչ ինչպես մի պոռնիկի, այլ ինչպես մի որինավոր ընտանեկան կնոջ: Նա յել ինձ է համբուրում, բայց մի քիչ կոտրատվելով և դժվարությամբ: Յերդվում է, վոր առաջին անգամն է թույլ տալիս իրան մի ուրիշ տղամարդի հետ սիրաբանելու, վոր յես շատ եմ դյուր յեկել նրան, առաջինն եմ, վոր արժանանում եմ նրա համակրությանը և այլն: Մեկ էլ հանկարծ գրկիցս դուրս թռչելով, սարսափած գոչում է.

— Ա՜յ դժբախտություն, նա գալիս է, նա գալիս է:

— Ո՞վ է գալիս,—հարցնում եմ:

— Ամուսինս, չե՞ս լսում վոտների ձայնը:

— Բայց չե՞ որ ամուսինդ Դիժոնումն է,—գոռում եմ յես կատաղած, զգալով, վոր այստեղ անպատճառ մի սատանայություն կա:

— Լռիր, մի գոռար, սաստում է ինձ շան աղջիկը,—շուտ արա թաքնվիր, յես նրան կտանեմ մյուս սենյակ, դու մի կերպ դուրս կսլկվես:

— Յես հիմարի պես վերցնում եմ գլխարկս ու վերարկուս և մտնում եմ անկողնակալի տակ:

Այդտեղ յես չկարողացա ծիծաղս զսպել և փռթկացի:

— Ծիծաղեցեք, յեղբայր, ծիծաղեցեք,—չվիրավորվեց Սմիկոն,—ունեք իրավունք, բայց լսեցեք մինչև վերջը:

— Շան աղջիկը բաց արավ դռները, մարդը ներս մտավ: Շունչս զսպած սպասում եմ, թե ինչ պիտի լինի և անկողնակալի տակից մտիկ եմ անում գող կատվի պես: Տեսնում եմ, վոր մարդը հարբած է, վոտքի վրա յերերվում է: Նա գոռում է «ո՞ւմ հետ էյիր, սաա, վո՞րտեղ թագցրիր սիրականիդ»: Սատանայի ծնունդը յերդվում է, թե «վոչ վոք չկա, թե սիրական չունի» և, միևնույն

ժամանակ վազում կանգնում է անկողնակալի առջև, պարզ հասկացնելով մարդուն, թե վորտեղ եմ թաքնված: «Հեյ, այդտեղ է ուրեմն»,—գոռում է մարդը և, կնոջը մի կողմ հրելով, թեքվում է և ձեռքիցս բռնելով, ինձ դուրս է քաշում: Դողդողալով վոտքի յեմ կանգնում: Առջևս կանգնած է մի հսկա տղամարդ, թիկունքն իմնից յերկու անգամ լայն և ռեվոլվերը ձեռքին: Յես էլ ուզում եմ ռեվոլվերս դուրս բերել, չկա: Հասկանում եմ, վոր սատանի ծնունդը սիրաբանության ժամանակ, ճարպկությամբ դուրս է բերել գրպանիցս: Ինչ անել՝ դատարկ ձեռներով: Հանկարծ վրես մի ուժ յեկավ, կրծքին խփեցի, ընկավ: Շան աղջիկը յետևից բռնեց ձեռներս, մարդը վեր կացավ ընկած տեղից և, տուր վոր կտաս: Տեսնում ես էլի, ինչ յերկարացնեմ, մարդ ու կին ինձ կողոպտեցին վոտքից մինչև գլուխ: Վերցրին փողերս էլ, վոսկե ժամացույցն էլ վոսկե շղթայով, մատանիս էլ, ռեվոլվերս էլ, ամեն ինչ...

— Յեվ դուք վերադարձաք հյուրանոց վո՞տքով:

— Վոչ, այդ մեկը պետք է խոստովանել, կառքի փող տվեցին, քսան Փրանկ:

— Այժմ ի՞նչ եք մտադիր անել,—հարցրի յես:

— Վոչինչ:

— Ինչպես թե վոչինչ: Պետք է հայտնել վոստիկանությանը:

— Տո, ի՞նչ եք ասում, ո՞ւմ դեմ դանդատվեմ, անիծվածների վոչ անունը գիտեմ, վոչ տան նոմերը և վոչ էլ փողոցը:

— Այնուամենայնիվ այդպես թողնել չի կարելի, պետք է հայտնենք վոստիկանությանը:

— Գիժ եք ի՞նչ է, դուք ուզում եք, վոր անունս ընկնի լրագրների բերանը, ամենքը կարդան և վաղ թե ուշ Թիֆլիս գնա և կնոջս ու յերեխաներիս ականջին հասնի: Շնորհակալ եմ, յես ձեր ասած տուտուցներից չեմ, վոր այդ թույլ տամ:

Արդարև, ներկա դեպքում բարեկամս տուտուց չէր, և յես համաձայնվեցի նրա հետ:

— Ավելի լավ է,—ավելացրեց նա,—մի քանի օր հյուրանոցից դուրս չգամ, մինչև վոր յերեսիս կապտուկներն անցնեն: Հետո վեր կկենամ ու հայդա Կովկաս: Զե, յեղբայր, յես քո Պարիզից կշտացա:

— Յերևի էլ Պարիզ չեք գալ, չե՞:

— Իհարկե, չեմ գալ, գի՞ժ եմ:

Մի շաբաթ անցած Սմիկոն ինձ հեռագրեց, թե գնում է և

խնդրեց վերջին անգամ իր հետ տեսնվեմ: Յես ուղեկցեցի նրան մինչև կայարան:

Հրաժեշտի վերջին րոպեին նա ասաց.

— Գիտեք, յեղբայր, սիրտս ախրում է, վոր Պարիզից հեռանում եմ:

— Յեվ ափսոս, վոր ել չեք ուզում մեկ ել տեսնել:

— Նետ, բրատ, չալիշ, կգամ, ելի կգամ, ամեն տարի,—գոչեց նա,—ցտեսություն:

X

ԶՎԻՑԵՐԻԱՅՈՒՄ

Պարիզ գալուս առաջին ամառը, այն է 1906 թվականին, վորոշեցի մի կամ յերկու ամսով ընտանիքիս հետ տեղափոխվել Զվիցերիա:

Ո՞վ չի կարդացել կամ լսել այդ յերկրի բնական գեղեցկության և ժողովրդի բարք ու վարքերի մասին անվերջ գովեստներ: Յուրաքանչյուր ճամբորդ, հայտնիներից սկսած մինչև հայ ուսանողը, մի տեսակ սրբազան պարտականություն է համարել իր հիացման տուրքը նրան վճարելու: Գրիգոր Արծրունին մի տարի այնտեղ ապրելուց հետո, «Մշակի» բանասիրական բաժինը չորս—հինգ ամիս զբաղեցրեց Զվիցերիայի փառաբանությամբ: Կարդալով նրա նկարագրությունները, յես այն տպավորությունն եյի ստացել, թե աշխարհը չունի ավելի գեղեցիկ վայր, ավելի կուլտուրական ժողովուրդ, ավելի մաքուր ու բարոյական վարք ու բարքեր, քան այդ, ինչպես ինքն եր ասում, «օրհնած» յերկիրը:

Պարիզից մինչև Ժնև Դիժոն քաղաքի վրայով ընդամենը տասը ժամվա ճամբա յե յերկաթուղով: Յես վերցրի գիշերային գնացքը, և լուսաբացին արդեն սահմանագլխումն եյինք: Պոնտարլյեյի կայարանում գնացքը փոխվում է: Ճամբորդները ժամանակ ունեն դալարազարդ սարալանջի վրա, բաց օդում, առավոտյան արեգակի առաջին ախորժալի շողերի տակ զվիցերական զովարանված կաթն ու սերը կամ սուրճը ճաշակելու և իրենց ագահ հայացքը հագեցնելու գունագեղ լեռների ու դեղնագույն ապառաժների սքանչելի տեսարաններով:

Ժնևը փոքրիկ քաղաք է 130 հազար բնակիչներով: Չի կարելի ասել, վոր Ժան Ժակ Ռուսոյի և Պռադիեյի ծննդավայրն ունի մի առանձին գեղեցկություն, բայց, շինված լինելով բնության զմայլելի ծոցում, նա մի բացառիկ հմայք է ներշնչում ճամբորդին: Դա գլխավորապես նրա առջև տարածված Լեման լիճն է, մանավանդ Ռոն գետը: Յես վոչ մի յերկրում չեմ տեսել ջրերի այդչափ պայծառ ու զվարթ գույն, վորչափ այդ լճի և այդ գետի մեջ: Ռոնի

ջուրը, կարծես, ներկված է արվեստական բաց մանիշակագույն ներկով։ Մարդ մի արտասովոր ուրախություն է զգում, նայելով նրա ընթացքին, և թվում է, թե տեսածն յերազ է։

Մենք, իհարկե, Ժնևում չպետք է մնայինք։ Յեկել եյինք լեռների հստակ օդը շնչելու և Պարիզի աղմուկից ու իրարանցումից հոգնած մեր ներվերին հանգստություն տալու։ Մի օրվա մեջ յես ժամանակ չունեցա հետաքրքրվելու Ժնևի փոքրիկ թանգարանով, նրա թատրոններով և վոչ նրա մոնումենտներով։ Միակ բանը, վոր գնացի տեսնելու, Կալվինի հիմնած համալսարանն եր, այն էլ արձակուրդների պատճառով փակ եր։ Գնացի կաֆե «Լիբրիկ», վոր հայ ուսանողների սիրած սրճարանն եր, վոչ վոքի չը հանդիպեցի։ Պարիզից հետո Ժնևն ինձ թվաց մի կիսամայթ գյուղաքաղաք։

Շոգենավ նստելով, ուղևորվեցինք Լոզան։ Բարեկամ մարդկանց ասելով, ավելի հարմար էլ այնտեղ ընտրել մի լեռնային պանսիոն։

Նավային ճամբորդությունը Զվիցերիայում ամենահաճելի զբոսանքն է։ Ջուրն ու հողը իրարու հետ մրցելով, մերթ մեկն է գրավում հայացքդ, մերթ մյուսը։ Չգիտես, վորն է ավելի հմայիչ՝ մարգարտագույն Լեմանի ջրերի անթիվ ձկնիկների խաղը, թե ափերի կանաչազարդ պարտեզները, այգիներն ու մարգերը գյուղական մաքուր տնակներով։ Ինքը շոգենավը պակաս հետաքրքրական չէ ճամբորդների բազմությամբ և բազմատեսակությամբ։ Ինչպես ամենուրեք, այստեղ ևս գերազանցում են անգլիացիներն ու ամերիկացիները։ Շատ քիչ Ֆրանսիացիներ և իտալացիներ են յերևում։ Նրանք կարիք չունեն Զվիցերիա գալու։ Նրանց հայրենիքի ամառանոցները պակաս դմայլելի չեն։ Ֆրանսիա, Իտալիա և Զվիցերիա, յերեք յերջանիկ քույրեր գրավել են Յեվրոպայի ամենագեղեցիկ վայրերը և մրցում են իրարու հետ։

Հաճախ լսում եմ ռուսերեն լեզու, մեծ մասամբ հրեական առոգանությամբ։ Նրանք են ամենից բարձրաձայն խոսում և ամենքից զորեղ շարժումներ անում։

Լոզանում, ժամանակավորապես տեղավորվելով մի պանսիոնում, վորդիներիս ուղարկեցի լեռները լրագրական հայտարարությունների ցուցմունքով մի հարմար և գրպանիս համապատասխան պանսիոն ընտրելու։

Լոզանը Ժնևից յերկու անգամ փոքր է թե տարածությամբ և

թե բնակիչների թվով։ Բայց նա հին քաղաք է, ուստի և ավելի յուրատեսակ և յեթե կամենաք, ավելի գեղեցիկ իր զառիվեր փողոցներով, տների հնադարյան վոճով ու սիրուն աղբյուրներով։

Մեծ չէ Զվիցերիայի տարածությունը, ընդամենը 41 հազար քառակուսի կիլոմետր, այսինքն՝ Խորհրդային Հայաստանից միայն մի յերրորդական չափով ավելի։ Նրա բնակչության թիվն այն ժամանակ 3 միլիոն 700 հազար եր։ Իր պատմության ընթացքում այդ յերկիրն էլ տառապել է, ինչպես Հայաստանն իր անցյալում, և շատ է տառապել։ Սկզբի դարերում նա կոչվել է Հելվեցիա կամ հելվետների յերկիր, ապա հաջորդաբար ընկել է հռոմեացիների, բուրգոնդների և Ֆռանկների իշխանության տակ։ Այնուհետև յեկել է Ավստրիայի բռնակալությունը և տիրել է մինչև տասնույերեքյերորդ դարի վերջը, յերբ ժողովուրդն այլևս չկարողանալով կրել իր տիրող պետության անողոք ներկայացուցիչների դաժանությունները, ապստամբել է։ Զվիցերիան այդ ապստամբության հերոսությունը, ինչպես հայտնի յե, մարմնացրել է Վիլհելմ Տելլի առասպելական անձնավորության մեջ, վորի պաշտամունքն այսօր էլ այնքան զորեղ է յերկրում և կմնա, քանի վոր գոյություն ունի այդ ժողովուրդը։ Ապստամբության առաջին հետևանքն է յեղել Լյուցերն, Ցյուրիխ, Գլարիս, Զյուգ և Բեռն կանտոնների իրարու միանալն ու մի ֆեդերասիոն կազմելը։ Շարունակելով քայլ առ քայլ ձեռք բերել իր ժողովրդի կատարյալ ազատությունը, տասնհինգյերորդ դարում ֆեդերասիոնը կռվել է Կարլոս անխոհեմի և Մաքսիմիլիան կայսեր դեմ։ Այս վերջինը ստիպված է յեղել Բալի դաշնագրությամբ ճանաչել կանտոնների ազատությունը, վորոնց թիվն ավելացել եր մինչև տասներեքի։ Բայց Զվիցերիան վորպես անկախ պետություն, ճանաչվել է միայն տասնյոթերորդ դարի կեսին Վեստֆալիայի դաշնագրությամբ։ Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցությամբ նա հայտարարվել է «Հելվեցիան հանրապետություն», և միևնույն ժամանակաշրջանում յերկիրը դարձել է ֆրանկո-ավստրիական և ավելի ուշ, ֆրանկո-ռուսական պատերազմների թատերաբեմը։ Վերջապես, 1803 թվականին, Նապոլեոն առաջնի կամքով և Վիեննայի դաշնագրությամբ, Հելվեցիան միասնական հանրապետությունը դարձել է ֆեդերալ հանրապետություն։

Այժմյան Զվիցերիան ունի 22 կանտոն։ Ամեն մի կանտոն իր ներքին գործերի վերաբերմամբ անկախ է և ունի տեղական ա-

ռանձին կառավարություն: Յերկրի կենտրոնական, այսինքն՝ ֆեդերալ վարչության տեղը Բեռնն է, Շվեյցարիայի մայրաքաղաքը: Գործադիր իշխանությունը Ֆեդերալ խորհուրդն է, վորի նախագահը միաժամանակ և Ֆեդերացիայի նախագահն է: Օրենսդրական մարմինը բաղկացած է յերկու խորհուրդներից՝ ազգային և պետական:

Յերկիրը բաղկացած է յերեք մասերից—ֆրանսիական, գերմանական և իտալական: Լեզվի պատճառով մեզ համար, իհարկե, գերադասելի յէր ֆրանսիական Շվեյցարիան:

Յերկու օր փնտրելուց հետո, գտանք մեր ցանկության և միջոցներին համապատասխան մի պանսիոն Լոզանի շրջակա լեռնաջին դաշտավայրում, ծովի մակերևույթից 900—1000 մետր բարձրության վրա:

Պանսիոնն անշուք էր, բայց մաքուր և էժան, հինգ հոգու համար յերեք ընդարձակ և լուսավոր սենյակներ, ուտելիքով հանդերձ, օրական 20 ֆրանկ (8 ռուբլի վոսկով): Առավոտյան մեզ տալիս էին սերով սուրճ, սպիտակ հաց, պանիր, կարագ կամ ձու, մեղր կամ մուրաբա, իսկ կաթ վորքան ցանկանայինք: Կեսօրվա նախաճաշը բաղկացած էր յերկու տեսակ կերակրից, մեկը միս, մյուսը՝ բանջարեղեն և դարձյալ սուրճ, իսկ ճաշն իրիկնամտին հինգ տեսակից՝ ապուր, միս, ձուկ, բանջարեղեն, անուշեղեն կամ միրգ:

Պանսիոնի տերը մի գյուղական ընտանիք էր—մարդ ու կին և յերկու դեռահաս աղջիկներ: Կինը, չնայելով իր կոշտ ու կոպիտ արտաքինին, վերին աստիճանի հեզ և սակավախոս մի էակ էր միշտ սիրալիր ժպիտն յերեսին: Մարդն ընդհակառակը, բավական տաշված ու հղկված արտաքինով, բայց բնավորությամբ կոպիտ, բծախնդիր և, ըստ յերևույթին, կռվասեր մեկն էր: Հենց առաջին օրերը նա ցուցադրեց իր կոպտությունը մի քանի անտեղի նկատողություններով ու պահանջներով: Յես յերկու դեպքերում կարողացա ինձ զսպել, բայց յերրորդ անգամ, մտածելով, վոր յեթե թույլ լինեմ, մարդը շատ հեռուն կգնա, վճռեցի մի անգամ առ միշտ ցույց տալ նրան իր տեղը: Յես նրա զռռոցին պատասխանեցի իմ ձայնի վոչ պակաս դիապազոնով: Մարդն անմիջապես լռեց և քթի տակ ինչ վոր փնթփնթաց: Այնուհետև նա մեր վերաբերմամբ զգույշ էր և աշխատում էր ինձ չհանդիպել, թեև մոտովս անցնելիս չէր մոռանում բարևելու:

Այդ միակ օրինակն է, իհարկե, ինձ չէր կարող խանգարել շատ շուտով տեսնելու և համոզվելու, վոր շվեյցարացիներն առհասարակ վերին աստիճանի հանգիստ և խաղաղասեր ժողովուրդ են: Թեև շատ են սիրում խոսել պատերազմների և կռիվների մասին և մի քիչ էլ պարծենկոտ են: Յերբեմն նրանք վախկոտ են ծաղրվելու չափ: Առանձնապես նրանք վախենում են իտալացիներից, վորոնք կազմում են ճանապարհներ շինող բանվորների մեծամասնությունը: Յուրաքանչյուր իտալացի իր գրպանում ունի մի դանակ և չի վարանում տեղի ու անտեղի ցույց տալ այդ դանակը, մանավանդ, յերբ հարբած է, իսկ հարբում են իտալացի բանվորները շատ հաճախ:

Յես վճռել էի, քանի վոր գեղեցիկ բնության ծոցումն եմ, վոչ գրել և վոչ կարդալ: Ինձ համար ամեն մի տեսարան մի գիրք էր և ամեն մի դեմք մի ամբողջ մարդկություն: Առավոտից մինչև յերեկո վորդիներիս հետ կատարում էի յերկարատև զբոսանքներ: Այցելում էի շրջակա գյուղերը, մտնում էի անտառները, իջնում էի ձորերը, բարձրանում էի լեռնային շալեները, այնտեղ վայելելու Շվեյցարիայի հրաշալի կաթն ու սերը և հիանալու գյուղացիների տոկուն ու համառ աշխատասիրությամբ:

Հազիվ թե գտնվի մի ուրիշ յերկիր, ուր վոտքով ճամփորդելն այնքան դյուրին և հաճելի լինի, վորքան Շվեյցարիայում: Դուք կարող եք, մի փոքրիկ ճամբարկ վերցնելով, մեն-մենակ անցնել յերկրի մի ծայրից մինչև մյուսը, միանգամայն վստահ, վոր ձեզ վոչ մի վտանգ չի սպառնում, բացի ձեր այս կամ այն անխոհեմությունից: Անցնելով գյուղից գյուղ կամ կանտոնից կանտոն, յեթե հոգնել եք, ձեր հանգստության համար ամենուրեք կա գյուղական մի փոքրիկ հյուրանոց, վոր ոբերժ է կոչվում: Այնտեղ կարող եք և՛ գիշերել և՛ կերակրվել մի չնչին վարձով:

Շվեյցարիայում մեծ ճանապարհի ավազակություն չկա, չկա և խուլիգանություն, վոր այնքան սովորական է մյուս յերկրներում: Հետևապես ձեր անձը և գրպանն այդ կողմից միանգամայն ապահով են վտանգներից: Անտառների խորքերում դուք, բացի նապաստակներից և ճագարներից, չեք հանդիպի վոչ մի գազանի: Չկան թունավոր սողուններ: Գոնե յես հինգ ամառ անցկացնելով Շվեյցարիայում, վոչ միայն չհանդիպեցի, այլև չլսեցի նրանց մասին: Բայց մի բան, վոր ինձ զարմացրեց, թռչունների բացակայությունն է անտառներում: Գալով գողություններին, այնքան

հազվադյուտ են, վոր չարժե նրանց մասին խոսել, մանավանդ, վոր նրանք բուն զվիցերիացիների ձեռքով չեն կատարվում: Զվիցերիայում շատ մեծ է սեփականության կուլտը: Գյուղից գյուղ անցնելով, դուք ճանապարհների յեզրերում հանդիպում եք բազմաթիվ զանազան մրգերով ծանրաբեռնված ծառերի: Վոչ մի պահապան աչք չի հսկում նրանց, և հասուն պտուղները թափվել են գետնի վրա: Ով է նրանց տերը—չգիտես, բայց գիտես, վոր սեփականություն է, ուրեմն մասնավորի համար անձեռնմխելի: Ամենահանդուգն մանուկն անգամ չի համարձակվում ուրիշի ծառից միրգ պոկել: Յեվ նրան զսպողը վոչ այնքան չորս Ֆրանկ տուգանքն է, վորքան ամոթի զգացումը և ծնողների հանդիմանությունը:

Ով չի կամենում կամ չի կարող վոտքով ճամփորդել, նրա տրամադրության տակ են յերկաթուղիներն ու շոգենավերը: Քառասուն Ֆրանկ վճարելով, դուք ունեք իրավունք ամբողջ կես ամիս ճամփորդել թե՛ յերկաթուղով և թե՛ շոգենավով ուր կամենաք և վորքան կամենաք:

Մեր պանսիոնում կենողները բոլորն էլ բնության սիրահարներ եյին և օտար յերկրացիներ զանազան ազգություններից: Նախաճաշի և ճաշի ժամանակ մեր զրույցների առարկան գլխավորապես յերկրի գեղեցիկ տեսարաններն եյին: Ի միջի այլոց, կար մի զվիցերիացի ինչ վոր արհեստավոր, վոր, իր ասելով, տասնյոթ անգամ բարձրացել եր Մոնբլանի գագաթը: Իհարկե, ամենքից ավելի հետաքրքրությամբ նրա պատմածներն եյին լսվում: Նա մի քանի անգամ ալպինիստներ եր առաջնորդել, վոչ ըստ պաշտոնի, այլ, ինչպես ինքն եր ասում, «ի սեր արվեստի»:

Մի անգամ, յերբ նա նկարագրում եր իր կրած դժվարություններն ու վտանգները, կինս հարցրեց.

— Ի՞նչ հաճույք եք զգում, պարոն, բարձրանալով լեռան գագաթը այդքան դժվարությունների ու տանջանքների գնով:

— Ո՛հ, տիկին,—պատասխանեց մարդը, վոգևորվելով,—դուք յերևակայել չեք կարող այդ հաճույքը: Դա աննկարագրելի յե: Ամեն անգամ, յերբ հասնում եմ լեռան վերջին բարձրությանը և նստում եմ մի սառցակույտի կամ ժայռի վրա, թվում է ինձ վոր բոլոր մահկանացուներից ամենաերջանիկն յես եմ, վորովհետև միակն եմ այդ բարձրության վրա: Ինձ հետ շատ քչերն են կարողացել լեռան գագաթին հասնել: Մեծամասնությունը կես ճամբից յետ է դարձել, վոմանք նույնիսկ վերջին կետին մոտե-

ցած: Պատահել են և վողբերգական արկածներ իմ աչքերի առջև: Հիշում եմ յերեք յերիտասարդ իռլանդացիների կործանումն, իրանց մանկական ինքնավստահության և անխոհեմության շնորհիվ: Յես նրանց ապահով առաջնորդել եյի մինչև նախավերջին կետը: Այդտեղ նրանք սկսեցին արհամարհել իմ առաջնորդությունը և ցուցմունքները: Կամեցան ինձնից առաջ տեսնել գագաթը, ով գիտե, գուցե հետո իրանց հայրենակիցների մոտ պարծենալու համար: Յեվ կործանվեցին յերեքն էլ: Նրանցից յերկուսը յեղբայրներ եյին:

— Յեվ ի՞նչ արիք դուք, յերբ մենակ մնացիք:

— Իջա վար ոգնություն բերելու: Թշվառների դիակը գտանք մի ժայռի տակ, յերեքն էլ արյունաշաղախ, այլանդակված:

Մարդը մի փոքր լռեց և ապա, հառաչելով, ավելացրեց.

— Բայց, չնախատեք ինձ, տիկին, յեթե մի բան անկեղծորեն խոստովանվեմ ձեզ:

— Ասացեք:

— Այն պահին, յերբ ընկերներիս հետ փնտրում եյի կործանվածներին, ինձ պաշարել եր մի հանցավոր միտք, ափսոս վոր այս անգամ յես զրկվեցի իմ բարձրագույն հաճույքից, այսինքն՝ Մոնբլանի գագաթը վողջունելուց:

— Այո՛, ճիշտ վոր հանցավոր միտք:

— Ինչ արած, տիկի՛ն, յերևի, նախախնամության որենքն է, մարդը կա և կմնա միշտ եգոիստ:

Յես տեսնում եյի, վոր յերջանիկ ալպինիստի պատմվածքները խորապես ազդում են վորդկերանցս վրա և հուզում են նրանց, մանավանդ Արմենին:

Մի անգամ ալպինիստը հարցրեց նրանց.

— Կկամենա՞ք Մոնբլան բարձրանալ:

— Այո, այո՛,—կրկնեցին անմիջապես յերկուսը միասին:

Յես ծիծաղեցի, կինս գունատվեց:

— Յերբե՛ք, յերբե՛ք յես թույլ չեմ տալ,—գոչեց նա այնպես ահաբեկված, վոր, կարծես, իր զավակներն արդեն ժայռերի ու սառույցների վրա յեն:

— Մի վախենաք, տիկին,—ծիծաղեց զվիցերիացին բարեսրտաբար,—յես նրանց Մոնբլանի գագաթը չեմ առաջարկում, այլ միայն մի մասը, դիցուք կեսը, կամ մի յերրորդականը: Դա շատ դյուրին մի եքսկուրսիա յե, վոր յերեխաներն անգամ կարող են կատարել:

— Ձեր առաջնորդությամբ, իհարկե,— ասացի յես:

— Վո՛չ, պարո՛ն, կարիք չկա, վոր յես առաջնորդեմ: Դուք ինքներդ կարող եք նրանց ուղեկցել: Մեծ բան չե: Խոսքս Մոնբլանի հռչակավոր սառցարանների մասին ե: Դա մի զմայլելի էքսկուրսիա յե, ձեզ համար ել վերին աստիճանի հետաքրքրական:

Յեվ նա իսկույն, մատիտ ու թուղթ վերցնելով, գրեց ու նկարեց մարշրուտը: Յես հրապուրվեցի, վորդիներս ուրախացան: Ի՞նչ ավելի մեծ հաճույք կա, քան զավակներիդ հաճույք պատճառելը:

Հետևյալ առավոտ իսկ, մի կերպ հաղթահարելով կնոջս ընդդիմադրությունը, վերցրի վորդիներիս և իջա Լոզան: Այնտեղից Ժնևի վրայով յերկաթուղով անցանք Բարձր—Սավոա: Գնացինք Շամոնի: Դա ալպինիստների սովորական յելակետն ե, մի գյուղ Մոնբլանի ստորոտում, գլխավորապես հյուրանոցներից բաղկացած: Տեղ հասանք յերեկոյան: Յեղանակը մառախլապատ եր, թեթևակի անձրևում եր, վախեցանք, մի գուցե մեր փոքրիկ էքսկուրսիան չհաջողվի: Գիշերեցինք հյուրանոցներից մեկում, հետևյալ օրն ամբողջովին գործադրելու նպատակով: Առավոտյան հազիվ լույսը բացվել եր, յերբ վոտքով ճանապարհ ընկանք: Հակառակ մեր սպասածին, յեղանակը պարզվել եր, արեգակը լուսավորում եր Մոնբլանն այնքան պայծառ, վոր ձյուների մակերեսը պսպղում եր բյուրավոր ալմաստներով: Թվում եր, վոր մենք մի հարյուր քայլ հեռավորության վրա յենք և շուտով կհասնենք այնտեղ:

Կազմվել եր մեզ նման էքսկուրսանտների մի մեծ խումբ: Կային և մի քանի ալպինիստներ: Նրանցից յուրաքանչյուրն իր մեջքի վրա կրում եր պարենով լի մի տոպրակ և յերկայն պարան: Յերևի, նրանք պիտի բարձրանային գագաթը: Նրանք ունեյին յերեք առանձին առաջնորդներ, իսկ մերը մի հոգի եր միայն: Շամոնիից մինչև սառցարանները յերկու կամ յերեք ժամվա ճամբա յե, նայելով էքսկուրսանտի ընթացքի արագությանը: Այն ժամանակ դեռ չեր ավարտված այժմյան ելեկտրագիծը, վոր այնքան թեթևացրել ե վերելքը: Վորդիներս ուրախությունից թռչկոտում եյին: Նրանց հետ մրցում եր մոտ հիսուն տարեկան մի մարսելցի. նա չարունակ բարբառում եր, բրբջում և վազվզում տասը տարեկան մանկան պես: Յերջանի՛կ մարդ:

Սառցարանը գտնվում եր ծովի մակերեսից 2200 մետր բարձրության վրա: Հետևելով մյուսների օրինակին, մենք ևս գնեցինք միմի զույգ կոշտ գուլպաներ և հագանք մեր կոշիկների վրա, վորպեսզի սառույցների վրա չը սայթաքենք: Միայն մի մոտ քառասուն տարեկան, սևաչյա, սևահեր և գեղեցիկ աղջիկ արհամարհանքով մերժեց իրան առաջարկված գուլպաները և վազեց դեպի սառցարանը բաց կոշիկներով: Նա չեր վախենում սայթաքումից: Այսքանը բավական եր, վոր թեթևսոլիկ մարսելցին անմիջապես հափշտակվեր այդ աղջկանով և այլևս նրանից չհեռանար: Այն սառցարանը, վոր պիտի անցնեյինք, ուներ մոտ մի կիլոմետր լայնություն: Սկզբում մենք ընթանում եյին դյուրությամբ և անյերկյուղ, չնայելով մեր առաջնորդի նախազգուշացումներին: Բայց շուտով մեր գուլպաները տրորվելով—մաշվեցին, սահեցին մեր վոտներից և ընկան: Շարունակեցինք քայլել ավելի դանդաղ և զգուշությամբ:

Սառցարանը տափակ չեր և վոչ ել հարթ: Նույն լեռնալանջն եր, միայն քարի փոխարեն սառցյա խորդ ու բորդեր, ձորակներ և բլրակներ: Դժվարացնողն այդ բլրակները բարձրանալն եր, մանավանդ իջնելը: Աջ ու ձախ բացված եյին կապտագույն ջրերով լեցուն փոքրիկ խորխորատներ: Բավական եր մի անզգույշ քայլ, մի թեթև սահում, և մարդ կարող եր վար թավալվել: Ով գիտե ով կարող եր նրան վեր քաշել, և կենդանի կքաշե՞ր արդյոք: Համենայն դեպս քիչ թե շատ խորը փոսի մեջ ընկնողի ջարդոտվելն անխուսափելի եր:

Սառցարանը սկսվում ե Մոնբլանի աննշմարելի բարձունքից մի լայնարձակ ձորի ուղղությամբ և վար իջնելով մի վորոշ տեղ, ընդհատվում ե, բայց կանգ չի առնում: Զվիցերիացիներն ասում եյին, վոր նա աստիճանաբար յերկայնանում ե և կարող ե շուտով սպառնալ ստորոտի գյուղերին ու ագարակներին: Պատմում եյին, վոր յեղել են դեպքեր, յերբ ամբողջ գյուղեր են կործանվել սառցային հոսանքների տակ: Սառույցները մշտական չեն, խորքում նրանք հալչում են, և փոխարենը վերի մակերեսը ծածկվում ե նորանոր շերտերով: Սառցարանի տակից հոսող ջրերը կազմում եյին ամբողջ գետակներ, վորոնցով գյուղացիները վոռոգում են իրանց այգիներն ու ագարակները: Առհասարակ Մոնբլանը, հակառակ չոր ու ցամաք Արարատի, վերին աստիճանի բարեբեր լեռն ե, շնորհիվ իր ջրերի առատության: Այդ տեսակետից նրա հետ մասամբ կարող ե մրցել միայն մեր Արագածը:

Տեղ տեղ ինչ վոր բարի մարդիկ սառցային բլրակների վրա յերկաթյա բահերով փորում եյին աստիճաններ, անցնողների ընթացքը դյուրացնելու համար: Յուրաքանչյուր էքսկուրսանտ տա—

լիս է նրանց իր տուրքը—չորս-հինգ սու—վոչ ավելի։ Այն ժամանակ Զվիցերիայում առհասարակ ամեն բան անհամեմատ էժան էր Ֆրանսիայի վերաբերմամբ։ Այժմ հակառակն է, ֆրանսիական ֆրանկի անկման պատճառով։

Մի սառցային սանդուխով բարձրանալիս, թեթևամտություն ունեցա յետ նայելու, գլուխս պտտեց, վոտներս դողացին, և մնացի իմ տեղում գամված։ Յերկյուղը կաշկանդել էր ինձ, չէյի կարողանում շարժվել։ Վորդիներս մոտեցան, և նրանց ոգնությամբ բարձրացա վեր ու իջա մյուս կողմը։

Մի բլրակ բարձրանալիս մարսելցին, հետևելով սևաչյա որիորդին, սայթաքեց և ընկավ ձորակի մեջ։ Բարեբախտաբար ձորակը խորը չէր և վոչ էլ այնքան լայն, վոր նրա բավական գեր մարմինը ներս ընդգրկեր։ Մարդը մնաց սրածայր բեկորների մեջ ինչպես թակարդ ընկած աղվես։ Առաջնորդն իր ալպենշտոկի և պարանի ոգնությամբ նրան դուրս բերեց ձորակի բերնից անվնաս։ Սակայն նրա քիթը բավական ջարդվել էր և յերեսն արյունոտվել։ Մի բան, վոր նրան չխանգարեց կրկնակի յեռանդով հետամուտ լինելու սևաչյա որիորդին, աշխատելով կես քայլ անգամ յետ չմնալ նրանից։ Դա նրա կողմից կատարյալ հերոսություն էր, աչքի առջև ունենալով նրա պատկառելի տարիքը և այծյամի պես բլրակից բլրակ և ձորակից ձորակ վոստոստող աղջկա թեթևությունը։

Լավ չեմ հիշում, բայց կարծեմ մոտ մի ժամ տևեց մեր անցքը։ Յեվ ամենից առաջ անցնողը դարձյալ սևաչյա աղջիկն յեղավ։ Նա արդեն դարձել էր մեր ամբողջ խմբի ուրախության և համակրանքի առարկան։ Իսկ խեղճ մարսելցին չարաչար խանդում էր, յերբ վորևէ մեկը մոտենում էր աղջկան, թեկուզ կին լիներ մոտեցողը։

Ո՞վ էր այդ գմայլելի աղջիկը։ Հազիվ այդ հարցը տվել էյի ինձ, յերբ նա ինքը հանկարծ մոտեցավ և ասաց ռուսերեն․

— Պարոն, կարծեմ, դուք կովկասցի յեք։

— Այո՛։

— Իսկույն գուշակեցի ձեր արտասանությունից,—շարունակեց նա ժպտալով և իր գեղեցիկ ճակատից յետ վանելով գանգուր ու թանձր մազերը։

— Ներեցե՛ք, իսկ դուք վո՞ր յերկրից եք,—հարցրի յես։

— Յես նույնպես կովկասցի յեմ։

— Վո՞ր ազգությունից։

— Վրացուհի յեմ, պարոն, Քութայիսից։

— Ճամբորդո՞ւհի յեք։

— Վոչ, այնպես, մի թեթև զբոսանք եմ կատարում։ Յես ուսանողուհի յեմ Ժընևում։

— Ի՞նչ եք ուսանում։

— Հասարակական գիտություններ։

— Ներեցեք, ձեր ազգանո՞ւնը։

— Բաքրաձե։ Իսկ ձե՞րը։

Յես ասացի։

— Ա՛,—գոչեց որիորդը,—ուրախ եմ ծանոթանալ։ Յես ձեր մասին կարդացել եմ կովկասյան լրագրներում։ Իմ հայուհի ընկերները գրականության մասին խոսելիս, հաճախ հիշում են ձեր անունը։ Գիտեք, յես միշտ կովկասցու հանդիպելիս ուրախանում եմ։ Չե՞ վոր մենք հայրենակիցներ ենք։ Ասացե՛ք, յե՞րբ պետք է մեր յերկիրը Զվիցերիա դառնա,—հարցրեց նա, հանկարծ դառնալով մտամփոփ։

— Կդառնա, որիորդ, կդառնա և ավելի առաջ կերթա,—գոչեցի յես մի տեսակ ներշնչված և հուզված։

— Յես էլ հավատում եմ,—արտասանեց որիորդը նույնպես զգացված։

Նույն պահին, տեսնելով, վոր ինքը մի քանիսից յետ է մնացել, ասաց․

— Ներեցե՛ք։

Յեվ անմիջապես վազեց առաջ։ Մինչ մենք խոսում էյինք, մարսելցին տասը քայլ հեռվում սպասում էր որիորդին, իր կարճ ծխամորճն ատամներով կրծոտելով և վոտները գետնին զարկելով, վորպես անհամբերության նշան։ Նրա ճարպոտ ու կարմիր յերեսը փայլում էր արեգակի շողերի տակ։ Յերբ որիորդը, առանց նրա վրա ուշադրություն դարձնելու, անցավ, իսկույն վազեց հետևից, ինչպես վորսկան շուն։ Հանկարծ որիորդը կանգ առավ, յետ վազեց և ասաց․

— Աղաչում եմ, պարոն, պատվիրեցեք ձեր վորդիներին, վոր այդ ապուշ մարսելցուն զբաղեցնեն։ Նա ինձ ձանձրացրեց իր պարծենկոտությամբ։

Յեվ րոպե չանցած, նա ամենքին առաջեց այնպես, վոր խեղճ մարսելցին այլևս չէր կարող իր գեր մարմինը նրա հետևից քարշ տալ։

Զորության ճամբան քարքարոտ էր և լեցուն սրածայր ապա-

ածներով: Պետք է բարձրանայինք մի լեռան կուրծքը և անցնեինք հակառակ կողմ վար իջնելու համար: Նախ քան բարձրանալը, կանգ առանք մի փայտյա տնակի առջև և թարմ կաթով ու սերով կազդուրվեցինք: Գործնական Զվիցերիան գիտե վորտեղ է ավելի գնահատելի իր բերքը:

Ուղին գծված էր ուղղահայաց և չատ բարձր ժայռի վրա: Ամենայն իրավամբ նա կոչվում էր Mauvais-Pas (վատ քայլ—վտանգավոր ճանապարհ): Նա այնքան նեղ էր, վոր պիտի անցնեյինք մեկ–մեկ, իրարու հետևից, կռունկների պես: Ցերկրի հողատար կառավարությունը խոհեմություն էր ունեցել ժայռի կրծքով անցկացնելու յերկաթյա պարան ճամբի ամբողջ յերկարությամբ: Մենք գնում եյինք աջ ձեռով պարանը բռնած: Ձախ կողմը հիսուն մետր խորությամբ անդունդ էր, ուսկից բացվում էր մի ուրիշ անդունդ ավելի խոր: Մեզնից չորս որ առաջ այդ ուղիի վրա սպատահել էր մի դժբաղդ դեպք: Ցերկու ռուս յերիտասարդ կանայք, մեկն որիորդ, մյուսը յերկու յերեխաների մայր, ժրնևվում իրանց ընկերների հետ գրազ են բռնում, թե սառցարանն ու Mauvais-Pas կարող են անցնել գիշերով և առանց առաջնորդի: Նրանց աջողվում է առաջինն անցնել անվտանգ, բայց յերկրորդն անցնելիս յերեխաների մայրը հանկարծ պոկվում է ժայռից և վար ընկնում: Խեղճ որիորդը մինչև լույս մնում է ժայռի վրա, օգնություն գոռալով: Միայն լուսաբացին գյուղացիները, լսելով նրա ձայնը, գալիս են և թշվառ կնոջ դիակը դուրս են բերում անդունդից: Մեր առաջնորդը ցույց տվեց մեզ նրա անկման տեղը:

Ցես գնում եյի միջին չարքում, չարունակ յետ ու առաջ նայելով, վորդիներիս հետևելու համար: Հանկարծ նկատեցի, վոր յերկրորդ վորդիս չկա: Կանգ առա և, ինձ հետևողներին չխանգարելու համար, ամուր սեղմվեցի ժայռին, վորպեսզի թույլ տամ նրանց առաջ անցնելու: Մոտեցավ ավագ վորդիս գունատ ու հուզված:

— Պապա, Արմենը չի յերևում, յես վախենում եմ, մի դուցե ընկել է:

Մենք աղաղակեցինք «Արմեն, Արմեն», վոչ մի ձայն: Ցես սարսափեցի: Վերջին ամիսներին այդ զվարթ ու կայտառ պատանին դարձել էր մտամոլոր, լուռ ու մռայլ: Վայրկենաբար ինձ կայծակեց մի չար կասկած: Ուժասպառ հենվեցի յերկաթե պարանին, վորպեսզի չընկնեմ: Նույն վայրկյանին Ռուբենը գոչեց.

— Ահա՛ նա, ահա՛, նայի՛ր ցած:

Ցես նայեցի: Նա գնում էր վարի ձորով, վոր սառցարանի ուղղությամբ տանում էր դեպի մի վիհ: Գնում էր չտապ քայլերով, գլուխը կրծքին թեքած, առանց աջ ու ձախ նայելու: Հայր ու վորդի աղաղակեցինք մեր ձայների ամբողջ ուժով «Արմե՛ն, Արմե՛ն»...

Նա, մեր ձայնից սթափվելով, կանգ առավ վիհից հազիվ մի քանի քայլ հեռավորության վրա: Մենք ձեռքով նշան արինք յետ դառնալու: Նա ուշադրություն չդարձրեց, բայց և տեղից չշարժվեց առաջ գնալու: Ռուբենը չտապեց, վար իջավ ձորը և, նրա թևից բռնելով, բերավ մեր ուղին: Այդ վայրկյանից, իմ պատվերով, նա իր յեղբորից չէր բաժանվում, քայլ առ քայլ հետևելով նրան:

Ապագայում, յերբ պարզվեց թշվառ պատանու հիվանդությունը, յես չատ անգամ եմ մտածել և այսոր էլ, յերբ հույսերս վաղուց են խորտակված, մտածում եմ այդ չարագուշակ վայրկյաների մասին, բայց յերբեք չեմ հարցրել և չեմ կամեցել գիտնալ, արդյոք նա սխալմամբ էր իր ճամբից շեղվել, թե... գիտակցաբար...:

Mauvais-Pas-ն անցանք անփորձանք, իջանք մի ձոր: Մեր առջև բացվեց մեկը Զվիցերիայի նշանավոր տեսարաններից—մի չատ բարձր ջրվեժ, վոր մռնչալով ժայռի բեկորները թավալում էր կատաղի զորությամբ: Մենք կանգ առանք ջրվեժի ստորոտում և յերկար ժամանակ հիացմամբ դիտում եյինք բնության հրաշալիքը, ուշադրություն չդարձնելով, վոր ջուրը գարնվելով վարի ապառաժներին, բարձրանում է վեր և մեզ հեղեղում անձրևի տարափով:

Իջանք Շամոնի հոգնած ու ուժասպառ: Նույն ժամին գնացք նստեցինք վերադառնալու:

Մինչև Ժընև որիորդ Բաքրաձեն մեզ հետ էր: Նա կարողացել էր, վերջապես, ազատվել մարսելցու ձանձրալի ընկերությունից:

— Ցես նրան հավատացրի,—ասաց որիորդը,—վոր դուք իմ մորյեղբայրն եք և չատ բարկացել եք, վոր յես թույլ եմ տալիս մի օտարականի ինձ հետամուտ լինելու:

— Ի՞նչ էր սպասում նա ձեզնից,—հարցրի յես:

—Ցերևակայեցեք, առաջարկում էր, վոր յես իր հետ ամուսնանամ: Հավատացնում էր, վոր ինքը հայտնի կոմերսանտ է, Մարսելի նշանավոր հարուստներից մեկը, վոր բարի մարդ է, առատաձեռն: Գլխավորն այն է, վոր անվերջ պարծենում էր իր քաջությամբ և անվեհերությամբ: Ցերդվում էր, թե յերեք անգամ ճամբորդել է Ալժիրիայի խորքերումվորպես վորսորդ, թե յերկու առյուծ է սպանել. յերեք վագր, թե կարող է ինձ ցույց տալ նրանց

խրտվիլակները, չեթե չես համաձայնվեմ նրա հետ Մարսել գնալ: Նա խոսում էր, խոսում, չես մտքումս ծիծաղում էի, նայելով նրա ուռած փորին: Կարո՞ղ եք չերևակայել մեր ամուսնությունը,— չարունակեց օրիորդը, բարձրաձայն ծիծաղելով, չես քսան ու մեկ տարեկան, նա իմ հորից հինգ տարով ծեր: Ինչ կասեն իմ ընկերուհիները. գիտեք, նա հավատաց, վոր դուք իմ մորյեղբայրն եք: Նա մինչև անգամ ուզում էր ձեզ հետ խոսել իմ մասին և ձեր թույլտվությունը խնդրել, վոր չես ամուսնանամ նրա հետ: Հետաքրքրական է գիտնալ, դուք ինչ պատասխան կտայիք նրան, չեթե չես կատակի համար թույլ տայի ձեզ հետ խոսելու:

— Ցես նրան կասեյի, վոր դուք մի աննման ծաղիկ եք, վորին ձեր գեղեցիկ հայրենիքը չերբեք չի համաձայնվիլ իր ձեռքից բաց թողնելու:

— Ինչ է, դուք Ցեվրոպա չեկել եք կոմպլիմաններ սովորելու, այդ լավ չէ,—արտասանեց օրիորդը կես կշտամբանքով ու կես կատակով:—Վերջը լսեցեք: Ցես նրան ասացի, վոր կովկասցիները կանանց վերաբերմամբ շատ խիստ են, վոր նրանք թույլ չեն տալ կատակներ անելու: Ասացի, վոր դուք շատ վտանգավոր մարդ եք, չեթե համարձակվի ձեզ հետ իմ մասին խոսելու, գործը կարող է արյունահեղությամբ վերջանալ: Ցես մտքումս ծաղրում էյի նրան, բայց չերևակայեցեք, առյուծների ու վագրերի հետ կռվող մարդը վախեցավ:

— Մի՞թե:

— Այո՛, այո՛, վախեցավ, հավատացնում եմ ձեզ, թեև պարծեցավ, ասելով, վոր մարսելցիներն արյունհեղությունից վախեցող մարդիկ չեն:

Մենք օրիորդ Բաքրաձեյի հետ բաժանվեցինք բարեկամաբար: Նա խոստացավ մի օր գալ մեր պանսիոնը կնոջս հետ ծանոթանալու համար: Մենք էլ խոստացանք նրան այցելել Ժնեվում: Բայց, ինչպես սովորաբար այդ տեսակ պատահական ծանոթությունները վերջանում են, վոչ նա և վոչ մենք կատարեցինք մեր խոստումը:

Այնուամենայնիվ այսօր էլ օրիորդ Բաքրաձեյի ուրախ ու պայծառ կերպարանքը վառ է իմ հիշողության մեջ:

Ցես չաբաթն չերկու անգամ վորդիներիս հետ կամ մենակ էլեկտրական չերկաթգծով իջնում էյի վար, Լոզանից կամ Վեվեյից վայելելու Լեմանի հմայքը: Մի օր ամբողջ ընտանիքով գնացինք Մոնտրեո, վոր Զվիցերիայի սիրուն ձմերանոցներից մեկն է:

Մեզ հետաքրքրողը նրանցից վոչ հեռու գտնվող Շիլյոնի բանտն էր վոր Զվիցերիայի Բաստիլոնն է համարվում: Ի՛նչ սքանչելի վայր: Կարծես, միջնադարյան բռնակալությունն իր վոճիրը մարդկային ազատության դեմ ավելի անամոթաբար չեշտելու համար է հոչակավոր բանտը տեղավորել Լեմանի ափերից գեղեցկագույնի վրա: Անշուշտ Սավոյայի բռնակալ Կարլոս չերրորդը չէր կարող դուշակել, վոր մի օր կգա պոետլան և Բայրոնի հանճարեղ գրչով նախատինքի կնիքը կդրոշմի նրա ճակատին, անմահացնելով Ժնեվյան հայրենասեր Բոնիվարի անունը «Շիլյոնի կալանավոր» անվան ներքո: Բանտը շինված է ուղիղ ջրի ափին, բայց ներքին հարկը ջրի մեջ չէ, ինչպես սխալմամբ նկարագրում է Բայրոնը:

Հազարավոր ճամբորդներ են ամեն ամառ այցելում այդ բանտը, հարկավ, մեծ բանաստեղծի մույլ նկարագրությամբ հափշտակված: Ցեվ շատերը չտապում են իրանց անունը փորագրել կամ գրել նրա պատերի ու սյուների վրա:

Մի ապառաժի վրա ամենատեսանելի մի տեղ քառորդ մետր խոշորությամբ սև տառերով գրված էր.

Պռոշյանց:

Մենք վոչ դրիչ էյինք բերել, վոչ փորագրիչ մեր անունն անմահացնելու համար: Բավականացանք միայն մեր հարգանքը մատուցանելով թշվառ կալանավորի հիշատակին:

XI

ՍՈՐԲՈՆՈՒՄ: Հ... Ա—ՆԸ: ԻՇԽԱՆՈՒՀԻՆԵՐԸ: ՄԱԳԱԶԻՆՆԵՐԻ ՀՐԱՊՈՒՅՐԸ

Պարիզի մթնոլորտն ինձ արբեցրել էր: Թվում էր, վոր այսուհետև ինձ համար այլևս դժվար պիտի լինի շնչել մի ուրիշ օդ:

Հայրենիքի կարոտը չքացել էր, թեև նա առաջ էլ մի առանձին տեղ չուներ իմ հոգում: Յերբեմն նույնիսկ մտածում էի, ունե՞մ արդյոք, հայրենիք, և պատասխանը միշտ լինում էր բացասական: Այո՛, այո՛, ասում էի յես ինձ, յես հայրենիք չունեմ, այն անգնահատելի գանձը, վոր բոլոր ազգերի բոլոր մարդկանց պարծանքն է: Յեվ զարմանում էի, վոր այդ պարզ ու պայծառ իրողությունը նոր եմ տեսնում, կամ ավելի ճիշտն ասած, նոր եմ զգում:

Կովկասից ստացվող տխուր լուրերը (իսկ նրանք միշտ տխուր էին, միշտ հուսահատական) մի մի աստիճան իջեցնում էին իմ սերը դեպի այդ յերկիրը, վոր ինձ կյանք էր տվել: Չկար այլևս ինքնադատապարտումը, վոր մի ժամանակ այնպես կծոտում էր իմ սիրտը: Այժմ յես իմ Յեվրոպա տեղափոխվելը համարում էի միանգամայն իրավացի ու խելացի:

Բարեկամներս ինձ գրում էին.

— Վերադարձիր հայրենիք, ի՞նչ գործ ունիս օտարության մեջ:

Խե՛ղճ մարդիկ, նրանք դեռ շարունակում էին մնալ մոլորության մեջ, թե հայրենիք ունեն:

Իմ պատասխանն անփոփոխ միևնույնն էր:

—Կվերադառնամ, յերբ զավակներս կավարտեն իրենց ուսումը:

Կեղծում էի, իհարկե, վոչ միայն վերադառնալու փափագ չունեյի, այլև մի տեսակ սարսափով էի մտածում, թե մի որ ստիպված պիտի լինեմ վերադառնալու: Ի՞նչ կա այդ կիսավայրենի, այդ հնից հեռացած, նորին չհասած յերկրում: Ի՞նչ, բացի միջնադարյան խռովություններից, կռիվներից, կոտորածներից: Առանձին ատելությամբ հիշում էի մանավանդ հայ միջավայրը, նրա ընկերային կյանքի յերկպառակությունները, ինտրիգները, բարեկամը բարեկամի, յեղբայրը յեղբոր վոտների տակ փորելը:

Ա՜հ, ինչ լավ կլիներ, յեթե կարողանայի մոռանալ այդ անցյալը, խորտակել իմ յետևից բոլոր կամուրջները, վերածնվեյի ու նոր կյանք սկսեյի, նոր սկզբունքներով, նոր խելքով, նոր ճաշակով:

Այո, այստեղ, Յեվրոպայում այն չէ, ինչվոր այնտեղ, ասիական խավար յերկրում: Այստեղ մտքի աշխատավորն ապրում է համամարդկային կյանքով: Այստեղ, գիտությունների, արվեստների, մարդկային հոգու և մտքի նրբացման բոլոր հնարավորությունների վոստանում: Վերջապես, այստեղ իմ միտքն ազատ է ներքին ու արտաքին կապանքներից և յես իմ եյության, իմ նվիրական խոհերի տերն ու տիրականն եմ: Այստեղ յես ունեմ բոլոր միջոցներն ամբողջովին նվիրվելու գրականությանը, միմիայն գրականությանը, առանց վորևե վերապահումների: Այստեղ վոչ վոք ժամանակ-անժամանակ չի խուժիլ իմ բնակարանը, վորպեսզի տակն ու վրա անի իմ գրասեղանը, գրավի իմ ձեռագրերն ու ինտիմ նամակները, վորպեսզի իր լկտի մատներով քրքրի իմ ուղեղը փնտրելու համար, չկա, արդյոք, նրա հատակում վորևե հանցավոր միտք ցարի կամ նրա սպասավորների դեմ:

Այսպես էի մտածում և այդպես զգում, այն ինչ այլ էր իրողությունը: Մթնոլորտով արբեցած, յես ինձ խաբում էի անգիտակցաբար: Յես ուզում էի աշխատել, զգում էի մի բան գրելու, մի բան ստեղծագործելու պահանջ, և, ավա՜ղ, չէյի կարողանում: Պատահե՞լ է ձեզ յերազում տեսնել ձեր սիրո առարկային, վորից յերկար ժամանակ է բաժանվել եք: Դուք, իհարկե, ուրախանում եք, ուզում եք հարձակվել նրա վրա, գրկել, համբուրել, բայց չեք կարողանում, ուղղակի անզոր եք: Ինչ վոր մի բան բանգարում է ձեզ, ձեր ձեռներն առաջ չեն շարժվում, ձեր շրթունքները մնում են օդի մեջ կախված, յերևույթը հանկարծ չքանում է, և դուք արթնանում եք մի դառը կսկիծ ձեր սրտում: Այս վիճակումն էի յես: Փորձում էի մի բան գրել և գրում էի, բայց վոչ մի էջ, վոչ մի տող չէր գոհացնում ինձ, պատռում էի գրածս, ինքս իմ դեմ զայրացած, նորեն գրում էի և միշտ միևնույնը, շաբաթներ և ամիսներ շարունակ:

Վերջապես, յերկար ջանքերից հետո, յես հոգնեցի հոգեպես ու մտավորապես, կարող եմ ասել նույնիսկ ֆիզիքապես այն աստիճան, վոր սկսեցի զգալ մի տեսակ զզվանք դեպի գիր ու գրականություն ասված բանը:

Ժամանակս քիչ թե շատ օգտավետ գործադրելու համար վորոշեցի հաճախել Սորբոնի ազատ դասախոսությունները, վոչ վոր-

պես իսկական ուսանող—այդ չեր սազիլ իմ տարիքին—այլ այնպես, վորպես սիրող, դիլետանտ։ Ընտրեցի յերեք առարկաներ՝ պատմություն, փորձնական հոգեբանություն և... դարձյալ անխուսափելին... գրականություն։ Եականն այն է, վոր ինձ համար պարզապես հաճելի յեր նախաճաշից հետո որվա մեջ յերկու-յերեք ժամ նստել մի կիրթ հասարակության մեջ, ուր պակաս չեյին իմ հասակի մարդիկ։ Հաճելի յեր լսել ու հիանալ ֆրանսերեն լեզվի յերաժշտությամբ ու նրբությամբ, մանավանդ, յերբ դասախոսն Իպպոլիտ Տենի և Բրյունետերի արժանավոր հաջորդ, ժամանակի լավագույն գրական քննադատ Եմիլ Ֆագեն եր կամ հեղինակավոր պատմագիր Ոլարը, այդ բարձրահասակ, վայելչակազմ և գեղեցկադեմ ծերունին։

Կար մի փոքրահասակ կաղ պրոֆեսոր։ Մարթա յեր նրա անունը։ Յերբեմն նրա դասախոսություններին ել գնում եյի։ Այդ ժամանակ նրա դասախոսության նյութն եր լատինական պերճախոսությունը (éloquence latine)։ Ինձ համար ամենից համակրելի պրոֆեսորն այդ մարդն եր։ Արտիստ եր բառիս լավագույն իմաստով, արտիստ իր ձևերով, շարժումներով, ձայնի յելևեջներով, դիմախաղով։ Այս կամ այն կլասիկ հեղինակից հատվածներ արտասանելիս նա վոգևորում եր ինչպես կրակոտ դերասան, մերթ նստելով, մերթ վոտքի յելնելով, բայց յերբեք նյութից չեր շեղվում և ունկնդրին չեր ձանձրացնում ավելորդ մանրամասնություններով։ Յես լսում եյի նրան վոչ վորպես պրոֆեսորի, այլ վորպես տաղանդավոր դերասանի, վորի խաղն ինձ պատճառում եր գեղարվեստական հաճույք։

Առհասարակ ամեն մի ֆրանսիացի բեմախոս, լինի նա միտինգային հռետոր, թե պրոֆեսոր, պառլամենտի անդամ թե փաստաբան, նախ և առաջ դերասան է։ Նույնիսկ յեկեղեցական քարոզիչները Բոսյուեի որերից սկսած, դերասաններ են։ Բայց մի՞թե միայն այդ է ֆրանսիացի բեմախոսի արժանավորությունը։ Վո՛չ։ Նա օժտված է զարմանալի ընդունակությամբ ամենաչոր և ձանձրալի նյութն անգամ դարձնել գրավեցուցիչ ու հետաքրքրական։ Նա իր բնական հումորով, անսպասելի սրախոսություններով ու համեմատություններով դիտե ամենաչոր նյութին տալ գեղարվեստական ձև և յերանգավորում։

— Չե՞ք կամենալ, արդյոք, լսել Դարսոնվալին,—դարձավ ինձ մի որ մի ռուսահայ յերիտասարդ Հ. Ա.—ն անունով։—Այսոր նա խոսելու յե Մարկոնիի նոր գյուտի, անթել հեռագրի մասին։

— Ուրախությա՛մբ,—ասացի յես։

Գնացինք նշանավոր ֆիզիկոսի բանախոսությունը լսելու։

Յես նոր եյի ծանոթացել Հ. Ա.—ի հետ, և նա առաջին վայրկյանից իսկ հետաքրքրել եր ինձ իր մի քանի դրեթե բացառիկ հատկություններով։ Յերեսուն տարին արդեն բոլորած, նա ինքն իրան համարում եր «հավիտենական ուսանող» և չեր վիրավորվում, յերբ ուրիշներն ել այդ ածականով եյին դիմում իրան։ Վոչ բարձրահասակ, նրբակազմ, յեվրոպական կեցվածքը կատարելապես յուրացրած,նա նման եր ավելի մի ֆրանսիացու կամ իտալացու, քան հայի։ Արդարև,յես կյանքումս շատ քիչ եմ հանդիպել հայերի մեջ այնքան բարեձև, բարեկիրթ և, միևնույն ժամանակ, այնքան բազմակողմանի զարգացած մեկին, վորպիսին եր այդ «հավիտենական ուսանողը»։ Տարենը տասներկու ամիս նա թափառում եր քաղաքից քաղաք, յերկրից յերկիր, ամենուրեք ուսումնասիրելով թանգարանները, գրադարանները, այցելելով թատրոնները։ Նա ուներ այնքան մտավոր պաշար գիտությունների վերաբերմամբ, վոր, յեթե մի քի՛չ պատրաստվեր, կարող եր վորևե առարկայի համալսարանական դասախոս լինել և ուր կամենար, վորովհետև տիրում եր 3-4 յեվրոպական լեզուների հավասար չափով։ Յեվ սակայն նա «հավիտենական ուսանողի» ածականը գերադասում եր պրոֆեսորի տիտղոսից։

Այդ որն ինձ համար պարզվեց Հ. Ա.—ի մի ուրիշ ձիրքը, վորի մասին մինչև այդ գաղափար չունեյի։ Յերբ Դարսոնվալը (d'Arsonval) ավարտեց իր բանախոսությունը, Ա.—ն, գրեթե ստիպելով, ինձ տարավ բեմ և ծանոթացրեց նրա հետ։

— Պարոն Ա.-ն ձեր հայրենակի՞ցն է,—հարցրեց ինձ անվանի ֆիզիկոսը։

— Այո՛, մենք միևնույն յերկրից ենք,—պատասխանեցի յես։

— Խնդրում եմ, մի լավ կշտամբել նրան։

— Ինչո՞ւ համար, վարպե՛տ։

— Ծուլության, պարոն, ծուլության և անհոգության համար։ Ձեր հայրենակիցը բնությունից օժտված է գիտնականի ընդունակություններով։ Նա նույնիսկ գյուտարարի ձիրք ունի, ինչպես այդ ցույց են տալիս նրա մի քանի հնարները։ Յեթե համառու-

թյամբ աշխատե, հավատացած եմ, վոր մի որ ել նա Մարկոնիի նման կտա ինձ մի նոր բանախոսության նյութ։ Այո՛, այո՛, բարեկամս,—շարունակեց ֆրանսիացին, դառնալով Ա–նին,—դուք եք շփոթվում ու կարմրում ամոթխած աղջկա պես։ Դուք ինքներդ չգիտեք գնահատել ձեր ձիրքը, վոր ինձ համար անվիճելի յե։ Դա, յեթե կամենաք, մի տեսակ վոճիր է ձեր կողմից գիտությունների վերաբերմամբ։

Արտասանելով այդ խոսքերը, ծերունին ներողություն խնդրեց և սկսեց իր ապարատները ժողովել։

Յերբ մենք դուրս յեկանք սրահից, յես հանդիմանեցի Ա–նին, վոր ինձնից մինչև այդ որը թագցրել եր իր փորձերը ֆիզիկայի ասպարեզում։

— Դատարկ բաներ են,—ասաց նա, ժպտալով,—Դարսոնվալը բարեսիրտ մարդ ե և բարեկամաբար գերագնահատում ե իմ աշակերտական աշխատանքները։

— Այնուամենայնիվ յես պահանջում եմ, վոր դուք ինձ ծանոթացնեք այդ աշխատանքների հետ։

Յեվ Ա–ն բացատրեց։ Հիշում եմ նրա յերկու գյուտը. մեկը մի փոքրիկ մեքենա յեր, վոր տներում գործածվող գազը ապահովում եր պայթումից, մյուսը մի գործիք եր ռազմանավային թնդանոթների նիշը ստուգելու և անփոփոխ պահելու համար։ Մասնագետ չլինելով, իհարկե, չեմ կարող ասել, թե ինչ արժեք ունեյին այդ գյուտերը, բայց յերևի ֆրանսիական կառավարությունը մի բան տեսել եր նրանց մեջ, վոր Ա–նին տվել եր հեղինակի արտոնություն (brevêt d'invention) և պաշտոնական բյուլլետենում հրատարակել եր նրա անունը։

Հ. Ա–նն ինձ ցույց տվեց Գերմանիայի, Անգլիայի, նույնիսկ Ամերիկայի զանազան գործարաններից գրավոր առաջարկներ՝ իր գյուտերը վաճառելու։ Վոչ մի առաջարկի նա չեր պատասխանել և չեր ուզում պատասխանել։

— Այդ աններելի անհոգություն ե,—ասում եյի յես,—ապագայում կարող եք զղջալ։ Բաղդն ամեն որ չի ժպտում մարդուն։

Նրա հայրն յեղել եր վաճառական և, մեռնելով, իր յերեք վորդիներին թողել եր բավական խոշոր ժառանգություն։ Նա ամեն ամիս Բաղվից կանոնավորապես ստանում եր իր բաժինը ժառանգական յեկամուտների և ապրում եր անհոգ, բնավ չմտածելով ապագայի մասին։ Յեվ դա նրա դժբախտությունն եր, իր համար անհասկանալի ու անզգալի։

Քսան տարի անցած յես մի ձմերային որ հանդիպեցի Հ. Ա–նին Խորհրդային Միության քաղաքներից մեկում։ Նա յեկել եր այնտեղ յերկու որով և լսելով իմ մասին, շտապել եր ինձ հետ տեսնվելու։ Նա արդեն ծերացել եր և զարմանալի կերպարանափոխվել։ Նախկին անփույթ ու զվարթ, տաղանդավոր ու ծույլ, սրամիտ ու զվարճախոս, ընտիր ընկեր և պչերդ աշխատավոր մարդուց մնացել եր մի ստվեր։ Մեր հանդիպումն յեղավ շատ կարճատև, ընդամենը քառորդ ժամ։ Նա ինձ վոչինչ չասաց իր ներկա վիճակի մասին, յես ել ավելորդ համարեցի հարցնել։ Ինձ համար ամեն ինչ պարզվեց հենց առաջին վայրկյանին, յերբ մի ժամանակվա ֆրանտին տեսա մաշված ու գզգզված վերարկուի մեջ։

Յես միայն փորձեցի խոսք բանալ մեր անցյալ բարեկամության մասին և առհասարակ հիշել Պարիզը… Բայց առաջին իսկ բառերից նա կտրեց իմ խոսքը, ասելով.

— Թողնենք, թողնենք, յես ամաչում եմ իմ անցյալից։ Մնաք բարով։

Ասաց և, ձեռս ամուր սեղմելով, շտապեց հեռանալ։ Ո՞ւր ե նա այժմ, չգիտեմ։ Յես ափսոսում եմ, վոր նա ներկա նյութական նեղ վիճակում չեր այն ժամանակ, յերբ նրա բնածին ձիրքերն իրանց թարմության և ստեղծագործական ուժի մեջ եյին։

Սովորություն ե դարձել ասել, թե նյութական անապահովությունը մտավոր աշխատավորի ճակատագրական չարիքն ե։ Այս ընդհանրացած կարծիքը շատերն ընդունում են վորպես անվիճելի ճշմարտություն և հաճախ նրան են վերագրում այս կամ այն աշխատավորի անբեղմնավորությունը, այնինչ հարյուրավոր օրինակներ կարելի յե բերել աշխատանքի բոլոր ճյուղերից, ապացուցանելու համար, վոր շատ դեպքերում չքավորությունն ե յեղել ստեղծագործության խթանը։ Այո, նյութական կարիքը հաճախ ստեղծագործ տաղանդի բնականոն զարգացման ու ծավալման դեմ հարուցանում ե խոչընդոտներ, այս ճիշտ ե, բայց բյուր անգամ ավելի դյուրին ե այդ խոչընդոտները խորտակել ու անցնել, քան հաղթահարել հարստության չարիքն, այն ե՝ մտավոր աշխատավորի մեղկությունը։ Միևնույն ճշմարտության հակառակ կողմն ե, վոր յերբ մի ստեղծագործող կարիք չունի իր և իր մերձավորների վաղվա ապրուստի մասին մտածելու, յերբ մանավանդ նա ունի ավելին—հարստություն, շատ անգամ թուլանում ե նրա աշխատասիրության ու յեռանդի ուժը, ուրեմն և ստեղծագործելու ճաշակը։

Յերբ յես հարվածում եյի Հ․ Ա.-նի անփութությունը և պղերգությունը, նա ինձ պատասխանում եր մոտավորապես այս խոսքերով․

— Ինչո՞ւ համար աշխատեմ, քանի վոր բաղդն ինձ հովանավորում ե, քանի վոր յես ունեմ կյանքի բոլոր բարիքները վայելելու հնարավորություն, շնորհիվ իմ հայրական ժառանգության․ Փառքի, համբավի, մարդկանց հիացման և յերախտագիտո՞ւթյան համար։ Իհարկե, հաճելի յե լինել հարգանքի ու յերկրպագության առարկա, բայց յես վստահ չեմ, վոր մի որ կարող եմ դառնալ Եդիսոն կամ Մարկոնի, ինչո՞ւ ուրեմն յերիտասարդ կյանքս մաշեմ լաբորատորիայում, ինչո՞ւ իմ ներկայի յերջանիկ ժամերը զոհաբերեմ ապագայի կասկածելի փառքին։

Ահա ինչու յես հավատացի նրա անկեղծությանը, յերբ ասաց․

— Յես ամաչում եմ իմ անցյալից։

Սորբոնի դասախոսությունները ինձնից չատ մեծ ժամանակ չեյին խլում—որական յերկու կամ յերկու ու կես ժամ։

Այն ել ասեմ, վոր յես չատ ել ճշտապահ ու ջանասեր ունկնդիր չեյի և հաճախ բավլոք եյի համարում տանը զբաղվել ընթերցանությամբ կամ անել ավելի հաճելին—շարունակել իմ սովորական թափառումները։

Այս անգամ գնում եյի Պարիզի ավելի հեռավոր շրջակայքը—Վերսայլ, Ֆոնտենբլո, Անգիեն։

Վերսայլը տուրիստներին գրավում եր Լուդովիկոս XIV-րդի փոսկեզօծ պալատով և իր զմայլելի պարտեզով, մանավանդ այն որերին, յերբ բաց են թողնվում հռչակավոր չատրվանների ջրերը։ Պալատին կցված ե մի հարուստ թանգարան, ուր կան, ի միջի այլոց, Ֆրանսիայի պատմությանը վերաբերյալ չատ նշանավոր նկարներ և արձաններ։ Մի անգամ յերբ դիտում եյի այդ թանգարանը, աչքիս ընկավ մի փոքրիկ կիսանդրի, վորի տակ փորագրված եր՝ «Լևոն վեցերորդ, Կիլիկիայի թագավոր»։ Յես կանգ առա ապշած․ կյանքումս այդ-չափ հակադեղարվեստական և այլանդակ գործ չեյի տեսել։ Զգիտեմ ինքը թագավորն ե յեղել այդ աստիճանի տգեղ, թե անչնորք անդրիագործի յերևակայությունն ե նրան այսպես տեղծագործել, համենայն դեպս միանգամայն իրավացի յեր քովս կանգնած այն ռուս աղջիկը, վոր հանկարծ բարձրաձայն արտասանեց․ Боже мой! как он похож на обезьяну…

Ֆոնտենբլոն հայտնի յեր իր սքանչելի անտառներով և Ֆրանսուա առաջինի պալատով, ուր 1814 թվականին Նապոլեոնը ստորագրեց իր պատմական հրաժարականը։

Անգիե՞նը։ Դա մի փոքրիկ քաղաք ե կամ, ճիշտն ասած, ավան, վոր չունի վոչ մի պատմական կամ ժամանակակից արժեք։ Սակայն այն ժամանակ այնտեղ կար մի բան, վոր Պարիզից չատ չատերին եր գրավում։ Դա մի փոքրիկ լճի վրա գրահակիր նավի ձևով կառուցված վոչ չքեղ և վոչ գեղեցիկ մի տուն եր։ Մի տուն, վոր չատ տներ եր քանդել և չատ կյանքեր անբաղդացրել։ Կարճ ասած, դա խաղատուն եր, ուր թույլատրված եյին ազարտ խաղեր բոլոր տեսակները և վորի մուտքը որինական ձևով ապահոված եր փոստիկանական խուզերից ու արշավներից։

Ես լսել եյի այդ տան մութ պատմությունը, բնական ե, վոր հետաքրքրվեցի նրանով։ Պատահեց այնպես՝, վոր յերկու կոլկասեցի ծանոթ տիկիններ ինձ առաջարկեցին ընկերանալ իրանց։ Նրանք չատ անգամ եյին այնտեղ յեղել իրենց բաղդը փորձելու համար և ամեն անգամ վորևե ծանոթ տղամարդի հետ։

— Գիտե՞ք,—ասացին նրանք,—առանց կավալերի ուղեկցության, մեզ համար ամոթալի յե խաղատուն մանելը։

Յերկուսն ել թե՛ ծագումով և թե ամուսնությամբ իշխանուհիներ եյին։ Մեկը հաղվադյուտ գեղեցկուհի յեր, թեև բավական թառամած։ Մյուսը գեր եր և վաղաժամ ճերմակած մազերով, բայց տակավին գրավիչ իր զարմանալի գեղեցիկ աչքերով և դեմքի թարմությամբ։

Յերբ մենք մտանք խաղատան առաջին սրահը, ուր տեղի ուներ Petits chevaux կոչված խաղը, յերբ ծանոթներիս հայացքն ընկավ կանաչ սեղանի վրա կրուպիեյի*) թևով այս ու այն կողմ փոխադրվող վոսկե լուիդորներին, նրանց աչքերը շողշողացին։ Իրարու յերեսին նայելով, միաժամանակ և լուռ բաց արին իրենց քսակները։

Յեվ սկսեցին խաղալ, լուիդոր լուիդորի յետևից ձգելով սեղանի վրա։

Յես մի կողմ քաշվեցի, վոր չխանգարեմ նրանց․ վաղուց գիտեյի, վոր խաղին չմասնակցողը ներվայնացնում ե մասնակցողին, յերբ կանգնում ե կամ նստում նրա քով, մանավանդ յերբ խորհուրդներ ե տալիս։ Բայց յես կարիք չունեյի մոտիկից դիտելու, արդեն հեռվից նրանց չարժումներից ու դեմքերի արտահայտու-

*) Խաղը ղեկավարող սպասավոր։ Ծ.

Թյունից կարելի յեր անսխալ գուշակել բաղդի խաղը: Վոչ մի գրության մեջ և վոչ վորևե պայմանում մարդն այնքան ճշգրիտ ուսումնասիրելի չէ, վորքան խաղի մեջ, մանավանդ յերբ խաղն ազարտ է: Այստեղ է, վոր նա անգիտակցաբար դրսևորում է իր բնավորության ամենաթաքուն գծերը: Տեսարանն առանձնապես հետաքրքրական է, յերբ խաղացողը կին է: Յես նկատել եմ, վոր խաղի ժամանակ այր մարդն անհամեմատ ավելի հանդուրժելի, ավելի համբերողամիտ և սառնարյուն է, քան կին մարդը: Տարվելու դեպքում կինը դառնում է դյուրագրգիռ, բծախնդիր, գրեթե կռվարար: Նրա դեմքի գծերը փոխվում են, քթի պնչերը լայնանում ու գողդողում, պարանոցի ջղերը կապտում են ու ձգվում լարերի պես, ձայնը հնչում է սուր, անախորժ: Նա օգտվում է խաղընկերների ամենաչնչին սխալից, վորպեսզի նրանց վերագրի իր բաղդի թշնամությունը: Տանելու ժամանակ նա մարմնացած կեղծիք է: Նա ուրախ է և ուզում է իր ուրախությամբ վարակել ուրիշներին էլ: Նա տեղի-անտեղի ծիծաղում է, քրքջում, նույնիսկ չողոքորթում է դիմացինին, և թվում է, վոր այդ պահին պատրաստ է ամենքի հետ գրկախառնվել...

Կես ժամ անցած իշխանուհիներն անհայտացան: Յես անցա հաջորդ սրահը: Այնտեղ նրանք նստած էյին թղթախաղի սեղանի քով և chemin de fer էյին խաղում: Նախաճաշի ժամանակ եր. հրավիրեցի, մերժեցին: Խաղը հափշտակել եր նրանց: Ստիպված եյի սպասել մի ամբողջ ժամ, թափառելով սրահից սրահ հուզված ու այլայլված ամբոխի մեջ: Վերջապես, նրանք յերևացին: Գունատ էյին ինչպես դիակ, դողում էյին սառցահարների պես: Հարցնելն ավելորդ եր. յերկուսն էլ տարվել էյին մինչև վերջին լուիդորը: Ինարկե, յես նրանց չկշտամբեցի և ի՞նչ իրավունքով այդ անեյի, սակայն այդպիսի դեպքերում կշտամբանքն այնքան ազդեցիկ չէ, վորքան լռությունը:

Ճերմակահեր իշխանուհին ասաց մյուսին:

— Այժմ յես ի՞նչ պիտի պատասխանեմ խեղճ Նորայիս, առավոտյան յես նրան խոստացա այսոր անպատճառ նրա համար նոր կոշիկներ ու գլխարկ գնել:

Նորան նրա տասներկու տարեկան աղջիկն եր—միակ զավակը:

— Ամուսինս գրում է, թե մայիսից առաջ չի կարող ինձ փող ուղարկել,—շարունակեց նա,—կնշանակե յերկու ամիս էլ պարտքով ապրիր. գոնե խելք ունենայի բնակարանիս տրիմեստրը[1]) վճարել, հետո խաղալ:

— Իսկ յես այժմ բացի ձմեռվա մուշտակիցս վոչինչ չունիմ Mont de piété [2]) տանելու,—դանդաղավեց թառամած գեղեցկուհին:—Յեղբայրս գրում է, վոր գյուղացիներն էլի ըմբոստացել են և չեն ուզում իրենց կապալավարձը վճարել:

Նրանք ավելի նողկանքի էյին արժանի, քան կարեկցության. նրանք վատնում էյին գյուղացու դառը քրտինքի վաստակը:

Մի շաբաթ անցած, մի առավոտ յես նրանց հանդիպեցի մեծ բուլվարների վրա: Շքեղ խանութներից մեկի առջև կանգնած, նրանք մոլոր հայացքով դիտում էյին ցուցափեղկի արդ ու զարդերը:

— Յերկրակից,—դարձավ ինձ ճերմակահեր իշխանուհին,—դուք ունիք շատ հարուստ ծանոթներ, միթե չե՞ք կարող համոզել նրանցից մեկին, վոր մեզ փոխարինաբար տա գոնե տասը հազար ֆրանկ: Տոկոսների մասին չենք սակարկիլ. վորքան պահանջի, կտանք:

— Յեթե այդ գումարն այսոր-վաղը չգտնենք,—ավելացրեց նախկին գեղեցկուհին,—ստիպված կլինենք վոճիր գործել:

Թե ինչ վոճիր—չասաց:

Յես, ինարկե, հրաժարվեցի այդ տեսակ միջնորդությունից, պատճառաբանելով, վոր իմ հարուստ ծանոթները բոլորն էլ վերին աստիճանի ժլատ են ու քարասիրտ: Յես միայն թույլ տվեցի ինձ ասել.

— Տիկիններ, վորքան ինձ հայտնի յե, յերկուսդ էլ ունիք այնչափ յեկամուտ, վոր կարող եք առանց փոխառության էլ ապրել ուր կամենաք...

— Ուր կամենաք, այո,—պատասխանեց նախկին գեղեցկուհին,—գուցե Ռուսիայում կամ Կովկասում, բայց վոչ Պարիզում:

— Ի՞նչու:

— Ահա ինչու,—ասացին միաձայն յերկուսն էլ, ցույց տալով շքեղազարդ ցուցափեղկի վրա ճաշակով դասավորված վերջին մոդայի գլխարկները և կանացի այլ ու այլ պճրանքներ...

---

1) Տրիմեստր—յեռամսյա վճար բնակարանի համար.

2) Դրամատուն, վոր շարժական գրավով փոխառություն է տալիս.

Ճ

— Յեվ դրա համա՞ր եյիք դուք փորձում ձեր բաղդը Անգլենի խաղատանը:

— Իհարկե:

— Բայց չէ՞ վոր, ինչպես ասում եք ինքներդ, մինչև այժմ մի զույգ ձեռնոցների փող չեք տարել, ինչո՞ւ յեք շարունակում խաղալ:

— Բաղդը փոփոխական է, այսոր չենք տանում, մի որ կարող ենք տանել:

— Կարող է պատահել,—շարունակեցի յես դիտմամբ, վորպեսզի ավելի մերձենամ նրանց մտայնությանը,—միայն ցավալի յե, վոր խաղացողի այդ սովորական հույսը շատ թանդ է նստում ձեզ վոչ միայն նյութապես, այլև բարոյապես:

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով,—գոչեց ճերմակահեր իշխանուհին:

— Այն, վոր ձեր ինքնասիրությունը տառապում է:

— Ի՞նչպես:

— Ինձ ասացին, վոր դուք յերեք որ սրանից առաջ դիմել եք մի բագվեցի նավթարդյունաբերողի, փոխառություն եք խնդրել, և նա մերժել է ձեզ:

Յերկու իշխանուհիները շփոթվեցին ու կարմրեցին:

— Այո, ճիշտ է,—ասացին նրանք, մի փոքր տատանվելուց հետո,—բայց ինչո՞ւ յեք կարծում, վոր մի նախկին խանութպանի, մի անկիրթ ռամիկի մի լիրբ բուրժուայի մերժումը մեզ կարող է վիրավորել: Մենք արհամարհում ենք այդ տեսակ մարդկանց:

— Ցանկալի յե գիտնալ, ձեր ամուսիններն էլ նույնը կասեյին, յեթե այդ անկիրթ ռամիկի, այդ նախկին մրգավաճառի մերժումը նրանք ստանային:

— Նրանք ավելին կանեյին,—գոչեց նախկին գեղեցկուհին,—գոնե իմ ամուսինը կթքեր լրբի յերեսին:

— Իսկ իմ ամուսինը,—ավելացրեց ճերմակահերը,—կապտակեր նրան, ինչպես մի անգամ ապտակեց մի հայանի վաճառականի, վոր համարձակվել էր նրա մուրհակը նոտարին հանձնելու:

— Թուքն ու ապտակը, հարգելի իշխանուհիներ,—ասացի յես, չկարողանալով զսպել իմ հեգնանքը,—ծայրահեղ վրդովմունքի ամենադյուրեկ արտահայտությունն է, իսկ արհամարհանքն արտահայտվում է լռությամբ և անտարբերությամբ: Ինձ շատ լավ հայտնի յե, հարգելի տիկիններ, վոր ազնվականությունն ատում է և թշնամաբար է վերաբերվում բուրժուազիային, բայց արհամարհանք յես չեմ տեսնում, վորովհետև արհամարհողը յերբեք չի դիմում արհամարհվածի ոգնությանը, այն ինչ յես դիտեմ հարյուրավոր դեպքեր, յերբ ազնվականի ավանդական և դասակարգային գոռոզությունը խոնարհվել է և խոնարհվում է խանութպանի դրեհկության առջև: Մի վրդովվեք, հարգելի իշխանուհիներ, յես ձեզ ամենևին չեմ մեղադրում, վոր ներկա նեղ դրության մեջ դիմել եք մի վաշխառուի ոգնությանը, դա մի հանցանք չի, միայն թե···

— Մենք ոգնություն չենք խնդրել,—ղայրացած ընդհատեց խոսքը ճերմակահեր իշխանուհին,—այլ փոխառություն:

— Մենք այդ անպիտանին առաջարկեցինք իբրև գրավական մեր կալվածքի մի մասը:

— Յեվ նա այնուամենայնիվ մերժե՞ց: Ներեցեք, այդ ինձ մի քիչ զարմացնում է:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև ազնվականության հողային կալվածքն այժմ կապիտալիզմի ամենահամեղ յուղապատառն է: Այդպես որինակ, Բագվի նավթարդյունաբերողների համար այժմ չկա ավելի հրապուրիչ յերազ, քան տիրանալ ազնվականության հողերին և վոմանք նրանցից արդեն տիրացել են: Ցանկալի յե գիտնալ այդ անպիտանն ինչո՞վ բացատրեց իր մերժումը:

— Նա ասում է, բերեք ձեր ամուսինների կողմից լիազորություն, հանձնեցեք ինձ ձեր կալվածային փաստաթղթերը, այն ժամանակ միայն ձեզ փող կտամ: Կարո՞ղ եք յերևակայել ինչ ավազակ է, համարձակվում է մեր ազնիվ խոսքին չհավատալ:

Յեվ պատկառելի տիկինները մի շարք վոչ այնքան փափուկ հիշոցներ ուղղելով բոլոր կապիտալիստների հասցեյին, մտան մեծ մագազիններից մեկը, համաձայն իրենց ամենորյա սովորության:

Պարիզի շքեղ խանութները մի տեսակ գայթակղության տաճարներ են կանանց համար: Կինը ինչ հասակի էլ լինի, կամքի անսովոր զորություն պիտի ունենա, վորպեսզի անտարբեր անցնի մի պճնազարդ վիտրինայի առջևով, մանավանդ, յերբ նա Rue de la Paix -ի, համայն աշխարհին տոն ու ճաշակ տվող այդ փոքրիկ փողոցի վրա յե: Յես ինքս, կին չլինելով, քանի-քանի անգամ կանգ եմ առել և րոպեներով հիացել կանանց արդուզարդի ու գե-

ղեցկության համար շռայլված մեկը մյուսից հրապուրիչ արվեստներով և քանի անգամ լսել եմ նայող կանանց հառաչանքները, վորպես վիշտ, վոր չեն կարող գնել իրանց հավանածը:

Ունիվերսալ մագազիններում առավոտից մինչև յերեկո պտտող հարյուր հազարավոր բազմության մեջ կան շատ շատերը, վոր գնողներ չեն: Նրանք յեկել են իրանց կանացի հետաքրքրության հագուրդ տալու համար: Բաժանմունքից բաժանմունք անցնելով և բոլոր հարկերը բարձրանալով, նրանք վերցնում են գեղեցիկ իրերը, տնտղում են, փորձում են ամրությունը, նայում են գնին և յետ դնում, միշտ հառաչելով, միշտ անիծելով իրանց քսակի անզորությունը: Յերբեմն հմայքը մթագնում է մեկի կամ մյուսի ուղեղը, և ահա գայթակղությունը պաշարեց թշվառին: Կան անուղղելի գողեր, վորոնց հանցանքը համարվում է հիվանդություն: Կլեպտոմանիա յե այդ հիվանդության անունը: Զարմանալի յե, վոր նրանով վարակված են գլխավորապես կանայք և այն էլ՝ բուրժուա դասակարգից: Որենքն ավելի ներողամտաբար է վերաբերվում այդ «հիվանդներին»: Այրերը գիտեն իրենց կանանց այդ թուլությունը և շատ անգամ նրանք, վորոնք հարուստ են, հրապարակորեն չխայտառակվելու համար, զգուշացնում են խանութատերերին:

— Բարեկամ, իմ կինը հիվանդ է, հիշողությունը թույլ է, կարող է հանկարծ մոռացմամբ մի բան վերցնել ու թաքցնել, բարի յեղեք չհիշեցնել նրան այդ անմեղ սխալը, հաշիվն ուղարկեցեք ինձ, յես արժեքը կվճարեմ:

Յեվ վճարում է. ինչ փույթ, վոր «սխալմամբ» գողացված իրը յերբեմն վոչ մի բանի պետք չե:*)

Մեծ մագազիններում ապրանքները թափված են խուրձերով ու բլուրներով, ինչպես ցորենն ու գարին մեզ մոտ: Թվում է, վոր վոչ վոք չի հսկում նրանց, և յուրաքանչյուր անցորդ իր հավանած իրը կարող է վերցնել ու դնել գրպանը: Թվում է, բայց այդպես չե: Կան հատուկ նշանակված գործակալներ, վորոնց պաշտոնն է Արգոսի աչքերով հետևել հաճախորդներին, և այնպես, վոր վոչ վոք

*) Վերջերս մի քանի հոգեբույժներ ապացուցանում են, վոր կլեպտոմանները հիվանդներ չեն, այլ սովորական գողեր: Յեթե դա լիներ հիվանդություն, հիվանդն ուշքի գալով, գողացած իրը կվերադարձներ տիրոջը: Մինչդեռ մինչև այժմ դեռ վոչ մի կլեպտոման այդ չի արել: Շ.

չզգա կամ չնշմարի նրանց ներկայությունը: Յերբ գողությունը կատարվում է, գործակալն իսկույն ևեթ չի բռնում գողին, այլ թույլ է տալիս նրան դուրս գալ խանութից, անցնել մի կամ յերկու փողոց, և հետևելով նրան, հանկարծ մոտենում է ու գլխարկը վերցնելով քաղաքավարի ձևով ասում է.

— Տիկին, կարծեմ, դուք մի փոքր առաջ «Գալըրի Լաֆայետ»-ումն եյիք, ճի՞շտ է:

— Այո՛:

— Բարեհաճեցեք հետևել ինձ: Դիրեկտորը հրավիրում է ձեզ իր գրասենյակը:

Յեթե տիկինը կամ որիորդը համառի, առաջին պատահած վոստիկանական գործակալի տրամադրության տակ է:

Դիրեկտորի գրասենյակում գողին խուզարկում են, անմիջապես ձերբակալում են ու դատարանին հանձնում: Պատիժը սովորաբար լինում է մի քանի որվա կամ շաբաթվա բանտարկություն և չորս հինգ հարյուր ֆրանկի տուգանք:

Այդպիսի դժբախտություն իմ ժամանակ պատահեց մեր յերկրացիներից յերեքի հետ: Մեկը պատկառելի տարիքով մի տիկին եր բուրժուա ընտանիքից: Մյուս յերկուսը քույրեր եյին, ինտելիգենտ հոր զավակներ, վոր Պարիզ եյին յեկել կրթություն ստանալու: Տիկինը գողացել եր մի վոսկե ժամացույց, իսկ քույր որիորդները յերկուական մետաքսյա կանացի շապիկներ: Որիորդների համար տուգանք վճարեց և յերաշխավորությամբ նրանց բանտից ազատեց մի բարեսիրտ ֆրանսուհի, իսկ տիկնոջը դատարանում հաջողությամբ պաշտպանեց մի հայ աղջիկ, վոր նոր եր ավարտել Պարիզի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այն էլ ասեմ, վոր այդ տաղանդավոր աղջիկը յեղավ յերկրորդ կին-փաստաբանը ամբողջ Ֆրանսիայում, մի լեհուհի որիորդից հետո: Դժբախտաբար շուտով նա վախճանվեց թոքախտից: Նա Թիֆլիսից եր, մի համեստ ընտանիքի զավակ...

XII

ՊԱՐԻԶԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ: ՀԻՆԸ ՅԵՎ ՆՈՐԸ: ԱՆԴՐԱՆԻԿԸ: ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱԲԸ

Այն տարիները (1905—1910 *թ. թ.*), *վորոնց վերաբերվում են իմ հիշողությունների ներկա մասը, Պարիզի հայ գաղութն այնքան ստվար և այնքան խայտաբղետ չէր, վորքան այժմ, իմպերիալիստական պատերազմից հետո: Այժմյան գաղութը վոչ միայն իր խոշոր քանակով է տարբերվում անցյալի գաղութից, այլ և բնույթագրով: Յես իր ժամանակին կաշխատեմ տալ նրա նկարագիրը, իսկ առայժմ մի քանի խոսք անցյալի մասին:*

Հայտնի յե, վոր դարերից ի վեր հայ գաղթականության, մանավանդ, հին ու հեռավոր գաղթականության (*Հնդկաստան, Յեգիպտոս, Յեվրոպա*) *կարապետը վաճառական տարրն է յեղել, և ոտարները նրա բարոյական նկարագրով են գաղափար կազմել հայ ժողովրդի վարք ու բարքերի, հոգեկան կարողությունների ու մտավոր ձգտումների վերաբերմամբ: Այդ մասին յես իմ գրական գործունեյության ընթացքում գրել եմ մեկից ավելի անգամ, ուստի այստեղ ավելորդ եմ համարում ասածներս կրկնել:*

Պարիզի նախապատերազմյան հայ գաղութը բաղկացած եր յերեք տարրերից—վաճառականներից, ուսանողներից և արհեստավորներից, վորոնց թիվումն են հաշվում և արվեստագետներին:

Յես միանգամայն ծիծաղելի աշխարհայեցողության արդյունք եմ համարում այն ընդհանրացած կարծիքը, թե հայ վաճառականությունը հեռավոր յերկրներում կուլտուրական դեր է կատարել: Խնդիրն այն է, թե ով ինչպես է ըմբռնում կուլտուրա ասված բանը: Յեթե մի վայրկյան հաշտվենք այն տղայական կարծիքի հետ, թե մի մատուռ կառուցանելը, մի տպարան բանալը, մի քանի կրոնական կամ վաճառականական բովանդակությամբ գրքեր հրատարակելը կուլտուրական գործ է, ի՞նչպես կարող ենք մոռանալ այն ծանր ու տխուր հակակշիռը, թե ոտարները հայ ժողովրդի բարոյական պատկերի մասին այնքան վատ և մեզ համար վերին աստիճանի վիրավորական գաղափար են կազմել միայն և միմիայն վաճառականության շնորհիվ: Այդ մասին յես ունեմ հարյուրավոր ապացույցներ և որինակներ, վորոնք կարող են մի ամբողջ հատորի

նյութ դառնալ: Այստեղ յես կբավականանամ միայն մի նորագույն փաստով, վոր ինքնըստինքյան ավելի քան բնորոշ է: Դեպքը տեղի ունեցավ սրանից ընդամենը հինգ–վեց տարի առաջ Հյուսիսային Ամերիկայում: Մի ինչ վոր հայ գորգավաճառ, վորի անունը դըժբախտաբար մոռացել եմ, մի ամերիկյան դատավորի յեղբորը վաճառում է խաբեբա գներով մի քանի գորգեր: Յերբ խաբեբայությունը բացվում է և ամերիկացին ուզում է գորգերը, յերկու կողմերից ընդունված պայմանով, այն է 25 *տոկոսի զիջումով վերադարձնել վաճառողին, հայ վաճառականի ախորժակը բորբոքվում է և նա մերժում է ապրանքը յետ ընդունել, չբավականանալով* 25 *տոկոս շահով: Ամերիկացին առժամանակ լռում է: Գալիս է մի օր, յերբ հայ վաճառականը պարտավոր է վերցնել ինչ–վոր առևտրական վկայագիր, կառավարությունը մերժում է տալ նրան այդ վկայագիրը, այլ խոսքով ասած՝ զրկում է նրան առևտրականի իրավունքից: Գործը դրանով չի վերջանում, հարց է ծագում, արդյոք հայերն առհասարակ ունե՞ն իրավունք առևտրով պարապելու կամ Ամերիկայում ապրելու, այլ խոսքով ասած, նրանք ճերմակ ցեղ են, թե՞ սևամորթ: Հարցը դրվում է պարբերական մամուլի մեջ: Յեվ ահա Ամերիկայի հայ վաճառականները հարկադրվում են իրենց քսակները լայն բանալ՝ հայտնի գիտնականներ, փաստաբաններ, նույնիսկ պատմաբաններ վարձելու, վոր ապացուցանեն, թե հայերը սևամորթներ կամ կարմրամորթներ չեն: Յեթե այդ զարմանալի ճշմարտությունը չապացուցվեր, ամերիկյան ամբողջ հայությունը, վորի* 95 *տոկոսը բանվորներ են, պետք է հալածանքի յենթարկվեր կամ վտարվեր Ամերիկայից:*

Ա՞յս է արդյոք հայ վաճառականության կուլտուրական դերը ոտար յերկրներում, թե՞ այն վողորմելի դրոշները, վոր նա մերթ ընդ մերթ զոհում է այս ու այն «ազգային» կամ «հասարակական» նպատակով, այն էլ իր կաշին փրկելու համար:

Պարիզի հայ գոհարավաճառները և հնավաճառները (antiquaire) *իրենց բարոյական նկարագրով գրեթե նույնն են, ինչ–վոր Ամերիկայի գորգավաճառները կամ առհասարակ բոլոր վաճառականները—«կոպեկը առանց միջոցների խտրության»: Կա մի թեթև տարբերություն հների և նորերի մեջ, այն էլ չգիտեմ հոգուտ վո՞ր կողմի: Հին սերնդի վաճառականը տակավին կրոնասեր է, աստվածավախ և դեռ չի դադարել մտածել իր «հոգու փրկության» մասին: Նա ամեն կիրակի յեկեղեցի յե գնում, մոմ է վառում, աղոթում է, «յերկնային դատավորից» թողություն է աղերսում չա-*

քաղթվա ընթացքում իր գործած յերևելի ու գաղտնի մեղքերի համար: Զատիկ և Ջրօրհնեք օրերին նա չի մերժում օրհնություն բաժանող սքեմավորին իր տանն ընդունել և «աջահամբույր» տալ: Յերբեմն նա յեկեղեցուն էլ է մի բան նվիրում, մի արծաթե սկիհ, մի մոմկալ, մի գորգ կամ դրանց նման մի իր, բայց պայմանով, վոր պատարագիչ քահանան իր կիրակնօրյա քարոզում բարձրաձայն հիշատակե այդ մասին «ի դիտութիւն հայ քրիստոնեյից հավատացելոց»: Իհարկե, նա այդ պայմանը պարտավորական չի համարում, բայց պատարագիչը շատ լավ է ուսումնասիրել նրա հոգեբանությունը և գիտե, վոր յեթե չհիշատակի, չփառաբանի «ազնվազարմ» նվիրատվի «առատաձեռնությունը», չափազանց կվիրավորե նվիրատվին և կզրկվի նրա հովանավորությունից: Հայ քահանան հայ վաճառականի կամակատար գործակալն է, հայ վաճառականը հայ քահանայի կթան կովն է: Հոգեբանական տեսակետից նրանք Սիամի զույգ են, միասին ծնվել են և միասին էլ մեռնելու յեն:

Մի անգամ յես մի բան տեսա Պարիզի յեկեղեցում, վորի նմանը մինչև այդ օրը չեյի տեսել վոչ մի տեղ: Պատարագը վերջացել եր, բայց ժամավորները չեյին ցրվում: Յեկեղեցում մեռել չկար, հետաքրքրվեցի գիտնալ ի՞նչ արտակարգ կարգի բան է պատահել:

— Միթե չգիտե՞ք,—պատասխանեց իմ հարցին ամենայն լրջությամբ մի նորաձև հագնված յերիտասարդ զարմացած,—այսօր տոնվում է Մ...խան... Ն...—ի ծննդյան յոթանասնամյակը:

— Ո՞վ է այդ Ն...ն:

— Մի հայտնի գոհարավաճառ, պարսկահպատակ,—ահա տեսնո՞ւմ եք, այն բարձրահասակ ծերունին է:

Յեվ նա ցույց տվեց ինձ օրվա հերոսին, վորը կանգնած եր իր կնոջ հետ բարեկամներով շրջապատված, կեղծ համեստության ժպիտը յերեսին: Մարդը հոբելյար եր:

— Բայց ի՞նչ կապ ունի այդ մարդու ծննդյան տարեդարձը յեկեղեցու հետ:

— Ի՞նչպես չե, հարուստ է:

— Հետո՞:

— Պահանջել է, վոր յեպիսկոպոսը հանդիսավոր մաղթանք կատարե իր կյանքի հարատևության համար:

«Նա հարուստ է», ահա մի մոգական բառ, վոր առանձին շեշտով ու զգացմամբ է արտասանում գաղթական հայը:

Մաղթանքը կատարվեց, յեպիսկոպոսը դրվատեց գոհարավաճառի քրիստոնեական ջերմեռանդությունը, «մարդկային ու ազգային» առաքինությունները: Հանդիսականներն, իրարու հրելով ու բոթելով, շտապեցին շնորհավորել օրվա հերոսին և հետո գնացին նրա ճաշկերույթը վայելելու:

Պատահում է, վոր այս կամ այն գոհարավաճառը կամ հնավաճառը հանկարծ ժամանակակից «ջենտլմենություն» է անում, մեկ էլ տեսար խելքին փչեց, վերցրեց իր կամ կնոջ անունից կանանց աղքատախնամ կամ կրթական ընկերությանը ուղարկեց մի գումար վորպես նվեր: Ընկերության վարչությունը շտապում է այդ մասին շնորհակալությամբ ազդարարել ռամկավար, դաշնակցական կամ հնչակյան վորևե լրագրում, և խմբագրությունն էլ չի վարանում իր գովասանական խոսքը պարգևել նվիրատվին: Իհարկե, «ազգային» կոչված «գործիչները» չեն մոռանում մերթ ընդ մերթ անհանգստացնել այն ամենքին, վորոնց քսակը վորոշ ծանրություն ունի, գալիս են յերեք-չորս հոգով և դրամ աղերսում այս կամ այն «ազգօգուտ» գործի համար: Այդ ժամանակ «բարեգործի» առանց այդ էլ մռայլ դեմքը մթագնում է, հոնքերը կիտվում են, և նա սկսում է քննադատել ու պարսավել, անպատճառ պարսավել «ազգային գործերն ու գործիչներին», ցույց տալու համար, թե ինքն էլ մի բան գիտե և թող դիմողները չկարծեն, թե մի տգետի կամ մի ախմարի մոտ են յեկել: Հետո նա գանգատվում է, թե վերջին ժամանակներն առևտուրն ընկել է, «կրիզ է» և այլն և այլն: Բայց ազգային գործիչները շատ լավ են ճանաչում նրան, գիտեն, վոր մարդը ստում է, և նրա օձիքը բաց չեն թողնում մինչև վոր մի բան կորզեն: Յեվ կորզում են:

Հին սերունդը, հավատալով «հանդերձյալ աշխարհի» գոյությանը և նրա «ահեղ դատաստանին», զգում է իր մեղքերը և յերբեմն այն աստիճան, վոր անձնական ապաշխարանքն ու աղոթքները քիչ է համարում իր մեղավոր հոգու փրկության համար և ահա մահվան անկողնում նրա աչքերի առջև ցցվում է Բեհեղեբուղի ահեղ կերպարանքը: Սարսափը պաշարում է նրան: Ի՞նչ անի, վոր հանգիստ փչի իր հոգին: Միջոցը միևնույնն է և միակն ամենուրեք, նախահայրերից ավանդված և սրբագործված—կաշառել աստծուն: Յեվ նա կաշառում է, հազար ու մի զրկողություններով, անեծքներով, թուք ու մրով վաստակած հարստության մի մասը կտակելով մի վորևե բարեգործական նպատակով կամ վորևե յեկեղեցու: Թող սերնդե-սերունդ հիշատակվի նրա անունը, թող մանավանդ յեկեղեցում օրհնվի ու փառաբանվի, գուցե դրանով նրա հոգին ազատվի տարտարոսի տանջանքներից: Յեվ

չգիտեմ, ազատվում է նրա հոգին թե չէ, գիտեմ, վոր նրա անունը դրոշմվում է յեկեղեցու ճակատին:

Այդպես է հին սերնդի վաճառականը: Նա ունի և մի ուրիշ հատկություն, վոչ պակաս բնորոշ: Ընտանեկան կյանքում նա, ինհարկե, բռնակալ է, բայց վոչ իր հոր կամ պապի չափ պարզ, համարձակ: Թող նա լինի ծայր աստիճան կամակոր ու պնդագլուխ, բայց չէ՞ վոր նա ապրում է յեվրոպական միջավայրում, այն էլ Պարիզում: Չէ՞ վոր իր հոր կամ պապի փափախի կամ ֆեսի փոխարեն գլխին ցիլինդր է դրել, չէ՞ վոր վորոշ չափով պիտի յենթարկվե միջավայրի բարք ու վարքերին: Ի՞նչ կմտածի ֆրանսուհի խոհարարուհին կամ նաժիշտը, յեթե նա բռնցքը բարձրացնե իր կնոջ ու զավակների գլխին, կամ գոռա նրանց վրա արևելյան կոպտությամբ և հայհոյե զզվելի վորակումներով, չէ՞ վոր կարող է դառնալ և՛ ծաղրելի, և՛ զզվելի: Բայց և այնպես նա անզոր է տակավին իր մեջ վերջնապես մեռցնելու պապերից ժառանգած վայրենի բնազդը, և ահա նա իր մազիկները փաթաթում է թալչով: Նա չի ծեծում, բայց նախատում է, չի հայհոյում, բայց անիծում է, պահելով նրան հավիտենական ահ ու սարսափի մեջ:

Սխալ է ասել, թե իր ընտանիքի վերաբերմամբ նա ժլատ է, ընդհակառակը, նրա առատաձեռնությունը յերբեմն զարմացնում է միամիտներին, վորոնք չգիտեն իրերի խորքը թափանցել: Նա թույլ է տալիս իր կնոջը զուգվել և զարդարվել վերջին մոդայով, սեփական ավտոմոբիլ ունենալ, թատրոններ ու օպերաներ հաճախել, ձիարշավներ գնալ, կուրորտներ այցելել և այլն: Այդպես է պահանջում միլիոնատիրոջ վարքն ու համբավը, այդպես է պահանջում մարդկանց ստորագույն բնազդը—նախանձը: Առհասարակ նախանձ շարժելը նրա բարձրագույն հաճույքն է: Նա հրճվում է, տեսնելով թույլերի և անաջողների անզոր չկամությունը:

Յես մի քանի անգամ ներկա յեմ յեղել, այսպես կոչված, հայկական տարեկան պարահանդեսներին: Ամենից շքեղ համարվում է «Հայուհյաց ընկերության» յերեկույթը: Արդարև, շքեղ բայց վոչ իր ներքին բովանդակությամբ, կամ յերեկույթ կազմակերպողների արտիստական հնարագիտությամբ և ճաշակով, այլ իր արտաքին շռայլությամբ, ուզում եմ ասել խանութպանային շուքով: Վոչ մի տեղ այնքան մեծարժեք ադամանդներ և զանազան գունավոր գոհարներ չեք տեսնի, վորքան այդ յերեկույթներում: Պատճառը պարզ է—ներկա յեն խոշոր ու մանր գոհարավաճառների կանայք ու աղջիկները, վորոնցից յուրաքանչյուրը մի-մի գոհա-

րեղենի խանութային ցուցափեղկ է: Նման ցուցափեղկեր յես Բաղվի մի ժամանակվա յերեկույթներումն էլ եմ տեսել, միայն մի տարբերությամբ. այնտեղ կանայք գոհարները դուրս եյին բերում իրենց շիֆոնիերկաներից, իսկ այստեղ իրենց ամուսինների կամ հայրերի խանութներից: Սակայն թե այնտեղ և թե այստեղ մարդ չգիտեր, վորն է ավելի ծիծաղելի, ճաշակի կատարյալ գռեհկությունը, թե մեշչանական ցուցամոլությունը:

Մի փոքր այլ պատկեր է ներկայացնում նոր սերունդը: Նա արդեն բավականաչափ յուրացրել է ֆրանսիական բարք ու վարքերի արտաքինը: Ասում եմ արտաքինը, վասն զի անհնարին է մի անգամից ազատվել ատավիզմի օրենքներից: Ճշմարիտ է, նա ամեն կերպ աշխատում է ցույց տալ իր, այսպես ասած, յեվրոպականությունը, ուզում եմ ասել կուլտուրականությունը, ստեպ-ստեպ կրկնում է առաջնակարգ թատրոնների անունները, այցելում է գեղարվեստական սալոնները, հոլովում է նշանավոր նկարիչների ու արձանագործների անունները, խոսում է նույնիսկ յերաժշտությունից ու գրականությունից, բայց այդ բոլորի տակ դիտող աչքից չի վրիպում հոգեկան խեղճությունը կամ ամայությունը: Նոր սերունդը նույնչափ ցուցամոլ է, վորչափ հինը, գուցե մի քիչ էլ ավելի: Յեթե հինը կարող էր պարծենալ իր ադամանդներով, իր առերես համեստությամբ, կասկածելի բարեգործությամբ, նորը հպարտ է իր ավտոմոբիլով, իր վիլլայով, հայտնի կուրորտների այցելությամբ, յերբեմն վորսորդությամբ և մանավանդ իր օտարազգի կապերով կամ ծանոթություններով. վերջին դեպքում նա հրճվանքով հիշում է զանազան մարքիզների, դուքսերի, հուչակավոր դերասանուհիների, յերգիչ ու յերգչուհիների, պարուհիների, մոդային գրիգետկաների անունները: Յես ծանոթ եյի մի մարգարտավաճառի հետ, վոր այդ տեսակետից ամենատիպիկն էր, թեև մի քիչ կարիկատուրային: Նա իր հյուրերի ներկայությամբ ժամանակ առ ժամանակ վերցնում էր հեռախոսի փողը, վորևե համար էր ասում և արտասանում. «ալո, ալո, այդ դո՞ւք եք իմ թանգագին բարեկամ, լսեցեք» և այլն: Յեվ, փողը բերնից մի վայրկյան հեռացնելով, դառնում էր իր հյուրերին. «արտաքին գործոց մինիստրի օգնականն է» կամ «Հոլլանդայի դեսպանն է» և այլն և այլն: Այդ մարգարտավաճառի մասին ինձնից ավելի մոտիկ ճանաչողներն ասում եյին. «մի հավատաք, սուտ է այդ բոլորը, տելեֆոնի մոտ վոչ վոք չկա»:

Ուսանողների մասին յերկար խոսելու նյութ չունեմ: Թվով նրանք այնքան փոքր էյին և այնպես իրարուց բաժանված, վոր չեմ կարող ասել, թե վորևե հասարակական արժեք էյին ներկայացնում: Մեծամասնությունը թյուրքահայեր էյին և ռուսահայերի վերաբերմամբ իրենց չափազանց ղուսպ էյին պահում: Իրենց կողմից ռուսահայ ուսանողներն էլ մի առանձին հակում չունեյին դեպի թյուրքահայ ուսանողները, և առհասարակ յերկու տարրերի մեջ զգացվում եր սառնություն: Նույնանման սառնություն չեր նկատվում ռուսահայ և վրացի ուսանողների մեջ. ընդհակառակը, նրանք աշխատում էյին իրարու մերձանալ և կազմել վորևե միություն: Այս նպատակով, մի քանի յեռանդուն անձանց ջանքերով կազմվեց «Կովկասյան» անունով ընկերության պես մի բան, վոր դժբախտաբար շատ կարճ կյանք ունեցավ, այն է մեկ թե յերկու շատ անշուք կովկասյան յերեկույթ տալուց և ընդամենը մեկ ու կես տարի մի աղքատիկ ընթերցարան պահելուց հետո, քայքայվեց:

Նման անջատություն տիրում եր և՛ փոքրաթիվ արհեստավորների ու արվեստագետների մեջ: Թե՛ մեկ և թե՛ մյուս տարրի անձինք զբաղված էյին յուրաքանչյուրն իր գլխի հոգսով. չկար վորևե արհեստակցական գիտակցություն կամ նույնիսկ իրարու բարոյապես աջակցելու փոխադարձ ձգտում կամ ցանկություն: Կային քիչ թե շատ շնորքով նկարիչներ, արձանագործներ, յերգիչներ, բայց խոշոր տաղանդներ տակավին բացակայում էյին, բացի ոֆորտիստ Եդգար Շահենից, վոր սակայն վաղուց գերազանցել եր, այսպես ասած, հայկական մասշտաբը, ուզում եմ ասել, գրեթե համաշխարհային անուն եր վաստակել: Այժմյան տաղանդավոր արձանագործ Գյուժանը, վոր այն ժամանակ Հակոբ Գյուրջյան եր, տակավին աշակերտ եր և չափազանց վոգևորված Օգյուստ Ռոդենով, թեև նրա մի շարք գործերը, վորոնց թվում և իմ դստեր Մարգարիտի կիսարձանն արդեն ընդունվել էյին յերկու սալոններում և արժանացել էյին մամուլի ու այցելուների ուշադրությանը: Կային յերկու խոշոր ապագա խոստացող յերգիչներ, Մուղինյան, վոր շուշեցի յեր և Շահմուրադյան, վոր մշեցի յեր: Յերկուսն էլ սքանչելի տենորներ էյին, Շահմուրադյանը դրամատիկ, Մուղինյանը՝ լիրիկ: Առաջինն կոնսերվատորիան ավարտեց փառավոր քննությամբ, սակայն չգիտեմ ինչու կարողացավ միայն մի սեզոն յերգել մեծ օպերայում, այնուհետև սկսեց թափառել վորպես կոնցերտանտ և այժմ էլ թափառում է Պարիզից մինչև Յեգիպտոս,

Ամերիկա և Կալիֆորնիա, իսկ Մուղինյանը կոնսերվատորիան չավարտած, թոքախտից վախճանվեց:

Խոսելով Պարիզի այն ժամանակվա հայ գաղութի մասին, յես չեմ կարող մոռացության տալ իմ այն հայրենակիցներին, վորոնք ժամանակավոր այցելուներ էյին, գալիս էյին մեկ կամ մի քանի ամսով վորպես ճամբորդներ կամ գործավորներ: Այդ տեսակետից առաջին տեղն էյին գրավում դարձյալ, այսպես վորակված, ազգային գործիչները, ուզում եմ ասել դաշնակցականները, հնչակյաններ և այլ կուսակցականներ, մանավանդ առաջինները: Դրանց համար Պարիզը Ժնևից հետո յերկրորդ ուխտատեղին եր: Յուրաքանչյուրն ուզում եր անձամբ բաղխել Ժոռեսի կամ Պրեսանսեյի դռները, մի բան, վոր նրանց աչքում հավասար եր բարձրագույն քաղաքական գործունեյության:

Հիշում եմ 1907—1908 թվականները, մանավանդ Թյուրքիայի հեղափոխության նախօրյակը, հեղափոխության օրերը և հետհեղափոխության ամիսները: Դաշնակցականների և հնչակյանների շարքերում տիրում եր մի արտասովոր իրարանցում: Թվում եր, վոր այդ մարդիկ ինչ վոր խոշոր գործ են կատարում, կամ յերևակայում են, թե կատարում են: Հաճախ աչքի էյին ընկնում Ավետիք Ահարոնյանը, Խաչատուր Մալումյանը, Միքայել Հովհաննիսյանը և մի շարք ուրիշները, վորոնց չեյի ճանաչում: Հիշում եմ մի օր, նստած էյի Մինաս Ջերազի հետ «Սուֆլե» սրճարանի վարի հարկում: Հանկարծ աղմկալի խռովկությամբ ներս խուժեցին մի քանի դաշնակցականներ, վորոնց թվումն եր և Խաչատուր Մալումյանը: Նրանց հետ եր և հայտնի Թուրք հեղափոխական Ահմեդ Ռիզան: Նրանք շտապ քայլերով բարձրացան սրճարանի վերին հարկը և այնտեղ փակվեցին մի առանձին սենյակում:

— Յեկել են Թյուրքիայի ճակատագիրը վորոշելու, — ասաց Մինաս Ջերազը կծու հեգնությամբ:

Խե՛ղճ մարդ: Յես նկատեցի, վոր նա իր հոգու խորքում վիրավորված և վշտացած է, վոր ինքը մոռացության է արված այդ մարդկանց կողմից:

Ճիշտ այդ օրերին եր, վոր մի անգամ նույն սրճարանում ինձ մոտեցավ մոտ քառասուն ու հինգ տարեկան մի սևահեր տղամարդ հաստ բեղերով, առնական, կարող եմ ասել, գեղեցիկ դեմքով ու թուրքահայ բարբառով հարցրեց.

— Դուք պարոն Շիրվանզադե՞ն եք:

— Այո,—պատասխանեցի յես:

— Թույլ տվեք ծանոթանալ—Անդրանիկ:

— Մեր անվանի հերո՞սը,—հարցրի յես ամենայն լրջությամբ:

— Ա՛հ, վաղ անցեք,—գոչեց Անդրանիկն առանց կեղծ համեստության,—յես մի պարզ մահկանացու յեմ:

Այսպես թե այնպես, յես ուրախ եյի ծանոթանալ այն մարդու հետ, վորի մասին այնքան լսել եյի ու կարդացել: Ապագայում յես անախորժություն ունեցա այդ մարդու հետ ընդհարվելու, իմ մի սխալ հասկացված դարձվածքի պատճառով: Այդ մասին յես կխոսեմ առանձին, յերբ ժամանակը կգա:

— Ի՞նչով կարող եմ ծառայել ձեզ, պարոն Անդրանիկ,—հարցրի յես, հրավիրելով նրան մի բաժակ սուրճի:

— Ծառայության խնդիր չկա,—ասաց նա,—յես կփափագեյի միայն, վոր դուք վորպես մեկն իմ հայտնի հայրենակիցներից, լսեյիք իմ գանգատը Դաշնակցության դեմ: Յես չափազանց վրդովված եմ:

— Ի՞նչ ե պատահել,—հետաքրքրվեցի յես խորապես, վորովհետև մինչև այդ յես Անդրանիկին համարում եյի մոլեռանդ դաշնակցական:

— Մի զարհուրելի տմարդություն, մի զզվելի ապերախտություն, չգիտեմ ինչպես վորակել,—գոչեց նա, իր յերկաթյա բռունցքը զարնելով մարմարյա սեղանին այնպես ուժգին, վոր իր սուրճի դատարկ գավաթը վար ընկավ և փշրվեց:

Նա բացատրեց: Պարզվեց, վոր Դաշնակցությունը նրան Պարիզ ե ուղարկել հարյուր հրացան գնելու, տալով նրան մի զինագործարանի հասցեն: Անդրանիկն այդ գործարանի հրացանները չի հավանել և ընտրել ե մի ուրիշ գործարան և նրանից ե գնել հրացաններ, կանխավ վորոշված արժեքից մի քիչ ավելի ծախսելով: Այժմ Դաշնակցության Ժնևի բյուրոն մերժում ե տալ նրան գների տարբերությունը, և մարդն ընկել ե նեղ դրության մեջ:

— Բայց գլխավորն այդ չե,—շարունակեց Անդրանիկն, ավելի ու ավելի հուզվելով:—Փույթ չե, վոր այսոր յես նույնիսկ հյուրանոցին վճարելու միջոց չունեմ, փույթ չե, վոր սխալված յեղա դիմել Վռամշապուհ քահանայի օգնությանը: Խնդիրն այլ ե և ավելի կարևոր:

Նա պատմեց, վոր ինքը յեղել ե մի հասարակ արհեստավոր—տոկար, (այսպես ել ասաց—տոկար), սիրել ե իր հայրենիքը, տառապել ե թյուրաքահայ ժողովրդի տառապանքներով, զգացել ե, վոր մի բանով պետք ե նրան օգտակար լինել, բայց չի գիտցել ինչպես: Ինքն իրանց հեղափոխական «հորջորջողները» մի որ նրան համոզել են ապստամբվել թյուրք կառավարության դեմ և զենք բարձրացնել: Յեվ նա ապստամբվել ե, ժողովելով իր շուրջը մի խումբ անձնվերներ:

— Իհարկե, յես խենթ ու խելառ չեյի, վոր չգիտենայի, թե հայ ազգն իր բոլոր ուժերով ու կարողությամբ չի կրնար տապալել Սուլթան Համիդին հզոր կայսրությունը,—ավելացրեց Անդրանիկը դառն հեգնությամբ,—բայց դաշնակցականներն ինձ հավատացրել եյին, թե յեվրոպական պետությունները, տեսնելով մեր ազատագրական շարժումը, կշտապեն մեզ օգնելու: Այս տեսակետից առանձին ջանքեր եյին գործադրում մանավանդ Ժընևում պատըսպարված շեֆերը: Նրանք շարունակ թելադրում եյին ինձ կռվել, կոտորել, աղմկել, կրկնելով՝ «մեր ազգի փրկությունը մոտենում ե, մի հուսահատվիր»: Յեվ յես կռվում եյի, կոտորում, սակայն, ավա՜ղ, յեթե յես մի տեղ կոտորում եյի մի քանի տասնյակ ժանդարմներ, անդին, մի ուրիշ տեղ թրքական զորքերն ու համիդականները թալանում ու այրում եյին տասնյակ գյուղեր ու կոտորում եյին հարյուրավոր—հազարավոր խաղաղ գյուղացիներ: Իսկ օգնությունը Յեվրոպայից հապաղում եր ու չեր գալիս…

Յես բերեցի Անդրանիկի ասածների ընդհանուր բովանդակությունն առանց մանրամասների, մի կողմ թողնելով նրա մի շարք ինքնուրույն վորակումները Դաշնակցության մասին:

Յերբ նա լռեց, յես առանց հեգնանքի և անկեղծորեն ասացի.

— Յեվ դուք այնուամենայնիվ շարունակում եյիք հավատալ, վոր Յեվրոպան պիտի գա մի որ, այո՞:

— Այո, հավատում եյի, վորովհետև այնտեղ հայրենիքում չկար մեկը, վոր ինձ բացատրեր ճշմարտությունը: Յես մթության մեջ եյի, յես մոլորված եյի… Ճշմարտությունն ինձնից թաքցնում եյին:

— Իսկ ա՞յժմ:

— Այժմ: Ա՛հ այդ ե, վոր յես փափագ զգացի ձեզ լսելու: Այժմ իմ աչքերը բացվել են հոս գալուցս հետո: Այժմ պարզ տեսնում եմ, վոր այդ բոլորը սուտ ե յեղել, խաբեբայություն: Այժմ ինձ համար կասկածից դուրս ե, վոր վոչ մի յեվրոպական պետություն անկեղծորեն շահագրգռված չե մեզ իրական օգնություն ցույց տալու, ուր մնաց Թյուրքիայի հետ կռվելու:

— Բայց ինչո՞վ եք բացատրում դաշնակցականների վարմունքը, ի՞նչ շահ ունեյին նրանք ձեզ մոլորեցնելու։

— Շա՜հ,—կրկնեց Անդրանիկն այն կծու ու կսկծալի ծիծաղով, վոր խորապես դառնացած ու վշտացած հոգու խորքից է գալիս։—Դաշնակցությանը գործ էր հարկավոր, իրական, շոշափելի գործ, թող այդ գործը լիներ մի ամբողջ ժողովրդի կործանումը։ Նրա ջերմ ցանկությունն էր աղմկել, աղմկել, փոթորիկ բարձրացնել, թեկուզ այդ փոթորիկը լիներ մի փոքրիկ, մի խաղաղ լճի մեջ։ Նրան հարկավոր էր մի վորևէ շարժում, մի վորևէ դղրդոց այնտեղ, Թյուրքիայում, վորպեսզի թե՛ Կովկասում և թե այստեղ Եվրոպայում գոռա ու աղաղակի. «Ահա՛ տեսեք, տեսեք, յես գործ եմ կատարում, դրամ տվեք»։ Տվե՛ք, վոր իմ շեֆերն ապրեն խաղաղ Յեվրոպայի ամենագեղեցիկ վայրերում և վորպես դիպլոմատներ զորավորների դռները մաշեն ու ազգի ինքնասիրությունը վոտնատակ անեն։

Ինձ համար նորություն չեյին Անդրանիկի ասածները դաշնակցության հոռի գործունեյության մասին։ Նորությունն այդ մարդու հուսախաբությունն էր. մի մարդու, վոր իր ամբողջ կյանքը նվիրել էր մի անհուսալի գործի և այժմ տեսնում էր, վոր ինքը խաբված է յեղել։ Պարզ է, վոր մարդը հոգով տառապում էր։

Մեր խոսակցությունը յերկար չտևեց։ Անդրանիկը վրդովված էր անսահման և յերբեմն իր վորակումների մեջ դաշնակցության դեմ հասնում էր ծայրահեղության, չխնայելով վոչ մի ածական, իսկ յես չեյի ուզում կրակի վրա յուղ թափել։ Ահա ինչու, յես զգացի մի տեսակ հոգեկան թեթևություն, յերբ այդ պահին սրճարան մտավ դաշնակցության նախկին շեֆ բժիշկ Հովհաննես Լոռիս-Մելիքյանը, նա, վոր դառնացած բաժանվել էր իր նախկին ընկերներից ու գաղափարներից, թեև բավականաչափ խուսափում էր նրանց մասին վատ խոսելուց։ Յես Անդրանիկին ծանոթացրի նրա հետ և ինքս շտապեցի հեռանալ։ Պարզ էր, վոր նրանք իրարու լավ կհասկանային, քան յես...

Շուտով վրա հասավ Թյուրքական հեղափոխությունը։

— Ձեյի՞ք կամենալ, արդյոք, այցելել յերիտասարդ Թյուրքերի նշանավոր պարագլուխ Ահմեդ Ռիզային և շնորհավորել նրանց հաղթությունը,—դարձավ մի որ ինձ Մինաս Ձերազը, վոր քաղաքագիտական ձևականություններին վաղուց էր ընտելացել և խստիվ հետևում էր նրանց։

— Ինչո՞ւ չէ,—պատասխանեցի յես,—բայց ասացեք, դուք հավատո՞ւմ եք, վոր այդ այդպես կոչված հեղափոխությունը կարող է բարերար լինել թե՛ Թյուրքիայի և թե՛ առանձնապես հայ ժողովրդի համար։

— Դժվար է ասել։ Համենայն դեպս կարծում եմ, վոր սահմանադրական կարգերն ավելի վատ չպիտի լինեն մեզ համար, քան կարմիր սուլթանի կառավարությունը։ Մենք այնքան տանջվել ենք, վոր մի այդպիսի անսպասելի փոփոխություն Թյուրքիայի կյանքում չի կարող մեզ մի նոր հույս չներշնչել...

Մենք գնացինք Ահմեդ Ռիզայի մոտ։ Նա կենում էր Լատինական արվարձանի անշուք հյուրանոցներից մեկում։ Յես այդ մարդու հետ ծանոթ չեյի, բայց գրեթե ամեն որ տեսնում եյի նրան Soufflet սրճարանում։ Յես շատ ուրախ եմ, վոր այդ որը նա հյուրանոցում չէր, և մենք թողինք մեր այցետոմսերը։

Ուրախ եմ, վորովհետև յերբ վերադառնում եյինք, Ձերազն ասաց.

— Գիտեք, կլսեն, վոր Ահմդ Ռիզա մի որ ըսեր է, յեթե Սուլթան Համիդ իր կենաց մեջ մի աղվոր բան ըրեր է, անիկա հայերուն կոտորածն է։

Յես զայրացա։

— Հապա ինչո՞ւ այդ ինձ չասացիք նրա մոտ գնալուց առաջ,—գոչեցի յես վրդովված,—չէ՞ վոր մենք պիտի սեղմեյինք այդ մարդու ձեռը։

Ձերազը լռեց, զգալով իր սխալը։

Ապագայում, յերբ ֆրանսիական լրագրներում կարդացի, վոր Ահմեդ Ռիզան Կ. Պոլիս ժամանելով, իր առաջին պարտքն է համարել ներկայանալ սուլթան Համիդին և նրա ձեռը համբուրել, ասելով. «Դուք մեր հայրն եք», պարզվեց, վոր իրավ մեկը մյուսի ժառանգ է և վոր դժվար է «Ժեոն Թյուրքերից» լավ բան սպասել։ Այդպես էլ յեղավ. ապաբաղդ ժողովուրդը նորեն յենթարկվեց հալածանքների ու կոտորածների վոչ պակաս արյունռուշտ, քան սուլթանի որերին։

Հիշում եմ դաշնակցականներին հեղափոխության առաջին որերին Պարիզում և Զվեյցերիայում։ Կը լիներ շատ ծիծաղելի այդ մարդկանց վոգևորությունը, յեթե չը լիներ այնքան ցավալի ու վողբալի։ Այն ի՜նչ պարծենկոտություն էր, վոր պաշարել էր մեծից սկսած փոքրին։ Վոմանք, վորոնց անունները չեմ ուզում այստեղ հիշել, այն աստիճան եյին հափշտակվել, վոր, կարծես,

Թյուրքական հեղափոխությունը իրանք եյին կատարել: Կային այնպիսիները, վոր այդպես էլ ասում եյին, մինչդեռ ամբողջ աշխարհը գիտեր, վոր նույնիսկ Ահմեդ Ռիզան չի ունեցել ռեալ մասնակցություն կատարված հեղափոխության մեջ և վերջինի բուն ղեկավարներն յեղել են Էնվեր բեյը, վոր գերմանական ծագում ուներ, Նազի բեյը, վոր ալբանացի յեր և Շեֆկեթ փաշան, վոր արաբ եր:

Մի որ Արշակ Զորանյանն ինձ ծանոթացրեց պոլսահայ հայտնի վիպագիր Գրիգոր Զոհրաբի հետ: Նա Պարիզ եր յեկել անձնական գործերով: Դա մոտ 45 տարեկան մի տղամարդ եր, միջահասակ, ամրակազմ, լի բացառիկ յեռանդով և պատանեկական աշխուժությամբ: Խրոխտ և կտրուկ լեզու ուներ, ինչպես և գրիչ: Թրքական նորընտիր պարլամենտի անդամ եր, նշանավոր փաստաբան և տաղանդավոր հռետոր:

Յես Գրիգոր Զոհրաբին ճանաչում եյի հեռուեն, կարդացել եյի նրա գեղեցիկ պատմվածքները Կ. Պոլսի կյանքից: Ուղղությամբ ռեալիստ եր, ուներ շատ սիրուն վոճ, միանգամայն զերծ պոլսական սեթևեթանքից և ավելորդ ու հակագեղարվեստական պճրանքից:

Զոհրաբն իմ մասին գրել եր մի, թե՛ մի քանի վոգևորիչ հոդվածներ, չեմ հիշում Կ. Պոլսի վոր հայ լրագրում այն ժամանակ, յերբ Աբելյան—Արմենյան թատերախումբը մեծ հաջողությամբ խաղում եր այնտեղ մեծ մասամբ իմ պիեսները—«Պատվի համար» և «Յեվգինե»: Յես ուրախ եյի ծանոթանալ Զոհրաբի հետ: Յերբ փորձեցի խոսել իր յերկերի մասին, նա ամենայն պարզությամբ և առանց չինծու համեստության ասաց.

— Յես ամատեռ (գրասեր) մըն եմ, ուրիշ վոչինչ:

Զոհրաբը լավատես եր Թրքական հեղափոխության բարեբեր արդյունքների մասին, հույսեր ուներ Թրքահայ ժողովրդի ազատագրման վրա: Նա լսել անգամ չեր ուզում Արշակ Զորանյանի և իմ հոռետես տարակուսությունները: Արդեն աղմկալի մթնոլորտը շատ եր արբեցրել ամենքին, վորոնց թվում և Գրիգոր Զոհրաբի նման լրջամիտ և խոհուն մարդկանց:

Բայց, ավա՛ղ, նա յել Սիամանթոյի, Վարուժանի, Ակնունու և մի շարք մտավորականների պես իր լավատեսության զոհը դարձավ: Տասնումեկ տարի անցած, յերբ յես Պոլսումն եյի (1919 թվականի վերջին ամիսներին), լսեցի նրա վողբերգական վախճանի պատմությունը զանազան բերաններից տարբեր բովանդակությամբ:

Թե ինչպես եր նա սպանվել, ինչպես եյին մյուսները սպանվել, այդ մասին վոչ վոք չուներ ճշգրիտ տեղեկություն: Պատմում եյին, թե Սիամանթոն, Վարուժանը և մյուսները աքսորվել եյին Այաշ, իսկ Զոհրաբը մի ուրիշ, ավելի հեռավոր վայր, թե առաջիններին մի ինչ վոր դաշտում գնդակահարել են, իսկ թե վորտեղ և ինչպես ե սպանվել Զոհրաբը, հայտնի չե: Զարմանալին այն ե, վոր Զոհրաբի նույնիսկ ձերբակալության լուրերը տարբերվում եյին իրարուց: Առաջ եմ բերում զանազան վարիանտներից մեկը, վոր, աչքի առջև ունենալով Զոհրաբի ըմբոստ և համարձակ բնավորությունը, ինձ ավելի հավանական ե թվում: Պատասխանատվությունը թողնում եմ պատմողների վրա:

Այն որը, յերբ ձերբակալվում են Զոհրաբի ընկերները, իրիկնադեմին նա գնում ե թրքական ներքին գործերի մինիստր Թալաաթ բեյի մոտ, վորի մտերիմ բարեկամն ե յեղել: Նա, վորպես պարլամենտի անդամ, Թալաաթ բեյից բացատրություն ե պահանջում: Տեղի յե ունենում բուռն վիճաբանություն: Թալաաթը խուսափում ե Զոհրաբի հարցերին պատասխան տալուց:

— Մի մոռանաք, բե՛յ, վոր դուք կարող եք պատասխանատվության յենթարկվել,—գոչում ե Զոհրաբը զայրացած:

— Հետաքրքրական ե, ո՞վ կարող ե ինձ պատասխանատվության յենթարկել,—հարցնում ե Թալաաթը հեգնանքով:

— Թեկուզ յես, վորպես պարլամենտի անդամ,—պատասխանում ե Զոհրաբը, ձեռը սեղանին զարկելով:

Վիճաբանությունը յերկար չի տեւում: Զոհրաբը զայրացած հեռանում ե:

Հետևյալ որն առավոտյան կանուխ նա ձերբակալվում ե իր տանը և անմիջապես աքսորվում:

Յես փակում եմ այս տխուր եջը, ընթերցողիս ներվերը խնայելու համար:

XIII

ԱՐՄԵՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Մի չարաբաղդ օր նա համալսարանից վերադարձավ գունատ ու հուզված և ասաց.

— Պապա՛, յես չեմ կարող քննություն տալ:

Ցեվ, գրքերն ու տետրակները հրելով մի կողմ, պառկեց բազմոցի վրա:

— Ինչո՞ւ,—հարցրի յես անհանգիստ:

— Ուղեղս չի գործում:

Նա իրավաբանական ֆակուլտետի յերկրորդ կուրսի ուսանող էր, քննություն պիտի տար յերրորդն ու վերջինն անցնելու: Տասնուիննը տարեկան գեղեցիկ, ընդունակ, աշխատասեր ու աչխույժ պատանի յեր: Նրա ապագայի վրա ծնողները մեծ հույսեր ունեյին:

Վերջին ամիսները տղան որ—որի վրա նիհարում էր, դառնալով ինքնամփոփ և մտահոգ, թեև տակավին պահում էր իր բնածին հումորը և մարդկանց վատ հատկությունները ծաղրածելու ընդունակությունը: Ի՞նչ էր պատահում—չը գիտեյինք: Նրա դեմքի աճող գունատությունը, նրա մերթ ընդ մերթ ամենաչնչին պատճառով գրգռվելը թե՛ մայրն ու թե յես վերագրում եյինք ներվերի հոգնածության հարատև պարապմունքներից: Կույր եյինք կատարելապես, չեյինք նկատում, վոր դժբաղդությունը թունավոր օձի նման լուռ ու անշշուկ սողում է մեր խաղաղ ու գրեթե յերջանիկ կյանքի մեջ:

Ցես խնդրեցի Յնդըդյան ազգանունով մի յերիտասարդ ու համակրելի բժշկի՝ տանել վորդուս հայտնի նևրոպատոլոգներից մեկի մոտ քննելու: Նա տարավ: Գիտնականը, վորի անունը այսօր չեմ հիշում, ասաց, թե անհանգստանալու պատճառ չկա, թե պատանու ներվերը հոգնել են, թե անհրաժեշտ է, վոր նա միառժամանակ թողնե իր պարապմունքները, նույնիսկ գրքեր կարդալը, հանգստանա և ամեն օր սառը բաղնիք ընդունե Շարկոյի սիստեմով:

Բայց մի ներքին ձայն ինձ ասում էր, թե պատանու դրությունն ավելի լուրջ ու ավելի սպառնալի յե, քան ներվերի հոգնածությունը: Այդպես էլ յեղավ, վոչ Շարկոն, վոչ յերկամսյա անգործ թափառումները, վոչ մայրական անսահման հոգացողությունը հանգստի ու սնունդի մասին, չօգնեցին հիվանդին: Քանի գնում այնքան պատանին մռայլվում էր ու խորասուզվում ինքն իր մեջ: Մի օր նկատեցի, վոր նրա գեղեցիկ աչքերի բիբերը չեղվել են:

Շուտով նա դարձավ միանգամայն լռակյաց և անուշադիր դեպի շրջապատը: Կարծես մի սև ձեռ փակել էր նրա հոգու, նրա մտքի, անգամ նրա լսելիքի դռները:

Մի օր նա մտահուզություն ունեցավ: Նա խոսում էր ինքն իրան, մերթ բարկացած, մերթ ծիծաղելով և վիճաբանում էր ինչ վոր յերևակայական հակառակորդների հետ: Մի ուրիշ օր նա պնդում էր, թե մեր սեղանատան առաստաղը ծակվել է, և այնտեղից նայում են հարևանները: Թշվա՛ռ, թշվա՛ռ պատանի:

— Վո՛չ, վո՛չ,—գոչեց մայրը հուսահատ ձայնով,—մեր զավակը կործանվում է, ասա, ի՞նչ պիտի անել...

Գիտեյի՞...

— Պապա՛,—ասաց հիվանդը մի յերեկո, հանկարծ արթնանալով մղձավանջից,—ինձ վրա հույս մի դնիր, յես կորած մարդ եմ: Ցեթե առողջանամ անգամ, դարձյալ քեզ օգնել չեմ կարող:

Ի՞նչ պատահեց, ի՞նչպես նա այդքան պարզ ու պայծառ զգաց իր գլխին յեկած չարիքը:

Այդ օրն յեղավ ամենաթշվառն իմ կյանքում: Նա գիտեր, վոր յես տառապում եմ, բայց մի՞թե չը գիտեր, վոր ինձ համար թանգ էր վոչ նրա օգնությունը, այլ առողջությունը, միմիայն առողջությունը, թեկուզ նա լիներ վատթարագույնն աչխարհի բոլոր զավակներից:

Ցես չը գիտեյի անձայն արտասվել: Արցունքը խեղդում էր ինձ, յես հեծկլտում եյի յերեխայի պես: Շատ անգամ գիշերները բաց եյի անում ննջարանիս լուսամուտը—գլուխս դուրս եյի բերում դեպի գավիթ և այնպես եյի լալիս: Ցես չեյի ուզում, վոր հիվանդը կից սենյակից լսե իմ ձայնը:

Մենք ամեն կերպ աշխատում եյինք թաքցնել նրանցից մեր վիշտը, բայց այդ անհնարին էր, գոնե ինձ համար: Կապարյա ծանրությունն ընկել էր սրտիս վրա, ճնշում էր, ճնշում, և յես միայն և միմիայն հեծկլտանքով կարող եյի կրել այդ ծանրու-

թյունը: Յես սիրում եյի Արմենին հոգուս ամբողջ կարողությամբ, վորովհետև նա խելոք եր, վորովհետև նա ժուժկալ եր, բարոյական, մաքուր ինչպես նորեկ ձյունն Արարատի գագաթին: Մտավորապես նա զարգացած եր ավելի, քան իր ավագ յեղբայրը, ավելի, քան իր տարիքն եյին թույլ տալիս: Նա խորապես հավատում եր սոցիալիզմի վերջնական հաղթությանը և մարդկության մերձակա յերջանկությանը:

Յես վողբում եյի վոչ միայն վորդուս թշվառությունը, այլև կնոջս տանջանքը. և ավելի, քան իմը: Խեղճ կին. ի՞նչով կարող եյի նրան մխիթարել: Իր գոյության ամբողջ իմաստը նա պարփակել եր իր յերեք զավակների և միայն նրանց մեջ: Նրանց ապագա յերջանկության հավատով եր նա ստոյիկյան համբերությամբ կրել կյանքի դառնությունները ու հայ գրողի հազար ու մի զրկանքները: Այժմ նա զրկվում եր իր յերեք հույսերի մեկից: Նա ինձ նման բարձրաձայն չեր հեկեկում. նա իր վիշտը կրում եր լուռ ու անմռունչ, և յես զգում եյի, վոր նրա հոգու կսկիծն ավելի սուր է, քան իմը: Յերբեմն նա խուլ գիշերներին վեր եր կենում անկողնից, անլսելի քայլերով անցնում եր կից սենյակը, ուր պառկած եր հիվանդը, վոր տեսնե քնած է նա, թե արթուն, տանջվում է արդյոք: Ապա վերադառնում եր լուռ ուրվականի պես և կրկին ու կրկին հանդարտիկ լալիս: Նա կարծում եր, թե յես քնած եմ: Արդարև, յես ինձ քնած եյի ձևացնում, վորպեսզի ավելի չը հուզեմ նրան:

Հաճախ յես մտաբերում եյի Ոգյուստ Ռոդենի խոսքերը. «Յերբ տեսնում ես մերձավորիդ ծանր տանջանքը և գիտես, վոր վոչնչով չես կարող ոգնել, քո վշտի մեջ զգում ես մի տեսակ սփոփանք. այդ այն է, վոր դու գիտակցում ես կյանքի խորն իմաստը»:

Յես զգում եյի կյանքի անիրավ ու դաժան փիլիսոփայությունը, բայց սփոփանք, ավա՜ղ, չեյի գտնում: Անշուշտ նշանավոր ստեղծագործողը խոսում եր իր մտքի խորությունից և վոչ դաժան կյանքի իրական իմաստությունից:

Ամառն արդեն սկսվել եր: Յերրորդ անգամ մենք տեղափոխվեցինք Զվիցերիա, այս անգամ, իհարկե, վոչ նախկին տրամադրությամբ: Մի քանի ֆրանսիացի ու զվիցերիացի ականավոր բժիշկների խորհուրդով Արմենին տեղավորեցինք Լյուցերն կանտոնի մի սանատորիայում, «Կատր կանտոն» գեղեցիկ լճի մոտ,

իսկ մենք մեզ համար ընտրեցինք դարձյալ Վո կանտոնի եժանագին պանսիոններից մեկը:

Յես տակավին վերջնականապես չեյի կորցրել հավատս՝ մի որ թշվառ վորդուս բուժված տեսնելու: Ինքս ինձ խաբելով եյի մաքառում վերահաս դժբախտության դեմ: Այդպես է մարդկային բնույթը. յերբեք մենք միանգամից չենք հաշտվում մեր գլխին յեկած չարիքի հետ և մեր սնոտի հույսերը դնում ենք նույնիսկ աներևակայելի հրաշքների վրա, իսկ յերբ ընտելանում ենք չարիքին, զարմանում ենք, վոր այնքան կարճատես և այնքան թեթևամիտ ենք յեղել:

Շաբաթը մեկ կամ յերկու անգամ այցելում եյի Արմենին: Վոչ մի փոփոխություն չեյի տեսնում նրա վոչ միայն հոգեկանի, այլև ֆիզիքականի մեջ: Նա մեծ դժվարությամբ եր պատասխանում իմ սովորական հարցերին, ավելի հաճախ ամենևին չեր պատասխանում, և յես վախենում եյի ձանձրացնել նրան: Ինքը վոչ մի հարց չեր տալիս ինձ վոչ իր մոր, վոչ յեղբոր և վոչ քրոջ մասին: Կարծես, նրանք այլևս գոյություն չունեյին նրա համար, այնչափ արդեն հեռացել եր իրական աշխարհից:

Մի որ նա ինձ ասաց.

— Պապա՛, դուրս բեր ինձ այստեղից, տար մի ուրիշ պանսիոն:

— Ինչո՞ւ,—հարցրի յես ուրախ ու կես զարմանալով նրա անսպասելի պահանջից:

— Այս պանսիոնը թանկ է:

— Ինչ գիտես, վոր թանկ է,—շարունակեցի յես դիտմամբ, վորպեսզի ավելի խոսեցնեմ նրան:

— Դու որական յերեսուն ֆրանկ ես տալիս, դա շատ է, շատ-շատ քեզ համար...

— Այդ մասին դու մի հոգար, սիրելիս, դա իմ գործն է:

Նա լռեց ու իր պաղ հայացքը դարձրեց դեպի անորոշ տարածություն, դեպի ով գիտե ինչ մթություն: Ա՜հ, վորքան կը կամենայի թափանցել մտքով այն անհասկանալի աշխարհը, ուր դեգերում եր նրա տառապող հոգին:

Մի ուրիշ անգամ նա, հառաչելով, ասաց.

— Ի՜նչ տխուր է այստեղ...

Մենք նստած եյինք սանատորիայի առջև տարածված փոքրիկ ու գեղեցիկ պարտեզի մի ծայրում, մի փայտյա կանանչ նստարանի վրա: Այդտեղից յերևում եր կանտոնի զմայլելի տեսարան-

ներից մեկը: Սանատորիան տեղավորված եր մեծ լճի ափին, վոր մի կողմից վոչ այնքան բարձր լեռ եր, մյուս կողմից շատ բարձր ժայռ՝ դեպի լիճը: Զվիցերիացիք ասում եյին, վոր այդ լեռան վրա յե Վիլհելմ Տելլը իր ընկերների հետ յերդվել ազատագրության դրոշ բարձրացնել ավստրիական բռնակալության դեմ:

Ժայռն ուղղահայաց եր: Նրա ստորոտը վողողվում եր լճի ալիքներով: Նայեցի վար, և մի չար միտք հանկարծ հարվածեց ինձ: Ինչո՞ւ այստեղ են տեղավորել այդ կեսհիվանդանոցը, ինչո՞ւ պարտեզը շրջապատված չե վորևե ցանկապատով: Իհարկե, այդ հարցերը յերեխայական եյին, քանի վոր վոչ մի վտանգ չը կար, բայց յես այնուամենայնիվ վախեցա վորդուս համար: Ով գիտե ինչ միտք կարող ե ծագել նրա հիվանդ ուղեղի մեջ, յերբ նա մենակ ե: Այդ մտքի ազդեցությամբ յես վայրկենապես վճռեցի վերցնել նրան և տանել մեզ մոտ: Բայց հարկավոր եր ստանալ նրա մոր համաձայնությունը, առանց վորի յես վոչ մի քայլ չեյի անում հիվանդի վերաբերմամբ:

— Նինա,—ասացի նույն օրը յերեկոյան կնոջս,—Արմենը սանատորիայում տխրում ե, լավ չի՞ լինիլ, վոր նրան բերենք մեզ մոտ: Միևնույն ե, նա այնտեղ չի բժշկվում:

Նինան համաձայնվեց: Հետևյալ օրն իսկ Արմենին տեղափոխեցի պանսիոն, հակառակ բժիշկների խորհուրդին՝ ընտանիքի մեջ չը պահել նրան:

Օրն յերկու անգամ յես նրա հետ զբոսնում եյի: Տանում եյի նրան շրջակա գյուղերը, մերձակա վոչ շատ բարձր լեռները, ձորերն ու անտառները: Չեյի աշխատում ընդհատել նրա լռությունը, վոր այնքան ծանր ու այնքան դառն եր ինձ համար: Թող ապրի իր մռայլ աշխարհում, մի գուցե ավելի բորբոքեմ նրա մտքերը:

Մի օր, յերբ յերկար զբոսանքից հետո պանսիոն եյինք վերադառնում, հանկարծ յերկինքը սկսեց վորոտալ, թեև անձրև չեր գալիս:

— Ա՜հ,—անցավ իմ մտքով,—յերանի կայծակի զարներ ինձ ու այդ թշվառին և կործաներ յերկուսիս ել:

Գրեթե նույն վայրկյանին մեզնից հազիվ մի տասը քայլ հեռու, կայծակն աննկարագրելի վորոտով ընկավ հեռագրական սյուներից մեկի վրա: Օդի զորավոր շարժումից մենք ընկանք գետնի վրա, բայց յես զգացի, վոր վտանգից փրկված ենք: Վոտքի յելնելով, վորդիս սկսեց վազել: Ինքնապաշտպանության զգացումը դեռ չեր մարել նրա մեջ. նա փախչում եր վտանգից: Մին-

չև պանսիոն հասնելն անձրևը մեզ թրջեց մինչև մեր վոսկորները:

Այս փոքրիկ դեպքը յես պատմեցի, ցույց տալու համար, թե յերբեմն կյանքի մեջ ինչ տարօրինակ զուգադիպումներ են լինում: Արդյոք այդպիսի զուգադիպումներից չե՞ն առաջացել շատերը մեր նախապաշարումներից:

Այլևս Զվիցերիան կորցրել եր իր նախկին հրապույրն ինձ համար: Յես միանգամայն անտարբեր եյի դեպի նրա բնական գեղեցկությունները և դեպի նրա կենցաղը: Իհարկե, մի ուրիշը կարող եր աշխատանքի մեջ մոռանալ իր վիշտը, բայց յես այդքան ուժ չունեյի. աշխատանքը փախչում եր ինձնից: Հիշում եմ, մի ամբողջ շաբաթ ջանացի մի խոշոր գործ սկսել, առաջին իսկ եջերից գործը թռավ ինձ իմ կարողությունից վեր: Փորձեցի գրել փոքրիկ պատմվածքներ, դարձյալ անաջող: Գրում եյի, ջնջում, իբրև թե փոփոխում, իբրև թե շտկում, միևնույնն եր, բան չեր դուրս գալիս: Տեղն ե ասել, վոր յես առհասարակ շատ մեծ դժվարությամբ եյի գրում և այժմ ել նույնն ե, բայց այս անգամ, կարծես, ձեռս շղթայակապվել եր: Յես գրած թերթերս իրարու յետևից պատռում եյի ու կատաղած դեն շպրտում: Ասում եմ կատաղած, վասն զի ճիշտ վոր կատաղում եյի, այնքան վրդովեցուցիչ եր ինձ համար սեփական ապիկարության գիտակցությունը. Մի՞թե ուղեղս ցամքել եր:

Նույն անպտղաբեր օրերը շարունակվեցին և՝ Պարիզում, յերբ վերադարձանք այնտեղ հիսունօրյա բացակայությունից հետո:

Արմենի դրությունը քանի գնում, այնքան վատթարանում եր: Յեկավ այն դժբաղդ ժամանակը, յերբ այլևս անհնար եր հոգեկան հիվանդին տանը խնամել: Նա մերթ ընդ մերթ կատաղության նշաններ եր ցույց տալիս: Նա մեզ չեր լսում, ժամանակ—անժամանակ վազում եր փողոց և խառնվում եր ամբոխին: Յես անմիջապես դուրս եյի գալիս նրա յետևից և քայլ առ քայլ հետևում եյի նրան. մի գուցե վորևե վտանգավոր բան թույլ տա իրան կամ վորևե արկածի հանդիպե:

Նրա սովորական զբոսավայրն եր Լյուքսեմբուրգ պարտեզը, վոր մեր բնակարանից հեռու չեր: Այստեղ եր, վոր առաջին անգամ տեսա այն ֆրանսուհի աղջկան, վորով նա հափշտակված եր, ինչպես ինձ ասաց նրա ընկերներից մեկը, իրավաբանական ֆակուլտետի մի հայ ուսանող:

Աղջիկը մոտեցավ Արմենին, ինչ վոր ասաց նրան, ինչ վոր լսեց նրանից և շուտով հեռացավ չափազանց տխրած դեմքով և գլուխն յերերալով: Նա բավական սիրուն եր, շատ յերիտասարդ, վոչ ավելի քան 18 տարեկան: Հագնված եր համեստ, բայց պարիզուհու ժամանակակից վոճով ու ճաշակով: Նա թևի տակ բռնած ուներ մի քանի գրքեր ու տետրակներ: Կռահեցի, վոր Սորբոնի ուսանողուհիներից եր, և յենթադրությունս ճշտվեց:

— Դուք ճանաչո՞ւմ եք այդ աղջկա ծնողներին,—հարցրի յես մի որ Արմենի ընկերոջը:

— Ճանաչում եմ, բայց ծանոթ չեմ:

— Ովքե՞ր են:

— Հայրը պրոֆեսոր է, յեղբայրը կարծեմ ուսանող:

Պարզվեց, վոր աղջիկն իր կողմից նույնպես հափշտակված է Արմենով, բայց թե՛ վոր աստիճանի յե հասել փոխադարձ հափըշտակությունը, չը կարողացա գիտնալ: Ինձ հայտնի յեր միայն Արմենի բարոյական արտասովոր մաքրությունը... Կյանքի ապականության դեմ նա տակավին մնացել եր անձեռնմխելի...

Շուտով այդ աղջիկը չքացավ հորիզոնից. այլևս յես նրան չեյի տեսնում: Խե՛ղճ պատանի. դա յեղավ նրա կյանքում առաջին և վերջին հափշտակությունը կնոջով:

Յես նրան տեղավորեցի Պարիզի շրջակայքում մի մասնավոր ընտանիքում, ուր կային մի քանի նման հիվանդներ: Յես չունեյի միջոց նրան մի վորևե սանատորիայում տեղավորելու:

Յես դադարել եյի հաճախել Սորբոնի դասախոսությունները: Մի պահ մտածեցի, արդյոք ժամանակ չի՞ Կովկաս վերադառնալ յերեք տարի բացակայելուց հետո: Բայց կային մի քանի լուրջ պատճառներ, վորոնք խանգարում եյին մեզ այդ անելու: Նախ Արմենի հիվանդությունը: Մեզ համար շատ ծանր եր նրան հայրենիք բերել իր ներկա դրության մեջ: Մի քանի պրոֆեսորներ հավատացնում եյին, թե նրա ուղեղը տակավին վերջնապես խանգարված չէ, թե կարող է առողջանալ, թե նման դեպքեր շատ են յեղել և վերջ ի վերջո հիվանդները փրկվել են: Յեվ մեզ համար ավելի դյուրին եր կառչել այդ սնոտի հավատին, քան լսել մի ռուս բժշկի համարձակ կարծիքը, թե հիվանդի համար փրկություն չկա: Ֆրանսիական մտայնության ծայրահեղ նրբազգացություն, վոր յերբեք թույլ չի տալիս դառը ճշմարտությունը մարդու յերեսին ասել մի անգամից և խորտակել նրա պատրանքը: Յերկրորդ պատճառը Ռուբենի և Մարգարտի ուսումն եր: Մնում

եր յերկու տարի ևս, վոր նրանք ավարտեյին, մեկը Լիեժի համալսարանը, մյուսը Ֆենելոնի լիցեյը:

Յեվ այսպես, վորոշեցինք այդ յերկու տարիներն ել անցկացնել Պարիզում: Տարտամ գրական փորձերի և հոգնած մտայնության տարիներ: Ժամանակիս մեծ մասը վատնում եյի դրսերում, ինքս ինձ հուսադրելով, թե կյանք եմ ուսումնասիրում և դա ինձ մի որ պետք կը գա:

XIV

ՀԱՃԵԼԻ ԵՎ ԱՆԱԽՈՐԺ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Մեծ մասամբ կարդում ու գրում եյի սրճարաններում, յերբ գրելու պահանջ եյի զգում։ Գրեթե այնտեղ գրեցի յերկու պիես «Կործանվածը» և «Ավերակների վրա» ու մի քանի պատմվածքներ։

Գարնան և ամառվա ամիսներին որ չեր անցնում, վոր չը հանդիպեյի մի նորեկ կովկասցու։ Soufflet սրճարանում յես դարձել եյի մի տեսակ կենտրոնական դեմք և տեղեկատու։ Ծանոթ թե անծանոթ ամեն վոք այնտեղ եր գալիս ինձ տեսնելու։

Մի որ հանդիպեցի «Մշակ»-ի այն ժամանակվա խմբագիր Ալեքսանդր Քալանթարին։ Նա Պարիզ եր յեկել վորպես գյուղատնտես՝ ինչ-վոր համագումարում մասնակցելու։ Չնայելով մեր յերբեմնի փոխադարձ սուր հարաբերություններին, յես այդ մարդուն հարգում եյի։ Տեղն ե ասել, վոր յես նրան ճանաչում եյի շատ վաղուց, դեռ յոթանասնական թվականների վերջերից և վոչ միայն իրան, այլև իր յոթ յեղբայրներին և ծնողներին, վորոնց ամբողջ Բաքուն անվանում եր «հայրիկ» և «մայրիկ»։ Հարգում եյի Ալեքսանդրի կիրթ, վերին աստիճանի մեղմ և համբերատար բնավորությունը։ Վորպես հրապարակախոս նա, իհարկե, Գրիգոր Արծրունի չեր, ուզում եմ ասել չուներ նրա գրչի թափն ու ավյունը։ Բայց դրա փոխարեն նա օժտված եր վոչ պակաս արժեքավոր հատկություններով, վորոնցից մեկը հազվադյուտ եր այն ժամանակվա հայ հրապարակախոսների միջավայրում, այն ե՝ անսահման զգաստություն բանակռվի մեջ։ Նա յերբեք իր հակառակորդների վերաբերմամբ չեր գործածում անզուսպ լեզու, յերբեք չեր վիրավորում նրանց անձնավորությունը կամ անհատական ինտիմ կյանքը։ Հակառակորդներն այդ աննման հատկությունը ճգնում եյին նսեմացնել, անվանելով նրան յերկչոտություն։ Բայց յես, վոր ճանաչում եյի Ալեքսանդրի ծնողներին և իմ պատանեկական տարիներն ապրել եյի նրանց հարեվանությամբ Բաքվում, չնայելով մեր փոխադարձ սառնության, հակված

եյի նրա զգաստությունը վերագրել իր ընտանեկան կրթությանը։ Այն ժամանակվա Բաքվի նման ասիական կոշտ ու կոպիտ միջավայրում «հայրիկի» և «մայրիկի» բարի ու մեղմ բնույթը և ընդհանուրի կողմից վայելած հարգանքը բացառիկ յերևույթներ եյին։

Մեր յերկարամյա ծանոթության ընթացքում յես միայն մի անգամ Ալեքսանդր Քալանթարին տեսա կատաղության չափ վրդովված։ Յեթե չեմ սխալվում, Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերության անդամների տարեկան ընդհանուր ժողովն եր քաղաքային ինքնավարության դահլիճում։ Նիստը բացվելուց առաջ, չգիտեմ ինչ առիթով, նրա և Ավետիք Արասխանյանի մեջ ծագեց բուռն վիճաբանություն։ «Մուրճ»-ի խմբագիրը «Մշակ»-ի խմբագիր Քալանթարից պակաս մեղմաբարո մարդ չեր։ Բայց հանկարծ, միանգամայն անսպասելի, յերկուսն էլ միաժամանակ բռնկվեցին և սկսեցին, թեյեվ վոչ այնքան բարձր ձայնով, իրարու հասցեյին ուղղել այնպիսի լուտանքներ և փողոցային հիշոցներ, վորոնց նմանը յես յերբեք, յերբեք վոչ մեկի և վոչ մյուսի բերանից չեյի լսել։

— Ա՛յ աղա,—գոչեց Ղազարոս Աղայանը,—զոկերը գժվեցին։

Յեվ, մեջ ընկնելով, նա իր հուժկու ձեռներով բաժանեց կռվողներին։

Յես հաճույքով Ալեքսանդր Քալանթարի հետ անցկացրի մի քանի ժամեր։ Նա ինձ հաղորդեց մեկը մյուսից ավելի տխուր լուրեր։

— Այժմ Դաշնակցության դեմ կազմվել ե թյուրքերի Մուսավաթը,—ավելացրեց նա դառը հեգնանքով,—և յերկու ազգությունների դժոխային հարաբերությունները սպառնում են ավելի բարդանալ։ Խորհուրդ եմ տալիս այժմ Կովկաս չվերադառնալ։ Վորպես գեղարվեստական անբռնազբոսիկ գրող, դուք ունեք իրավունք այստեղ մնալու հանուն ստեղծագործող մտքի ազատության...

Մի որ էլ հանդիպեցի մի ժամանակվա «Тифлисский Вестник» անունով լրագրի խմբագիր Կոնստանտին Բեհբությանին։ Ութսունական թվականների սկզբին այդ լրագրում տպվել եյին իմ մի քանի անստորագիր թղթակցությունները Բաքվից։ Իշխանական ծագում ուներ մարդը և չեր տատանվում պարծենալ իր ազնվական տոհմով, չնայելով իր մտքի բավականաչափ սրությանը։ Իր ժա-

մանակին նա, վոչ առանց ձիրքի, թե բերանացի և թե գրչով կռվել եր ցարերի կովկասյան աժանների դեմ: Վերջին նրա պայքարն յեղավ հայտնի խուլիգան, պրովոկատոր հայակեր բանաստեղծ Վելիչկոյի դեմ, վոր « Кавказ » պաշտոնական լրագրի խմբագիրն եր... Այնուհետև նա լռեց, և այժմ ծառայում եր Ալեքսանդր Մանթաշյանի մոտ չգիտեմ ինչ պաշտոնով: Մի անգամ յես նրա հետ ընդհարվել եյի Թումանովների «Новое обозрение» լրագրի խմբագրատանը: Այնուամենայնիվ յես հարգանքով ընդունեցի նրա բարևը: Ոտարության մեջ հայրենակիցները դյուրությամբ են մոռանում իրանց անցյալ փոխադարձ գժտությունները, մանավանդ, յեթե հակառակորդները գիտեն կյանքին նայել մի քիչ փիլիսոփայական աչքերով:

Մի ուրիշ իշխան Ալ...Ար...Երկ... անունով, վորին նույնպես հանդիպեցի Soufflet սրճարանում, քմահաճույքի և ինքնայերկրպագման մանրացումն եր: Նա այնպես եր պահում իրան, վոր կարծես, Մարսից եր վայր ընկել: Նա վոչինչ և վոչինչ չեր հավանել Ֆրանսիայում և զարմանալի ապլոմբով քննադատում և պարսավում եր, անպայման պարսավորում ամեն ինչ, վոր տեսել եր և տեսնում եր: Պետք ե ասել, վոր այդ տիպի մարդիկ ինձ ծանոթ եյին վաղուց: Ռուսիայից, մանավանդ Կովկասից յեկողների մի վորոշ մասն այդպես եր, և յես նրանց չեյի սիրում, վորովհետև կեղծում եյին միամիտներին ցույց տալու համար, թե ավելի գիտեն և ավելի նուրբ ճաշակ ու մտավոր պահանջներ ունեն, քան ուրիշները: Յեթե այդպես լիներ, այդ մարդիկ մի անգամ Ֆրանսիան ու Պարիզը տեսնելով, այլևս ցանկություն չեյին ունենալ տեսնելու, մինչդեռ գրեթե ամեն տարի նրանք վազում եյին այնտեղ:

Շատ տիպիկ և ուսումնասիրության արժանի յեր մեկն իմ հայրենակիցներից: Նրա անունն եր Հովսեփ Գուլիշամբարով: Նա յեկել եր Պետերբուրգից Պարիզում առմիշտ հաստատվելու համար: Պաշտոնաթող չինովնիկ եր «իսկական պետական գաղտնի խորհրդականի» տիտղոսով և մասնագիտությամբ ինժեներ-տեխնոլոգ: Տակավին առողջ ու կայտառ ծերունի յեր մոտ վաթսուն տարեկան: Պաշտոնական գործուղումներով շատ ճամփորդած մեկն եր թե Ռուսիայում և թե Յեվրոպայում և Ամերիկայում: Մի ժամանակ ցարական կառավարությունն, առանց նրա հետ կանխավ խորհրդակցելու, Բաքվի և Գրոզնիի նավթահանքերի վիճակը ջեր կարգադրում: Բոլոր սպեկուլյանտները նրան ճանաչում եյին

ու յերկրպագում, սակայն քչերին եր նա ցույց տալիս իր հովանավորությունը: Բացի ռուսականներից, նա պարգևատրված եր գրեթե բոլոր յեվրոպական պետությունների շքանշաններով: Պարիզ յեկավ թե չե, նրա առաջին գործն յեղավ նոր հագուստներ պատվիրել և յուրաքանչյուր հագստի ոձիքին կպցնել ֆրանսիական պատվո շքանշանի կարմիր լաթի կտորը: Նյութապես միանգամայն ապահով մարդ եր, ուներ իր աստիճանին վայել թոշակ և կլորիկ գումար բանկում: Լատինական արվարձանում նա իր համար վարձեց մի կոկլիկ բնակարան և ինքը կահավորեց իր ճաշակով:

Թվում եր, թե մարդն ամեն ինչ ունի և կարող ե իր ծերության տարիներն անցկացնել անհոգ:

— Գիտե՞ք,— ասաց նա ինձ հանկարծ մի որ,— յես ուզում եմ իմ կյանքին վերջ տալ:

— Ինչո՞ւ,— հարցրի յես անտարբեր, կարծելով, թե մարդը կատակ ե անում:

— Հենց այնպես, ձանձրացել եմ: Ձեզ անհավատալի յե թվում ասածս, բայց յես լուրջ եմ ասում, յես այլևս ապրել չեմ ուզում:

— Բայց պատճա՞ռը:

— Պատճառն իմ անցյալումն ե: Լսեցեք, յերբ յես նայում եմ յետ, դեպի իմ անցած ուղին, ինքս ինձնից զզվում եմ:

— Այդ դիրքը, այդ աստիճանները և այդքան շքանշաններ ստանալուց հետո՞:

— Մի ծաղրեք ինձ ձեր մտքում, գիտեմ, վոր այդ բոլորը ձեզ համար դատարկ բաներ են, վորովհետև դուք գրող եք, իսկ ձեզ նմաններն ինձի նմաններին չեն սիրում և ունեն իրավունք չսիրելու: Բայց լսեցեք. քառասուն տարի միտք ու հոգի յեմ մաշել և ծառայել արբշիռ ցարերի կառավարությանը և զանազան սպեկուլյանտների գրպանին: Ինչո՞ւ: Վորովհետև յես հիմար եյի, այո՛, այո՛, հիմար. մի հակառակեք: Իմ ամբողջ կյանքում յես ունեցել եմ միայն մի քիչ թե շատ լուսավոր վայրկյան: Այդ այն տարիներն եյին, յերբ, դուք պիտի հիշեք, յես Բաքվում հրատարակում ու խմբագրում եյի մի փոքրիկ լրագիր...

— «Бакинские известия», թե...

— Դրա նման մի բան: Յես այսոր զղջում եմ, վոր այնտեղ չմնացի, գոնե կարող եյի ասել, վոր յես իմ ույժերի չափ ծառայում եմ հասարակական շահերին, վոր յես այսպես թե այնպես, մի միավոր եյի և վոչ այսորվա զերոն: Լսեցե՛ք, յես անկեղծ եմ

տառում․ յես նախանձում եմ ձեզ, վոր ծառայել եք և ծառայում եք մեր ազգի կուլտուրական կրթությանը։ Այո՛, այո՛, դուք ունեք իրավունք պարծենալու, վոր զուր չեք վատնել ձեր կյանքը, իսկ յես վա՜յ...

Նա լռեց և այլևս վոչինչ չասաց։

Այդ որից նա ամեն յերեկո ինձ հանդիպելիս նույնն եր կրկնում՝ «Պիտի վերջ տամ իմ կյանքին»։ Յես կարծում եյի, վոր նա խելագարվում ե։ Բարեբախտաբար, այդ չը պատահեց։ Չը պատահեց և ինքնասպանությունը։ Շուտով նա թողեց իր կոկլիկ բնակարանը, տեղափոխվեց Կովկաս։ Չեմ հիշում վորքան ժամանակ անցած՝ կովկասյան լրագրներում կարդացի նրա մահվան ազդարարությունը և մի փոքրիկ լուր, թե հանգուցյալը իր թանկագին գրադարանը կտակել ե հայոց բարեգործական ընկերությանը...

***

Հիշում եմ յերկու անախորժ ծանոթություններ։

Մի յերեկո ինձ մոտեցավ Գողոլի Դերժիմորդայի կերպարանքով մի մարդ իր կնոջ հետ և հարցրեց․

— Դուք ճանաչո՞ւմ եք Թախտաճյանին։

— Այո՛,—պատասխանեցի յես։

Թախտաճյանը (անունը մոռացել եմ) մի շատ պատկառելի մարդ եր հեղափոխական վոգով տոգորված, (վորին չպիտի շփոթել դաշնակցական Թախտաճյանի հետ)։ Յես նրան հարգում եյի։

— Կինս նրա ազգականն ե,—շարունակեց Դերժիմորդան,—ուզում ե նրան տեսնել, չգիտե՞ք, արդյոք, նրա հասցեն։

—Վոչ, բայց նա ամեն յերեկո գալիս ե սրճարան, գուցե այսօր ել գա, սպասեցեք, յեթե կարող եք։

—Դժբախտաբար ժամանակ չունենք, յեթե գա, բարի յեղեք նրա հասցեն հարցնելու։ Մենք վաղը դարձյալ կգանք։ Թույլ տվեք ծանոթանալ․ Քութայիսի գինվորական նահանգապետ Սլավոչինսկիյ... Ցը տեսություն։

Յես այդ ախրահուչակ ժեներալի գազանությունների մասին շատ բան եյի լսել վրացի ուսանողներից։ Քութայիսի ամբողջ ազգաբնակչությունը սարսափով և զզվանքով եր խոսում այդ զազրելի սատրապի մասին։ Հետևյալ յերեկո նա յեկավ․ Յես գնացի հանդիպել Թախտաճյանին։

— Ափսոս,—ասաց նահանգապետը,—գուցե վաղը գա, գիտեք, մենք շատ կարևոր գործ ունենք նրա հետ, ասացեք իրան, բայց մենք մի անգամ ել կը գանք։ Հուսով եմ իմ ազգանունը հիշում եք։

—Ինչպես չե, ձեր ազգանունն ե Սվոլոչինսկիյ*),—ասացի յես, դիտմամբ աղավաղելով նրա անունը։

Մարդը ցնցվեց, նայեց ինձ վոտքից մինչև գլուխ կատաղի հայացքով, բայց վոչինչ չասաց։ Հետևյալ որը նա չեկավ, և յես այլևս չը հանդիպեցի նրան։

— Դուք նրան իր իսկական անունն եք տվել,—ասացին վրացի ուսանողները, յերբ դեպքը պատմեցի նրանց։

***

Նրանք չորս հոգի եյին, չորսն ել «գաղափարական» վարժուհիներ, չորսն ել սևահեր, գրեթե սևամորթ, չորսն ել պատկառելի տարիքով, թեև տակավին օրիորդներ։ «Իրարու նմանները միանում են», ասում են ֆրանսիացիք և զուր չեն ասում։ Ինչու եյին Պարիզ յեկել—չը հարցրի, համենայն դեպս համաշխարհային ցուցահանդեսի ապրանք չեյին։ Գուցե յեկել եյին իրանց ճաշակը նրբացնելու, յերևի Պարիզի կյանքից այնքան հուզումնալի ուժաններ կլանելուց հետո։ Յեվ նրբացնում եյին, ագահությամբ յուրացնելով բուլվարային հյուրիների ազատ ձևերն ու շարժումները։ Այս տեսակետից առանձին ջանք և ընդունակություն եր ցույց տալիս ամենից կրտսերը, նա վոր կը լիներ մոտ քառասուն տարեկան։ Սրճարանի տերրասում նստելով մի աթոռի վրա, նա մինչև ծնկները բաց վոտները ցցում եր մի ուրիշ աթոռի վրա, կռթնում եր մի յերրորդին և բարձրաձայն քրքջում եր առանց վորևե պատճառի։ Մյուսները չեյին քաշվում պրոֆեսոր Միքայել Թամամշյանի և իմ ներկայությամբ պատմել ցինիկ անեկդոտներ։ Այդ ի՞նչ եր, Պարի՞զն եր նրանց խելագարեցրել, թե հենց խելագար ել յեկել եյին։

Յես զայրանում եյի, զայրանում եր նամանավանդ դյուրագրգիռ Թամամշյանը, չը նայելով, վոր մեր կյանքում նման և ավելի զզվելի բաներ եյինք տեսել ու լսել։ Բայց վոչ յես և վոչ ել նա չեյինք արտահայտում մեր զայրույթը, հարգելով չորս

*) Սվոլոչ, СВОЛОЧЬ—սրիկա։ Ե․

վարժուհիների պատկառելի կոչումը: Վերջապես, մի անգամ պրոֆեսորը, չը կարողանալով այլևս իրան զսպել, ասաց.

— Հարգելի մանկավարժուհիներ, Պարիզը մարդկային լավագույն և վատագույն բարքերի խառնուրդն է, աշխատեցեք այդ քաոսից չտանել այն անպետք ապրանքը, վորը վաղը ձեր հայրենիքում ամոթով դեն պիտի շպրտեք...

Բարեբախտաբար չորս վարժուհիները շուտ ավարտեցին իրանց դասընթացքը և շուտով ուղևորվեցին Իտալիա...

Մի օր ինձ մոտ յեկավ «Աղբյուր—Տարազի» խմբագիր—հրատարակիչ Տիգրան Նազարյանը: Դա ինձ համար անսպասելի չեր. ով մի քանի տարիներ ապրել է Յեվրոպայում, անկարելի յե, վոր մի քանի անգամ հանդիպած չը լինի այդ մարդուն, միևնույն է Ֆրանսիայում, թե՛ Զվիցերիայում, Գերմանիայում, թե՛ Իտալիայում:

Յես ճանաչում եյի Տիգրան Նազարյանին դեռ այն ժամանակից, յերբ նա Թիֆլիսի չեմ մտաբերում վոր բանկում վարում եր հաշվապահի պաշտոն, այսինքն ուժասնական թվականներից: Այսպես կոչված հայ գրական—հասարակական ասպարեզում յես չեմ ճանաչել մի ուրիշը, վոր ունենար այդ մարդու չափ քանքար կյանքի սանձը բռնելու ու հեծնելու: Ճշմարիտ է, շատ փոքր եր նրա Պեգասը և վոչ թևավոր, բայց բավական եր նրա միջակությունն՝ ամենուրեք սլացնելու և ամենուրեք քայլեցնելու իր տկար լուսավորությամբ:

Այն ժամանակվա հայ իրականության տեսակետից հետաքրքրությունից զուրկ չե Տիգրան Նազարյանի խմբագիր—հրատարակիչ դառնալու պատմությունը: Յերբ նա ծառայում եր բանկում, յերևակայել չեր կարող, թե ինչ պատվի պիտի արժանանա: Մի օր նրա մոտ է գալիս ուսուցիչ Գաբրիել Միրզոյանը, վորի մասին գրել եմ իմ ներկա հիշողությունների առաջին մասում, և ասում է.

— Տիգրան Նազարյան, կը կամենա՞ք լինել խմբագիր—հրատարակիչ մի մանկական ամսագրի:

Տիգրանը, վոր այդ ժամանակ զբաղված եր համարակալով, նայում է Միրզոյանի դեմքին զարմացած:

— Այո՛, խմբագիր—հրատարակիչ,—կրկնում է ուսուցիչը իր հաստ ընչացքի ու յերկայն միրուքի միջից արձակելով մի հեգնական ժպիտ:—Թույլ տվեք բացատրել. յես ու հայտնի մանկավարժ ու մանկական գրող Ղազարոս Աղայանը վորոշել ենք մի

ամսագիր հրատարակել մանուկների համար: Մենք գիտենք, վոր կառավարությունը մեզ հրատարակման իրավունք չի տալ, վորովհետև քաղաքական տեսակետից կասկածելի յենք նրա աչքում, ուստի վճռեցինք դիմել ձեզ, համոզված լինելով, վոր այդ իրավունքը ձեզ կը տրվի: Դուք կը լինեք պաշտոնական խմբագիր—հրապարակիչ, իսկ կգրենք ու կխմբագրենք մենք: Համաձա՞յն եք:

Տիգրան Նազարյանը յերկար չի մտածում և, համարակալն արհամարհանքով մի կողմ դնելով, պատասխանում է.

— Համաձայն եմ:

Շուտով նա ստանում է հրատարակության իրավունքը և դառնում է խմբագիր—հրատարակիչ «Աղբյուր» ամսագրի: Բայց նա դրանով չի բավականանում: Ի՜նչ մեծ բան է մանուկներին դաստիարակել, ինչո՞ւ չի կարելի հանձն առնել և հասակավորների կրթությունը: Յեվ ահա նա սկսում է աշխատել այդ ուղղությամբ և ստանում է «Տարազ» շաբաթաթերթի իրավունքը: Ինչո՞ւ «Տարազ» և վոչ ուրիշ, մի պատշաճ անուն: Վորովհետև Տիգրան Նազարյանը խելքով մարդ է, նա գիտե, վոր յերբ ուրիշ անուն տար շաբաթաթերթին, կառավարությունից թույլտվություն չեր ստանալ: Տարազ կնշանակե հագստի ձև ու թերթը պիտի լինի կար ու ձևի ուղեցույց—Журнал для мод կամ Модный журнал մի անմեղ բան, վոր կապ չունի գրականության, հրապարակախոսության, մանավանդ քաղաքականության հետ: Արդարև, «Տարազ»-ի առաջին համարները լույս են տեսնում զանազան կանացի դգեստների, գլխարկների և մանեկենների նկարներով: Դժբախտաբար, հրապարակախոս հռչակվելու փափագը մի անգամ առմիշտ թունավորել է Տիգրան Նազարյանին: Ճշմարիտ է, նրա յերկու պարբերականները միասին վերցրած հարյուր բաժանորդ չունեն, բայց փաստը մնում է փաստ, Տիգրան Նազարյանը խմբագիր—հրատարակիչ է: Մի քանի զովասանական հոդվածներով և ռեկնարկներով նա կարողանում է գրավել Գրիգոր Արծրունու բարեկամությունը, և «Մշակ»-ը նրան վերցնում է իր թևերի տակ:

Շուտով Գաբրիել Միրզոյանը Տիգրան Նազարյանի համար դառնում է ձանձրալի: Նա կարողանում է ազատվել այդ հավակնոտ մարդու ընկերությունից, իսկ Ղազարոս Աղայանի հետ շարունակում է իր բարեկամությունը:

Մեռնում է Գրիգոր Արծրունին, նրա ժառանգները դժտվում են Տիգրան Նազարյանի հետ, խեղճ մարդը զրկվում է «Մշակ»-ի

հավանավորությունից: Բայց Տիգրան Նազարյանն այն մարդկանցից չի, վորոնք այդպիսի չնչին բաներից հուսալքվում են: Նա ունի պարմանալի ընդունակություն ծաղրի, անարգանքի և կոպտությունների դեմ մաքառելու, վոչ այնքան գրչով, վորքան լռությամբ և համբերությամբ: Նրա գրիչը ուժ չունի, նա նույնիսկ գրել էլ չը գիտե, չեմ ասում տաղանդավոր կամ սրամիտ, այլ առանց քերականական սխալների: Այդ մասին Նա չի հոգում և չը հոգաց մինչև իր կյանքի վերջը:

— Այս անգամ ի՞նչ միսսիայով եք Յեվրոպա յեկել,—հարցրի յես Տիգրան Նազարյանին, վասն զի նա տարենը յերկու-յերեք անգամ վազում եր Յեվրոպա միշտ մի վորևէ առաքելությամբ:

Նա գրպանից դուրս բերեց շքեղ թղթի վրա տպված մի հրավիրագիր և ցույց տվեց ինձ հպարտությամբ: Դա ինձ համար նորություն չեր. նման հրավիրագիրներ Տիգրանը Նազարյանն իր ծոցում ուներ տասնյակներով, վորովհետև յեվրոպական վոչ մի յերկրում չեր մոռացել մտնել պարբերական մամուլի բյուրոները և թողնել այնտեղ «Աղբյուր-Տարազի» խմբագրության հասցեն: Նա ասում եր.

— Յես միակն եմ հայ խմբագիրների մեջ, վոր պատիվ ունիմ հրավիրվելու համաշխարհային կոնգրեսներին:

Յեվ ճիշտ եր ասում: Մի բան նա համառորեն թաքցնում եր, նույնիսկ իր մերձավոր բարեկամներից, այն, թե ինչ նյութական միջոցներով է տարենը տասներկու ամիս Յեվրոպայում ճամբորդում այն ժամանակ, յերբ «Աղբյուր-Տարազ»-ի խմբագրությունը հավիտենական նյութական կարիքի մեջ եր և իր ոձիքը չեր կարողանում ազատել գրաշարներից: Մի անգամ յես փորձեցի նրան այդ հարցը տալ: Նա ինձ պատասխանեց.

— Տեսնում եք այս փողկապը, Մարսելումն եմ գնել վաթսուն սանտիմով:

Թշնամիներն ասում եյին, թե նա զբաղվում է գաղտնի սպեկուլյացիայով, թե նա այս է անում, այն է անում: Յես նկատել եմ Տիգրան Նազարյանի մեջ վաճառականի ձիրք ու ձգտում, բայց չունիմ վոչ մի փաստ նրա վաճառականության կամ սպեկուլյացիայի:

Հայ մամուլի ասպարեզում մի փոքրիկ միավոր եր Տիգրան Նազարյանը. Նա չուներ ձիրք վոչ հրապարակախոսի, վոչ ֆելիետոնիստի, վոչ քրոնիկյորի, բայց յեռանդուն եր, անսահման յեռանդուն, բարեսիրտ և միշտ պատրաստ հասարակական գործե-

րում այս կամ այն կերպ ոգտակար լինելու, մանավանդ աղետների ժամանակ: Հիշում եմ, ինչպես նա պատերազմի տարիներին ջերմաչափը կռնատակին դրած, վազվզում եր դես ու դեն, դրամ հանգանակում, մթերք ժողովում գաղթականներին ճաշ ու թեյ մատակարարելու կամ ինչպես ինքն եր ասում՝ «հրատապ ոգնության մատուցանելու»:

ՆԿԱՐՉՈՒՀԻՆ: ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ: ՎԵՐԱԴԱՐՁ

Յես նրան հանդիպեցի Զվիցերիայում: Նա յեկել եր իր հոր հետ Լիոն քաղաքից և տեղավորվել նույն պանսիոնում, ուր մենք սովորաբար իջևանում եյինք:

Շուտով իմացա, վոր ծերունին ջութակագործ ե և Լիոնում ունե մի մեծ արհեստանոց մի քանի տասնյակ վարպետներով, իսկ աղջիկը նկարչուհի: Այդ վերջինը յես իմացա հենց առաջին նախաճաշի ժամանակ, յերբ նա, ուտելը թողած, իր ալբոնում շտապ-շտապ նկարեց Մարգարտի գլուխը: Դա բավական բարձրահասակ, նրբակազմ, սիրուն մի աղջիկ եր: Առանձնապես գրավիչ եյին նրա մեղմ ձևերը, մելոդիկ ձայնը և մանավանդ փղոսկրեգույն կանոնավոր ատամները, վոր նրա ժպիտներին տալիս եյին մի բացառիկ հրապույր:

Կարո՞ղ եյի մի այդպիսի եակով չը հետաքրքրվել, վորքան ես ուղեղս ու սիրտս գրավված լինեյին անբուժելի հայրական վշտով: Յե՞ս, վոր առհասարակ այնքան դյուրազգաց և, չեմ ամաչում ասել, թուլամորթ եյի կանանց վերաբերմամբ: Յե՞ս, վորի փորձող տեսողությունը գրեթե վիրավորված եր ամեն որ հանդիպելով զվիցերուհիներին, զմայլելի յերկրի այդ վոչ զմայլելի կանանց: Արդարև, ինչո՞ւ այդքան տգեղ են զվիցերուհիները:

Մի որ ճաշի միջոցին նա ինձ հարցրեց.

— Դուք նկարի՞չ եք:

— Վո՛չ, որիորդ:

— Գուցե յերաժիշտ եք:

— Ներեցեք, որիորդ, յես միայն յերաժշտության յերկրպագու յեմ:

— Բայց անկարելի յե, վոր դուք չունենաք առնչություն այս կամ այն արվեստի հետ:

— Դուք չեք սխալվում,—միջամտեց կինս իր սեռին հատուկ անհամբերությամբ,—ամուսինս բելլետրիստ ե:

— Ա՜ա, տեսա՞ք ինչպես գուշակեցի,—գոչեց որիորդը, ուրախանալով, վոր մասամբ չեր սխալվել: Ի՞նչ լեզվով եք գրում:

— Հայերեն լեզվով:

— Դժբաղդաբար յես այդ լեզուն չգիտեմ: Բայց յես հայերի մասին շատ եմ լսել և կարդացել:

— Ցանկալի յե գիտնալ ի՞նչ եք լսել կամ կարդացել,—հետաքրքրվեց կինս:

— Ո՛ռ, տիկին, շատ տխուր բաներ: Դուք շատ դժբաղդ ազգ եք, ձեզ շարունակ հալածում են ու կոտորում Թյուրքիայում:

— Ինչպես հրեաներին Ռուսիայում,—ավելացրեց որիորդի հայրը:

Յես լռեցի: Ինձ համար առհասարակ այդ ուղղությամբ ոտարների հետ խոսելը վերին աստիճանի անախորժ, նույնիսկ վիրավորական եր: Թվում եր ինձ, վոր յես նրանց աչքում նսեմանում եմ, վոչնչանում: Իմ ազգի խեղճությունն յես իմն եյի համարում և կարեկցության դեմ ավելի եյի վրդովվում, քան ատելության և վիրավորանքի դեմ:

Յերևի նրբազգաց ֆրանսուհին գուշակեց իմ դժկամությունը: Նա շտապեց խոսակցության նյութը փոխել:

— Արդյոք ձեր յերկերը ֆրանսերեն թարգմանվա՞ծ են,—հարցրեց նա:

— Մի քանիսը, այո:

— Յես կը կամենայի կարդալ: Յես առհասարակ սիրում եմ կարդալ արևելյան ազգերի գրականությունը: Բարի յեղեք ինձ տալու ձեր յերկերի հրատարակչի հասցեն:

— Կարիք չկա, որիորդ, յես ինքս կը տամ ձեզ իմ գործերից մի յերկուսը:

— Ավելի լավ, տվե՛ք...

Բաղդի բերմամբ հետս վերցրել եյի «Չար վոգին» Արշակ Չոպանյանի և «Արտիստը» ու «Ֆաթման և Ասադը» Սերժ դ. Երմինիի թարգմանությամբ: Նույն յերեկո իսկ այդ գործերը տվեցի որիորդին:

Հետևյալ որը նա ասաց.

— Գիտեք, պարոն, ձեր շնորհիվ յես գիշերը լուսացրի անքուն:

— Բայց, որիորդ...

— Այո, ձեր շնորհիվ: Յես ձեր գործերը կարդացի միանգա-

մից, անընդհատ: Կարծում եմ, դրանից ավելի մեծ կոմպլիմենտ չի կարելի անել մի հեղինակի:

— Խորապես զգացված եմ, օրիո՛րդ,—ասացի՛ յես, իրավ զգացված: Ձեր կարծիքն ինձ համար շատ թանկ է:

— Գիտեք, յես առանձնապես հավանեցի «Արտիստը»: Շատ համակրելի յե ձեր Լևոնը:

Հետևյալ որն օրիորդը դարձավ ինձ.

— Յես մի խնդիր ունեմ ձեզնից:

— Հրամայեցե՛ք, օրիո՛րդ:

— Թույլ տվեք ձեր պատկերը նկարել յուղաներկով: Յես վաղուց եյի ուզում խնդրել ձեզ այդ մասին: Ուրեմն համաձա՞յն եք,—շտապեց ավելացնել օրիորդը, օգտվելով իմ լռությունից:

Անշուշտ նա զգաց, որ յես ուրախ եմ իր առաջարկությանը: Բայց ինձ համար հետաքրքրականն այնքան նրա գործը չէր, որքան անձնավորությունը: Յես ուրախ եյի, որ առիթ պիտի ունենամ մի քանի օր ժամերով լսելու նրա մելոդիկ ձայնը: Բացի դրանից, ինչո՞ւ թաքցնել, իմ մեջ շոյված էր տղամարդի անխուսափելի փափագը՝ դյուր գալ կնոջը: Մի փափագ, որից զերծ չէ ոչ մի մահկանացու և ոչ մի հասակում, որքան էլ փարիսեցիները հակառակը պնդեն...

— Ո՞րտեղ եք մտադիր աշխատելու, օրիորդ—հարցրի յես:

— Իմ սենյակում, իհարկե, յեթե բարեհաճեք նեղություն կրել բարձրանալու: Դուրսը, պարտեզում կամ ագարակում անցորդները ինձ խանգարում են աշխատելու, մանավանդ յերեխաները, նրանք միշտ շրջապատում են ինձ, յերբ յես նկարում եմ:

Հետևյալ օրը որոշված ժամին գնացի նրա սենյակը, որ մի հարկով բարձր էր իմնից: Նա արդեն ամեն ինչ պատրաստել էր և վրձինը ձեռին ինձ էր սպասում: Հակառակ իմ սպասածին՝ մենակ չէր, ներկա յեր և նրա հայրը: Յես մոռացել եյի, որ այդ մոտ վաթսուն տարեկան կայտառ ծերունին առհասարակ անբաժան էր իր աղջկանից և ամենուրեք հետևում էր նրան, նույնիսկ նկարելու ժամանակ: Ինձ դյուր չէր գալիս այդ մարդն իր խոժոռած դեմքով և պարզ ակնոցի տակից նայող սուր և անդյուրեկան աչքերով: Նա իմ բարևն ընդունեց ֆրանսիացուն հատուկ քաղաքավարությամբ, բայց ոչ նույն ֆրանսիացուն հատուկ սիրալիրությամբ: Յես ուշադրություն չդարձրի դրա վրա: Ի՛նձ ինչ, թող ինչքան ուզում է մնա, յեթե նրա աղջիկն այդ կամենում է: Բայց շուտով նկատեցի, որ նկարչուհին մի տեսակ նեղվում է և շատ

էլ հանգիստ չի աշխատում: Արդարև, դժվար էր նրա համար չներվայնանալ, յերբ ամեն անգամ յերեսը յետ դարձնելիս տեսնում էր ծերունու խոժոռ դեմքը ու նրա սուր աչքերը, ճերմակ ու թանձր հոնքերի տակից:

Շուտով յես ինքս էլ սկսեցի նեղվել: Ծերունին իմ աչքում դարձավ մի տեսակ ռուսական ժանդարմ: Նրա ներկայությունը խանգարում էր ինձ ազատ խոսել ինչի մասին էլ լիներ, թեկուզ նյութը արվեստներին կամ գրականությանը վերաբերվեր:

Այդպես շարունակվեց յերեք օր: Օրիորդի աշխատանքն առաջ էր ընթանում շատ դանդաղ: Յես նկատում եյի, որ նա ավելի շատ մտածում ու դիտում է, քան նկարում: Յերբեմն նա վրձինը ձեռին մոտենում էր լուսամուտին, նայում էր դուրս առանց մի բան արտասանելու: Վերջապես, չորրորդ օրը, հազիվ գործը վերսկսած, մի կողմ նետեց վրձինն ու ասաց.

— Ներեցե՛ք, պարո՛ն, այսօր յես ինձ վատ եմ զգում, աշխատել չեմ կարող:

— Հետաձգե՛ք վաղվան, Ժաննետ, հետաձգե՛ք վաղվան,—արտասանեց ծերունին, մի ծուռ հայացք ձգելով ինձ վրա:

Նրա ձայնն ինձ թվաց այնքան անախորժ ու գրգռեցուցիչ, որքան յերաժշտական ու ախորժալուր էր նրա աղջկա ձայնը:

Յես վոտքի յելա և դուրս գնացի:

Հետևյալ օրն յեկա դրականապես վճռած՝ հրաժարվել նկարվելուց: Այս անգամ ծերունին չկար:

— Օրիորդ,—ասացի յես ամենայն հանգստությամբ,—յերեկ յես նկատեցի, որ դուք դժվարանում եք աշխատել: Անկասկած, սյուժեն ձեզ չի տրամադրում, յեկեք թողնենք այդ գործը և...

— Ուրեմն դուք չե՞ք հավանում իմ գործը,—ընդհատեց խոսքս նկարչուհին վշտացած,—բայց դուք դեռ չեք տեսել ձեր պատկերը, իսկ յես դեռ շատ պիտի աշխատեմ նրա վրա: Հուսով եմ, որ իմ գործը չի ձախողիլ:

— Ներեցե՛ք, օրիո՛րդ, յես այդ չեյի ուզում ասել: Խոսքս ձեր հոր մասին է: Նա ձեզ խանգարում է աշխատել, յես զգում եմ ձեր նեղսրտումը...

— Հասկանում եմ, պարոն,—արտասանեց օրիորդը հեգնական ժպիտով: Յերեկ յես նկատեցի, որ իմ հոր ներկայությունը որքան ինձ, նույնքան էլ ձեզ է ներվայնացնում: Անշուշտ դուք էլ ինձ նման չը գիտեք թաքցնել ձեր տրամադրությունը ինչպես

արտիստ։ Յես խոսեցի հորս հետ։ Այսուհետև նա ինձ չի խանգարել։ Բարի յեղեք նստելու ձեր տեղը, յես շարունակում եմ...

Յեվ, իրավ, ծերունին այլևս չեր գալիս։ Յես նրան տեսնում եյի միայն նախաճաշի ու ճաշի միջոցներին։ Արտաքինից չեր յերևում, վոր նա բարկացած լիներ իմ կամ իր աղջկա դեմ։

Նրա բացակայության յերկրորդ որն իսկ բացվեց որիորդի կաշկանդված լեզուն։ Առանց նեղվելու նա սկսեց գանգատվել իր հոր դեմ անսպասելի դառը խոսքերով։ Պարզվեց, վոր այդ մարդը վորպես հայր դաժանության չափ մանրակրկիտ ու խստապահանջ է։ Ինքը լինելով անաղարտ կաթոլիկ, աշխատել եր իր յերկու աղջիկներին կրթել իր հոգով։ Նա նրանց մանուկ հասակից տվել է յեզուիտական դպրոց, այնտեղ ուսանելու ու կրթվելու մենաստանի հովանավորությամբ։

— Մայրս հակառակ է յեղել, կամենալով, վոր մենք կրթվենք աշխարհային դպրոցում, բայց, ավա՜ղ, անողորմ մահը շատ կանուխ է մեզ զրկել նրա պաշտպանությունից։ Ինձ թվում է նույնիսկ, վոր նրա վաղաժամ մահվան պատճառը հայրս է յեղել։ Յեվ դա մեկն է այն պատճառներից, վորոնք ինձ խանգարում են սիրել նրան այնպես, ինչպես յուրաքանչյուր զավակ պարտավոր է սիրել իր հորը։ Ավելին կասեմ, յես մինչև անգամ չեմ կարողանում նրան հարգել բավականաչափ։ Ա՜հ, մեղադրեք ինձ, վոր այսպես եմ խոսում. անշուշտ դուք գիտեք ինչ ասել է արտիստ. նա յերբեք չգիտե իր լեզուն կաշկանդել ինչ վոր ավանդություններով ու նախապաշարումներով։ Ի՞նչ փույթ, վոր նա իմ հայրն է, յես չեմ կարող կեղծել... Պարո՛ն, այժմ յես քսան ու յոթ տարեկան եմ,—շարունակեց որիորդը մի քիչ լռելուց հետո,—դուք կարող եք զարմանալ, վոր դեռ չեմ ամուսնացել։ Իհարկե, յուրաքանչյուր որիորդի վերջնական ճակատագիրն է այս կամ այն կերպ իր կյանքը կապել վորևե մեկի հետ։ Բայց յես չեմ ուզում իմ ազատությունը շղթայել այնպես, ինչպես մեծ քույրս։ Խե՜ղճ Ելլի. նա այժմ դառնագին զղջում է, վոր յենթարկվելով իր հոր ցանկության ու թախանձանքին, ամուսնացավ մի չսիրած մարդու հետ։ Մի մարդու, վոր այսոր անամոթաբար դավաճանում է նրան...

— Ինչպես ամեն մի տղամարդ իր կնոջը,—չը կարողացա զսպել ինձ։

— Այո՛, այո՛, իրավացի յեք, ամեն մի տղամարդ,—գոչեց որիորդը հուզված,—գուցե և ամեն մի կին իր ամուսնուն։ Բայց

իմ վրդովմունքը դրա դեմ չե, այլ ուրիշ բանի։ Յերբ կինը խաբվում է իր ամուսնուց իր սխալ ընտրության պատճառով, դրությունն այնքան վողբալի չե, վորքան այն ժամանակ, յերբ նա կրում է մի ուրիշի, թեկուզ իր հարազատ ծնողի, մեղքի պատիժը։ Բայց թողնենք քրոջս։ Նրա դրությունն անուղղելի յե, քանի վոր արդեն յերկու զավակների մայր է։ Բայց յե՞ս, յես չեմ ուզում նրա ճամբով գնալ։ Յես արտիստ եմ, գուցե թույլ ձիրքով կամ բոլորովին անձիրք, բայց հոգով ու սրտով անվիճելի արտիստ։ Յես ատում եմ բուրժուական տափակ կյանքը և նրա բոլոր կանոնները։ Յես կարող եմ սիրել միայն արտիստին ինչ արվեստի ել ծառայի նա։ Ահա այս բանն է, վոր հայրս չի հասկանում, թեև նրա գործն արտիստների հետ է։ Նա յերևակայում է, թե իրան է միայն տրված իմ բաղդի մասին մտածելու պարտքը...

Յեվ, որիորդը, ավելի ու ավելի գրգռվելով, շարունակեց.

— Պարոն, մի զարմանաք, վոր յես հանկարծ վճռեցի բանալ իմ հոգին ձեր առջև։ Չը գիտեմ ինչու մեր ծանոթության առաջին իսկ որից դուք ինձ հավատ ներշնչեցիք, իսկ յերբ կարդացի ձեր «Արտիստը», մտածեցի՝ ահա՛ մեկը, վորի հետ կարող եմ խոսել պարզ, համարձակ և անկեղծ։ Բացի այդ, պարոն, դուք ոտարազգի յեք, յես համոզված եմ, վոր իմ խոստովանությունը չեք տարածիլ այստեղ, կտանեք ձեզ հետ ձեր հեռավոր հայրենիքը։ Գիտեք, պարոն, յես լսել ու կարդացել եմ, վոր ոտարազգիներն այն գաղափարն ունեն Ֆրանսիացի կնոջ մասին, թե նա գործնական է, մինչև անգամ շահամոլ, թե նա սիրում է միայն հարստությունը, դիրքը, տիտղոսը թե նրա համար մի գեղեցիկ վիլլա Դովիլում կամ Նիցցայում ավելի մեծ արժեք ունի, քան մարդը, նրա հոգին, նրա խելքը, սիրտը, սերը։ Չը գիտեմ, գուցե Պարիզի կանայք այդպես են, բայց մենք գավառացիներս դեռ ապրում ենք ռոմանտիկ յերազներով։ Լավ է այս, թե վատ, չեմ ուզում այդ մասին մտածել, բայց դրա հակառակը խորթ է իմ հոգուն, իմ ձգտումներին, իմ ճաշակին։ Պարոն, ահա յերեք տարի յե, վոր ինձ հետամուտ է մի հարուստ ֆաբրիկանտ, վորի ինքնահավան ու գռեհիկ կերպարանքն ինձ ուղղակի նողկանք է ներշնչում։ Հայրս ինձ շարունակ համոզում է, վոր յես համաձայնվեմ այդ մարդու հետ ամուսնանալ։ Նա մինչև անգամ սպառնում է զրկել ինձ իմ ոժիտից և դուրս վռնդել իր տնից, յեթե չը համաձայնվեմ։ Իհարկե, յես մաքառում եմ նրա դեմ, բայց խոստովանվում եմ, հոգնել եմ, շատ եմ հոգնել, ուժերս դավաճանում են ինձ։ Այժմ յես սար-

սափոռլ եմ մտաբերում, վոր շուտով պիտի վերադառնամ Լիոն։ Չի գիտեմ ինչ պիտի պատահի ինձ...

Արտասանելով վերջին խոսքերը, Ժաննետը վրձինը ձեռից բաց թողեց, վազեց դեպի իր անկողնակալը, վոր դրված եր սենյակի խորքում, գլուխը դրեց բարձի վրա և հեկեկաց...

Մի պահ յես մնացի լուռ և անշարժ։ Չգիտեյի ինչ անել կամ ինչ ասել, ինչ խոսքերով հանգստացնել հուզված աղջկան։ Վորքան անակնկալ, նույնքան և թանգ եր ինձ համար նրա խոստովանությունը։ Համակրանք, կարեկցություն, սեր դեպի նա, ատելություն դեպի ծերունին, ամեն ինչ խառնվել ու շփոթվել եր իմ հոգու մեջ։ Մի բան պարզ և աներկբայելի յեր ինձ համար,—որբորդի անկեղծությունը։ Չկար նրա խոստովանության մեջ կոկետության կամ ցուցականության վոչ մի նշույլ։ Նա խոսում եր արտիստի տառապող հոգու թելադրությամբ։ Այդ վայրկյաններին նա մի տեսակ Լեվոն եր իմ աչքում, «Արտիստի» Լեվոնը։ Յես ուրախ եյի, հպարտ, վոր այդքան հավատ եյի ներշնչել այդ տարաղդի աղջկան։ Այդ հավատն ինձ համար բյուր անգամ ավելի թանգ եր, քան յեթե նա փաթաթվեր իմ պարանոցին և իր սերն արտահայտեր։ Ահա ինչու այդ պահին յես խոսք տվեցի ինձ յերբեք չխախտել նրա մեջ այդ հավատը։

Վերջապես, յես ուշքս ժողովեցի, մոտեցա նրան, թույլ տվեցի ինձ գրկել նրա գեղեցիկ գլուխը և համբուրել։ Նա ինձ չընդդիմադրեց, ընդհակառակն ամուր սեղմեց իմ ձեռը բուռն բարեկամական յերախտագիտությամբ։

Այդ որից մենք տեսնվում եյինք ավելի հաճախ։ Ճաշից հետո, յերեկոները, յերբ ծերունին պառկում եր քնելու իր սենյակում, յես գնում եյի Ժաննետի սենյակը իր ցանկությամբ, և մինչև ուշ գիշեր զրույց եյինք անում արվեստների և գրականության մասին։ Նա բավականաչափ կարդացել եր, համենայն դեպս Ֆրանսիական հին ու նոր գրականությանը ծանոթացել եր լիովին։ Մերթ ընդ մերթ մեր զրույցներն ընդհատվում եյին փոխադարձ համբույրներով, վորոնք իմ խղճի վրա վոչ մի արատ չեն թողել, վասն զի մաքուր եյին, և այսոր յես այդ զմայլելի յերեկոները մտաբերում եմ մի տեսակ հաճելի թախիծով, նաև հպարտությամբ։ Նրանք իմ անցյալի յերազներից մեկն եյին. լավագույն յերազներից։

Ութ տարի անցած մի բոլորովին տարբեր բովանդակությամբ յերկ գրելիս, հանկարծ անդրադարձա այդ յերազին։ Ընթերցողը,

յեթե հետաքրքրվում ե, թող կարդա «Ալինա» վիպակի վերջին եջը, միայն վերջինը...

Ժաննետն ավարտեց իմ կերպանկարը և միայն այն ժամանակ թույլ տվեց ինձ նրան նայելու։ Չգիտեմ այդ գործը մի ուրիշի աչքում կա՞րող եր ունենալ գեղարվեստական արժեք, բայց չվարանեցի շռայլել իմ գովասանքները, վորովհետև գործը Ժաննետինն եր, ուրեմն և անքննադատելի ինձ համար։

— Թույլ տվեք, վոր այս պատկերը մնա ինձ մոտ վորպես հիշատակ մեր բարեկամության,—ասաց նկարչուհին։

Ինչ կարող եյի ասել։

Մի շաբաթ անցած նա իր հոր հետ ուղևորվեց Լիոն, իսկ մենք հետևյալ որը վերադարձանք Պարիզ։ Հրաժեշտի որը մենք փոխանակեցինք մեր հասցեները և խոստացանք իրարու հետ կանոնավոր թղթակցել։

Յես սպասում եյի, վոր առաջինը նա լինե գրողը, վախենալով մի գուցե նա զղջա, վոր խոստացել ե գրելու։ Յես չսխալվեցի. շուտով Լիոնից ստացա մի ընդարձակ նամակ, գրված զարմանալի գրական վոճով։ Նամակը տոգորված եր թախիծով և հուսահատությամբ։ Բովանդակությունը նույնն եր—գանգատ իր հոր դեմ կծու խոսքերով և նկարագրությունն իր հոգեկան տվայտանքների։ Նա գրում եր, թե իր առջև տեսնում ե միայն յերկու ճանապարհ—կամ իր ճակատագիրը յենթարկել ծերունու համառ պահանջին ու ամուսնանալ չսիրած մարդու հետ և կամ ինքնասպանությամբ վերջ տալ իր կյանքին։ Յես նրան հիշեցրի մի յերրորդ ճանապարհ՝ զգալով հանդերձ, վոր նա մյուսներից վոչնչով ավելի դյուրին չեր, այն ե բաժանվել հորից և փորձել արվեստի ոգնությամբ կամ դասեր տալով պահպանել իր գոյությունը։

Մոտ յերեք ամիս շարունակվեց մեր փոխադարձ նամակագրությունն ավելի ու ավելի ջերմ բարեկամական բովանդակությամբ։ Վերջապես, յես մի անգամ չստացա իմ նամակի պատասխանն ամբողջ յերկու շաբաթ։ Մտածեցի մի գուցե վորևե մի աննշմար դարձվածքով վշտացրել կամ վիրավորել եմ նրան։ Գրեցի մի նոր նամակ, բացատրություն խնդրեցի, դարձյալ պատասխան չստացա։ Այդ արդեն դառն եր և վիրավորական իմ ինքնասիրության համար։

Ի՞նչ եր նշանակում այդ լռությունը։

Գաղտնիքը պարզվեց հաջորդ ամառը Զվիցերիայում։

Վերջին ձմեռն էինք անցկացնում Պարիզում: Զանազան հանգամանքներ, առաջին հերթին, իհարկե, նյութական պակասությունը, թույլ չէին տալիս նորեն հետաձգելու մեր վերադարձը Կովկաս: Բացի դրանից, բժիշկները խորհուրդ էին տալիս Արմենին հեռացնել Պարիզից:

Նրանք ասում էին.

— Թույլ հայրենի միջավայրը բարերար ազդեցություն ունենա նրա վրա:

Ցես այդ հույսը չունեի, բայց ճիշտ է, որ ասում են, թե ծնվում խեղդվողը ուծին էլ է փաթաթվում:

Մի օր «Մշակ» լրագրում կարդացի իմ յերեսնամյա գրական գործունեյության մասին մի հոդված, որքան հիշում եմ, Ալեքսանդր Արեյյանի ստորագրությամբ: Հեղինակն առաջարկում էր հասարակությանը տոնել իմ հոբելյանը: «Մշակ»-ը թշնամաբար չէր վերաբերվել առաջարկին: Դա անսպասելի յեր ինձ համար, աչքի առջև ունենալով, որ դեռ Արծրունու օրերից այդ լրագիրը բարեկամական զգացմունքներ չէր ունեցել իմ վերաբերմամբ:

Ինձ համար այդ ուշադրությունը, իհարկե, ուներ որոշ արժեք, բայց լավ գիտենալով, թե ինչ վողորմելի բան է հայ գրողի հոբելյանը այն ժամանակվա մթնոլորտում և հիշելով ռուս հայտնի բելլետրիստ Գլեբ Ուսպենսկու սրամիտ խոսքը՝ юбилей, это мовз‹ лей-յես պատրաստ էի հրապարակորեն հրաժարվել հոբելյարի պատվից. և կը հրաժարվեյի, յեթե համոզված լինեյի, որ իմ համեստությունը կը համարվի անկեղծ: Բացի դրանից, չէ վոր հիվանդ վորդուս խնամելը վորոշ նյութական զոհաբերություն էր պահանջում ինձնից... Ցես բարվոք համարեցի լռել և թողնել, որ գործն ընթանա իր բնական ճամբով, առանց իմ միջամտության:

Հրաժեշտիս առիթով Պարիզի հայ մտավորականների մի խումբ ինձ պատվեց մի ճաշկերույթով, չեմ հիշում վոր հյուրանոցում:

Ցես աշխատում էյի վերջին ամիսները Պարիզում անցկացնել հնարավորին չափ օգտավետ: Ինչը կարող էր լինել ավելի իմաստալի, քան թանգարաններում թափառելը: Որ չէր անցնում, վոր յես չայցելեյի նրանցից վորևէ մեկը: Այդտեղ, արտաքին աշխարհից կտրված, իմ հայրական անբուժելի վիշտը մի տեսակ սփոփանք էր գտնում, և յես կարողանում էյի գեթ ժամանակավորապես հաղթահարել իմ հոգու կսկիծը իմ մտքի լարված գործողությամբ:

Վորոշեցինք նախ քան Կովկաս ուղևորվելը մի անգամ ևս գնալ Զվիցերիա, և ահա հաջորդ ամառվա կեսին դարձյալ կանտոն Գր-

կուսմն էինք և նույն պանսիոնում: Ցես հույս ունեի այնտեղ հանդիպելու իմ նկարչուհուն. ինձ մեծ մտահոգություն էր պատճառել նրա լռությունը: Մի օր, վերջապես, յեկավ նրա հայրը. բայց, ավա՛ղ, Ժաննետը չկար. Նրա փոխարեն ծերունին բերել էր իր մեծ աղջկան, երկու թոռնիկների հետ: Իմ խորին անհանգստությունը քողարկելով ծանոթի սովորական հետաքրքրությամբ հարցրի

— Իսկ որտեղ Ժաննե՞տը: Նա չի՞ գալու:

— Որիորդ Ժաննետն այժմ տիկին Բլոնդել է,—պատասխանեց ծերունին յերջանիկ ծնողի ժպիտով:

— Ուրե՞մն...—արտասանեցի յես մեքենաբար և կանգ առա, զգալով իմ հարցի մանկական անիմաստությունը:

— Այո՛, ամուսնացավ,—շեշտեց ծերունին,—կարող եք ինձ շնորհավորել:

— Իհարկե, ամբողջ հոգով: Բայց ո՞վ և ի՞նչ գործի մարդ է ամուսինը:

— Լիոնի խոշոր փաբրիկաններից մեկը: Նրա գործարանում հազարից ավելի բանվորներ են աշխատում:

Ցերջանիկ հայրն ինձ ծանոթացրեց իր ավագ դստեր հետ, որ լա՛ մի նմանություն չուներ Ժաննետի հետ:

Ցես կը կամենայի նրա հետ խոսել Ժաննետի մասին, բայց ճիշտ այդ օրը պատահեց մի անախորժ դեպք: Ահա նա.—

Մեր պանսիոնի բարի տիրուհին սովորություն ուներ կիրակի և տոն օրերին մեզ հյուրասիրել սովորական ճաշից դուրս վորևէ հավելվածով: Այս անգամ նա Ժնևից թե Լիոնից բերել էր մի անուշ խմորեղեն—մի տեսակ կարկանդակ: Հետևյալ առավոտ լույսը չբացված, պանսիոնում սկսվեց մի անսովոր աղմուկ և իրարանցում: Ցենթադրելով, որ հրդեհ է ծագել, յես շտապեցի մերոնց արթնացնել և շուտով հագնվել: Կինս դուրս վազեց և, իսկույն վերադառնալով, ասաց՝

— Ասում են ամբողջ պանսիոնը թունավորվել է:

— Ցեվ յես,—արտասանեցի յես, նույն վայրկյանին սիրտս խառնվեց, գլուխս պտտվեց ու թուլացած ընկա անկողնակալի վրա:

Անմիջապես հեռախոսվեց Ժընև: Մի ժամ չանցած այնտեղից յեկավ շրջանի բժիշկն անհրաժեշտ դեղերով, հետն էլ մի կաթոլիկ քահանա: Պարզվեց, որ թունավորումն առաջացել է յերեկվա կարկանդակից, վորովհետև թունավորվել էին նրանք, վոր կերել էին

այդ խմորեղենից։ Թունավորվածների մեջ էր և մի յերիտասարդ հայ վարդապետ՝ Մեսրոպ Մաքսուդյան անունով։ Նա Եջմիածնից էր և Ժնև յեկել էր ինչ֊որ ուսանելու։ Նա այնքան վախեցել էր, որ չէր դադարում աղաղակել՝ «Բժիշկ, բժիշկ, փրկեցե՛ք ինձ, յես մեռնում եմ»։ Սակայն այդ օրը նրան մահ չէր վիճակված։ Նա ապրեց մի տասը տարի յել և մեռավ իր հայրենիքում, բոլորովին տարբեր հիվանդությունից։

Պանսիոնը դատարկվեց։ Բոլորը ցրվեցին, տանելով իրանց հետ թունավորվածներին։ Մնացինք միայն մենք։

Բժիշկն ասաց.

— Քիմիական անալիզից պարզվել է, որ թույնը յեղել է կարկանդակի ժելեյի մեջ, իսկ առաջացել է նա պղնձի ժանգից։

Ամբողջ մի շաբաթ յես տառապում էի մեջքիս անտանելի ցավերից։ Թվում էր ինձ, որ մեկը յերկաթե ունելիքով ողնաշարս դուրս է քաշում։ Հետզհետե ցավերը թուլացան, դադարեցին։ Ինձ պաշարեց մեռելային թախիծ, կյանքը ինձ համար դարձավ անտանելի։ Բայց այդ էլ յերկար չը տևեց։

Ժնևից ինձ տեսնելու յեկան մի խումբ հայ ուսանողներ։ Իմ թունավորման լուրը նրանք կարդացել էին Կ. Պոլսի լրագրերում. Վոմանք կարծել էին, որ յես մահամերձ եմ կամ արդեն մահացել եմ։ Կարո՞ղ էին գուշակել, թե յես դեռ յերկար պիտի ապրեմ։

Մի ամիս բժշկվելուց հետո յես, մեծ որդիս ու աղջիկս (կինս ու հիվանդ որդիս չէյին թունավորվել) բոլորովին կազդուրվեցինք և Զվիցերիայից Իտալիայի վրայով ուղևորվեցինք Կովկաս, հինգ տարվա բացակայությունից հետո։

ՎԵՐՋ ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ

ՑԱՆԿ

էջ
1. Առաջին օրերը . . . 7
2. Թանգարաններում. Ռոդենը։ Թատրոնները 18
3. Պարիզը գիշերը 29
4. Բարոնները։ Պարիզի վորովայնը 48
5. Պարիզն Սասմոսյան . 57
6. Հայերի շրջանում . 68
7. Դարձյալ պաշտոնակցականները։ Նոր հանդիպումներ։ Սիամանթոն 79
8. Այս ու այնտեղ . 90
9. Սոմիկոն 100
10. Զվիցերիայում 115
11. Սորբոնում։ Հ... Ա-նը։ Իշխանուհիները։ Մագազինների հրապույրը 130
12. Պարիզի հայ գաղութը։ Հինը և Նորը։ Անդրանիկը։ Գրիգոր Զոհրապը 144
13. Արմենի հիվանդությունը 158
14. Հաճելի և անախորժ հանդիպումներ 166
15. Նկարչուհին։ Թունավորում։ Վերադարձ 179

Պետհրատի տպարան Սրբագրիչ՝ Վ. Դերոյան

Գլավլիտ 7964 (բ) Պատվեր 3126 Տիրաժ 4000

Հանձնված է արտադրության 2 հոկտեմբերի 1932
Ստորագրված է տպագրելու 2 հունվարի 1933

ՀՀ Ազգային գրադարան
NL0353202

48277